Է. Աղայան

Մեղրոի բարբառը



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

№ 2 ДИАЛЕКТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА № 2

Э. АГАЯН

МЕГРИНСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 2 ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ № 2

Է. Ա Վ Ա Ճ Ա Ն

ՄԵՂՐՈՒ ԲԱՐԲԱՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1954

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն աշխատության մի մասը տպված է Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»ի 19-րդ հատորում, 1941 թվին:

Ամբողջացնելով բարբառի ուսումնասիրությունը և կցելով Մեղրու բարբառով նմուշներ, հեղինակը տպագրված մասը նույնպես վերանայել է ու կատարել աննշան փոփոխություններ ու շտկումներ՝ ելնելով մարքսիստական լեզվաբանության հիմունքներից ու հաշվի առնելով հայ բարբառագիտության վերջին տարիների ձեռքբերումները:

ՀԵՂԻՆԱԿ

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՂՐՈՒ ԲԱՐԲԱՌԸ

Մեղրու բարբառը մեկն է այն բարբառներից, որոնք ապրեն պատմության գիրկն են անցել և, դուրս մղվելով առօրյա գործածությունից, ճում են իրրև մի քանի ծերերի սեփականություն՝ իրար հետ խոսելու համար։ Այժմյան մեղրեցիների ճնշող մասը, ճեև որոշ չափով դեռևս կարող է դաղտառոտ, բայց այլևս դրանով չի խոսում. մեղրեցիների արդի խոսակցական լեզուն գրական հայերենն է, բարբառային որոշ երանգավորություններով, ինչպես այդ գտնում ենք նաև այլ վայրերում (օր. Երևանում, Էջմիածնում և այլուր). Այսպիսով, Մեղրու բարբառ ասելով պետք է հասկանալ ոչ թե այն բարբառը, որով այժմ խոսում են մեղրեցիները, այլ այն, որը գոյություն է ունեցել մինչև 1900—1920 թվականները, և որն իրրև կենդանի բարբառ այլևս գոյություն չունի։ Այդ բարբառով խոսելիս են եղել այժմյան Մեղրու շրջանի, նախկին Արևիքի (Գենուզքի) կենտրոնի՝ Մեղրի գյուղի բնակիչները։ Մեղրին մի ժամանակ բաղկացած է եղել երեք թաղերից՝ «Մեծ թաղ»—Մեծ թաղ, «Մաշ թաղ»—Միջակ թաղ և «Փխ՝սաէկ թաղ»—Փոքր թաղ։ Այդ երեքից այժմ ճնացել են միայն՝ Մեծ թաղ և փխ՝սաէկ թաղ (այժմ՝ Մեծ թաղ, Փոքր թաղ)։ Ինչպես պատմում են, այժմյան Մեծ թաղը ներկայացնում է հին Միջակ թաղը, իսկ հին Մեծ թաղը ավերվել է. այժմ նրանից միայն հետքեր են ճնում։ Ամբողջ Մեղրու ազգաբնակչությունը 1880—1900 թվականներին կազմել է մոտ 1400 շունչ, որոնք խոսել են Մեղրու բարբառով, իսկ այժմ, ինչպես ասացինք, չափազանց քիչ է այն մարդկանց թիվը, որոնք իրար հետ, այն էլ ոչ միշտ, խոսում են Մեղրու բարբառով. դրանց թիվը ևս առավելն կլինի հարյուր։

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մեղրու բարբառի մասին տպագրված աշխատությունների առաջինն է Ա. Աբրիքյանի կազմած Մեղրու բարբառի նկարագրությունը, որ զետեղված է նրա «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ (տես «Պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատոր 11, էջ 83—105). գրան կցված է Թումանյանի «Դիքդոր»-ի մի հատվածի քարգմանությունը Մեղրու բարբառով (տես էջ 105—107). Այդ աշխատությունը, սակայն, Մեղրու բարբառի լրիվ նկարագրություն չէ, և հեղինակի նպատակն էլ, հարկավ, այդ չի եղել: Հեղինակն այդ աշխատությամբ կամեցել է ցույց տալ Մեղրու բարբառի կապը մի քանի այլ բարբառների հետ և, այդ պատճառով էլ, անշուշտ, բավականացել է հակիրճ նկարագրությամբ: Նույն աշխատությունը կցված համեմատական բառարանի ներքոգրյունակը հատկացված է Մեղրու բարբառին (էջ 152—187): Գրքի վերջում կցված հոլովման ու խոնարհման աղյուսակների չորրորդ սյունակը նույնպես հատկացված է Մեղրու բարբառին.

Այդ աշխատության մասին գրախոսական ունի Ա. Գ. Շանխձեն «Մի նոր գործ հայ բարբառագիտության մեջ» (ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տեղեկագիր, № 3, Երևան, 1940, էջ 100—120):

Մեղրու Բարբառի ավելի համառոտ նկարագրությունը կազմել է նաև պրոֆ. Հ. Աճառյանը (Հ. Լ. պատմություն, II, էջ 360—361), որ անցել է Երևանի պետ. համալսարանում, 1936/37 ուս. տարում, լեզվագրական ֆակուլտետի 4-րդ կուրսի հետ «Հայ բարբառագիտություն» դասախոսելիս: Այդ նկարագրությանը ծանոթացել ենք նախ՝ դասախոսությունների ժամանակ, ապա՝ 1940 թվականի հունիսին, սույն աշխատանքին ձեռնարկելիս:

Մեղրու բարբառի ուսումնասիրության համար տարուսում նյութ են մատակարարում բարբառիս հմուտ մեղրեցի Մատթեոս Շահնազարի ձեռագիր աշխատությունները, որոնք պահպանվում են Երևանի պետ. համալսարանի գրադարանում: Այդ աշխատություններն են.

ա) **Մեղրու բառարան.** *Մասն 1-ին, էջ 1—186, մասն 2-րդ, էջ 167—315: Առաջին մասը նախապես թվագրված է եղել էջ*

1—166, ըստ որում 145-րդ էջից հետո 146-րդի փոխարեն գրված է 126 և այդպես շարունակված մինչև երկրորդ մասի վերջը։ Հետս, սչ նույն ձեռագրով, առաջին մասի համարակալությունն ուղղված ու հասցված է 187-ի, իսկ երկրորդ մասը միացել է անփոփոխ, այնպես, որ 167—186 էջերը կրկնված են, որով ուղիղ 20 էջ պակաս է առացվում. ավելացնելով այդ 20 էջը 315-ին, առանում ենք ընդամենը 335 էջ։ Էջերի ծավալն է՝ 35 սմ երկայնությունն, 22 սմ լայնությունն։ Էջերը բաժանված են երիուական սյունակի՝ 35×10 մեծությամբ. յուրաքանչյուր սյունակը 45—48 տող՝ 32—35 տառով։ Ամբողջ բառարանը պարունակում է մոտ 10000 բառ, որի մոտ կեսը պարսկերեն ու թուրքերեն է, իսկ մի մասն էլ գրական բառեր, որոնք բարբառի ուսումնասիրության համար անհրաժեշտ են։ Բուն բարբառային բառերի քիվն է մոտ 5000։

բ) Մեղրու բարբառի համառոտ քերականություն. բաղկացած 11 էջից, նույն մեծությամբ, միասյուն, առանց լուսանցքների, յուրաքանչյուր էջում 46—50 տող։ 11 էջից 1-ը ներածություն է, 3 էջ հնչյունաբանություն, որտեղ խոսն կիրթով տալիս է գանազան հնչյունների կրած փոփոխությունների մասին որոշ տեղեկություններ, առանց որևէ օրենք տալու։ Մնացյալ 7 էջում տրվում է համառոտ ձևաբանությունը։

գ) Ժողովածու Մեղրու բարբառով գրված հմուշների[1]. բաղկացած է 58 էջից (35 22). 1—26 էջը երկսյուն, միացածը՝ միասյուն։ Այդ ժողովածուում ընդգրկված են.

1. «Վերք Հայաստանի» Բ գլուխ, մի սյունակում աշխարհաբար, մյուսում՝ Մեղրու բարբառով։

2. Գ. Սրվանձտյանի «Համով-հոտով»-ի Ա գրքից՝ «Աբագիկան և Խան Բողունց»-ն և դրա թարգմանությունը Մեղրու բարբառով։

3. Սարգսյանի «Ագուլեցոց բարբառ»-ի հեքիաթներից՝ «Շահ Աբաս»-ը և դրա թարգմանությունը Մեղրու բարբառով։

4. «Հայր մեր» աղոթքը և նրա թարգմանությունը Մեղրու բարբառով։

---

[1] *Այս ձեռագիրը սչ մի խորագիրը չունի. այդ խորագիրը մենք այստեղ գրեցինք մեզանից՝ նրանց բնդգրկած նյութին համապատասխան։*

5. Կաբեևանի բարբառով մեկ ղուշց և դրա աշխարհաբար թարգմանությունը.

6. Կրոնական հեքիաթներ՝ 16 հատ.

7. Առակներ Մեղրու բարբառով՝ 103 հատ.

Երեք ձեռագրերում էլ գործածված է պրոֆ. Գր. Ջալալյանի առաջարկած ուղղագրությունը՝ բարբառների ուսումնասիրության համար (տես Գր. Ջալալյան.— Տրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ 69—73):

Չնայած այն հարուստ նյութին, որ տալիս է Շահյանցն այդ երեք գործերում, այնուամենայնիվ լիովին վստահել չի կարելի դրանց, քանի որ աշխատանքներից և ոչ մեկը հարկ եղած ուշադրությամբ չի կատարված. Մի կողմ թողնելով բազմաթիվ ձեռագրական վրիպակները, որոնց կարելի է հանդիպել գրեթե ամեն էջում, մեզ համար հատկապես ուշադրության արժանի են նույն բառերի տարբեր գրություններ, որոնք միայն անուշադրության հետևանք լինելով հանդերձ, հաճախ շփոթության ու երկընտրանքի մեջ են գցում ընթերցողին. օրինակ՝ բառարանի 67-րդ էջում գրված է դեներուլ բառը, որի գիմաց՝ տված բացատրությունից (դամոլ, սալորի մի տեսակ) հետո գրված է դեմրուլը չուվալ ըն «վիզը բռնեցին ու սեղմեցինք», իրար կողքի երկու ուղղագրություն. ճիշտ է դեմրուլ. էջ 149-ում գրված է ծրղկամաճ, մինչդեռ նույն բառից տալիս է ծախկ (էջ 146), ծրխկաբափ, ծրխկաքաղ (էջ 148). հիշյալ բառը պետք է լիներ ծրխկամաճ. էջ 163-ում կոտիլ «կրտել», էջ 167-ում՝ կօտիլ. ճիշտ է կօտիլ. Ժողովածվի 3-րդ էջում ունի խրնդալ ա (տող 24), նույն էջի 29-րդ տողում՝ խրնդալ ա—ճիշտ ձևը, նույն էջի 23-րդ տողում՝ ախչաբքը, 34-րդ տողում՝ աշխաբքը, և այդպես անվերջ: Դրանք, իհարկե, չպետք է շփոթել այն բառերի հետ, որոնք ունեն երկու արտասանություն. ինչպես՝ բակու և ըրակու «բերեկոտ», շըղըպատուկ և շըպատուկ «պատատուկ բույսը» և այլն: Բառամիջի ը-ն երբեմն գրում է, երբեմն ոչ, առանց որևէ կանոնի:

Այդ բոլորի հետևանքով էլ աշխատությունը զրկվում է վստահությունից, մանավանդ, որ հեղինակը ավելի քան 30 տարի ապրել է Մեղրուց դուրս՝ Ադրբեջանական ՍՍՌ-ում, որի ընթացքում չատ բաներ կարող էր մոռացած լինել

(այդ աշխատությունները գրված են 1927—28 թվականներին)։ Ելնելով այդ բոլորից, մենք ստիպված էինք նրանից քաղած նյութերը ստուգել բարբառիս գիտակ մարդկանցով և խմբագրել, փոխելով նաև ուղղագրությունը։

Քանի որ գրավոր աղբյուրները սակավ էին և անվստահելի, ուստի մենք ստիպված եղանք ավելի շատ դիմել կենդանի խոսողներին. ինքներս մեր իմացածին չվստահելով, անընդհատ դիմել ենք բարբառիս գիտակ մարդկանց, ավելի քան 5 տարվա ընթացքում ամեն պատեհ առիթով՝ խոսակցությամբ, քե հարցումներով ստուգել ենք քե բառարանը, և քե քերականությունը շատ մարդկանց միջոցով։ Հատկապես պետք է հիշել 4 հոգու, որոնց միջոցով ծայրե-ծայր ստուգել ենք բառարանը, խոնարհումն ու հոլովումը՝

1. Գաբրիելյան Սամսոն (վախճ. 1939 թ. 86-ամյա հասակում)։
2. Մկրտչյան Շուշանիկ։
3. Մխիթարյան Վարդուհի։
4. Օհանյան Փառանձեմ։

Առաջինից գրի ենք առել նաև նմուշներ՝ Մեղրու բարբառով։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Մեղրու բարբառն, ըստ պրոֆ. Աճառյանի դասակարգման, պատկանում է հայերեն բարբառների «Ե» ճյուղին, իսկ ըստ Ա. Ղաբիբյանի հիշված աշխատության՝ «Ա» ճյուղին։ Շրջապատված լինելով մի կողմից Ագուլիսի, մյուս կողմից Ղարաբաղի բարբառներով, շատ կետերում Մեղրու բարբառը շփման մեջ է մտնում դրանց հետ։ Ըստ բաղաձայնական սխտեմի նա համընթաց է Ագուլիսի բարբառին, իսկ ձայնավորների սխտեմով ավելի մոտ է Ղարաբաղի բարբառին։ Հոլովման ու խոնարհման մեջ շփման կետեր ունի քե Ագուլիսի, և քե Ղարաբաղի բարբառի հետ։ Բայց, չնայած այդ նմանություններին, իսկ երբեմն էլ ուղղակի նույնություններին, Մեղրու բարբառն ունի իր ինքնությունն ու ոչ մեկի ենթաբարբառն է և ոչ էլ մյուսի։ Նա նույնքանով անհասկանալի է ագուլեցիների և ղարաբաղցիների

համար, որքանով վերջիններիս բարբառները արարատյան բարբառով խոսողների համար։

Մեղրու բարբառը ենթաբարբառ չունի։ Նույն շրջանի գյուղերի մեծ մասում խոսում են Ղաթաթաղի բարբառով (Լիճք, Տաշտուն, Շվանիձոր և այլն)։ Միայն Մեղրին, Կաքճանը և Կաքավաբերդն առանձին են մնում, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առանձին բարբառ, բայց իրար բավական մոտ, այնպես որ, ակնթարթորեն ներկայացնում են մի ընդհանուր բարբառի զարգացման տարբեր ընթացքն ու աստիճանը։ Դա պարզապես երևում է բայերի անկատար դերբայից, որ փոփոխման տարբեր աստիճաններով գտնում ենք այդ բարբառներում. այսպես՝ սկզբնական ձևը անվթար կերպով պահպանվում է Կաքավաբերդի բարբառում. օր. ելիս «գնալիս, գնում». միջին աստիճանը ներկայացնում է Մեղրու բարբառը, ուր նախ՝ յ-ի անկումով դարձել է գինձիս, ապա ն-ից հետո գոնդվելու պատճառով ի>յ փոփոխությամբ՝ գի'ձյս, վերջապես յ-ի կորստով՝ արդի գի'ձս «գնալիս, գնում» ձևը։ Շահյանցն իր քերականության մեջ ասում է, թե իր մանկության ժամանակ գործածվելիս են եղել գի'ձյս, ձձյս «գնում, գալիս» ձևերը (այժմ՝ գի'ձս, ձձս), որ և պարզ կերպով ցույց է տալիս անկատար դերբայի զարգացման միջին աստիճանը։ Նույն գի'ձյս ձևի զարգացման մի այլ ընթացք է ներկայացնում Կարճևանի բարբառը, ուր ընկել է ոչ թե յ-ն, այլ վերջահնդ ա-ն, որով և ստացվել է այժմյան ձեյ ձևը։ Այսպիսով, եթե անկատար դերբայի զարգացումը ներկայացնելու լինենք, կստանանք հետևյալ պատկերը. գնալիս>(գ)ձեյիս (Կաքավաբերդ)>(*գձեյիս) գի'ձեյո (Մեղրու հնագույնը)>գի'ձես (Մեղրի)>(գ)ձեյ (Կարճևան)։

Մեղրու երկու թաղերը զգալիորեն չեն տարբերվում իրարից։ Շահյանցն իր քերականության մեջ ասում է, թե Մեծ թաղում կավե ամանի կտորին ասում են բռնզվանի, Փոքր թաղում՝ խեցգէկ, Մեծ թաղում ըրկօսէ, Փոքր թաղում տրփրբաձդի «բրիչ» (<տափաքանդի). այժմ այդ տարբերությունները էլ չկան. առաջինի համար ընդհանրացել է բռնզվանի, երկրորդի համար՝ ըրկօսէ։ Այժմ եղած տարբերություններն կազմվում են հատկապես ի՛և իէ հնչյունների արտասանության մեջ, որ ավելի հարազատորեն պահպանված է Փոքր թաղում։

Ընդհանրապես պետք է նշել, որ Փոքր թաղում ամբողջ բարբառն առհասարակ ավելի լավ է պահպանված և ավելի հաճախ է գործածվում, քան Մեծ թաղում։ Դա նրանից է, որ Մեղրիում եղած բազմաթիվ օտարների ավելի քան 90 տոկոսը հենտրոնացած է Մեծ թաղում, որի շնորհիվ էլ բարբառն ավելի արագորեն է դուրս մղվել ու տեղի տվել նոր՝ գրականին մոտ խոսակցական լեզվին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՆԶԳՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մեզրու բարբառն ունի ընդամենը 43 հնչյուն. դրանցից ձայնավոր են 11-ը.

ա, ա̈, է, ը̈է, ը, ի՝, ի, օ, ու, ö, ü̈.

Երկբարբառներ չկան։
Բաղաձայններ՝ 32-ը.

բ պ փ	յ ռ ր լ վ
գ կ ք	մ ճ
գ՛ կ՛ ք՛	խ ղ ճ
դ տ թ	զ ս ժ շ
ձ ծ ց	
ջ ճ չ	

Ֆ հնչյունը չկա։

2. Հիշյալ հնչյունների արտասանությունն առանձնապես չի տարբերվում գրական հայերենի արտասանությունից։

Պետք է հիշել միայն հետևյալը.

ա̈, որ հանդիսանում է ա և է ձայնավորների միջին աստիճանը և արտասանվում է ինչպես ադրբեջաներեն ə։

ը̈է, որ ներկայացնում է է և ը ձայնավորների միջին աստիճանը, կա նաև Ղարաբաղի բարբառում։

ի՝ ներկայացնում է ը և ի ձայնավորների միջին աստիճանը, այսինքն՝ վերին բարձրացման ը է։

ö և ü̈ արտասանվում են ինչպես գերմաներեն ö, ü։

Բարբառիս թևթև (առաջնային շարքի) ձայնավորներն են.

ա̈, ի՝, ի, ö, ü̈։

Ծանր (եռին շարքի) ձայնավորներն են.
ա, է, ը, ը, օ, ու:

Բ, գ, դ, ձ, ջ լրիվ ձայնեզ պայթականներ են։

Գ, կ, ք հանդիսանում են գ, կ, ք պայթականների քմայնացած (палатализованные) տարբերակները։

Գ լինում է բառամիջում կամ բառավերջում՝ է, ի, ի՝ ձայնավորներից հետո, իսկ գ լինում է բառասկզբում, ինչպես և բառամիջում ու բառավերջում, բայց ոչ՝ է, ի, ի՝ ձայնավորներից հետո. օրինակ՝ ի՛գի «այգի», էգ «էգ», սի՛գէ՛նի «զգեստ», բայց՝ գէ՛րուկը «գարուն», ծնգունը «ծունկն», ընգէ՛ր «ընկեր» և այլն։

Կ լինում է սակավաթիվ բառերում միայն (տես § 175), Ք լինում է բառամիջում կամ բառավերջում է, ի ձայնավորներից հետո, բայց ոչ՝ բաղաձայնից անմիջապես առաջ. ինչպես՝ չօ՛խէք «չուխայք», ձի՛ք «ձեռք», մէ՛ք «մենք», բայց՝ նէ՛քսէվ «ի ներքո», ձէ՛քքիլ «ծծագել, լուսանալ» և այլն։

Ռ լինում է բառասկզբում, ինչպես և բառամիջում ու բառավերջում. ինչպես՝ ռաք «աք, ոսկր», դուռ, քար և այլն։

3. Հակառակ հին հայերենին, բարբառումս բառերը կարող են սկսվել ղ, ր բաղաձայններով. ղ-ի համար կա հետևյալ օրենքը. եթե ղ-ով սկսվող վանկը չէ, ապա ղ-ին նախորդող գրաբարյան ձայնավորը բոլորովին ընկնում է շեշտից առաջ գտնվելու դեպքում. ինչպես՝ աղաճձել>ղա՛ճձիլ, աղաճձոտ> ղի՛նձա՛հուտ, աղաճձոտ>ղա՛ճձո՛ւտ «ագահ», ուղարկել> զո՛ւրկիլ, ողորմի>ղո՛րմի, ողորմածիկ>ղորմացի՛կ։ Իսկ եթե ղ-ով սկսվող վանկը բաց է, ապա ղ-ից առաջ եղած ձայնավորը շեշտից առաջ լինելու դեպքում դառնում է ը. ինչպես՝ աղամաճ> ըղա՛մաճ, աղաչաք>ըղա՛չաք (նաև՝ ղաչաք), աղաջուր>ըղա՛ջո՛ւր, աղավնի>ըղո՛նէ, ողողել>ըղո՛ւղիլ։

Ր-ով կարող է սկսվել բառը, եթե ր-ին հաջորդում է որևէ ձայնավոր. ինչպես՝ երախայ>րախէ, արեգակն>րէգնակ, արածել> բածիլ, երեկոյ>րակու, երազի>րազէ «երազում» և այլն։ Այդ բառերը, սակայն, կարող են ստանալ ը, հատկապես այն դեպքում, երբ նախադասության մեջ նրանց նախորդում է բաղաձայնով վերջացող բառ, որով և այդ բառերից ստացվում են կրկնաձևեր.

ինչպես՝ բա՛խէ և բրա՛խէ, բածիլ և բրա՛ծիլ և այլն։ Հետաքրքրական օրինակ է առնել>ա՛բիլ բայի ներկան և անցյալ անկատարը, որ լինում է առանց բ-ի, եթե հաջորդում է ձայնավորով վերջացող բառի, և բ-ով՝ եթե հաջորդում է բաղաձայնով վերջացողի. ինչպես՝ ես ձդի բէս ճնա այդպես է անում», ես ձդի լա՛ բէս ճնա այդպես էր անում», բայց՝ իս ձդիմ բրէս ճես այդպես եմ անում», իս ձդի չիմ բրէս ճես այդպես չեմ անում» և այլն։

Թրան հակառակ, բարբառումս բառերը ռ-ով չեն սկսվում. նույնիսկ պարսկերենից ու արաբերենից փոխառած բառերն էլ, որոնք սկսվում են ռ-ով, հաճախ սկզբից սոսանում են բ-ի, ինչպես՝ razi>բռազի կամ ռազի «գոհ», ruzi>բռուզի «պաշար», rast>բռաստ կամ ռաստ «ուղիղ», այդպես և՝ ռուս>բռուս և այլն։

2. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ա. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս.

4. Մեկ և մեկուկես վանկանի բառերի սկզբում գրաբարյան ա ձայնավորը ճեացել է անփոփոխ. եղած օրինակները հետևյալներն են. ազն>ազր «գործելիք կտավի սկզբի քե երթը», ազգ>ազգ, ահ>ահ, աղ>աղ, աղբ>ախպ, ակն>ակ՝ անդ>հանդ, առք>արք «գինի», արջ>առջ, արտ>արտ, աք>աք «առաջ», անց(կենալ)>անց(կալ), ադ(անել)>ադ(արիլ), ապք>ապչկ (փեթակի), աստղ>աստղ, ափն>ափ «խմորի տաշտի եզրը»։

Բացառություն են կազմում. աչ>ա՛չ, աղտ յէկտ, բառերը։ Աղտ բառի մասին պրոֆ. Աճառյանը տալիս է հետևյալ բացատրությունը. Ագուլիսի բարբառում «աղտ բառը պարձել է էխտ. Նույն բանը նկատելի է նաև Ղարաբաղի բարբառում, ուր աղտ պարձել է յէխտ։ Արևելյան բարբառների մեջ աղտ բառը սովորաբար ընդելուզվել՝ փոխանակված է կեղտ բառով. աղտ բառը հատուկ է արևմտյան բարբառներին։ Ագուլիսի և Ղարաբաղի բարբառները ներկայացնում են այս դեպքում մի ինքնատիպ։ Այդպես է նաև Մեղրու բարբառը։

1 Պրոֆ. Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 23։

6. Երկվանկ բառերի սկզբում՝ շեշտի տակ ա-ն միայն է անփոփոխ, եթե հաջորդ հնչյունը ր չէ։ Այդ կարգի բառեր են. ազատ>ազատ, աթոռ>աթոռ, ախոռ>ախուռը, ածել>ածիլ, ականջ>անդուճ, ակիշ>ակէշ, ապագ>ապագայ մուտքի ճանապարհ», աղալ>աղիլ, աղբիւր>ախպիւր, աղեղն>աղէղնը, աղեակ>աղակ «լավ», աղիք>աղէնք, աղջիկ>ախչէկ, աղուէս>աղվէս, աղուն>աղուն, աղքատ>ախ կատ, աղօթք>աղուքէկ, աման>աման, ամառն>ամառնը, ամբար>ամբար, ամէն>ամէն «եղիցի», ամիս>ամէս, աներ>հանէր, անժամ>անժէմ, անիծ>հանէծ, անուն>անուամ, անպէտք>անպէքէկ, անտէր>անդէր, անքուն>անքոճն, աշխարհ>ախշարք, աշուն>աշօնք, ապրանք>ապրանք, առակ>առակ, առնիլ>արիլ, առնուլ>առիլ, ասել>ասիլ, ասէղն>ասուղ, աստառ>աստառ, ատել>ատիլ, անէծք>անէսկ, աղի>աղէ, անձրև>անձրիվ, աւազ>ավազ, անառատ>անդատ և այլն։

Առաջ>էռէջ, ըստ պրոֆ. Աճառյանի, ստացվել է յառաջ ձևից։ Առեղտ>ըռնստ, արիւնել>ըռնիլ բառերում ա-ն դարձել է ը և անկան>ինգ'էն բառում՝ ի՝, շեշտը վերջին վանկում լինելու պատճառով։ Ը-ի փոխարեն ի՝ լինելու մասին տես § 8։

Վերոհիշյալ օրենքից բացառվում են հետևյալ բառերը. ամէն>ումմէն «բոլոր», ագի>ձէ'գ'ին, անկեալ>ա'նգալ, ապրայ>աբրէ, աւել>ա'վիլ բառերը, որոնցից վերջին երկուսը ա-ն դարձել է ա ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն։

6. Երկվանկ բառերի սկզբում, ր-ից առաջ շեշտակիր ա-ն դառնում է ա. այս օրենքին ենթարկվող բառերն են. արև>ա'րիվ, արժել>ա'րժիլ կամ ա'ժժիլ (վերջինն ավելի գործածական), արիւն>արնէն, արծիւ>ա'րծէվ, արձիկ>ա'րճնէճ, արդար>ա'րդար, արթմար, արբել>հա'րբիլ, արձակ>հա'րզակ, արժան>ա'ժժի «արժանի, լավ»։

Արդար բառը կա և ա'րդար, և արթար ձևերով. առաջինը գործածվում է առարկաների, հատկապես յուղի վերաբերմամբ՝ «անխառն» իմաստով, իսկ երկրորդը՝ մարդկանց նկատմամբ. առաջինը բուն ժողովրդական է, երկրորդը՝ գրական փոխառություն, որ երևում է նաև ղ>թ հնչյունափոխությունից։

Արմաւ բառը նախ ըստ այս օրէնքի դարձել է ա՛րմաւ, ապա՝ տեղափոխութեամբ՝ ա՛մրաւ և վերջապես՝ մր խմբուած բ-ի ավելացմամբ՝ ա՛մբրաւ։

Արժան բառից բարբառաս ունի երկու ձև՝ ա՛ժժի «արժանի, լավ» և ի՛ժան «արժան» տարբեր իմաստներով. վերջինս առաջացել է ժողովրդական էժան ձևից։

Բացառութիւն են կազմում. արմուկն>արմունգ և արջառ>աշառը բառերը, որոնցից առաջինում անփոփոխ է մնացել հնչորդ՝ ու ծանր ձայնավորի ազդեցութեամբ, իսկ երկրորդում՝ բ-ի անկման պատճառով։

7. Պարզ և ածանցավոր բազմավանկ (երեք և ավելի վանկ ունեցող) բառերի սկզբում շեշտից առաջ եղած ա-ն բոլորովին կորել է, եթե բառի առաջին վանկը բաց է։ Այս օրէնքին ենթարկվող բառերն են. ածելի>ծիլէ, ախարոց>թարուց «ծոների կրակը խառնելու փայտ», աղանձել>դա՛նձիլ, աղանձուտ>դա՛նձուտ «աղանձ», անանուխ>նանուխ, ապսպրանք, ապսպարք>փա՛սպարք, ապսպարել>փըսպա՛րիլ, ապաշխարող>բըշխա՛րուղ (Շահ-Ասլանցի մոտ՝ բըբշխարուղ), ապրշում>պըրծո՛ւում, ապըրշումէ>պըրըշմէ՛, արածել>րծա՛իլ և ըրծա՛իլ (ըստ § 3-ի), արեգակն>ըէ՛նակ (տես նաև § 8), աքացի>քա՛ցէ, աքացի տալ>քա՛ցէ տալ։ Այսպես և՝ անկանել>նա՛նիլ «ընկնել» բառը, որի առաջին վանկը կ-ի անկումով՝ բարբառումս դարձել է բաց (անկանել>անանել>նանիլ). անթեղնել բառից ունենք ընթէ՛ղիլ և թէ՛ղիլ. վերջինում ն-ի անկումով նոյնպես սկզբնավանկը դարձել է բաց։

Այս օրէնքին հակառակ ունենք. առակութիւն>ըռըկօ՛թիւն «խայտառակութիւն», առաջը(ին)>ըռա՛շկէն, առած(ք)ով>ըռա՛սկավ «փոխաբերաբար», առաւօտ առնել>ըռավո՛տ արիլ «վաղ տառվոտյան տնային գործ կատարել», աղաւնի>ըղո՛ճէ, աղէկանալ>ըղըկանի՛լ «լավանալ», աղէկութիւն>ըղըկօ՛թիւն, աղաչանք>ըղա՛շանք բառերը, որոնցից առաջին չորսում ա-ն չի կորել, այլ դարձել է ը՝ ո-ից առաջ լինելու պատճառով, իսկ մնացած չորսում՝ ղ-ից առաջ լինելու պատճառով. այդ բոլորն էլ միանգամայն համապատասխան են § 3-ում տրված կանոններին։

Ալաժաների>ալաժէ՛նըէ «մի տեսակ բույս» արաբերենից փոխառված բառ է։ Ագահ>ականի՛ բառը փոխառված է ուրիշ բար-

բառից, որի ապացույցն է նաև գ>կ փոփոխությունը. ասեղ-ճաւոր>բսրդնճավուր բառում ա-ն չի ընկել անշուշտ սեղանաւոր> սբդնճավուր «սեղանակից» բառի հետ չշփոթելու համար։

8. Մի քանի բառերի սկզբից ավելացել է ն հնչյունը, որի պատճառով և սկզբի անշեշտ ա-ն բնականաբար ոչ թե ընկել, այլ դարձել է ը կամ ի՝. եթե հաջորդող վանկի ձայնավորը բարբառումս ծանր է, ա-ն դառնում է ը, իսկ եթե թեթև է, ապա՝ դառնում է ի՝։ Նդած օրինակներն են. աջողութիւն>հրջըղօքին, ամաչել>հրմանչիլ, ամաչկոտ>հրմանչկուտ, ամաչեցուցանել> հրմընչցայ իլ. Լագրակ>Հի՛գէ՛րակ (տեղանուն), ալևոր>հըլէ՛-վուր, ալևորութիւն>հի՛լի՛վի՛ըօքին։ Արեգակն բառից ունենք բէ՛նակ առանց ն-ի հավելման, և ընբէ՛նակ, ն-ի հավելմամբ։

9. Պարզ և ածանցավոր բազմավանկ բառերի սկզբում ա-ն շեշտից առաջ, փակ վանկում դարձել է ը, եթե հաջորդ վանկի ձայնավորը ծանր է. այդ բառերն են. ակնոց, ակնանոց>ըկնա-նուց, ամսական>ըմսական, աղքատանալ>ըխկըրտանիլ, աղքա-տութիւն >ըխկրտօքին, առաջնակ>ըոջընակ, աստառել>ըստա-ռիլ, արմանալ>ըրմանիլ, արտասուք>ըրտասօնք, ազնուա-կան>ըզնըվական։ Եթե հաջորդ վանկի ձայնավորը թեթև է, ապա դառնում է ի՝. ինչպես՝ արձակել>ի՛ըձա՛կիլ, աւելանալ>ի՛վլա՛-նիլ, որի սկզբնավանկը բարբառումս փակ է։ Ա-ն դարձել է ի՝ նաև անկանակ>հի՛նդկնակ գլվացքի տաշտ» բառում, քանի հա-ջորդ վանկի ձայնավորը ծանր է. անշուշտ այդպես է ստացվել հաջորդող բմայնացած գ-ի պատճառով։

10. Բարդ բառերի սկզբում ղեշտից առաջ քիչ քաշ, և քիչ փակ վանկի ա-ն ոչ թե ընկնում, այլ դառնում է ը բարդությանն առաջին եզրի անկախ գիտակցման շնորհիվ. ինչպես՝ աղամանի> ըղամանի, աղջուր>ըղջուր, աղբախոտ>ըխպախոտ, աղբա-նոց>ըխպանոց, աղրիւրաջուր>ըխպըրջրիր, ակնացու>ըկնա-ցու, ազրաքել>ըզրաքիլ, ազրափայտ>ըզրափէտ, ականջատակ> ընգըճատակ, ակնալուսէք>ըկնըլու՛սէ՛ք և այլն. Աղանձաճոտ բա-ռի դի՛ճձի՛րմա՛ճոտ ձևն առաջվել է խանձաքաճոտ բառի խաչավոր-մամբ. ա-ն ընկնել է համաձայն § 3-ի։

11. Գրական և կրոնական փոխառություններում, հակառակ վերոհիշյալ երեք օրենքներին (§§ 7, 9, 10) բառասկզբի ա-ն մը-նում է անփոփոխ՝ անկախ շեշտակիր կամ անշեշտ լինելու հան-

գամանքից. ինչպես՝ աւազակ>ավազակ, ազգական>ազգական, աթոռական>աթոռական, ազատել>ազատել, աշակերտ>աշակերտ, աշխատանք,>աշխատանք, արքայութիւն>արքայութիւն և այլն։

12. -ան բացառական հոլովման ենթակայական նախամասնիկի ա ձայնավորը բոլոր դեպքերում էլ միատեսակ է մնում և անփոփոխ, մասնիկն անկախ գիտակցելու պատճառով. ինչպես՝ անամօթ>անամօթ, անհեթեթ>անհեթեթ, անիրաւ>անիրաւ (գրական փոխառութիւն), անդադար>անդադար, անլեզու>անլեզու, անպատկ>անպատկ, անչիշատակ>անշիշատակ, անսխալ>անսխալ և այլն։

Անալի բառը դարձել է ենալ, որովհետև աղի ձևն այլևս չի կապակցվում ալի ձևի հետ, մանավանդ որ առանձին գործածվում են աղ, աղի բառերը. դրա շնորհիվ ամբողջ անալի բառը գիտակցվել է իբրև մի պարզ բառ, իսկ իբրև այդպիսին՝ սկզբի բաց վանկի ա-ն շեշտից առաջ բոլորովին բնկել է, համաձայն § 7-ի։

Նույն ձևով էլ անվարտի>լվմարտէ բառում ն>լ փոխառութեան պատճառով մասնիկը չի գիտակցվել, և սկզբի ա-ն շեշտից առաջ լինելով բնկել է ըստ § 7-ի։

13. Վերոհիշյալներից դուրս, բառասկզբի ա-ն դարձել է ա հետևյալ բառերում. աշկաբայ>աշկաբայ, արիւնաթաթախ>արիւնաթաթախ, արիւնլուայ>արիւնլայ՝վայ. դրանցից առաջինը նոր փոխառութիւն է ադրբեջաներենից, իսկ վերջին երկուսում անփոփոխ է մնացել առանձին գործածվող այրուն ձևը՝ անկախորեն գիտակցվելու պատճառով։

14. Մեկ և մեկուկես վանկանի բառերում ձայնեղ պայթականներից (բ, գ, դ, ձ, ջ) և զ, ժ, շ, լ, ճ, շ հնչյուններից հետո ա-ն դառնում է է։ Այս օրենքին ենթարկվող բառերն են. բակ>բէկ «ավերված տան տեղ», բան>բէն, բան>բէն, բանել, բան առնել>բէն արիլ, բարդ>բէրդ «30 խուրձ խոտ», բարձ>բէրձ, բաց>բէց, գաբ>գէփ, դար>դէր «լանջ», դափ>դէփ, ձագ>ձէգ, ձախ>ձէխ, ժախ>ջէխ, շաղ>շէղ, շահ>շէհ «օգուտ, տոկոս», շամբ>շէմբ, շատ>շէտ, շար>շէր, շարժ>շէրժ «երկրաշարժ», զարդ>զէրդ, ժաժ>ժէժ, ժամ>ժէմ, ժանգ>ժէնգ, լալ>լէլ, լանջ>լէնջ, լափ>լէփ, ճաշ>ճէշ, ճանգ>ճէնգ, ճահ գալ>ճէհ գալ «հարմարվել, ընկերանալ», չափ>չէփ, բարձր>բէձըր, բէ՛ձուր, դաղձն>դէզնը,

*դառն>դէռնը, Դաշտ>Դէշտ (տեղանուն), ժամր>ժէմր ֆթուչնա։ Այդ փոփոխությունը պահպանվում է նաև բարդությունների երկրորդ եզրում. ինչպես՝ *խոնջանադարձ>խընջընջնադէրձ ֆարաթիթի այն անցքը, որի միջով անց է կացվում խոնջանը կամ գոտինը, անժամ>անժէմ, չանաճանճ>չընճանճէնջ, գլխարաց>գըլխըբէ՛ց և այլն։*

Գալ, գառն բառերի մասին տես § 30։

Ջաճ բառի դիմաց բարբառոս ունի ճառ. այդպես է նաև Ագուլիսի և Ղարաբաղի բարբառներում, անհայտ պատճառով։

Լակ>լակ ֆշների կերակուրն, ճաղ>ճաղ, ճար>ճար բառերում ա-ն ճեացել է անփոփոխ՝ հակառակ օրենքի։

Տարօրինակ է բանկ>պրնգըլ բառը։

15. Վերոհիշյալ օրենքին չեն ենթարկվում գրական, կրոնական, ինչպես նաև ադրբիջաներենից փոխառված բառերը. ինչպես՝ գանձ>գանձ, դատ>դադ, բախտ>բախտ, գազ>գազ և այլն։

16. Մնացյալ բոլոր դեպքերում մեկ և մեկուկես վանկանի բառերի մեջ ա-ն ճեում է անփոփոխ. ինչպես՝ քագ>քագ, խաշ>խաշ, ծալք>ծալք, կապ>կապ, համ>համ, նաւ>նավ, պապ>պապու, վար>վար, տակ>տակ, ցաւ>ցավ, փակ>փակ ֆփականքն, քար>քար և այլն։

Անփոփոխ է ճեում նաև ա-ից հետո, թեև նրան համապատասխան շ, ժ, զ հնչյուններից հետո դառնում է է. Այսպես, ուենենք՝ զարդ>զէրդ, ժամ>ժէմ, շատ>շէտ, բայց՝ սալ>սալ, սանդ>սանդ, սառն>սառնը ֆտառույցն, սար>սար և այլն։

Բացառություն է կազմում միայն ծագ>ծէք (որից էլ՝ ծագել>ծէքքիլ), որի մեջ ա-ն դարձել է է հաջորդող քմայնացած ք-ի պատճառով։

17. Մի քանի միավանկ ու մեկուկես վանկանի բառերում ա-ն դարձել է ա, որի համար որևէ օրենք գտնել չկարողացանք. Այդ բառերն են. թանձր>թանձիր, թառ>թառ (հավերի), ծափ>ծափ, հալ>հալ ֆհալոցն, հազ>հազ, վարդ>վարդ, քաշ>քաշ ֆցածր., նամ>նամ, մարտ>մարդ (ամիսը). վերջինը փոխառված է որևէ ուրիշ բարբառից. այդ երևում է նաև տ>դ փոփոխությունից, որ բարբառումս չի կատարվում։

18. Երկվանկ ու բազմավանկ (երեք և ավելի վանկ ունեցող) բառերում չեշտակիր վանկի ա-ն ձայնեղ պայթականներից

(բ, գ, դ, ձ, ջ) և զ, ժ, շ, լ, ճ, չ հնչյուններից հետո դառնում է է: Այս օրենքին ենթարկվող բառերն են. անդամի>անդէմը «անասունների ազգերը», բամբակ>բէմբակ, բաժինք>բէժինքի, բակլայ>բէկլէ, բանալ>բէնիլ, բանջար>բէնջար, բաշխել>բէշխիլ, բարակ>բէրակ, բարով գալ>բէրավ գնէլ «անասունների ուղտվորվելը», բազում>բէզուկ (համամասեռությունը), եղբայրբաժին>ըղպըրբէժին «հավասար բաժին», յերբանըացուկ>յի՛րի՛նբէցուկ «առնրոջ կողմից փեսային տրվող առաջին ընծան», Ագաբակ>Հի՛գէբակ (գյուղի անուն), անկան>հի՛նգէն, անկանակ>հի՛նգէնակ «լվացքի տաշտ», գագաթն>գէ՛գաթ (գլխի), գազար>գէ՛զար, գաղել>գէ՛ղիլ, գաղուածք>գէ՛ղվածք, գանգատ>գէ՛նգաթ, գաւաթ>գէ՛վաթ, գագար>գէ՛գար, գագարել>գի՛գէ՛րիլ, գանակ>գէ՛նակ, գաճաղ>գէ՛ռնիլ «կատաղել», գալար>գէ՛լար, գառաբկ>գէ՛րտակ, գառել>գէ՛դիլ «վաստակել», գարան>գէ՛քան «առտրերկրյա թաքստոց», գարմանդ>գէ՛րմանդ «հարդ», ջագագ>ջէ՛գագ, պատրյան>պըտրըջէ՛ն, գանգակ>գէ՛նգէ՛նակ, զարգարք>զէ՛րդարք, ծառգարդար>ծըռգէ՛րդար, հազար>հի՛գէ՛ր, ժանգառք>ժէ՛նգէ՛ռք, ժանգոտ>ժէ՛նգէ՛ռտ, գժուար, գժար>գի՛ժէ՛ր, բաժանել>բի՛ժէ՛նիլ, նշան>նի՛շէ՛ն, նշանուիլ>նի՛շէ՛նվիլ, շաբաթ>շէ՛բաթ, շալակ>շէ՛լակ, շաղախ>շէ՛ղաղ, շամբուտ>շէ՛մբուտ, շամփուր>շէ՛մփուր, շաբիկ>շէ՛բիլ, շարժել>շէ՛րժիլ, փշատ>փի՛շէ՛տ, լափել>լէ՛փիլ, լար(ան)>լէ՛րան «վուշյա թել», լարել>լէ՛րիլ, լացկան>լէ՛ցկան, ճակատ>ճէ՛կատ, ջախջախել>ճըճէ՛խիլ, կճղակ>կճաղակ>կըճէ՛ղակ, չափել>չէ՛փիլ, կաչաղակ>քըչէ՛ղակ, յիշատակ>շէ՛տակ, ալաժանդրի>ալաժէ՛նդէ «մի տեսակ բույս», անյիշատակ>անշէ՛տակ: Նույնպես և ժողովրդական բառերում. ինչպես՝ ճամբրուկ>ճէ՛մբրուկ, չառավ>շէ՛ռավ «հորդ անձրև» և այլն:

Այսպես է նաև հոլովման ու խոնարհման ժամանակ, երբ շեշտի տեղափոխության հետևանքով այդ հնչյուններից հետո հայտնվում է շեշտի տակ. ինչպես՝ հօրեղբայր>հէ՛ղբար, սեռ. հի՛րբէ՛րու, բանջար>բէ՛նջար, սեռ. բի՛նջէ՛րու, շալակ>շէ՛լակ, շի՛լէ՛կիլ իմ «կշալակեմ», գանգատ>գէ՛նգաթ, գի՛նգէ՛տվալ քմ «գանգատվեցի» և այլն:

Բանալի բառը դարձել է բի՛լա՛նի. լ-ից հետո ընկած ա-ն չի դարձել է՝ հակառակ օրենքի. բայց դրանից կարելի է եզրակաց-

նել, որ ե–ւ>ւ–ն տեղափոխությունը կատարվել է ավելի ուշ, այն ժամանակ, երբ ա>է հնչյունական օրենքը այլևս դադարել էր գործելուց։

Գարի, գդալ բառերի մասին տես § 30։

Ճանապարհ բառը դարձել է ճանճենց. ճ-ից հետո՝ հակառակ օրենքին՝ ա-ն է չի դարձել, քիևևս երկրորդ վանկի ա>է փոփոխության պատճառով։ Ի միջի այլոց պետք է նշել, որ բարբառում և ոչ մի բառում երկու ա միաժամանակ չեն դառնում է. այնպես որ, մի բառի ավյալ ձևում ա-ից առաջված մեկ է միայն կարող ենք ունենալ։

Ջամիչ բառի մասին տես § 26։

Իրրև բացառություն ան է չի դարձել հետևյալ բառերում. ճճնաճ>ըճնաճ, լակոտ>լակուտ, լակել>լակիլ (համմ. § 14, լակ>լակ), արձակել>ի՛րձա՛կիլ։ Վերջինս գործածվում է ժէմը ի՛րձակիլ ժամից արձակել, արարողություն ամարտից դարձվածքում, և այդ պատճառով էլ կրոնական բառերի շարքին պետք է դասել։

19. Վերոհիշյալ օրենքին չեն ենթարկվում՝

ա) Անորոշ դերբայի ալ իլ/ըլ-ի վորոշության և աճ (ալ) միջմասնիկի ա ձայնավորը, ինչպես՝ պպպիլ>պրճպրճալ, քանչել>քանչալ>քըրչալ, վզգալ>վրզգալ, իրինչալ>իրրիրնչալ, աւեւանալ>ի՛վլի՛նիլ, քանդանալ>քընդանիլ, հիւանդանալ>հիվընդանիլ, քաշանալ>քի՛շի՛նիլ և այլն։ Իրրև բացառություն ունենք՝ լրրաճալ>լի՛րբէ՛նիլ։

բ) Բարդությունների ա հոդակապը և բարդության երկրորդ եզրի սկզբի ա ձայնավորը. ինչպես՝ ապրաթիլ>բզրաթիլ, ականջատակ>ընգըճատակ, բոժոժաքաղ>բի՛ժժի՛քաղ, գէշախօսք>գի՛շախօսկէչալախոսք, դրգալափոխ>դի՛գլի՛փոխ «երկու հոգի մի գդալով փոխեփոխ ուտելը», ճանճակուիթ>ճի՛նճակուիթ «փեթակի աչքը, ուր միշտ կխտված են լինում մեղուները», ունջաւիլ>ընջի՛վիլ «ունջ մաքրելու երկար կոթով ավել», այլ այսօր>ի՛լի՛սիր «հաջորդ շաբաթվա այս օրը» և այլն։ Հոդակապի ա կամ ի լինելու մասին տես § 254։ Դրանց հակառակ ունենք՝ թանկագին>բընգէ՛գին, որձատու>ըրձէ՛տու «անպտուղ», առաջինում՝ քիևևս հաջորդող քմայնացած գ-ի պատճառով, իսկ երկրորդում՝ բաղաձայինները չդիտակցելու պատճառով։

գ) Այն բառերը, որոնց մեջ գրաբարյան ձայնեղները որևէ պատճառով բարբառումս դարձել են խուլ. ինչպես՝ ազբանոց> ըխպանոց, ազբախոտ>ըխպախոտ, բաժին>պաժին (համմտ. բաժինք>բէ՛ժինք, ևղբայըրբաժին>ըխպըրբէ՛ժին), բարեկամ> պարէկամ, բարեաւ>պարաւ, բարի>պարի, ագահ>ակահ և այլն։

Բացի առաջին երկուսից, մյուսները բոլորն էլ փոխառված են ուրրշ բարբառներից (տես նաև § 142)։

դ) Գրական և կրոնական փոխառությունները. ինչպես՝ ազգական>ազգական, հարազատ>հարազատ, ժլատ>ժըլատ, աւազակ>ավազակ, գանձանակ>գանձանակ, ժառանգ<ժառանդ, չարչարել>չարչարիլ, ազատել>ազատիլ։ վախճանուիլ>վախճանվիլ, ճարտար>ճարտար և այլն։

20. Երկու բառում -անք վերջամասնիկը՝ շեշտի տակ լինելով՝ դարձել է -էք՛. դրանք են. մոկտանք>մըխկրտէք՛, խըրխրնջանք>խըրխրնջէք՛: Նույն վերջամասնիկը նախորդող ը-երից հետո շեշտի տակ կա նաև խղճմտանք>խըժմըտանք, փշրանք> փի՛շրանք, երկմտանք>ըրկմըտանք բառերում, որոնց մեջ ա-ն էլ չի դարձել. ուստի, չպետք է կարծել, թե -անք մասնիկն է դարձել էք՛, այլ այդ բառերը կազմված են էք՛(<իք) մասնիկով, որը գործածական է բարբառումս (տես նաև §§ 402, 16)։

21. Մնացյալ դեպքերում շեշտակիր վանկի ա-ն ևս մում է անփոփոխ. ավելի քան երեքտարյուր բառերից բերում ենք մի քանիսը միայն. ինչպես՝ ակնածանք>ըկնածանք «ագահ», ազբատանոց>ըխկըտանոց, անկանել>նանիլ, թակել>թակիլ, երբախայ>ըրպախէ, անանուխ>նանուխ, խանութ>խանութ, մանրել> մանդիլ «կոտրել», մատակ>մատակ «առուծ» և այլն։

22. Մոտ վաթսուն բառում շեշտակիր ա-ն դարձել է ա, մեծ մասամբ ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն. ինչպես՝ ավելանալ>ի՛վլա՛նիլ, բակիկանալ>բի՛բի՛կա՛նիլ, թաթուլ>թա՛թնթուլ «թաթիկ», կիրակէ>գի՛րա՛կէ, կանեփ>կա՛նիփ, ծարոյր>ծա՛րնիր, խանդակ>խա՛նդակ, լեզուանի>լի՛զվա՛նէ և այլն։ Այդ կարգի փոփոխությունների մասին ավելի մանրամասն կխոսենք «Ձայնավորների ներդաշնակությունը» հատվածում։

23. Երկվանկ ու բազմավանկ բառերում շեշտից առաջ գտնված ա-ն դառնում է ը, եթե հաջորդող վանկի ձայնավորը

ծանր է։ Ավելի քան ութսուն բառերից բերում ենք մի քանիսը. կարկատել>կըըկ'ատիլ, հասուցանել>հըսցա՛նիլ, շաղախել>չըղախ-ղիլ, տանտուէր>տընտ'ուր, քանաքստել>քընըկ'ուտիլ, ծակծա-կոտել>ծըկծըկ'ուտիլ, ծառատակ>ծըռա՛տակ, կարօտել>կըրու-տիլ, կատադել>կըտա՛ղիլ և այլն։ Երեք բառում ը-ի փոխարեն ունենք ի՝, թեև հաջորդ վանկի ձայնավորը ծանր է. այդ բա-ռերն են. բերանբացուկ>բի՛րի՛նբէ՛ցուկ, զարդարել>զի՛րդէ՛րիլ, դադարել>դի՛դէ՛րիլ։ Վերջին երկուսի՝ ատացվել է ա>է-ից, որի մասին տես § 257, բ։ Առաջին բառում դարձել է ի՝ նա-խորդի ազդեցութեամբ։

24. Երկվանկ ու բազմավանկ բառերի ա-ն շեշտից առաջ դառնում է ի՝, եթե հաջորդող վանկի ձայնավորը թեթև է, ինչ-պես և՝ եթե նրան հաջորդում է գ կամ նախորդում են գ, կ, ք հնչյուններից մեկն ու մեկը։ Այս օրենքին ենթարկվող բա-ռերն են. բահել, բարեկ>բի՛հիլ, բանալի>բի՛լա՛նի, բանեցնել>բի՛նցա՛նիլ, բարեկենդան>բի՛րգինդա՛ն, գերմանացնել>գի՛րմի՛կ-ցա՛նիլ, դամարել>դի՛մբի՛րիլ, դամարած>դի՛մբի՛րա՛ծ, դառ-նացնել>դի՛նդի՛ցա՛նիլ, քանձրանալ>քի՛նձի՛րա՛նիլ, ծագծագո-տել>ծի՛գծի՛գո՛տիլ, ծիրանի>ծի՛րի՛նի, չամչամլերեք>չի՛մչի՛-ղե՛րիք, կապտել>կի՛պի՛տիլ, սալորենի>չի՛լի՛րի, քամելեք>քի՛միլէ, սպարդիլ>սի՛փի՛րքնիլ «ժժգունել», սպարդած>սի՛-փի՛րքնա՛ծ, ծարուրել>ծի՛րու՛րիլ, քաշանալ>քի՛շա՛նիլ, դառ-նութենի>դի՛նդո՛քին, գանաքարուրդ>գի՛նդա՛քու՛րդ, գանգակա-տուն>գի՛նգի՛կա՛տուն, գանգատաւոր>գի՛նգի՛տա՛վուր, կա-մուրջատեղ>կի՛մի՛նջա՛տէղ, ձեռքափակութիւն>ձի՛քի՛փըղկո՛թին «ժլատութիւն»։

Նույն պարագայում կատարված ա>է>ի՝ փոփոխության մասին տես § 257, բ։

Շեշտից առաջ գոնվող ա հոդակապի ը կամ ի՝ դառնալու մասին տես § 254։

25. Վերոհիշյալ երկու օրենքներին (§§ 23, 24) չեն ենթարկ-վում գրական և կրոնական փոխառությունները. ինչպես՝ աշ-խատանք > աշխատանքն, դատաստան > դատաստան, վաճառա-կան>վաճառական, հասատուել>հաստա՛տիլ, ժառանգել>ժառա՛նգիլ վարժապետ > վարժապէ՛տ, տիրացու >տիրա՛ցու, գանձանակ> գանձանա՛կ, վարդապետ > վարդապէ՛տ և այլն։

Այդ օրենքներին չեն ենթարկվում նաև այլ բարբառներից և ադրբեջաներենից փոխառած բառերը. ինչպես՝ շամամ>շամամ, ագահ>ակահ՛, բամբասանք>պամբասանք, բարեկամ>պարբեկամ, սադայել>սաթայէ՛լ և այլն։

26. Վերջին անշեշտ վանկում -նշ-ից առաջ ա-ն դառնում է է. այս օրենքին ենթարկվող բառերն են. կանաչ>կա՛նէչ, համաչ>համէչ, ճանաչ>ճանէչ, անհամաչ>անհամէչ, գրաճանաչ>գի՛րի՛ճանէչ։

Ջոքանչ բառը բարբառումս դարձել է զէ՛նքուճ, ո—ա>ա—ու տեղափոխությամբ. ա-ն է պետք է դառնար քէ առանց տեղափոխության՝ -նշ-ից առաջ, և քէ տեղափոխվելու դեպքում՝ զ-ից հետու։

Ջամիչ բառը բարբառումս դարձել է չոմէնչ։ Ագուլիսի բարբառում այդ բառը գոյություն ունի չամուչ ձևով։ Պետք է ենթադրել, որ Մեղրու բարբառն էլ նախապես ունեցել է այդ ձևը, որից հետագայում ա—ու>ու—ա տեղափոխությամբ և ն-ի հավելումով ստացվել է չումանչ ձևը, որից էլ՝ այս օրենքի համաձայն՝ -նչ-ից առաջ ա>է փոփոխությամբ չոմէնչ ձևը (ու>օ փոփոխության մասին տես § 78)։

Ուրիշ բառ կամ բացառություն չկա։

Նույն բառերի վերջին անշեշտ անչ>էնչ վանկը, եթե շեշտ տակ է ընկնում, վերականգնում է իր սկզբնական ա ձայնավորը. ինչպես՝ ճանէնչ—ճընանչու, կանէնչ—կընանչիլ. այդպես և հոլովման ժամանակ՝ համէնչ—հըմանչու, ճանէնչ—ճընանչու և այլն։

Ջոմէնչ բառն այս օրենքին չի ենթարկվում, այլ ամեն դեպքում էլ մնում է անփոփոխ. ինչպես՝ չոմէնչու, չոմէ՛նչէն, չոմէնչե՛ և այլն։

27. Շեշտից հետո (վերջին վանկ) գ-ից հետո ա-ն դառնում է ա. ինչպես՝ զանգակ>զէ՛նգա՛կ, գանգատ>գէ՛նգա՛տ, գագաթ>գէ՛գա՛թ, բեկար>բէ՛գա՛ր, ցագան>ցէ՛գա՛ն և այլն։

28. Շեշտից հետո մնացյալ բոլոր դեպքերում ա ձայնավորը մնացել է անփոփոխ, կամ դարձել է ա, ձայնավորների ներդաշնակության օրենքով. Ավելի քան երկու հարյուր բառերից բերում ենք միայն մի քանիսը։

ա>ա.—Ամսական>ըմսական, աշխարհ(ք)>ա՛խշարք, դառնահամ>դըռնա՛համ, կաչաղակ>քըչէ՛ղակ, կարկատան>կըրկա՛-

տան, խորոված>խըրվածք, կանկար>կանգառնը, ազաման>ըղամանն և այլն։ Այդպես և անփոփոխ է մնում § 18-ում հիշված հնչյուններից հետո, ինչպես՝ բամբակ>բէ՛մբակ, համարք>համբարք, զարդարանք, զարդարք>զէ՛րդարք, մաճար>մանճառ, մանուշակ>մընօ՛շակ (բայց շեշտի տակ՝ բի՛նջէ՛րու, բի՛մբէ՛կու) և այլն։

ա>ա՛.—Բարեկենդան>բի՛րգինդան, ուրբաթ>ո՛րբանք, խորհանդակ>խըրխանդակ «խորդուբորդություն», մանգաղ>մա՛նգաղ, որձակ>ո՛ռ՛ձակ, ուրագ>հո՛ռ՛նգ, արձակ>հա՛ռ՛ձակ, խոբակ>խո՛ռ՛նգ և այլն։

29. -աղց հնչյունախմբում շեշտված ա-ն դարձել է օ հետեվյալ բառերում. քաղց>քօխց, քաղցած>քօխցած, քաղցր>քօխցուր.-աղց հնչյունախմբով ուրիշ որևէ գրաբարյան բառ չկա բարբառում։

30. Հիշյալ բոլոր օրենքներից դուրս ա ձայնավորը կրել է հետևյալ մանավոր փոփոխությունները.

ա>է.—Պատրոյգ>պէ՛տրուկ, կրակ>գի՛րէ՛կ, հարիւր>հէ՛րուր, երախ>ըռռէ՛խ, գրաստ>գի՛րէ՛ստ, տատասկ>տա՛տէշկ, հանդարտ>հա՛նդէրտ, առաջք>առէ՛շկ։

ա>ու.—Ականջ>ա՛նգուճ, սապոն>սո՛ւպուն, ուղարկել>ղո՛ւրկիլ (տե՛ս առորև)։

ա>ի.—Բունակալ>բի՛նա՛կիլ, քաւել տալ>քի՛վիլ տալ «քավալվելը»։

ա>ո՛.—Դառն>գո՛ռնը։

ա>օ.—կարկավ>կըրկօ՛փ «ատամներն իրար խփելը, բերանն ամուր փակելը»։

ա>ռէ.—Դարբ>գռէ՛րբ, գդալ>գի՛գռէ՛լ, գալ>գռէ՛լ, վարդավառ>վռէ՛ղռէ՛վռէ՛ր։ Վերջինս պետք է որ ստացված լինի վարդևոր ձևից՝ վերջին վանկի ո>ու փոփոխությամբ և ձայնավորների լիակատար ներդաշնակությամբ։ Այդպես պետք է ստացված լինեն նաև՝ ուղարկել>աւղուրկել>ղո՛ւրկիլ, սապոն>սապուն>սո՛ւպուն (տե՛ս նաև § 260)։

ա>ը.—Առանց>ըռը՛նց (նաև առանց՝ գրականի ազդեցությամբ)։

31. Մեկ և մեկ ուկես վանկանի բառերի սկզբում գրաբարյան ե ձայնավորը սովորաբար դառնում է ի: Եղած օրինակներն են. եզն>իգնը, եմ>իմ "sum„, ես>իս, երբ որ>ինր օր, եփ>իփ, որից էլ՝ եփել>ինփիլ:

Դրանց հակառակ ունենք՝ ակ>էք (գալ բայի հրամայականը)՝ ակէք>է՛կէք ձևի նմանությամբ. եռ>էռ, եղն>յէ՛ղնը «եղնիկ»:

32. Երկվանկ բառերի սկզբում շեշտված ե-ն դառնում է ա, եթե հաջորդող վանկի ձայնավորն է ա: Այս օրենքին ենթարկվող բառերն են. երազ>արազ, երակ>արակ «զուգակից, նման», երաշտ>արաշտ, երկաթ>արկաթ, երկանք>արկանք. պետք է նկատել, որ այդ բոլոր բառերումն էլ ե-ն գտնվում է ր-ից առաջ, ուր կարող էր փոխարինվել ա-ով, ինչպես գրաբարում՝ երագ—արագ, Երասխ—Արաքս և այլն:

Վերոհիշյալ օրինակներին հակառակ ունենք՝ երաճք>է՛րաճ «ուսի հետևի մասը»:

Մնացյալ դեպքերում բառասկզբի շեշտված ե-ն դառնում է է. եղած օրինակներն են. երինջ>էրէնջ, երկայն>է՛րկէն, եկէք>է՛կէք՛, երկու>է՛րկու:

Բացառություն են կազմում եղբայր>ախպէր, եղիճ>ախդէնջ բառերը, որոնց մեջ է-ի դիմաց ունենք ա. սակայն այդ բառերում էլ ե-ն գտնվում է ղ-ից առաջ և կարող էր փոխարինվել ա-ով:

Ղ և ր բաղաձայններով չէն հայերենում, ինչպես գիտենք, բառը չէր կարող սկսվել. այդպիսի դեպքերում բառասկզբում ավելանում էր ա կամ ե. Գրաբարում ունենք բազմաթիվ այդպիսի բառեր, որոնք գործածվում են մերթ այո, մերթ այն ձևով. ինչպես երագ—արագ, Երասխ—Արաքս, եղիճ—աղինճ և այլն: Զուգաձևերի առկայությունը մինչև այժմ էլ չի բացատրվել. սովորաբար բավականացել են ասելով, թե ր-ից կամ ղ-ից առաջ բառասկզբում ավելանում է կամ ա, կամ ե: Մեզ թվում է, թե այդ զուգաձևերի առկայությունը բացատրվում է բարբառային տարբերություններով. նույն պարագայում մի շարք բարբառներ ավելացրել են ա, իսկ մյուսները՝ ե. այս տարբեր ձևերն էլ, ահա, թափանցել են գրականության մեջ և առաջ բերել զուգաձևերը: Այս բացատրությունից ելնելով և Մեղրու բարբառում այդ բա-

ձերի ստացած ձևը նկատի ունենալով, կարող ենք ենթադրել, որ Մեղրու բարբառը պատկանել է այն բարբառների թվին, որոնց մեջ ավելանում էր ա ձայնավորը։

Տե՛ս բառի մասին տես § 40։

Տրեք, երես բառերի մասին՝ § 41։

33. Երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբի անշեշտ ե-ն փակ վանկում դառնում է ը. ինչպես երախ>րոռէխ, երիկամունք>ըրկա՛մօնք, երկայնութիւն>ըրկընօթիւն, եղբայրաժին>ըխպըրըժ՛ին, եղբայրութիւն>ըխպըրօթիւն, երկոքին>ըրկօքէն, երկուտակ>ըրկըտա՛կ, երկպատիկ, երկշարք, եռնավար>ըռնա՛վար և այլն։ Այդպես և՝ երիցակից>ըրցակէց բառը, որի առաջին վանկը՝ ի-ի կորստով դարձել է փակ։

Նույն պարագայում ը-ի փոխարեն ունենք ի՝ եռևալ>ի՛ըվա՛լ բառում՝ հայծորգ վանկի ա ձայնավորի ներդաշնակությամբ։

Եզնարած>իզնա՛րած բառում՛ե-ն ը չի դարձել՝ բաղադրիչների անկախ գիտակցման շնորհիվ։

34. Երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբի անշեշտ ե-ն բաց վանկում բոլորովին ընկնում է. ինչպես՝ եկեղեց>գըղէ՛ց, երեկոյ>շակու, երախայ>ըմախ, (յ)երազ>ըզազ «երազում», Երեւան>Ըրէ՛վան, երեկի>ըրէկ, երաշտիլ>բա՛շտիլ «ծարավել, քաղցել» և այլն։

Ը-ով սկսվող բառերն ունեն նաև ը-ով սկսվող ձևեր. ինչպես՝ ըրախէ, ըրազէ և այլն (համմ. § 3)։

Երևսուն>արասսուն բառում երկու ե-երի փոխարեն էլ ունենք ա, քառասուն>քըռասսուն-ի նմանությամբ։

Եբեհոս>արաճուս ստացվել է արաճոս ձևից (տե՛ս «Հայոց լեզվի պատմական բառարան», 2-րդ հ., էջ 550), գրական լեզվի միջոցով։

Երեքշաբթի>իրիքշէ՛բաթ, երեսլուայ>իրիսլի՛վա՛ բառերում ե-ն չի ընկել՝ բաղադրիչների անկախ գիտակցման շնորհիվ։

35. Գրական ու կրոնական փոխառություններում բառասկզբի ե-ն բոլոր պարագաներում էլ դառնում է յէ. ինչպես՝ երկինք>յէրկի՛նք, երկիր>յէրկի՛ր, եղունգ>յէղունգ, երգ>յէրգ, եպիսկոպոս>յէպիսկոպոս և այլն։

36. Մեկ և մեկուկես վանկանի բառերի մեջ ե-ն սովորաբար դառնում է է. ինչպես՝ բեռն>բէռն, գետ>գէտ, տեղ>տէղ, ցեղ>ցէղ, փեղկ>փէղկ, նեղ>նէղ, հետ>հէտ, նըհէտ, ծեփ>

ձէփ, ներկ>նէրկ, դեղք>դէխկ *(Թուխնա)*, ճեղք>ճէխկ, ներքս>նէս, նէքսէվ, սերտ>սէրտ *(Խոտո և այլն)*:

37. Մի քանի միավանկ և մեկուկես վանկանի բառերում ե-ն դարձել է ը. դրանք են. սերմն>սըրմ, վեց>վըծց, սեպ>սըպ, կերպ>կըրպ, կեղ>կըղ «վերքի չորացած մասը», կեմ>կըմ, կեռ>կըռ: Վերջին չորս բառերի մասին տես § 72:

Տես>տըս *(տեսնել բայի հրամայականը) բառի մասին տես § 102:*

38. Մի քանի միավանկ բառերում ե-ն դարձել է ի, որի համար որևէ օրենք գտնել հնարավոր չեղավ՝ օրինակների քչությամբ պատճառով. այդ բառերն են թեփ>թիփ, հեշտ>հիշտ, ձեռք>ձիք, չէչ>չիչ, վեր>վիր, վիյ (գործածվում է հարադրությունների մեջ):

Թել, ցել *բառերի մասին տես § 40:*

Բեր>բիր *(բերել բայի հրամայականը) ստացվել է բիրիլ օրինական ձևից (§ 41):*

39. Երկվանկ և բազմավանկ բառերում շեշտի տակ ու շեշտից հետո ե-ն սովորաբար դառնում է է. ինչպես՝ թեղէ, լեղակ>լէ՛ղակ, հեռի>հէ՛ռա «հեռուս, ցեխոտ>ցէ՛խուտ, հեբու(ի)>հէ՛բվի, նեղուածք>նէ՛ղվասկ, եկեղեցի>գըղէ՛ցէ, դեղին>դէ՛ղէն, լեղի>լէ՛ղէ, քեռի>քէ՛ռա, քենի>քէ՛նէ, աղեղն>աղէղնը, անէդ, լնդերք>լընդէ՛րք, կապերտ>կա՛պըրտ և այլն:

Տեսես>տընդրէս *բառի մասին տես § 102:*

40. Թե՛ միավանկ, և թե՛ բազմավանկ բառերի շեշտված ու շեշտահաջորդ վանկերում ը-ից առաջ ե-ն դառնում է ի. այս օրենքին ենթարկվող բառերն են. թել>թիլ, ազբաթել>ըզբա՛թիլ, ցել>ցիլ, հայելի>հեյլի>հէյլէ, աւել>ա՛վիլ, ցախաւել>ծըխա՛վիլ, (առ)աւել>իվիլ, ածելի>ծէյլէ, քամելի>քի՛միլէ, ելանել>հելիլ>հէյլիլ, ազազակել>ազազիլ «խոխոջ քաշել»:

Բայերի անորոշ դերբայի -ել վերջավորության մասին տես §§ 353, 354.

Բբրև բացառություն ունենք խելք>խէլք, խելօք>խէլուք, *սրոնք պարզապես գրական փոխառություններ են:*

41. Եթե շեշտված վանկի ու շեշտահաջորդ վանկի երկու ե-երի միջև գտնվում է ր բազաձայնը, ապա երկու ե-երն էլ դառնում են ի. եղած օրինակներն են. երես>երիս, աներես>անէրիս, երեք>

բրիք, ցերեկ>ցիրիկ, բերել>բիրիլ, քերել>քիրիլ. այդպես և՝ աբև>ամրիվ։ Եթե երկու ե-երից մեկը շեշտած է, մյուսը՝ շեշտից առաջ, ապա վերջինս դառնում է ի՝, ինչպես՝ երեկի>ի՛րիկէ (նաև՝ բրիկէ. համմտ. § 34), գերեզման>գի՛րիզման. երեք բառից կազմված բարդություններում պահպանվում է անկախ գործածվող իրիք, ձևը, ինչպես՝ երեքին<իրիքքէ՛ն, երեքշաբթի>իրիքշէ՛բաթ, երեքտակ>իրիքտակ՛ «եռակի, երեք շարքն և այլն։

Տե՛ս նաև բառի մասին տես § 34։

Ցերեկ բառից ցիրիկ կանոնավոր ձևին զուգընթաց ունենք նաև՝ ցիրակ ձևը, որ ավելի գործածական է. այդ ստացվել է երեկոյ>րակու բառի ազդեցությամբ։

Բացառություն է կազմում համբերել>համփէրիլ բառը, որ գրական փոխառություն է։

42. Երկվանկ ու բազմավանկ բառերի մեջ շեշտից առաջ ե-ն դառնում է ը կամ ի՝, եթե հաջորդող վանկի ձայնավորը ծանր է, ապա դառնում է ը, իսկ եթե թեթև է, ապա դառնում է ի՝. ինչպես՝

ե>ը.—Դեղնացաւ>դըղնացավ, դեղնուց>դըղնօց, հեռանալ>հըռանիլ, նեղանալ>նըղանիլ, փեղկովի>փըղկօվէ «փեղկավոր, պճղովի դեղձ, ջերմուեռնդ>ջըրմ՛ըտանդ, սերմնահանել>սըրմ՛ըհանիլ, գետաքար>գըտա՛քար, բերատու>բըրա՛տու, սերկևիլ>սըրկէ՛վիլ և այլն։

ե>ի.—Աւելի>ի՛վի՛լի, աւելուկ>ի՛վի՛լո՛ւկ, գերմակացնել>գի՛րմի՛կացնիլ «մանրելն, մեծաւոր>մի՛ծա՛ւուր, սերկևլենի>սի՛րկի՛վլի, փետրահանել>փի՛փի՛ռնա՛նիլ, թեթևանալ>թի՛թի՛վա՛նիլ, հեշտացնել>հի՛շտի՛ցա՛նիլ և այլն։

Աւելաճաւ>ի՛վլա՛ճիլ, բարեկենդան>բի՛րգի՛նդա՛ն բառերում նախաշեշտ ե-ն բոլորովին կորել է։ Այս օրենքից բացառվում է միայն երեքշաբթի>իրիքշէ՛բաթ բառը, բաղադրիչների անկախ գիտակցման պատճառով։

Սույն օրենքին չեն ենթարկվում ամսանունները՝ գրական ազդեցությամբ. ինչպես՝ դեկտեմբեր>դէքտէմբէ՛ր, սեպտեմբեր>սէպտէմբէ՛ր, նոյեմբեր>նոյէմբէ՛ր, հոկտեմբեր>հօքտէմբէ՛ր, փետրուար>փէտրուա՛ր։

43. Այդ բոլորից բացի ե ձայնավորը կրել է հետևյալ մասնավոր փոփոխությունները.

է>ա.—*Տենդ>տանդ, տենդել>տանդիլ, երեկոյ>բակու, քիթեղն>քէ՛թախնը «քիթեռ», սխտեռն>սըէսառնը, երեսուն>արասուն, փրփրիմ>պըրպէ՛րան (վերջինիս մասին տես § 72)։*

է>ու.—*Տաշեղ>տաշուղ։*

է>ի.—*Թեթև>քիթիվ, բարեկենդան>բի՛րգի՛նգան։*

է>ու.—*Երդ>հայրդ «երդիկ», երդուիմն>ուրդռնիմ, լեզու>լըզու (վերջինիս մասին տես § 93)։*

Առաջին երկուսում է-ն փոփոխվում է դղ հնչյունախմբից առաջ. կարելի է կարծել, որ դղ-ից առաջ է>ու փոփոխությունն օրինական է, սակայն այդ կարգի ուրիշ բառ չունենք բարբառումս, օրենքը ստուգելու համար։

է>ըէ.—*Փեսայ>փըէսէ (տես § 102)։*

է>օ.—*Մեծ>մօծ։*

է

44. Բառասկզբին է կա միայն երկու բառում, ուր և Աճացել է անփոփոխ. դրանք են՝ էգ>էգ, էշ>էշ։

45. Բառավերջի է-ի համար ունենք վեց օրինակ միայն, որոնցից հնգում Աճացել է է, մեկում՝ դարձել ա։ Այդ բառերն են. չէ>չէ, բոպէ>բօպպէ. ապրշումէ>պըրշըմէ՛, կիւրակէ>գի՛բ՛ակէ, մարգարէ>մարգարէ, քէ>քա՛։ Պրշըմէ, գի՛բակէ բառերի վերջում է կատացվեր նաև ապրշումի, կիւրակի ձևերից. մարգարէ բառը կրոնական փոխառություն է. քէ>քա՛ փոփոխությունը կատարվել է ադրբիջաներենի ազդեցությամբ։ Ուստի և՝ չնայած օրինակների քչությանը, օրինականը դարձյալ է մնալն է։

46. Մյուսական բառերի մեջ է-ի կրած փոփոխությունների համար որևէ օրենք գտնել հնարավոր չեղավ՝ օրինակների քչությանը պատճառով։ Ուստի և բավականանում ենք միայն այդ փոփոխությունները թվելով։

է>է.—*Դէշ>գէշ «վատ», խէժ>խէժնը, պէտք>պէ՛ք, շէն>շէն, դէզ>դէզ, սէր>սէր, դէմք>դէմ՛ք, տէր>տէր «քահանա», քէն>քէն (վերջին չորսը գրականից մուտք գործած բառեր են)։*

է>ա.—*Մէջ>մաջ, մէջք>մաշկ, սէզ>սազ, տէր>տար, որից սակայն՝ անտէր>անդէրտանտատէր>տրնատար և տրնատէր։*

է>ըէ.—*Ձէթ>ձըէթ, կէս>կըէս, կէտ>կըէտ. վերջին երկուսի մասին տես § 72 (երկրորդի համար նաև՝ § 102)։*

Դէպ ի, դէպ ի վեր, դէպ ի վայր, դէպ ի յետ հարաբերութիւններբը միանալով ու սղվելով դարձել են երկվանկ բառեր, որոնց մէջ շեշտն ընկնելով վերջին վանկի վրա, նախաշեշտ է-ն դարձել է ի. այսպես՝ դէպ ի>դի՛բի, դէպ ի վեր>դի՛վիր, դէպ ի վայր>դի՛վէ՛բ, դէպ ի յետ>դի՛բէ՛տ (տես նաև § 49)։

47. Երկվանկ բառերում շեշտված է-ն դարձել է ա. եղած օրինակներն են. առնէտ>ըռնատ, խլեզ>խըլազ, պահէզ>պըհազ, բայց հակառակ դրանց՝ կռէգն>կըռէ՛գնը գծատի խեժ։

48. Երկվանկ բառերում շեշտից հետո (վերջին վանկ) մնացել է է։ Եղած բառերն են. գոմէշ>գո՛մ՛էշ, ամէն>ա՛մ՛էն ըռոլորս, ամէն>ա՛մ՛էն տեղից, անդէմ>անդա՛մ տանմեղս, անէծք>անէ՛ծք, անպէտք>անպէ՛տք, անտէր>անդէր, հրաւէր(ք)>հրաւէ՛րք, օրէնք>օ՛րէնք, օրէնէնք>օ՛րէնէ՛ք։ Դրանց մեծ մասը գրական ճանապարհով բարբառս մուտք գործած բառեր են։

49. Երկվանկ ու բազմավանկ բառերում՝ շեշտից առաջ գրաբարում է չկա. բարբառումս կազմված բառերում նախաշեշտ է-ն դառնում է ը կամ ի՝ ձայնավորների ներգաշնակության օրենքով. ինչպես՝

է>ը.—կէս օր>կըսօր, աղուէսաքուն>ըղվըսա՛քո՛ն, գոմէշաձագ>գըմ՛ըշա՛ձէ՛գ։

է>ի.—Գիշուէ՛լուն>գի՛շո՛բին, գէշախօսք>գի՛շա՛խօսկ ժշարախոսս, այդպես և՝ դէպ ի>գի՛բի՛, դէպ ի վեր>գի՛վիր, դէպ ի վայր>գի՛վէ՛բ, դէպ ի յետ>գի՛բէ՛տ։

50. Շեշտված կամ շեշտառաջորդ վանկում է ունեցող չորս բազմավանկ (երեք և ավելի վանկ ունեցող) բառ ունենք միայն. դրանք են. ակնալուսէք>ընկնըլա՛սէ՛ք, ջրօրհնէք>ջըրօ՛ռհնէ՛ք, երէկ(ի)>ի՛րի՛կէ, որը սակայն ստացվել է երեկի ձևից ե>ի փոփոխությամբ (տես § 41), ազազէլ>ազազիլ, որն ստացվել է ազազայել ձևից, այ-ի անկումով և լ-ից առաջ՝ ե>ի փոփոխությամբ (ազազայել>ազազել>ազազիլ), ինչպես՝ հայելի>հելի>հիլէ։ Ուստի և, այստեղ էլ, չնայած բառերի քչությանը օրինականը է՝ մնալն է։

Ը

51. Բառասկզբին ը-ն մնում է անփոփոխ. ինչպես՝ ընկեր>հընգէ՛ր, ընտրել>հընդրէ՛լ, ընկուզենի>ընգըզի։ Ընկոյզ բառի մասին տես § 56։

52. Բառամիջում և վերջավանկում սովորաբար ծանր ձայնավորներից առաջ կամ հետո ինում է ը, իսկ թեթև ձայնավորներից առաջ կամ հետո դառնում է ի՝ Մոտ 150 բառից բերում ենք մի քանիսը միայն.

ը > ը.— Գլուխ > գլյօխ, գգօն > սըկծն, խնամի > խընամէ, խնոցի > խընէ՛ցէ, ծխահամած > ծըխամած, ծանր > ծանգըր, մանր > մանգըր, գրաւել > գըրավիլ, գռնապան > գըռնապան, գլխել > գըլխէ՛լ «վերջանալ» և այլն։

ը > ի՛.— Գնել > գի՛նիլ, գնել > գի՛նիլ, հնաը > հի՛նաը, դմակ > գի՛մա՛կ, գոած > գի՛գա՛ծ, գրաւ > գի՛րա՛վ «երաշխիք», գալ > գի՛գա՛լ, գրել > գի՛րիլ, ջնջել > ճի՛նջիլ, ննջել > ի՛նջիլ, թանձր > Քանձի՛ր (և Քանձիր) և այլն։

53. Գրաբարում բառավերջին ը չկա. աշխարհաբարում կազմված մի քանի բառերում ունենք ը կամ ի՝ նախորդ օրենքի համաձայն. Այդ բառերն են. իմը > իմի՛, քոնը > քունը, որը > հունը, ինքը > ինքի՛, տուաը > տասը, եօթն > օխտը, բայց՝ ինն > ինը։

54. Գրաբարյան բառավերջի հավելվածական ն-ի և նախորդող բաղաձայնի միջև եղած ը ձայնավորը տեղափոխվում է բառավերջը՝ ն-ից հետո. ինչպես՝ ակն > ակնը, ոտքն > ոդէգնը, ատն > ատնը «ատուցց», մատն > մատնը «խաղողի որթն», ամառն > ամառնը, դառն > դէռնը և այլն։

55. Նույն կարգի բառերի ցզն, կն խմբերում ը-ն կարող է նաև դառնալ ու, որով և այդ բառերն ունենում են կրկնակի ձևեր։

Եղած օրինակներն են. ծունկն > ծօնգուն, ծօնգնը, սունկըն > սօնգուն (սօնգնը), ձուկն > ձօկնը, ձօկուն, մուկն > մօկնը, մօկուն, ունկն > օնգնը, օնգուն։ Պետք է նկատել, որ բոլոր օրինակներում էլ նախորդող վանկի ձայնավորն է ու > օ (տես նաև § 259)։

56. Մի քանի բառերում ը-ն առնմանվել է նախորդ կամ հաջորդ վանկում եղած ձայնավորներին։

ը > ըէ.— Քսակ > քըէ՛սակ, անշուշտ ստացվել է քիսակ ձևից, ի > ըէ փոփոխությամբ՝ ըստ § 60-ի։

ը > ու.— Ամոր > խումուր, կնգուղ > կունգուղ, կրծաւել > կուռծուտիլ, գզող > գըզուղ, գուզուղ, կոտր > կուտուր, սղոց > սուղուց, կծոտել > կուծուտիլ, տրորել > տուրուրիլ, բարձր > բէ՛ծուր (նաև՝

քէ՛ծըը), քաղցր>քօխացուբ, ոսկր>ուսկուռ, ճիպո>ճէ՛պուռ, կուպըը>կօպուբ։ Բարձր, քաղցր, նիպո բառերում ը-ն դարձել է ու, թեև նրան նախորդող վանկի ձայնավորը ու չէ.

ը>ու.—Զրույց>զուրոյց, մրջիւն>մուրջուն՛մ, այսր>աստր>աստուն՛ր, այգր>ագուն՛ր, այնր>անդուն՛ր, փչուր>փուշուն՛ր։ Երկու բառերում ը-ն դարձել է ի, թեև նախորդ ձայնավորը ի չէ. այդ բառերն են. *թանձր>թա՛նձիր (և թանձի՛ր), տայգր>տէ՛գիր-*առաջինում օրինական ճանապարհով ստացված ի՝-ն է դարձել ի, իսկ երկրորդում՝ գ-ի ազդեցությամբ։

Այս փոփոխությունների մասին ավելի մանրամասն տես «Ձայնավորների ներդաշնակությունը» հատվածում։

Այդ բոլորից առանձին է մնում՝ ընկոյզ>անգուզ բառի ը>ա փոփոխությունը։

Ի

57. Բառասկզբին, շեշտված վանկում ի-ն մնացել է ի. ինչպես՝ իլ(իկ)>իլիկ, իննը>իննը, ինչ>հինչ, ինքն>ինքի՛, ինձ>ինձ, իշխան>իշխան։

Իրեար բառի մասին տես § 122։

*58. Բառասկզբին, շեշտից առաջ ի կա միայն հինգ բառում, որոնցից երկուսում դարձել է ը, երեքում մնացել է ի։ Այդ բառերն են. իսկի>ըսկի, *իրիկունաց>ըրկօնաց, իննեքին>իննէ՛քէն, իննսուն>իննասսըն, իմաստուն>իմաստուն։ Դրանցից վերջինը գրական փոխառություն է, իսկ իննեքին և իննսուն բառերում անփոփոխ է մնացել իննն բաղադրիչը։*

59. Միավանկ բառերի մեջ ի-ն դարձել է է։ Եղած օրինակներն են. դինգ>դէնգ՛ զբրինձ ծեծելու գործիք», դիրտ>դէրդ, լինգ>լէնգ, լիբր,>լէբր, խիղճ>խէղճ զգուշ», խիշտ>խէշտ «ավինն» (ոմանց մոտ՝ խիշտ), հին>հէն, ձիգ>ձէգ, միտ>մէտ, միտք>մէթի՛ զմտածմունք», նիգ>լէնգ՛, նինջ>լէնջ, պինչ>պէնչ, պիրկ>պէրկ՛, սիրտ>սէրտ, տիկ>տէկ, ճիմ>ճէմ, ցից>ցէց, պինդ>պէնդ, սին>սէն զգառարկ, չգործածված կավե ամանը». Բացառություն են կազմում. բիր(իկ)>բիբիկ՛ զաչքի բիբ», հինգ>հինգ՛, որից և՝ տասնհինգ>տըսնըհինգ՛։

60. Միավանկ և բազմավանկ բառերում շեշտված ի-ն ծ-ից հետո կամ ս, զ-ից առաջ դառնում է ը։ Եղած օրինակներն են.

ծիծ>ծըէծ, ծին>ծըէն «ընկերքը», ծիտ>ծըէտ, ծիրտ>ծըէրտ, ծիծաղ>ծըէ՛ծաղ, ծիրան>ծըէ՛րան, ծիր>ծըէր «ծայր, եզր, գիծ», կծիկ>կըծըէ՛կ, մխ>մըէխ, քիստ>քըէստ, սիսեռ>սըէ՛սառնը, պիսակ>պըէ՛սակ «կետ», սինձ>սըէ՛զնը (պտուղը), վիզ>վըէզ, տիզ>տըէզ։ Միս, քիստ, սիսեռն, պիսակ *բառերի մասին տե՛ս նաև § 102։* Սիլ>ծիլ *բառում ի-ն միացել է անփոփոխ՝ համաձայն § 61-ի։*

Ուրիշ օրինակ և բացառություն չկա։

61. Միավանկ բառերում ի-ն միացել է անփոփոխ՝

ա) գ բաղաձայնից հետո եղած օրինակներն են. գինդ>գինդ, գին>գին, գինձ>գինձ, գիրկ<գիրգ, գիր>գիր (համմտ. §§ 62, 66)։

բ) ր և լ բաղաձայններից առաջ, եթե նրանց որևէ ուրիշ բաղաձայն չի հաջորդում. բիր>բիր, չիր>չիր, դիր>դիր (դնել բայի հրամայականը), վիլ>վիլ, չիլ>չիլ, ջիղ>ճիլ, ծիլ>ծիլ։

Բացառություն է կազմում միայն կիր>կըէր բառը, որի մասին տե՛ս § 72։

գ) Գրաբարյան փոխառություններում. ինչպես՝ պիղծ>պիղծ, միշտ>միշտ, ճիշտ>ճիշտ և այլն։

62. Երկվանկ բառերում շեշտի տակ (վերջին կամ վերջընթերը վանկ) ի-ն դառնում է է. Բերում ենք բոլոր օրինակները.

Վերջընթերը վանկում.—*Իզել>դէզիլ, քիթեղն>քէթախնը «քիթեռ», խիզան>խէզան, ճիպոտ>ճէպուտ, ճիպո>ճէպուռ, շիտակ>շէտակ, պիտիլ>պէտիլ, սիրել>սէրիլ, սպիտակ>սպետակ>սէպտակ, վիլայ>վէլլէ, տիկին>տէկին, սիրուն>սէրուն, թիկունք>թէ՛կունք։*

Վերջին վանկում.—*Բոլինչ>բըոլէչնը, քրիք>քըլէ՛նք, խըմիչք>խըմէչկ, խլինք>խըլէ՛նք, կին, կնիկ>կընէ՛կ, ճիտ, ճռիկ>ճըռէ՛կ «խաղողի փոքր ճուռ», մթին>մըթէ՛ն, պստիկ>փի՛ստէ՛կ, տուիլ>տըսէ՛լ, փրցլինք>փըսլէ՛նք, քըրտինք>քըրթէ՛նք, քնթիւն>քընթէ՛ռնը։*

Յիսուն>*ի՛ցցուն բառում յ-ի կորուստով շեշտված ի-ն ընկել է բառասկիզբը և անփոփոխ միացել ըստ § 57-ի։*

Միջնակ>*մա՛ջնակ բառն ստացվել է մէջ>մաջ ձևից։*

Գինի>*գի՛նի, գիտել>գինիլ բառերում ի-ն անփոփոխ է միացել գ-ից հետո լինելու պատճառով (տե՛ս § 61, ա)։*

Բացառություն են կազմում՝ հինել>հինիլ «կարկատել», բրինձ>բի՛րինձ, գզիր>գի՛զիր, գիզիր, շինել>շինիլ, շինի(ք)> շի՛լի՛նք, սինի՛ր>սի՛նէ բառերը։

63. Այդ օրենքին չեն ենթարկվում գրական փոխառությունները. ինչպես՝ վճիռ>վըճի՛ռ, պղինձ>պըղի՛նձ, փիլոն> փի՛լօն և այլն։

64. Երկվանկ ու բազմավանկ բառերում շեշտից առաջ ի-ն դառնում է ը, ի՝ կամ բոլորովին չնչվում է։

Ի-ն դառնում է ը ծանր ձայնավորներից առաջ. ինչպես՝ ծիծաղել>ծըծա՛ղիլ, ծիծեռնակ>ծըծէ՛ռնակ, կոիզնոտ>կըըզնո՛ւտ, խիզանաուտուն>խըզնա՛ուտուն «արգանդ», սիք առնուլ>սըքա՛ռիլ «մրսել», սպիտակել>սըպա՛տակիլ, դիմացկուն>դըմա՛ցկօն և այլն։ Այդպես և՝ գետ ի վայր>գըտըվէ՛ր «գետի հոսանքի ուղղությամբ»։

Ի-ն դառնում է ի՝ թեթև ձայնավորներից առաջ. ինչպես՝ գիրկանոց>գի՛րըգանո՛ւց, բոկիկանալ>բի՛կի՛կանիլ, գինձձուկ> գի՛նձմի՛նձ՛կ, դիրատանել>դի՛րդի՛նանիլ, ծիրանի>ծի՛րի՛նի և այլն։ Այդպես և՝ մինչ ի՝մի՛նչէ, գետ ի վեր>գի՛տի՛վէր «գետի հոսանքին հակառակ»։

Գիշեր>քի՛շէր, լիսեռն>լի՛սէ՛ռնը բառերում նույնպես ի-ն դարձել է ի՝, թեև հաջորդող ձայնավորը ծանր է։

Ի-ն բոլորովին չնչվում է ը-ի և որևէ ուրիշ բաղաձայնի միջև. ինչպես՝ իրիկունացը>ըրկո՛նաց, երիկամունք>ըրկամո՛նք, երիցակին>ըրցակէն։ Ի-ն ընկել է նաև՝ յիշատակ>շէ՛տակ, որից էլ՝ անյիշատակ>անշէ՛տակ և ամիթաբել>մըխտա՛բիլ բառերում։

Ի-ով վերջացող միավանկ բառերը բարդության և ածանցումների մեջ այս օրենքին չեն ենթարկվում և ամեն պարագայում էլ պահպանում են իրենց ի-ն. ինչպես՝ ձիաւոր>ձիյա՛ւոր, ձիաուէր>ձիյա՛ուար, թիակոթ>թիյա՛կութ և այլն։

65. Վերոհիշյալ օրենքին չեն ենթարկվում գրական և կրոնական փոխառությունները։ Ինչպես՝ անիրաւ>անիրա՛վ, վիրաւոր>վիրա՛վօր, տիրացու>տիրա՛ցու, եպիսկոպոս>էպիսկո՛պօս և այլն։

66. Երկվանկ ու բազմավանկ բառերում՝ շեշտից հետո փակ վանկում ի-ն դառնում է է։ Այս օրենքին ենթարկվող բառերն են. աղիք>աղէ՛նք, կոյր աղիք>գի՛րդաղէ՛նք, անսիրտ>անսէ՛րտ,

*առաջքին>ըռաչկէն, ապրիլ>ապրէլ (ամիսը), բոկիկ>բիբէկ, ամիս>ամէս, գեղին>գէ՛ղէն, ակիշ>ակէշ, աղջիկ>ախչէկ, անիծ>հանէծ, եղիճ>հազէնջ, յետին>է՛տէն, երիցակին>ըրցակէն, եղբայրակին>ըխպրբակէն, երինջ>հէ՛րէնջ, գաւիկ>զէ՛գէկ, լուսին>լիւսէն, ծաղիկ>ծաղէկ, կարմիր>կարմէր, կացին>կացէն, կաւիճ>կավէճ, խաւիծ>խավէճ, խեցիկ>խէ՛ցէկ «կավե ամանի կտոր», կաւիկ>կաւէկ, կածիկ>կաւէճէկ «սոսինձ», կոկիկ>կաւկէկ, կոտիկ>կաւռաւէկ, կոտիմ>կաւէճիմը, կտաւիկ>կըտաւվէկ, տանտիկին>տընտէ՛կէն, հարսանիք(ը)>հըրսանէք, մարմին>մարմէն, մոխիր>մաւխէր, նարինջ>նարէնջ, նաւակատիք>նըվըկատվկ, պանիր>պանէր, պատիժ>պատէճ, սամիթ>սամէթ, վարտիք>վարթէկ՛, ածիկ>ածէկ՛ «թոնրին խփած խմորագնդից թափված կտորտանքը», *անրիծք>անրէսկ «մեռելի վրա կատարվող ազոթք»։ Այսպես և անձնեբական թվականները՝ երկոքին>ըրկո՛քէն, հնգեքին>հընգէ՛քէն, վեցեքին>վըցցէ՛քէն և այլն։*

Բացառութիւն են կազմում. բաժինք>բէ՛ժինք, ուրիշ>օ՛րիշ, տիկին>տէ՛կին (որից սակայն՝ տանտիկին>տընտէ՛կէն), իլիկ>իլիկ։

Հանգիստ>հանգիստ «գերեզմանոց», բաժնեգիր>բըժնէ՛գիր «բաժանման փաստաթուղթ», թանկագին>թընգէ՛գին բառերում ի-ն է չի դարձել գ-ից հետո լինելու պատճառով (տես § 61)։

67. Այդ օրենքին չեն ենթարկվում.

ա) Ուրիշ բարբառներից և ազբրեջաներենից փոխառած բառերը. ինչպես՝ բաժին>պաժին, նարգիզ>նէրգիզ, քարճիկ>քէրճիկ և այլն։

բ) Գրական փոխառութիւնները. ինչպես՝ երկինք>յէ՛րքինք, երկիր>յէ՛րքիր, կոպիտ>կո՛պիտ և այլն։

68. Մի վանկ բառերի վերջին (բաց վանկի) ի-ն ճեում է ի կամ դառնում է է, եղած օրինակներն են. լի>լի, ձի>ձի, մի>մին, բայց՝ թի>թէ, մի>մէ՛, մէ՛ն (արգելական մասնիկ)։

69. Երկվանկ ու բազմավանկ բառերի վերջին բաց վանկի ի-ն շեշտից հետո դառնում է է, եղած բառերն են. ալաժանդրի>ալաժէ՛նդրէ «մի տեսակ բույս», ածելի>ածէ՛լէ, անալի>անա՛լէ, գարի>գա՛րէ, ազաւնի>ըղո՛նէ, գորձի>գո՛րձէն «արորդ», անվարտի>

լըվ՛բտէ, բողի>բո՛ւխէ, գօտի>գո՛ւտէ (և՝ գօտիկ>գօ՛ւտէկ), լեղի>լէ՛ղէ, լեզուանի>լի՛զվանէ, խնամի>խընա՛մէ, խնոցի>խընէ՛ցէ, կաշի>կա՛շէ, կատաղի>կըտա՛ղէ, կորի>կո՛ւրէ, ձողի>ձո՛ւղէ «ձող», մատանի>մըտա՛նէ, մորթի>մո՛ւրթէ, ջորի>ջո՛ւրէ, սինի>սի՛նէ, վազ(ի)>վա՛զէ «վազնջուց», վայրի>վէ՛րէ, տարի>տա՛րէ, փոշի>փո՛ւշէ «մանր ալյուր», քամելի>քի՛մ՛լէ, քանի>քա՛նէ, աքացի>քա՛ցէ, եկեղեցի>գըղէ՛ցէ, հայելի>հի՛լլէ, քենի>քէ՛նէ, խեցի>խէ՛ցէ «կավե աման»։ Այդպես և՝ ժողովրդական առի>ա՛ռէ «հույժ, սաստիկ», առաջկատի>ըռըշկա՛տէ «բեռան առջևի իրերը», յետքատի>ղըպկա՛տէ «բեռան ետևի իրերը» և այլն։

Բացառություն են կազմում. ագի>հէ՛գ՛ին, այգի>ի՛գ՛ի, գինի>գի՛նի, բանալի>բի՛լա՛նի, հերու(ի)>հէ՛րվի, որբևայրի>վի՛րբի՛վէ՛րի, արժանի, արժի>ա՛ժժի, բարի>պա՛րէ. Դրանցից առաջին երկուսում ի-ն գտնվում է գ-ից հետո (տես § 61), իսկ բարի>պարի բառը փոխառված է որևէ այլ բարբառից, որ հաստատվում է նաև բ>պ փոփոխությամբ։

Երանի բառի դիմաց բարբառս ունի բէնակ, ըրբէնակ, որոնք ստացվել են արեգակն բառից (տես § 7)։

Սամի բառը նմանվելով կամն>կամ՛ը բառին, դարձել է սամ՛ը։

Հոգի>հո՛գի գրական փոխառություն է։

Ոգեի բառի մասին տես § 72 և 260։

Հեռի, քեռի, մօտի բառերի մասին տես § 72։

70. Բառավերջի բաց վանկի ի-ն շեշտի տակ դառնում է է, եթե նախորդող վանկի ձայնավորը բարբառումս ը է. ինչպես՝ յղի>յըղէ՛ «հղի», ուղի>ղըղէ՛ «ճանապարհ», տունկ(ի)>տընգէ՛, *ականջմտի> ընգըճմըտէ՛։ Առաջին>ըռջի՛ բառում ի-ն միացել է անփոփոխ մյուս դասականների համաբանության համար (տես § 316)։

Եթե նախորդող վանկի ձայնավորն է ի՝, ապա բառավերջի շեշտված ի-ն միում է անփոփոխ. ինչպես՝ շլնի>շի՛լլի, փնթի>փի՛նթի, մինչ ի>մի՛նչի, դեպ ի>դի՛բի։ Հետաքրքրական է լուրջ(ի) բառը, որ ունենալով երկու ձև, հաստատում է այս առհամանումները. այն է. լըրջէ՛ (նախորդող ը-ից հետո) և լի՛ըջի՛ (նախորդող ի՝-ից հետո) «յարմիկ»։

Ուրիշ օրինակ չկա, սակայն ձայնավորների ներդաշնակությունն արդարացնում է այս երևույթը։

71. Ծառերի անունները կազմող ի մասնիկը և որեղացի լինելը ցույց տվող -ցի մասնիկը շեշտի տակ ենում են անփոփոխ։ Ինչպես՝ ընկուզ(են)ի >ընկդզի, Քզ(են)ի >Քզի, Քբ(են)ի >Քբի, խնձոր(են)ի >խընձբրի, ծիրան(ի >ծի'րի'նի, սալոր(են)ի >չի'լի'րի, ուռի >հօռի, սինձ(են)ի >սըզնի, սերկևիլ(են)ի >սի'րկի'վի, բոնչ(են)ի >բընըշնի, օրդուպատցի >ուրդվաթցի, դաշտեցի >դէշտըցի, Թեյացի >Թէյըցի և այլն։

Նույն մասնիկների ի ձայնավորը շեշտից հետո դառնում է է. ինչպես՝ Քեղի >Քէ'ղէ, հացի >հա'ցէ, ձողնարի >ձըղնա'րէ գաբադիի մի տեսակը», մախի >մախէ, ցաքի >ցա'քէ, ոսկի >հո'ւսկէ, գաբգիա, կարճևանցի >կըրճըվնէ'ցէ, մեղրեցի >մըղրէ'ցէ, լիճքեցի >լիշկէ'ցէ, գուդեմիսեցի >գի'դի'մսէ'ցէ և այլն։ Ուրի բառը կա երկու ձևով, որով և հիանալի կերպով հաստատում է այս օրենքը. հօռի (ի-ն շեշտված) և հօռէ (ի-ն շեշտից հետո)։

72. Այդ բոլորից դուրս կատարվել են հետևյալ մասնավոր փոփոխությունները։

ի >ա.— Քեռի >քէ'ռա, հեռի >հէ'ռա, մօտի >մո'ւտա. առաջին երկու բառում թվում է թե փոփոխությունը ռ-ից հետո կանոնավոր է, բայց բարբառումս ուրիշ այդ կարգի հայերեն բառ չկա՝ ավելի ստույգ որոշելու համար. մօտի բառում ի >ա փոփոխությունը կատարվել է հեռի >հէռա բառի համաբանությամբ։

Գորիզ >կըղա'զ, տակուիք >տակռակ, Քոնիբ >Քուբան, ծորբորին >ծընՔո'ւբան։ Վերջին երկսի մասին պետք է նկատել. Մեղրու բարբառում կա միայն երեք բառ, որոնց վերջավանկի ռ—ն բաղաձայնների մեջև շեշտից հետո ե-ից կամ ի-ից պետք է է ստացվի ըստ §§ 39-ի և 66-ի, սակայն այդ երեք բառերում էլ ունենք ա, ստացված ե-ից կամ ի-ից. դրանք են՝ փրփրեմ >պըրպէ'րան, Քոնիբ >Քուբան, ծորբորին >ծընՔո'ւբան։ Վերագրել այդ լոկ պատահականության, անկարելի է, քանի որ հնչյունական ամեն մի փոփոխություն ունի յուր պատճառը. ուստի, պետք է եզրակացնել, որ շեշտից հետո ռ—ն բաղաձայնների մեջև վերջավանկի է (<ե, ի) ձայնավորը Մեղրու բարբառում դառնում է ա. ըստ այդմ՝ թոնիր և ծորբորին || ծորբորին

բառերում նախ ի-ն պետք է դարձած լինի է (ըստ § 66-ի) և ապա՝ այս օրենքով՝ է>ա. Թեև այս օրենքի հաստատման համար այդ երեք բառերը չափազանց քիչ են, բայց Ագուլիսի բարբառը արդարացնում է մեր ասածը՝ յուր թրաև և ծնբա՛-բան ձևերով, որոնց մեջ նույնպես ի-ից ստացվել է ա (տես Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, էջ 56—57):

ի>ու.—Ոզնի>կո՛ւզնու, որ նախ դարձել է կո՛ւզնի, ապա լիակատար ներդաշնակությամբ՝ կուզնու (տես նաև § 260):

ի>ու.—Արճիճ>ուրճուճ, լիզել>լուզիլ, ընդ իրեար գալ>դուրդուր(ը) գալ «շարժվել», ճճի>ճուճու, ոջիլ>հուջուլ: Դրանց մեծ մասը կատարված է ըստ ձայնավորների ներդաշնակության օրենքի:

ի>օ.—Վիշապ>հօշափ:

ի>ըէ.—Կիճ>կըէճ «խայթոց», կիր>կըէր, (գետա)կից>(գըտա)կըէ՛ց «մեղրու գետի և Արաքսի միացման տեղը», քիթ>քըէթ, որից էլ՝ քիթկալ>քըէ՛թկալ. Առաջին երեքի մասին պետք է նկատել. Մեղրու բարբառում կ-ով սկսվող ընդամենը 10 միավանկ բառ կա, որոնց մեջ ե, է կամ ի ձայնավորներից պետք է բարբառումս ստացվեր է, սակայն այդ բոլորումն էլ, բացի մեկից, ունենք ըէ. այդ բառերն են. կեղ>կըէղ «վերքի չորացած մասը», կեմ>կըէմ, կեռ>կըէռ, կերպ>կըէրպ, կէս>կըէս, կէտ>կըէտ, կիճ>կըէճ «խայթոց», կիր>կըէր, բայց՝ կեր>կէ՛ր (ուտել բայի հրամայականը). ե, է, ի ձայնավորների մասին առանձին խոսելիս այդ փոփոխությունները բերված են իրրև մասնավոր դեպքեր, որովհետև հնարավոր չէր մի կանոն հանել, քանի որ ամեն մի ձայնավորի համար ունենինք ընդամենը երկու-երեք օրինակ, որոնց մեջ ըէ ստացած լինենինք. արդ, ի մի գումարելով այդ բոլոր օրինակները, կարող ենք իրրև հաստատ կանոն ասել. որ միավանկ բառերում կ-ից հետո ե, է, ի ձայնավորները բարբառումս դառնում են ըէ. եղած 10 օրինակներից իննն կանոնավորապես ենթարկվում են այս կանոնին, միայն մեկն է (կեր>կէր), որ բացառվում է, բայց այդ էլ բացատրվում է նույն բայի հրամայականի հոգնակի թվի և մյուս ձևերի ազդեցությամբ, որոնց մեջ կանոնավորապես ունենք է (կէրքա՛, կէ՛րած, կէ՛րալ և այլն), ուստի և այդ ավելի ձևաբանական երևույթ է և բոլորովին էլ չի հակասում մեր ասած-

ներին։ Բարդ բառերի երկրորդ եզրում երկու միավանկ բառուններ կ-ով սկսվող, որոնցից մեկում ի-ն դարձել է ը, մյուսում՝ է. գետակից>գըտաքկըէ՛ց «Մեզրու գետի և Արաքսի միախառնվելու տեղը», եղբայրակին>ըխպըրմակէն. առաջինում կից բառը լինելով շեշտի տակ, ենթարկվել է այս օրենքին. եր կրորդում կին բառը շեշտից հետո է և գործ չունի այս կանոնի հետ։ Այս բոլորից հետևում է, որ ե, է, ի ձայնավորները նախ՝ համապատասխան կանոններով դարձել են է, և ապա՝ է-ն, ըստ այս կանոնի, դարձել է ը։ այսպես՝ կեռ>կէռ>կըէռ, կես>կէս>կըէս, կիր>կէր>կիր և այլն։ Այդ հաստատվում է նաև արդի խոսակցական լեզվով, որ այժմ բոլոր հնչյունական փոփոխությունները վերափոխում ու վերականգնում է իսկական ձևը, սակայն այս բառերը վերափոխվելով, չեն վերականգնում իրենց ի, ե ձայնավորները, այլ նրանց դիմաց ը-ից միշտ էլ վերականգնում են է. ինչպես՝ կեղ>կէղ>կըէղ>կէղ, կիճ>կէճ>կըէճ>կէճ, կիր>կէր>կըէր>կէր և այլն. այսինքն՝ վերականգնվում է այդ բառերի ոչ թե նախաձևը, այլ միջին ձևը (համմտ. նաև § 102)։

ո

73. Միավանկ ու երկվանկ բառերի սկզբում շեշտված ո-ն դառնում է ու. ինչպես՝ ո, ով>հու, հուվ, ոդն>ուդնը զբլրի վերին մասը», որ(ն)>հուռնը, որմ>հուրմ, ործ>ուռծ, ոչ>ուչ, որթ>հուրթ, ոսկր>ուսկուռ, ոզնի>կուզնու, ոչխար>ուխչար, որոր>ուրուր, ոտի>հուտիփէ զբաբրի», ոտնել>ուռնիլ, ոտացկալ>հուտաց կալ «կանգնել», ոք մին>ունքան, ոսկի>ուսկէ, ոսկրոտ>ուսկռոտու։

Մի քանի բառերում ավելի փափկանալով դարձել է ռռ. այդ բառերն են, որդն>ռռնը, որդնել>ռռնիլ, ործ>ռռծ, ործակ>ռռծակ, ոջիլ>հռիջռիլ, ոլոր>հռիլլռիր։

Ոչ ժխտականը՝ բայի ուշ ձևից ունենք նաև վուչ, ճուչ ձևերով. այդ տարբերակների գոյությունը սակայն հնչյունական օրենքներով չի բացատրվում, այլ շարադասական, որի մասին տես § 370։

---

[1] Մի քանի ժեղեցիներ այնդում են, որ այդ դեպքում էլ ունենք ըէ> (կեր>կըէր)։ ամենք ժխտում են։

Այս օրենքից բացառվում են. որ>հօր (ստորադասական շաղկապ), ողջոյն>օխչում։

Որոճ բառի մասին տես § 82։

74. Բազմավանկ բառերի սկզբում՝ շեշտից առաջ ո-ն դառնում է ը կամ ի՝ (ըստ ձայնավորների ներդաշնակության օրենքի). ինչպես՝

ո>ը.—Ոչխարակն>ըխչըրակնը, ողջոյն եղբայր>ըխչըմախպէր, ոսկրահատ>ըսկռահատ, ոսկեջրել>ըսկըջի՛րել, ողողել>ըղուղիլ, արձատուռ>ըռձէ՛տու ֆանպուռդ» և այլն։

ո>ի՛.—Ոլորել>հի՛լլուիրիլ, որբևայրի>վի՛րբի՛վէ՛րի, որդնոտել>ի՛ռնուռնուտիլ (նաև ունռնուտիլ), ոջլոտած>հի՛ջլուռ՛տած։ Ուրիշ օրինակ չկա։

Մի քանի բառերում ո-ն, ը-ից կամ ը-ից առաջ լինելով, բոլորովին ընկել է։ Այդ բառերն են. ողորմիլ>ղօրմի, ողորմածիկ>ղօրմացիկ, որոտալ>բըրտալ (նաև՝ ըրբրտալ). դրանց մասին տես § 3։

75. Հիշյալ երկու դեպքերում էլ (§§ 73, 74) գրական ու կրոնական փոխառությունների բառակզբի ո-ի դիմաց ունենք վո. ինչպես՝ ոխ>վոխ, ողջ>վողջ, որդի>վօրթի, ողորմել>վողօրմիլ, ողջութիւն>վողջութիւն և այլն։

76. Մեկ և մեկուկես վանկանի բառերի մեջ ո-ն դառնում է ու. ինչպես՝ բոխ>բուխ, գող>գուղ, դող>դուղ, դոխն>դուղ «չաղացի ձագարը», թոռն>թուռնը, թոք>թուք, խոզ>խուզ, խոտ>խուտ, խորթ>խուրթ, խորխ>խուրխ «օձի շապիկը», խոփ>խուփ, ծոմ>ծում, ծոպ>ծուպ, ծոր>ծուր, ծոց>ծուց, կոթ>կութ, կոկ>կուկ, կոզ>կուզ, կոզք>կուխկ, կոճ>կուճ, կոշտ>կուշտ, հող>հուղ, հոտ>հուտ, հոր>հուր, ճոթ>ճութ, շողք>շուխկ, չորք>չուրք «չորսը», ջոկ>ջուկ, սոխ>սուխ, մորմ>մուրմ «մորմենի. մորմենու պտուղ», փոթ>փութ «ծալքը», սոր>սուր «ձկների խումբ», փող>փուղ «փողոց», փոս>փուս, փոր>փուր, քոր>քուր, կոծ>կուծ և այլն։

Մի քանի բառերում ավելի փափկանալով դարձել է ու. դրանք են. գոզ>գուզ «մեզ», ձոր>ձուր, շոր>շուրթ, փորձ>փուրձ։

Կով>կաւ բառի մասին տես § 80։

Գոգ>գիգ՛ բառի մասին տես § 82։

Գոո>զօո «գերեզման» պարսկերեն բառ է, փոխառված ադրբեջաներենի միջոցով։

Փող>փօղ նույնպես ադրբեջանական փոխառություն է։

77. Երկվանկ ու բազմավանկ բառերում շեշտից առաջ ո-ն գառնում է ը կամ ի՝ համաձայն ձայնավորների ներդաշնակության օրենքի. ինչպես՝

ո>ը.—Գողանալ>գըգյանել, գողություն>գըգօթին, գողդոզալ>գըգդըզալ, տորտոշ>տըրտօշ, խնձոր(են)ի>խընձըրե՛, խոստանալ>խըստանել, խոստովանք>խըստավանք, խորովել>խըրավիլ, կորցնել>կըրցյանել, մոռանալ>մըռանել, կորիզ>կըղյազ, ողալ>սըղղալ և այլն։

ո>ի՝.—Ավերություն>ւիրի՛վի՛րօ՛թին, բորբոսնել>փի՛փի՛սնել, գոռալ>գի՛ռալ, գոռգոռալ>գի՛ռգի՛ռալ, սալոր(են)ի>չէլլի՛րե՛, բոժոժաքաղ>բի՛ժժաքաղ, բոկիկանալ>բի՛բի՛կինել և այլն։

Նույն պարագայում ո-ն կարող է լիովին առնմանվել հաջորդ վանկի ու կամ ու ձայնավորներին. ինչպես՝ պոլոկել>պըլո՛ւկիլ և պուլո՛ւկիլ, չորուշտի>չըրըշտի՛ և չուրուշտի՛, սովորել>սըվո՛ւրիլ և սուվո՛ւրիլ, բորբոսնել>փի՛փի՛սնիլ և փու՛փու՛սնիլ, բոժոժաքաղ>բի՛ժժաքաղ և բու՛ժու՛ժաքաղ և այլն։

78. Երկվանկ և բազմավանկ բառերի շեշտված ու շեշտահաջորդ վանկում, այսինքն՝ վերջին և վերջընթեր վանկերում ո-ն գառնում է ու. ինչպես՝

Շեշտված.—Բոխի>բու՛խէ, խոժոռ>խու՛ժուռ «խոշոր», քոնիր>քու՛ռան, կոբեակ>կո՛ւրակ, կոխել>կո՛ւխիլ, կոբի>կո՛ւբէ, կոփել>կո՛ւփիլ «խփել», մոխիր>մո՛ւխէր, ջոկել>ջո՛ւկիլ, ցոռեան>ցո՛ւրան, խոնջան>խո՛ւնջան, կոճակ>կո՛ւճակ, մորքի>մո՛ւրքէ, խմոր>խըմո՛ւր, խումո՛ւր, խնձոր>խընձո՛ւր, կըրճոն(ք)<կըրճո՛ւնք, շնորհք>շընո՛ւրք, պտոր>պըրտո՛ւղ, սղոց>աողոց>սուղո՛ւց, կոծոխուր>կըծո՛ւխուր, կուծո՛ւխուր, ողոզել>ըղո՛ւղիլ, սովորել>սըվո՛ւրիլ, տրորել>տըրո՛ւրիլ և այլն։

Շեշտահաջորդ.—Աքոռ>աքո՛ւռ, քակոր>քու՛քուր, ախոռ>ախուռնը, խաղող>խա՛ղուղ, խանձողն>խա՛նձուղնը, ճիպոտ<ճի՛պուտ, քափոր>քա՛փուր «հանդես», միւռոն>մի՛ւռուն, որճ>

ա՛րուճ, ամոլ>ամբուլ, ազբախոտ>ըխպախուտ, խանձրահոտ>ղինձի՛ըմմնուտ, սապոն>սուպուն, սափոր>սափուր, ազրահոտ>ըխպահուտ, կանոն>կինուն, կտոր>կոտոր>կուտուր, տորոն>տուրբուն, անհոտ>ա՛ննուտ, կորկոտ>կուրկուտ, փո(խ)փոխ>փուփուխ և այլն։

Նույն պարագայում ավելի փափկանալով ո-ն դարձել է ու հետևյալ բառերում. բոտոտ>բուդուդ «ճանճի ձուն», բաժոժ>բուժուժ, բորբոս>փի՛փուսնը, փուփուսնը, բորբոսնել>փի՛փուսնիլ, գոմէշ>գու՛մէշ, ջորի>ջուրի, փոշի>փուշէ, բոլոր>բուլնէր, ոլոր>հուլլուր, ոլորել>հի՛լլուրիլ, հուլլուրիլ, մոլոր>մուլնէր, սալոր>շի՛լլուր (նաև՝ շի՛լլօր)։ Վերջին հինգ բառերի մասին տես § 93։

Ձոքանչ բառի դիմաց ունենք զ՛ճքուճ, ո-ա>ա-ո տեղափոխությամբ. ու-ի փոխարեն ունենք ու, քո-ից հետո դանվելու պատճառով (տես § 257, ա)։

Այս օրենքից բացառվում են հետևյալ բառերը. երկոքին>ըրկո՛քէն, տորտոշ>տըրտո՛շ, մողմող>մըղմո՛ղ «ուսիճ», ողորմի>ղօրմի, ողորմածիկ>ղօրմացիկ։ Վերջին երկուսում ո-ն դարձել է օ անշուշտ գրականից փոխառված ողորմել>ղօղօրմիլ բառի ազդեցությամբ։ Րոպէ>բո՛պէ նույնպես գրական փոխառություն է։

79. Գրաբարյան -ոտ, -ատոց, -ոց մասնիկները բարբառումս դառնում են -ուտ, -ա՛ռուց, -ուց կամ -ուտ, -ա՛ռնէց, -ուց, ըստ ձայնավորների նեղդաշնակության օրենքի. այսինքն՝ եթե այդ մասնիկներն ստացող բառի ձայնավորները ծանր են, ապա մասնիկը լինում է -ուտ, -ատուց, -ուց. ինչպես՝ քանաք>քա՛նուկ, քընակուտ, ցեխ>ցէխ, ցէ՛խուտ, ամաչ>նամէնչ, նրմա՛նչկուտ, ակն>ակնը, ըկնա՛ռուց, խոտ>խուտ, խըտա՛ռուց, խարտ>խարտ, խա՛րտուց և այլն։

Իսկ եթե մասնիկն ստացող բառի ձայնավորները թեթև են, ապա մասնիկը լինում է -ուտ, -ա՛ռնուց, -ուց. ինչպես՝ բուրդ>բուրդ, բուրդուտ կամ բի՛րդուտ, որդն>ուռնը, ուռնուտ, գիրկ>գիրգ, գի՛րգա՛նուց, գիժ>գիժ, գի՛ժա՛նուց և այլն։

-ոտ մասնիկն -ուտ է դառնում նաև գ, ք ձայնացածներից հետո. ինչպես՝ ժանգ>ժէնգ, ժէ՛նգուտ, նենգ>նենգ նէ՛նգուտ, թուք>թէք, թէ՛քուտ և այլն։

-ոց մասնիկը հակառակ վերոհիշյալ օրենքի դարձել է -օց պընդոց>պընդօց գրնական ամրությունը բառում,

-ատոր և -ող մասնիկների ո-ն ամեն պարագայում էլ դառնում է ու, ինչպես՝ զօրաւոր>զրրաւուր, ձիաւոր>ձիյաւուր, մեծաւոր>մի՛ծաւուր, ձեռքաւոր>ձի՛քյաւուր, ասել>ասիլ, աճառուղ, նստել>նրստէլ, նըստուղ, բերել>բիրիլ, բի՛րուղ, որդնել>ուռնիլ, ուռնուղ և այլն։

*80. Թե միավանկ, և թե երկվանկ ու բազմավանկ բառերի շեշտված ու շեշտակաղորդ վանկերում վ-ից առաջ ո-ն դառնում է ա. ինչպես՝ կով>կավ, ծով>ծավ, ապով>ապավ «հովանավորություն, խոստովանք>խըստաւանք, խորովել>խըրաւիլ, խորոված>խըրաւուած, խռովել>խըռաւիլ. այդպես և գործիական հոլովի վերջավորությունը՝ քանով>քանավ «պատճառը», քարով>քարավ, կաթնով, *կաղդով>կաղդավ. բահով>բէհավ և այլն։ Սով>սավ գրական փոխառություն է։*

Հետաքրքրական է նկատել, որ արդի խոսակցական լեզվում ա-երը վերափոխվելով օ-ի, համաբանությամբ նույն օրենքին են ենթարկում նաև բուսական բառը, դարձնելով այն՝ բօվական։

81. Գրական ու կրոնական փոխառություններում բառամիջի ո-ն ամեն պարագայում էլ դառնում է օ. ինչպես՝ գործ>գօրծ, գոնեա>գօ՛նյա, կոպիտ>կօ՛պիտ, հոգի>հօ՛գի, նզովիլ>նզօ՛վիլ, դաստուր>դաղալօ՛ր, եպիսկոպոս>յեպիսկօ՛պօս և այլն։

82. Այս բոլորից դուրս ո ձայնավորը կրել է հետևյալ մասնավոր փոփոխությունները.

ո>ը՛.—Գործի>գը՛րծէն «արորդ», գործել>գը՛րծիլ «հյուսել», դորակ>դը՛րնակ, սայոր>շի՛լլը՛ր (և շի՛լլէր), գորտնուկ>գը՛ռնունէկ.

ո>ի.—Բոկիկ>բիրէկ, աքաքոկիկ>հրքըրիրէկ, գոգ>գիգ՛, վերջինս հավանաբար նմանվել է գիրկ>գիրգ՛ բառին։

ո>ա.—Որոճ>արուճ։

ո>է.—Ժնոցի>խընէցէ։

ՈՒ

83. Միավանկ ու երկվանկ բառերի սկզբում շեշտված ու-ն դարձել է օ. եղած բառերն են. ուլ>օվ, ուղտ>օղտ, ունջ>օնջ, ուռ>օռ, ուս>օս, ուր>օր, ուշկ>օշկ, օշ, ունկն>օ՛նգնը, օ՛ն-

դուն «կանթ», ուռի>հօ՛ռէ, ուռել>օռոիլ, ուտել>օտիլ, ուրախ>օրախ, ուրիշ>օրիշ, ուռուցք>օռուսկ, ունիմ, ունիս, ունի>օնիմ, օնիս, օնի։

Մի քանի բառերում ավելի փափկանալով դարձել է ճ՛. դրանք են՝ ուրդ>ճ՛ուրդ «ջրի ճամփա», ուրագ>հճ՛րաք, ուրբաթ>ճ՛րբաթ։

ուլ>ճ՛ուլ բառի մասին տես § 85։

Ուլունք>հունձունք բառի մասին տես § 85 և 93։

84. Երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում, շեշտից առաջ ու-ն դառնում է ը. ինչպես՝ ուրեքին>ըրբէքէն, ուրախանուն>ըրխանսուն, ուշաթափել>ըշտափիլ, ունջոտել>ընջոտիլ, ունջալել>ընջալիլ «երկար կոթով, ունջ մաքրելու ավել», ունկնաուր>ընգնավուր «կանթ ունեցող», ուղի>հրդէ և այլն.

Ուղարկել>դուրկիլ բառի սկզբում ու-ն ընկել է ղ-ից առաջ լինելու պատճառով, համաձայն § 3-ի։

Ուրաճալ>ուրա՛նալ կրոնական փոխառություն է։

85. Թե միավանկ, և թե բազմավանկ բառերում լ-ից առաջ շեշտված ու-ն դառնում է ը. եղած օրինակներն են. ուլ>հըլ, փուլ գալ>փըլ գալ, գուլպա>գըլպէկ, գունդուլակ>գինդըլակ։

Ուլունք>հունձունք բառում ը-ի փոխարեն ունենք ու հաջորդ ու-ի ազդեցությամբ։

Կուլ (տալ) բառն ունենք երկու ձևով՝ կըլ և կօլ. Թեև երկրորդն ավելի գործածական է, բայց այս օրենքին չի հակասում, որովհետև իրըև հարադրության անդամ հարմարվում է այն ձևին, որի հետ գործածվում է. այսպես՝ եթե նրան հաջորդող բայաձևը ծանր ձայնավոր ունի, ապա լինում է օ. ինչպես կօլ տալ, կօլ ըմ տվալ և այլն։ Իսկ եթե հաջորդող բայաձևը թեթև ձայնավոր ունի, ապա կարող է լինել նաև ը. ինչպես՝ կըլ չի նա՞ «կուլ չի տալիս», կըլ իմ նա՛ս «կուլ եմ տալիս» և այլն։

86. Միավանկ բառերի վերջում (բաց վանկ) ու կա չորս բառում միայն, որոնցից երեքում մնացել է անփոփոխ, իսկ մեկում դարձել ու. այդ բառերն են՝ ձու>ձու, դու>դու, չու>չու, լու>լու։ Վերջին բառում ու>ու փոփոխությունը կատարվել է համաձայն § 93-ի, ուստի և ընդհանուր կանոնը ոչ մնալն է։

87. Երկվանկ բառերի վերջում շեշտի տակ ու-ի համար ու-

*ենենք մի բառ, ուր և դարձել է o. քՓու>քըքՓó, որից էլ՝ *զկեռաքՓու>զըկըռքՓó։*

*88. Երկվանկ ու բազմավանկ բառերի վերջում (բաց վանկ) շեշտաչոչորդ ու-ն միում է անփոփոխ. եղած բառերն են. կատու>կատու, խաշու>խաշու «մսի ջուր, bouillon», կկու>կկուկու, երկու>էրկու, *արջակատու>ըրջըկատու, որձատու>ըռձըտու «անպտուղ», բերատու>բըրատու «պտղատու», տիրացու>տիրացու, ալեւու>ալէլու։ Վերջին երկուսը կրոնական բառեր են, և իրրև այդպիսիք այս օրենքից անկախ էլ իրենց ու-ն անփոփոխ կպահեին (տես § 97)։*

Լեզու>լեզու բառի մասին տես § 93։

*Հերու բառի դիմաց ունենք հէրվի, որն ստացվել է *հերուի ձևից։*

89. Մեկ և մեկուկես վանկանի բառերի մեջ (փակ վանկ) ու-ն դարձել է o. ինչպես՝ Քուք>Քօք, Քուխ>Քօխ, Քուխս>Քօխս, ձուկն>ձóկնը, ձóկուն, խուրձն>խóրձնը, խուք>խóք. «արտի եզրը», ծուխ>ծóխ, ծունկն>ծóնգուն, ծուռ>ծօռ, կուժ>կօժ, կուշտ>կօշտ, կուպր>կóպըր, կóպուր, կուրծ>կօրծ, հում>հօմ, հունձ>հóնձ, ճուտ>ճօտ, մուխ>մօխ, մուկն>մóկնը, լմօկուն, մունջ>մóնջ, նուռն>նóռնը, շուն>շօն, շունչ>շóնչ, պուկ>պօկ «մխզածորան՝ ամբացված երեխայի օրորոցինը», սուգ>սօգ, սունկն>սóնգուն, սուտ>սօտ, տուն>տօն, փուք>փօք, փուճ>փօչ, փունջ>փóնջ, փուռն>փօռնը, փուքս>փօսկ, քուղ>քօղ «ծոկ, չվան» և այլն։

Փուլ գալ>փóլ գնել բառի մասին տես § 85։

Երկու բառում ավելի փափկանալով ու-ն դարձել է ö. քուզ>քöզ, քուն>քöն։

Այս օրենքից բացառվում է դուրք>դուրք «գուռն» բառը, որում ու-ն միացել է անփոփոխ։

Թուք>թէք, ճուք>ճիք, փուչ>փէչ բառերի մասին տես § 98։

Լուծ>լúձ բառի մասին տես § 93։

Ջուր բառի դիմաց ունենք իգիւր<ի զուր, որ վերցված է գրականից և սակավ է գործածվում. բուն ժողովրդական բառն է նրեախ<պրսկ. nāhaqq։

90. Մի խումբ միավանկ բառերում ու-ն դարձել է üi. այդ

բառերն են յուշ>հուշ «հիշողություն», բունդ>թունդ, բուշտ>թուշտ, բուրդ>թուրդ, գունդ>գունդ, դուն>դուն «մոլախոտ», դունդ>դունդ «բրլրակ, թմբիկ», դուր>դուր, դուրս>դուս, ջուր>ջուր: Պետք է նկատել, որ բացի առաջին երկսից, մյուս բոլոր բառերում էլ ու-ն գտնվում է բ, գ, դ, ջ ձայնեղ պայթականներից հետո, իսկ այդ պարագայում ու>օ փոփոխության համար ունենք մի օրինակ միայն՝ ջուխտ>ջոխտ, որ պարսկերենից փոխառված բառ է. բացի դրանից, այդ հնչյունների շարքին պատկանող ձ բաղաձայնից հետո ու կա մի միավանկ բառում միայն, ուր և դարձել է օ. ձուկ>ձօկը, ձօկուն: Սակայն այդտեղ ու>օ կարող էր առաջվել նույն կարգի մուկ, սունկ, ծունկ, ունկ բառերի համաբանությամբ: Ուստի և, կարելի է եզրակացնել, որ միավանկ բառերի մեջ (փակ վանկ) ձայնեղ պայթականներից, այն է՝ բ, գ, դ, ջ (ձ-ով օրինակ չունենք) հնչյուններից հետո ու-ն դառնում է ո՛:

91. Երկվանկ ու բազմավանկ բառերում շեշտից առաջ, այսինքն՝ վերջընթեր կամ նախավերջընթեր վանկում ու-ն դառնում է ը կամ ի՝, ըստ ձայնավորների ներդաշնակության օրենքի: Ինչպես՝ ու > ը.—ապրուշումէ>ապրըշմէ, խուփ(ի)>խըփէ, ծուկ(ի)>ծըկէ, փուճուկ>փըչկէ «ծառի փշակ. շրթունքը կուժաւոր>կըժվուր:

*ու > ի՝.—Բուանել>փի՛սնել «բորբոսնել», բունակալ>բի՛նակիլ, գունդուակ>գի՛նդ՛ակ, գունդուկծիկ>գի՛նդ՛կըծըքէկ, լուսաբաց>լի՛սաքէց, գունդուփոս>գի՛նդ՛փուս «խորդուբորդություն», *գորտնուկամայր>գի՛ռնի՛կամէր «մի տեսակ զեռուն»:*

Պետք է նկատել, որ հայերենում ու-ն ածանցման ու բարդացման ժամանակ սղվում է, որի հետևանքով շեշտից առաջ գրաբարյան բառերում ու չի կարող առաջվել ու-ից, այլ՝ միայն ոյ-ից. ուստի և՝ եթե վերը բերված օրինակներից հանենք գրաբարյան լուսաբաց (լոյս), բուսնել (բոյս) բառերը, ապա ճանաչածները բոլորն էլ ձևացել են բարբառումս:

92. Երկվանկ ու բազմավանկ բառերի շեշտված վանկում, այսինքն՝ վերջին կամ վերջընթեր վանկում ու-ն դառնում է օ. ինչպես՝ գլուխ>գլօխ, դեղնուց>դըղնօ՛ց, դուռն>դըռօն՛ «ինչ-որ քոչուն», թրթուռ>թըռթօ՛ռ, իրիկունայ>ըրկօ՛նաց «երեկո-

յանդ, ծնունդ>ծընօ՛նդ, կնունք>կընօ՛նք, կշկուռ>քըշկօռ «հանգույց», կտուր>կտօր, մանուշակ>մընօշակ, չուխայք>չօխէք, քուռակ>քօռակ, պըտուղ>պըտօղ և այլն:

Կնչուռ>կօնչիք բառում ու-ն ենթարկվել է այս օրենքին, փոխելով իր տեղը. սակայն կարելի է ենթադրել նաև, որ ոչ թե տեղափոխություն է այդ, այլ ուղղակի առաջվել է պահլավերեն kunjit ձևից. այդ հաստատում է նաև երկրորդ վանկի ի-ի գոյությունը:

Բացառություն է կազմում միայն՝ կուտիլ>կուտիլ «հավաքել», որից և՝ կուտվածք>կուտվասկ:

93. Նույն պարագայում հինգ բառում ու-ն գարձել է ոու: Այդ բառերն են. կճուճ>կոուճոուճ, փշուր>փոուշոուր, գուբան>գոուբօն, քուրայ>քոուրէ, լուսին>լոուսէն: Առաջին երեքում ու առաջվել է անշուշտ ձայնավորների ներդաշնակությամբ՝ բառում եղած ոու կամ ո ձայնավորների ազդեցությամբ. վերջինիք մասին պետք է նկատել. լ-ից հետո բարբառումս ու կա միայն ինն բառում, որոնցից չորսում գարձել է ոու, երկուսում՝ օ, երեքում մնացել է ու: Այդ բառերն են. լու>լոու, լուծ>լոուծ, լուսիճ>լոուսէճ, ուլունք>հոուլոունք, գլոխ>գըլօխ, պլուզ>պըլօզ «կապուտաչյա», լուր>լուր, ալեու>ալէ՛լու, փիլոս>փի՛լոս: Վերջին երեքը գրական ու կրոնական բառեր են և այստեղ որևէ արժեք չունեն: Գլուխ>գըլօխ և պլուզ>պըլօզ բառերը մյուսներից տարբերվում են նրանով, որ նախորդ վանկում ունեն ծանր ձայնավոր. ուստի և, կարելի է եզրակացնել, թե լ-ից հետո ու>ոու փոփոխությունն օրինական է, եթե միայն նախորդ վանկի ձայնավորը ծանր չէ (ինչպես՝ գըլօխ): Հետաքրքրական է համեմատել նաև գրաբարյան ո ունեցող այն հինգ բառերը, որոնք համաձայն § 78-ի պետք է բարբառումս ունենային ու, ունեն ոու. դրանք են. բոլոր>բոուլոուր, ոլոր>հոուլոուր, ոլորել>հի՛լոուրիլ, մոլոր>մոուլոուր, սալոր>շի՛լոուր (նաև շի՛լըր), մինչդեռ՝ պոլոկել>պըլոուկիլ, նախորդ ը-ի պատճառով. Այդպես կարելի է բացատրել նաև լեզու>լոուզոու փոփոխությունը, ուր նախ՝ ձայնավորների լիակատար ներդաշնակությամբ ե-ն գարձել է ու (լեզու>լուզու), ապա՝ ու-ն լինելով լ-ից հետո, ըստ այս կանոնի, գարձել է ոու (լուզու>լոուզու) և, վերջապես, կրկին ձայնավորների

ներդաշնակությամբ՝ վերջաձանգ ու-ն նախորդի ազդեցությամբ դարձել է ո՛ւ (լա՛զու>լա՛ւզու)։

94. -ութիւն մասնիկի ու-ն շեշտի տակ դառնում է օ, եթե նախորդ վանկի ձայնավորը ծանր է. ինչպես՝ աղքատութիւն>ըղկըտօ՛թին, գողութիւն>գըղօ՛թին, չնութիւն>չնօ՛թին, երկայնութիւն>ըրկընօ՛թին, սևութիւն>սըվօ՛թին, ազէկութիւն>ըզըկօ՛թին և այլն։

*Իսկ եթե նախորդ վանկի ձայնավորը թեթև է, ապա դառնում է ո՛. ինչպես՝ ալևորութիւն>ի՛լի՛վո՛թին, բարձրութիւն>բի՛ծրո՛թին, գէշութիւն>գի՛շո՛թին, գժութիւն>*գիժո՛թին>գի՛ժո՛թին, գառնութիւն>գի՛նո՛թին, արժանութիւն>է՛ժանութիւն>ի՛ժնո՛թին և այլն։*

95. երկվանկ ու բազմավանկ բառերում շեշտակրող վանկի (վերջին փակ վանկ) ու-ն մնում է ու. ինչպես՝ անանուխ>նանուխ, ապրշում>պըրշո՛ւմ, արմունկ>ա՛րմունգ, թաթախուն>թա՛րխուն, կոծախուր>կըծո՛ւխուր, կուծո՛ւխուր, կարկուտ>կա՛րկուտ, փետուր>փէ՛փուռ, բազուկ>բէ՛զուկ («համառեղուկ»), ակուռ>ա՛կուռ «օղակ», էգուց, այգուց>ա՛ւգուց և այլն։

Նույն պարագայում ավելի փափկանալով ու-ն դարձել է ո՛ւ հետևյալ բառերում. երդում>ե՛րդո՛ւմ, գոբանուկ>գո՛նո՛ւկ, կամուրջ>կա՛ռմո՛ւնջ (նաև՝ կա՛րմո՛ւնջ)։

Օգուտ>օ՛քուտ «լավ» և աննուն>ա՛նո՛ւմ բառերում շեշտահաջորդ ու-ն հաճախ փոխվում է ը-ի, այնպես որ առացվում են կրկնաձևեր՝ օքրտ, անքմ. անշուշտ երկուսն էլ իրրև շատ գործածական բառեր ենթարկվել են այդ սղմանը։

Միակ բացառությունն է կազմում խանութ>խա՛նո՛թ բառը, որի մեջ ու-ն դարձել է օ։

96. -ունք մասնիկն ընդամենը ութ բառում կա միայն, որոնցից մեկում (ուլունք>հո՛ւլո՛ւնք) ու-ն դարձել է ո՛ւ համաձայն § 93-ի, երկուսում՝ մնացել ու, մնացած հինգում՝ դարձել օ։ Այսպես՝

ու>ու.—Գարուն(ք)>գէ՛րունք, թիկունք>քէ՛կունք։

ու>օ.—Աշուն(ք)>աշո՛ւնք, արտասուն(ք)>ըրտասո՛ւնք, երիկամունք>ըրկամո՛ւնք, քառասունք>քըռասո՛ւնք, քրտունք>քըրթո՛ւնք։ Վերջին բառում ու-ն շեշտի տակ լինելով՝ պետք է

դառնար օ՝ համաձայն § 92-ի։ Մնացած օրինակներին նայելով պետք է եզրակացնել, թե -ուն մասնիկի ու-ն շեշտառաջորդ վանկում ճում է ու, եթե նախորդ վանկի ձայնավորն է է, և դառնում է օ, եթե նախորդ վանկի ձայնավորն է ա։

97. Գրական ու կրոնական փոխառությունների մեջ ամեն պարագայում էլ ու-ն ճում է ու. ինչպես՝ ուխտ>ուխտ, ուսում>ուսում, սուրբ>սուրբ, պատուհաս>պատուհաս, ժառանգություն>ժառանգություն, պարապմունք>պարապմունք և այլն։

98. Այդ բոլորից դուրս ու ձայնավորը կրել է հետևյալ մասնավոր փոփոխությունները։

ու>է.—Փուշ>փէշ, թեև կա նաև՝ փոշ կանոնավոր ձևը, զրմուռս>զրմբէռնը «կնքամոմ», բուք>բէք, նաև՝ բօք (համմտ. քուք ու մուր>քօքրմօր)։

ու>ի.—ճուր>ճիր «ողկույզ», կամուրջ>կաւրմիճ կամ կմաւրմիճ (վերջինս ավելի գործածական է)։

ու>ճ.—Գինձմուկ>գինձմիճկ «մի տեսակ կանաչի». անշուշտ նախորդող թեթև ձայնավորի (ի՝) ներգործությամբ։

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

99. Եթե ամփոփենք ձայնավորների կրած փոփոխությունների մասին մինչև այժմ ասածները, մի կողմ թողնելով մասնավոր դեպքերը, ապա կստանանք հետևյալ ընդհանուր պատկերը։

Ցուրաքանչյուր ձայնավոր կարող է լինել երեք դիրքում, այն է. շեշտի տակ (դրանց հատկացնելով նաև մխալանկ բառերը), շեշտից առաջ և շեշտից հետո։ Իբրև ընդհանուր կանոն շեշտից առաջ եղած ձայնավորները դառնում են ը կամ ի՝։

Գրաբարյան ա ձայնավորը շեշտի տակ և շեշտից հետո սովորաբար ճում է ա կամ դառնում է ա. ձայնեղ պայթականներից ու գ, ժ, շ, լ, ճ, չ բաղաձայններից հետո շեշտված ա-ն դառնում է է։

Ե ձայնավորը սովորաբար դառնում է է. խիստ սակավ դեպքերում էլ՝ ի։

է ձայնավորը շեշտված վանկում սովորաբար ճում է է

կամ դառնում է ա, սակավ դեպքերում էլ՝ ըէ. շեշտից հետո միւմ է անփոփոխ։

Ը ձայնավորն ընդհանրապես միւմ է ը և կամ՝ նմանվելով նախորդ կամ հաջորդ ձայնավորներին, դառնում է ի՝, ինչպես և՝ ու, ում։

Ի ձայնավորը սովորաբար թե՛ շեշտված, և թե՛ շեշտահաջորդ վանկերում դառնում է է, սակավ դեպքերում (գ-ից հետո, լ և ր-ից առաջ, վերջին բաց վանկում՝ մասամբ) միւմ է ի, կամ դառնում է ըէ (մի քանի բառերում՝ ծ-ից հետո, ս և զ-ից առաջ)։

Ո ձայնավորը, իբրև ընդհանուր կանոն, թե՛ շեշտված, թե՛ շեշտահաջորդ վանկերում դառնում է ու, սակավ դեպքերում՝ ա՛, իսկ վ-ից առաջ՝ ա։

Ու ձայնավորը շեշտի տակ դառնում է օ, երբեմն էլ ա՛ (լ-ից և ձայնեղ պայթականներից հետո) կամ՝ ճ (լ-ից առաջ)։ Շեշտից հետո ու-ն միւմ է անփոփոխ։

100. Այս ընդհանուր պատկերն ստանալուց հետո հետաքրքրական է իմանալ, թե այդ փոփոխութիւնները երբ են կատարվել. դրա համար լավագոյն միջոցն է օտար լեզուներից փոխառված բառերի կրած փոփոխութիւնը։ Այսպես՝ եթե մենք գիտենք, թե ավյալ բառը մոտավորապես երբ է մտել ավյալ լեզվի կամ բարբառի մեջ, ապա՝ նրա կրած փոփոխութիւնը՝ ավյալ լեզվի կամ բարբառի հնչյունական որևէ օրենքի համապատասխան՝ ցույց է տալիս, որ այդ օրենքը դեռևս գործել է եղել այդ բառի փոխառման ժամանակ։ Ընդհակառակն, եթե հայոնի ժամանակում փոխառված բառը չի ենթարկվել հնչյունափոխական այս կամ այն օրենքին, ապա այդ օրենքը դադարած է եղել գործելուց բառի փոխառման ժամանակ։ Տվյալ դեպքում բարբառիս համար արժեքավոր են արաբերենից ու ադրբեջաներենից փոխառած բառերը. ինչպես բազմից նշվել է, ադրբեջաներենից փոխառած բառերը չեն ենթարկվում ձայնավորների փոփոխութեան ընդհանուր կանոններին. այդ նշանակում է, որ թուրք-թաթարական արշավանքների ժամանակ այդ փոփոխութիւնները դադարել էին գործելուց։ Արաբերենից փոխառած բառերը բաժանվում են երկու կարգի. դրանց մի մասը ենթարկվում է բարբառիս հնչյունափոխական օրենքնե-

րին, մյուս մասը՝ ոչ. այսպես՝ ձայնեղներից հետո չեշտված վանկի ա>է փոփոխությանը ենթարկվել են՝ բակլայ (baqla بقلة)>բք'լէ, ալաժարի (>al-ǰahri الجهري)>ալաժ'էրէ և այլ բառեր, բայց չեն ենթարկվել՝ բազազ (<bazzāz بزاز)>բ'ազազ, բասար (başər بصر)>բ'ասար «խելք» և այլ բառեր. այդ, իհարկե, տարօրինակ չէ. օրենքին ենթարկված բառերը ցույց են տալիս, որ արաբների տիրապետության շրջանում ա>է փոփոխությունը դեռևս կատարվելիս է եղել, իսկ այն բառերը, որոնք չեն ենթարկվել օրենքին, ուշ են փոխառվել՝ ապրելիչներենի միջոցով։ Ընդհակառակն, ու>օ փոփոխությանն արաբերեն բառերը չեն ենթարկվում. ինչպես՝ անդուկ (<şunduq صندوق)>սունդուկ, պուրճ (<burǰ برج)>բուրջ և այլն, որ ցույց է տալիս, թե արաբներից բառեր վերցնելու միջոցին այդ փոփոխությունն այլևս կատարվելիս չի եղել։ Բայց, քանի որ արաբների տիրապետության հենց սկզբում բառերը չէին փոխառվի, այլ դրա համար հարկավոր էր որոշ ժամանակ, ուստի և հնարավոր է, որ այդ փոփոխությունը դադարած լինի մոտավորապես ութերորդ դարի կեսերին, իսկ ա>է փոփոխությունը՝ 10-րդ դարի վերջերին ու 11-րդ դարի սկզբներին, քանի որ արաբերեն հին փոխառությունները ենթարկվում են այդ օրենքին։ Այսպես էլ մյուս փոփոխությունները պետք է որ դադարած լինեն 11-րդ դարում, նույնպիսի պատճառաբանություններով։

Վերջապես՝ մի շարք բառերում ձայնավորների ներդաշնակությամբ ը>ու փոփոխությունը (ձուկն>ձօկուն, ձօկնը, մուկն>մօկուն, մօկնը և այլն) այն դեպքում, երբ բարբառում այդ բառերը նախորդ վանկում ունեն օ ստացված ու-ից, ցույց է տալիս, որ ը>ու փոփոխությունը կատարվել է ավելի շուտ, քան նախորդ վանկի ու>օ փոփոխությունը. իսկ այս էլ նշանակում է, թե ձայնավորների ներդաշնակությունը տեղի է ունեցել 8-րդ դարից էլ շուտ։ Ի վերջո, այս էլ իր հերթին ցույց է տալիս, որ ձայնավորների ներդաշնակությունը կապ չունի թուրքերենի ազդեցության հետ, ինչպես կարծում են ոմանք, այլ հայերենում անկախորեն առաջացած երևույթ է։

Ա.Ե

101. Թե մխավանկ և թե բազմավանկ բառերում շեշտված ու շեշտանաջորդ այ-ը բաղաձայնից առաջ դառնում է է. այս օրենքին ենթարկվող բառերն են. այծ>էծ, այրուց>էրուց, այրել>էրիլ, ժայռ>ժէռ, լայն>լէն, լայնք>լէնք, ձայն>ձէն, վայրի>վէրէ, փայտ>փէտ, ագրափայտ>ըխպափէտ, սամիի փայտ>սըմիափէտ, ծայր>ծէր, ցայտ>ցէթ «ջրի շիթ, մեզ», ցայտել>ցէթիլ «ցայտել, միզել», սայր>սէռ «լեռան սուր կողմ», եզրայր>ախպէր, երկայն>էրկէն, կայծակ>կէծակ, գետ ի վայր>գըտըվէր, գեպի վայր>գի՝վէր, որբևայրի>վի՝րբի՝վէրի։ Շոտայ>շըռտայլ գրական փոխառություն է։

Այս, այդ, այն ցուցականները դարձել են ըս, ըդ, ըն և այդ ձևով էլ պահպանվում են բարդությունների մեջ՝ եթե շեշտի տակ են. ինչպես՝ այսքան>ըսքան, այդքան>ըդքան, այնքան>ընքան, այսօր>ըսոր և այլն։ Այլ բառն ունենք ըլ և ալ ձևերով. երկրորդը սակավ գործածական է և պայմանավորված է իրեն նախորդող բառի ձայնավորների ծանը լինելով (տես § 399)։

Հայր, մայր, եօրեղբայր բառերն ունենք հար, մար, եէրբար ձևերով։

102. Հայս բառը դարձել է հրէս «մանր այլուր, խորխոխ»։ Այդ մասին պետք է նկատել, որ Մեղրու-բարբառում կա ընդամենը իննը բառ, որոնց մեջ շեշտված վանկում ս-ից առաջ ե, ի, է, այ-ից համապատասխան օրենքներով պետք է ստանայինք է. այդ բառերն են. տեսես, տեսաճել, կէս, փեսայ, միս, քիստ, սիսեռն, պիսակ, հայս և գավառական սիս «հուլունք», բայց այդ բոլորում էլ է-ի դիմաց ունենք ըէ (տըէսնիլ, տընդրէս, կըէս, փըէսէ, մըէս, քըէստ, սըէսառնը, պըէսակ, հրէս, սըէս)։ Միս, քիստ, սիսեռն, պիսակ բառերի մասին § 60-ում ասված է, որ ի-ն ս-ից (և զ-ից) առաջ շեշտի տակ դառնում է ըէ. արդ, քանի որ շեշտված վանկում ս-ից առաջ ունենալիք է-ի դիմաց բոլոր դեպքերում էլ ունենք ըէ, ուստի և կարող ենք այդ օրենքը ընդհանրացնել և ասել, որ ե, է, ի ձայնավորները և այ երկ-

բարբառը շեշտված վանկում ա-ից առաջ դառնում են ը. ինչպես՝ տես, տեսանել>տըէս, տըէսնիլ, տնտես>տընդրէս, փեսայ>փըէսէ, կես>կըէս, միս>մըէս, քիստ>քըէստ, սիսեռն>սըէսառնը, պիսակ>պըէսակ, ճայս>ճըէս, գվո. սիս>սըէս: Բայց որովհետև ը-ն այդ բառերում լինում է է-ի դիմաց, ապա կարող ենք եզրակացնել, թե նախ պետք է կատարված լինեին է>է, է>է, ի>է, այ>է փոփոխությունները համապատասխան օրենքներով, և ապա՝ է>ը. այսպես՝ տեսանել>տէսնել>տըէսնիլ, կէս>կէս>կըէս, միս>մէս>մըէս և այլն. կէս>կըէս փոփոխությունը պետք է կատարվեր նաև § 72-ի համաձայն՝ է-ն կ-ից հետո լինելու պատճառով:

Ի դեպ, արդի խոսակցական լեզուն վերականգնելով այդ բառերի նախաձևերը, հաճախ ը-ն դարձնում է է նաև այն դեպքում, երբ պետք է ի կամ այ լիներ. ինչպես՝ քէստ, պէսակ, ճէս: Այդ նշանակում է, որ նախաձևն այլևս չի հիշվում և վերականգնումը հասնում է միջին աստիճանին: Միս, սիսեռն բառերում վերականգնված է ի-ն՝ գրականի ազդեցությամբ:

103. Շեշտի տակ այ երկբարբառը ձայնավորից առաջ դարձել է երկհնչյուն այ. եղած բառերն են. (զ)մայլիլ>մայիլ ՝մայլ, խնայել>խընայիլ, մայիս>մայիս. վերջին երկուսն իբրև գրական բառեր էլ այդպես կլինեին:

Նախաշեշտ վանկում ձայնավորից առաջ այ երկբարբառը բոլորովին կորչում է. եղած բառերն են. հայելի>հելլի(>հիլլէ), ազազայել>ազազել (>ազազիլ), երեխայութիւն>ըրխօթին:

Ուրիշ օրինակ կամ բացառություն չկա:

104. Միավանկ բառերի վերջում (բաց վանկ) այ կա միայն երկու բառում, ուր և դարձել է երկհնչյուն էյ. դրանք են. հայ>հէյ, նայ>նէյ ֆոնավոլ:

105. Երկվանկ ու բազմավանկ բառերի վերջում (բաց վանկ) շեշտից հետո այ-ը դառնում է է: Եղած օրինակներն են. բակլայ>բէկլէ, փեսայ>փըէսէ, հաւայ>հավէ ՝եղեռնակ, սատանայ>սըտանէ (կա նաև սատանա գրական ձևը), կապայ>կապէ, վիլայ>վէլլէ, ապրայ>ապրէ, երախայ>րախէ, քուրայ>քուրէ: Ջուխայ>չօխէք՝ բառում թե այս, և թե § 101-ի կանոնով ունենք է:

Վերայ բառն ունենք վէրա ձևով, որում այ-ը դարձել է ա,

նույն բառից ունեցած վերջա ձևի ազդեցությամբ (տես ստորև)։ Թուլպայ>գ̈ոլփ̈ակ բառի մասին տես § 108։

106. Երկվանկ ու բազմավանկ բառերի վերջում այ-ը դառնում է ա կամ ա՝ նախորդող ձայնավորի ներդաշնակությամբ։ Եղած օրինակներն են. վկայ>վըկա, տղայ>տըղա, վերայ>վըրա (և վէրա), արիւնլուայ>արիւնլի՛վա, երեսլուայ>իրեսլի՛վա։ Աչկարայ>աչկարա, հերիսայ>հարիսա թեև այս օրենքին չեն հակասում, բայց ադրբեջաներենից փոխառած բառեր են։

107. Բազմավանկ բառերում նախաշեշտ վանկի այ-ը բաղաձայնից առաջ դառնում է ը կամ ի՝ ձայնավորների ներդաշնակությամբ։

Եղած օրինակներն են.

այ>ը.—Երկայնութիւն>երկընօթին, *կայուքացաւ>կըռըքացավ «առատացավ», եղբայրակին>ըխպըրակէն, եղբայրութիւն>ըխպըրօթին, եղբայրբաժին>ըխպըրբէժին, *այրախաստ>ըռախաստ «լեռան կողին բուսած խոտ. փխ. տառանվող, անհաստատ մարդ»։

այ>ի՛.—Այլ այսօր>ի՛լա՛սէր «հաջորդ շաբաթվա այս օրը», փայլփլել>փի՛լփի՛լալ, փայտանալ>փի՛տանիլ։

108. Մասնավոր փոփոխություններ են.

այ>ա.—Փայծաղն>փայախնը։

այ>ա.—կայծ>կա՛ծ «տաք» (թեև ունենք կանոնավոր՝ կայծակ>կէծակ), գուլպայ>գ̈ոլփ̈ակ։

այ>ի.—Այգի>իզի, ուր նախ համաձայն § 101-ի այ-ը դարձել է է, ապա՝ հաջորդ ի-ի ազդեցությամբ՝ ձայնավորների լիակատար ներդաշնակությամբ՝ է>ի։

այ>ու.—Այգուց>ուգուց, նույնպես՝ ձայնավորների լիակատար ներդաշնակությամբ։

այ>ու.—Գայլ>գ̈ուլ (տես § 205)։

այ>ըէ.—Կայռիք>կըէռէք։

Ա.Ի

109. Նախաշեշտ վանկի աւ-ը ձայնավորից առաջ դառնում է ըվ. եղած օրինակներն են. հաւանել>հըվանիլ հաւասար>հը-

վնասը, հաւասարել>հրվըսնըրիլ, հաւաքել>հրվնքիլ, նաւակատիք>նրվըկնտիկ, հաւասարդ>նրվնսարդ, տաւարած>տրվնրած, տաւարավարձ>տրվրնվարզ։

Աւելուկ>ի՝վի՝ղիկ, աւելանալ>ի՝վլի՝նիլ բառերում ունենք ի՝վ հաջորդ ը, ա թեթև ձայնավորների ներդաշնակութեամբ։

Կարաւան>քնրվնն վերցված է ադրբեջաներենից։

110. Նախաշեշտ վանկի աւ-ը բաղաձայնից առաջ դառնում է ը. ինչպես՝ մօտենալ>մըտանիլ, յօրանջել, յօրանջկոտել>ըռըշկուտիլ, օրօրել>ըրռւրիլ, զօրաւոր>զըրավուր. այդպես և՝ եօթանասուն>ըխտանասսուն։

Թաւհանել>Թըվհանիլ բառում պահպանված է վ-ն թաւ>թավ ձևի ազդեցութեամբ։

111. Շեշտված վանկում ձայնավորից առաջ աւ երկբարբառը դառնում է ավ. ինչպես՝ աւազ>ավազ, ծարաւել>ծըրավիլ, կաւիճ>կավէճ, կտաւիկ>կըտավէկ, հաւայ>հավէ, հաւան>հավան, հաւատ>հավատ, հաւաք>հավաք, հրաւէր(ք)>հրըավէրք՝, ցախաւել>ծրխավիլ, ձիաւոր>ձիյավուր, տաւար>տավար, ցաւել>ցավիլ, խաւիծ>խավէծ, պառաւել>պըռավիլ, շնորհաւոր>շընհավուր, զօրաւոր>զըրավուր և այլն։

Նույն պարագայում ավելի փափկանալով ունենք ա, աւել>ավիլ բառում, թեև ունենք ցախաւել>ծրխավիլ։

(Ա)աւել բառի դիմաց բարբառային էվել ձևն ըստ պրոֆ. Աճառյանի ստացված է յաւել ձևից։ Նույն յաւել ձևը Մեղրու բարբառում նախ՝ յա>է փոփոխությամբ դարձել է էվել, ապա յ-ից առաջ ե>ի փոփոխությամբ՝ էվել>էվիլ (տես § 40) և, վերջապես, հաջորդ ի-ի ներդաշնակությամբ՝ է>ի փոփոխությամբ ավել՝ իվիլ։

Մեծաւոր>մի՝ծավուր բառում ավ ունենք նախորդ ի՝-ի ազդեցությամբ։

112. Բառավերջում՝ թե շեշտված, և թե շեշտահաջորդ վանկի աւ երկբարբառը նույնպես դառնում է ավ. ինչպես՝ ցաւ>ցավ, հաւ>հավ, նաւ>նավ, թաւ>թավ, դեղնացաւ>դըղնացավ, գլխացաւ>գըլխացավ, կաքաւ>կաքավ, ծարաւ>ծարավ, հալաւ>հալավ, պառաւ>պառավ և այլն։

Նույն պարագայում նախորդ ի՝-ի ներդաշնակությամբ աւ-

Ննենք ավ գրաւ>գի՛րավ բառում. այդպես և՝ արմաւ>ամբրամ, Գրաւել>գըրավիլ գրական փոխառություն է։

113. Շեշտված ու շեշտահաջորդ վանկում աւ(օ) երկբարբառը բաղաձայնից առաջ սովորաբար դառնում է օ. ինչպես՝ օգուտ> օքուտ, օքըտ «լավ», օդ>օք, օձ>օղձ, յօնք>օնք, օդ>օղ, օրենք>օրէնք, օրհնել>օխնիլ, օթեկ>օթէկ՝ հետևորդ օրվան ճեպաշտ ճաշը, օտար>օխտար (Շահյանի մոտ՝ օղտար) «ուրիշի հավը, ոտն>ոտն, զօրք>զօրք, կրօն>կըրօն, խօսք>խօսկ, քօղ> քօղ «վայրի այծ», խօսել>խօսիլ, գէշախօսք>գի՛շախօնկ, մտօք> մըտօք, զգօն>սըկօն, սրկօնա «արթուն» և այլն։ Այդպես և ազատնի>ըղոնէ, նաւք>նօք, որոնք աշխարհաբարում բացառություն են կազմում։

Ււրն բառը դառնալով եաւրն և ապա՝ յաւրն, յ-ի կորցումով և խ-ի հավելմամբ դարձել է օխտը։ Ւ-ն ավելացել է նաև օտար>օխտար և զօտիկ>զօխտէկ՝ բառերում։

Մնող բառն իրրև ենթակայական դերբայ ենթարկվել է ընդհանուր կանոնին և դարձել ընդուղ։

114. Երկվանկ ու բազմավանկ բառերի մեջ շեշտված ու շեշտահաջորդ վանկերում ա և թ բաղաձայններից առաջ աւ(օ)-ը դառնում է ու. եղած օրինակներն են. կարօտ>կարուտ, կաթօտիլ>կըրտուտիլ, նարօտ>նարուտ «գուշնզդույն թել», մօտիլ> մուտա, աղօթք>աղուքկ, աղօթել, աղօթս առնել>աղուքկ արիլ, ամօթ>համուտ, անամօթ>անհամուտ, ծանօթ>ծանուտ, առաւօտ առնել>ըտավուտ արիլ «վաղ առավոտյան տնային գործ կատարել»։

Գօտի, գօտիկ բառերից ունենք գուտէ այս օրենքի համաձայն և գօխտէկ՝ նախորդ օրենքի համաձայն՝ ավելացած խ-ի պատճառով (ինչպես՝ օխտար, օխտը)։

115. Մասնավոր փոփոխություններ են.

աւ>ու.—Օբօրոց>ըբուրուց, ուր նախ՝ միջին աւ-ը օ դառնալուց հետո նմանվել ու նույնացել է վերջավանկի ո-ին և ապա՝ § 78-ի համաձայն դարձել ու. նույն ձևով էլ՝ օրօրել> օրորել>ըրուրիլ։ Աելօք>խէլուք։

աւ>ա.—Հօրաքոյր>հաքուր, որ առաջվել է հայր>հար ձևից կազմված բարդություններից (հայրքոյր>հարքոյր>հաքուր)։

աւ>ո.—Այսօր>ասուր, այլ այսօր>ի՛լ'սուր «հաջորդ

շաբաթվա այս օրըɔ. երկսում էլ նախորդ ա՜ի ներդաշնակութ-թյամբ, քանի որ ունենք առանձին՝ օր>օր, որից՝ կէս օր> կրսօր։

աւ>էվ.—*Գաւաթ>գէվաթ, ուր ա-ն ենթարկվելով § 18-ի կանոնին՝ գ-ից հետո դարձել է ։ Ոչխարաւան>Ըխչրէվան (տեղանուն) կազմվել է առաջին եզրի սեռական հոլովով՝ ոչխարի աւան>ոչխարեւան և ապա՝ ըստ § 118-ի դարձել ըխչրէվան։*

աւ>է.—*Հօրեղբայր>հէրբար ստացվել է հայրեղբայր ձևից, որ կրճատմամբ դարձել է հայրբար և բաղադրիչները չգիտակցելու հետևանքով՝ այ>է փոփոխությամբ՝ դարձել հէրբար, չնայած որ հայր բառն առանձին ունենք հար ձևով։*

Մօրուք>մէրուք, որ ստացվել է հին գավառական միրուք ձևից. այդ հաստատվում է նաև Ագուլիսի բարբառի մայրուք ձևով։

աւ>ö.—*Զօդել>զöդիլ, հաղորդ ի թեթև ձայնավորի ներդաշնակությամբ։*

աւ>ափ.—*Հարաւ>հարափ. ստացվել է ընդհանուր ճարաֆ արտասանությունից, ֆ>փ փոփոխությամբ՝ ֆ չլինելու պատճառով։*

ԵՒ

116. Շեշտից առաջ եւ-ը դառնում է ի՝վ. ինչպես՝ ալևորութ-թիւն>հի՝լի՝վի՝րöթին, թեթևանալ>թի՝թի՝վանիլ, որբևայրի> վի՝րբի՝վէրի, սերկևի(ան)ի>սի՝րկի՝վիլ։

Սևանալ>սըվանիլ, սևաքաշտ>սըվաքաշ «սև ագռավ» բառերում դարձել է իվ հաջորդ ա-երի շնորհիվ։

Երևալ>ի՝րվալ բառում ե բաղաձայնը բոլորովին կորել է։

117. Միավանկ ու բազմավանկ բառերի վերջում եւ-ը դառնում է իվ. ինչպես՝ թև>թիվ, ձև>ձիվ, արև>արիվ, թեթև> թիթիվ, տերև>տիրիվ, անձրև>անձրիվ։ Բացառություն է կազմում դև>դէվ, որ կրոնական փոխառություն է։ Ներքսև>նէքսէվ բառում ունենք էվ շնորհիվ և մասնիկի անկախ գիտակցության, իչնպես ունենք. նէքքէվ, վէրէվ և այլն։

118. Բառամիջի շհշտված վանկում և-ը դառնում է էվ. ինչպես՝ ալևոր>հըլէվուր, հարևան>հըրէվան, սերկևիլ>սըրկէ-

վիլ՝ Այդպես և՝ Ոչխարի աւան<Ոչխարեւան>Հիւրէվան (տեղանուն)։ Զևել>ձիվիլ բառում պահպանված է ձև>ձիվ բառը։

119. Բառասկզբին միայն երկու բառում և ունենք՝ եթբ, եթբաեասուն, որոնց մասին տես §§ 110 և 1։3։

Հարաձիր բարդություններն և շաղկապը բարբառումս փոխարինված է ու-ով, որ շեշտից առաջ դառնում է ը. ինչպես՝ առևտուր, առուտուր>առըտոր (համմտ. մարդուկին(իկ)>մարդըկընէկ, հայրումայր>հարըմայր, սարուձոր>սարըձոր և այլն)։

ԵՊ.

120. Միավանկ բառերում դառնում է է. եպած օրինակներն են. լեարդ>լէրդ, սեամ>չէմք, լեառն>լէռնը, տեառն>տէռնը, այդպես և՝ սեաւ>սեավ>սէվ (տես § 123)։

Կեանք>գյանք փոխառված է որևէ այլ բարբառից, որ հաստատվում է նաև կ>գ փոփոխությամբ։

121. Շեշտից հետո եա-ն դառնում է ա կամ ա՝ ձայնավորների ներդաշնակությամբ. ինչպես՝ կորեակ>կուրակ, ագեակ>աղակ ցլավ, ցորեան>ցուրան, անկեալ>անկաձ, իւրեան>ուրբան (նաև՝ ուրէն). այդպես և անցյալ դերբայի -եալ վերջավորության մեջ. տարեալ>տարալ, կերեալ>կէրալ. ածեալ>ածալ, բերեալ>բիրալ, լիզեալ>լուզալ, գործեալ>գործալ և այլն։

122. Շեշտից առաջ եա երկբարբառն ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառումս չկա։

Բառավերջում եա ունենք միայն երկու բառում, որոնց մեջ դարձել է յա. գոնեա>գօնյա, համարեա>համարյա. երկուսըն էլ գրական բառեր են։

Դրանց հակառակ, գրաբարյան է խոնարհման բայերի հրամայականի եա վերջավորությունը շեշտի տակ, թե շեշտից հետո դարձել է ա կամ ա. ինչպես՝ սիրեա>սէրա (և սէրէ), խուզեա>խօզա (և խօզէր), դիզեա>դէզա (և դէզէր), գրեա>գի՛րա և այլն։ Այս էլ սակայն ավելի ձևաբանական երևույթ է, քան հնչյունական։

Առանձին են մնում՝ իրեար>ուրէր, ընդ իրեար գալ>դուրս(ը) գալ, որոնք նախ իր բառի ազդեցությամբ դարձել են ուրեար, ապա ուրար (ըստ § 121-ի) և, վերջապես, նախորդ ու-ի նմանությամբ՝ ուրար։

ԵՕ.Ի

123. Եաւ եռաբարբառով բարբառս ունի միայն երկու բառ. սեաւ>սէվ, ուր, նախ՝ վերջին ւ-ն դարձել է բաղաձայն վ (սեաւ>սեավ), տպա՝ եա երկբարբառը համաձայն § 120-ի դարձել է է (սեավ>սէվ). Բարեաւ>պարավ փոխառված է անշուշտ որևէ ուրիշ բարբառից, որ ցույց է տալիս նաև բ>պ փոփոխությունը (համմ. § 142):

ԵՕ.Ե

124. Այս եռաբարբառով ոչ մի բառ չկա բարբառումս.

ԻՒ

125. Բառասկզբում իւ ունենք երկու բառում միայն, որոնցից մեկում դարձել է ու, մյուսում՝ յօ. իւրեան>ուրյան, ուրէն, իւղ>յօղ. այդ երկու օրինակներն էլ սակայն միևնույն կարգին չեն պատկանում (մեկը՝ միավանկ, մյուսը՝ երկվանկ). բացի դրանից, իւղ բառը կարող էր ստացված լինել եղ ձևից, որ դառնալով եաւղ (ինչպես՝ եւթն>եաւթն, գեւղ>գեաւղ), տվել է եօղ>յօղ ձևը:

126. Բառամիջում թէ շեշտված, թէ շեշտաճաղորդ վանկերում բաղաձայնից առաջ իւ-ն դառնում է ու. եղած օրինակներն են՝ ձիւն>ձուն, սիւն>սուն, ալիւր>ալուր, աղբիւր>աղբուր, արիւն>արուն, մրջիւն, մրջիւն>մուրջուն:

Հարիւր>հէրուր բառում ու-ի փոխարեն ունենք ու նախորդող է ծանր ձայնավորի ներդաշնակությամբ:

ճիւղ>ճօղը ստացվել է գավառական ճուղ ձևից՝ ու>օ օրինական փոփոխությամբ:

127. Բառավերջում իւ-ն դարձել է -էվ. եղած օրինակներն են. շիւ>շէվ, ազնիւ>ազնէվ, արծիւ>արծէվ, հովիւ>հովվէվ (սակավ գործածական), պատիւ>պատէվ, քթիւ>քըթէվ, ցրիւ տալ>ցըրէվ տալ, կռիւ>կըռէվ:

Բացառություն է կազմում միայն ճաշիւ>հաշիվ բառը, որ գրական փոխառություն է (բուն բարբառայինն է ճէսար< պրսկ. hisāb حساب):

128. Բառամիջում՝ ձայնավորից առաջ իւ ունենք երկու բառում միայն, որոնց մեջ՝ իբրև ոչ երկբարբառ՝ դարձել է իվ. շիւան>շիվան, հիւանդ>հիվանդ: Երկուսն էլ գրական բառեր են:

129. Վերացական -ութիւն մասնիկում իւ-ն դարձնել է ի. ինչպես՝ ալևորութիւն>ծի՛լի՛վի՛րթին, աղքատութիւն>ըխկըոթին, եղբայրութիւն>ըխպըրօթին, երկայնութիւն>ըրկընօթին, բարձրութիւն>բի՛ծրօթին և այլն։

Գրական փոխառություններում նույն մասնիկի իւ-ն դառնում է ու. ինչպես՝ արքայութիւն>արքայուքուն, լաւութիւն>լավուքուն և այլն։

130. Նախաշեշտ վանկի իւ-ն բաղաձայնից առաջ՝ իբրև երկբարբառ՝ դառնում է ը կամ ի՝, ձայնավորների նկատմամբ. ինչպես՝ աղբիւրաջուր>ըխպըրաջուր, ճիւդակոտոր>ճը՛ղնըկուտուր, կիւրակէ>գի՛ր՛ակէ, կիւրակամուտ>գի՛ր՛կամուտ, *մըջիւնաձագ>մի՛ր՛ջի՛մաձէք։

Աբիւնելուայ>արունե՛լի՛վ, արիւնաթաթախ>արունըթաթախ բարդությունների մեջ պահպանված է անկախ արուն ձևը։

Արիւնել> րոպել բառում իւ-ն բոլորովին ընկել է։

131. Նախաշեշտ վանկում ձայնավորից առաջ իւ ունենք մի բառում միայն, ուր և դարձել է իվ. հիւանդանալ> հիվընդանի։ Այդ էլ սակայն գրական բառ է։

ՈՑ

132. Մի քանի բառերում ոյ-ը դառնում է ու. եղած օրինակներն են. բոյթ>բուք «մատ», բոյն>բուն, թռչյլ>թռչել, քոյր>քուր, լոյս>լուս, շուտ, շոյտ>շուտ, ծոյլ>ծուլ «թուլ, մեղմ», այդպես և՝ ոյր>հուր, որ, սկզբից ի ստանալով, ենթարկվել է այս օրենքին։

Ծոյս>հուս գրական փոխառություն է. բուն բարբառային է ումուդ (<արաբ. umīd [1])։

133. Ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառումս, բազմավանկ բառերում շեշտից առաջ ոյ չկա. շեշտ տակ և շեշտից հետո՝ բաղաձայնից առաջ ոյ-ը դառնում է ու. ինչպես՝ պատրոյգ>պէտրուկ, ընկոյզ>անգուզ, ողջոյն տալ>օխչում տալ, մակոյկ>մակուկ «մաքոք», սովորոյթք>սըվուրուքկ, նմոյշ>նըմուշ (վերջինս գրական փոխառություն է). այդպես և ճօրաքոյր բառը՝ սղվելով ու կորցնելով եղերի անկախ գիտակցությունը՝ ենթարկվել է այս օրենքին՝ իբրև պարզ բառ և դարձել ճաքուր։

Դրան հակառակ, ճրագալոյց>ճըրկալուս բառում վերջին բաղաձրիչը գիտակցվել է իբրև լույս և պահպանել իր անկախ՝ լուս ձևը։

Երեք բառում ու-ի փոխարեն ունենք ա՛ նախորդ ա՛ կամ, այ՛ թեթև ձայնավորների ներդաշնակությամբ. կապոյտ>կա՛պուտ, գրոյց>գի՛րուց, զուրկ>զո՛ւրկ, ծարոյր>ծա՛րուր, որից և՝ ծարուրել>ծի՛րուրիլ:

*Բարբառումս կազմված երկու բառում ոյ-ը, ընկնելով շեշտից առաջ, դարձել է մեկում՝ ը, մյուսում՝ ի՝· *աղջոյն եղբայր>ըխշըմախպեր, կոյր աղիք>գի՛րաղէք:*

Բառասկզբում ոյ երկբարբառն ունենք միայն երկու բառում՝ ոյր, ոյժ. դրանցից առաջինն սկզբից ստացել է ն (ոյր>նոյր) և ենթարկվել է § 132-ի կանոնին: Երկրորդում ոյ-ը դարձել է օ· ոյժ>օժ. անշուշտ նախապես դարձել է ուժ, ինչպես գոնում ենք նաև այժմյան գրական լեզվում, ապա ու>օ փոփոխությամբ՝ օժ:

Բառավերջում ոյ միայն մի բառում ունենք, ուր և՝ շեշտից հետո լինելով՝ դարձել է ու. երեկոյ>բակու, ըրակու:

134. Մասնավոր փոփոխություն են ներկայացնում. յոյզ>ծգ, պտոյտ>պըտօտ, որ անշուշտ նախ դարձել է պտուտ (ինչպես այժմյան խոսակցական լեզվում գործածում են), ապա ու>օ փոփոխությամբ՝ պըտօտ:

ՈՒՕ, ՈՒԵ, ՈՒՕ, ՈՒԻ

135. Այս բոլոր ձևերում էլ ու-ն դարձել է վ նախորդող ը-ով կամ առանց դրան. եթե ու-ն գտնվում է երկու բաղաձայնից հետո կամ բառասկզբի բաղաձայնից անմիջապես հետո, ապա՝ վ դառնալով, իրենից առաջ ունենում է ը. ինչպես՝ կազմուածք>կազմըվածք, ազնուական>ըզնըվական, շուարել>շըվարիլ, թուել>թըվէլ «ազդվել, զգացվել», լուացք>լըվաք. նույն բառից՝ լի՛վնց, ինչպես և՝ երեսլուայ>իրիսլի՛վ, արիւնլուայ>արիւնլի՛վ ձևերում վ-ից առաջ ը-ի փոխարեն ունենք ի՝ հաջորդող թեթև ձայնավորների ներդաշնակությամբ:

Աստուած>աստված կրոնական փոխառություն է:

*Եթե բառամիջում ու-ին նախորդում է միայն մի բաղաձայն, ապա վ դառնալով, իրենից առաջ ը չի ստանում. ինչպես՝ կուտուածք>կուտվաք, *կատուաձագ>կըտվաձէգ, նեխուած>նէխված «փտած. նախանձ», նեղուածք>նէղվաք, քուրուառ>*

փըրվառ, գաղուածք>գէղվասկ, գաղուածքատեղ>գըղվըսկատէղ, լեզուանի>լի՝զվինէ, աղուէս>աղվէս, հաշուել>հաշվիլ։ այդպես և այն դեպքերում, երբ ու-ին նախորդող երկու բաղաձայնները միմյանցից բաժանված են գաղտնավանկ ը-ով, ինչպես՝ գըուածք (gəruackh)>գըրվասկ, թխուածք (thəxuackh)>թըխվասկ, քթուաշ (thəthuaš)>քըթվաշ, քթուել (khəthuel)>քըթվէլ, զզուել (zəzuel)>զըզվէլ, քթուել (thəthuel)>թըթվէլ, ցցուել (çəçuel)>ցի՝ցվիլ և այլն։

136. Առանձին է մնում բլուատ>բըլպատ *բառը, ուր ու-ի դիմաց ունենք պ։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

137. Ամփոփելով երկբարբառների կրած փոփոխությունները, գալիս ենք այն եզրակացության, որ գրաբարյան երկբարբառները բարբառում ընդհանրապես երեք կարգի փոփոխության են ենթարկվել.

ա) վերածվել են մի ձայնավորի և մի բաղաձայնի. ինչպես՝ արծիւ>արծիվ, աւել>ավիլ, սեաւ>սեվ, հաւ>հավ և այլն։

բ) Դարձել են մի ձայնավոր. ինչպես՝ այրել>էրիլ, հայր>հար, աղեակ>աղակ, լոյս>լուս, ընկոյզ>անգուզ և այլն։

գ) Բոլորովին կորել են. ինչպես՝ հայելի>հիլլէ, երախտիւն>ըրխօթին, արիւնել>ընէլ և այլն։

Նույնիսկ այնպիսի բառերում, ինչպես՝ հայ>հէյ, նայ>նէյ, մայիս>մայիս և այլն, դարձյալ ունենք մի բաղաձայն և մի ձայնավոր։ Այս բոլորից հետևում է, որ Մեղրու բարբառում ոչ մի երկբարբառ չկա։

Գ. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՁԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Բ

138. Սովորաբար մնում է բ. ինչպես՝

Բառասկզբում.—Բարակ>բէրակ, բերել>բիրիլ, բահ>բէհ, բաժանել>բի՝ժէնիլ, բանալ>բէնիլ, բոյն>բուն, բոժոժ>բուժուժ, բերան>բէրան և այլն։

*Բառամիջում.—համբակ>բէմբիկ, *աքաբոկիկ>հըքըբիբէկ, ամբար>ամբար, սուսամբար>սամբայ և այլն։*

Բառավերջում՝ եղած օրինակներում բ-ն գտնվում է բ-ից վամ խ-ից հետո, որոնց մասին տես ստորև։ Այլ պարագայում ունենք՝ թումբ>թօմբ, ուր անփոփոխ է մնացել, և գաբ>գէփ, ուր դարձել է փ։

139. Գրական փոխառությունների մեջ սովորաբար գառնում է փ. ինչպես՝ համբերել>համփերիլ, համբարձվել>համփարցվիլ, բուրուառ>փըրվառ և այլն։

140. Բարբառիս խ բաղաձայնից հետո դառնում է պ. ինչպես՝ աղբ>ախպ, աղբախոտ>ըխպախուտ, աղբանոց>ըխպանուց, աղբատեղ>ըխպատէղ, աղբահոտ>ըխպահուտ, աղբիւր>ախպիւր, աղբիւրաջուր>ըխպըրաջուր, եղբայր>ախպէր։

Դավառական թուղթ բառը բարբառումս կա թօղթ ձևով, որից էլ՝ թղթել>թըղթել։

141. Հակառակ ուրիշ բարբառների, որոնք բ-ից հետո բ-ն գարձնում են փ, Մեղրու բարբառն այդ պարագայում էլ հարաստատորեն պահպանել է բ-ն. ինչպես՝ երբ>հիբ, երբոր>հիբօր, վիրբ>վէրբ, լրբութիւն>լի՛ըբօթիւն, հարբել>հաբրիլ, ուրբաթ>ծրբաթ, շարբաթ>չէրբաթ, որբևայրի>վի՛ըբի՛վէրի, սրբել>սի՛ըբիլ, այդպես և՝ հօրեղբայր>հէրբար, որտեղ՝ հակառակ եղբայր>ախպէր բառին, ղ>խ-ի անկումով և բ-ին մտաենալու հետևանքով անփոփոխ է մնացել։

Բացառությունն են կազմում բորբոս>փի՛փաւսը, որից էլ՝ բորբոսնել>փի՛փաւսնիլ, որոնց մեջ սակայն բ-ն ընկել է, իսկ բ-ն սուլական խուլ ս-ի նմանությամբ գարձել է փ. հարբուխ>խարփուղ, ուր սկզբի ճ-ն վերջին խ-ի նմանությամբ դառնալով խ, ազդել է բ-ի վրա և գարձրել է փ։

Այդ պարագայում էլ գրական փոխառությունների մեջ ուշենք փ. ինչպես՝ սուրբ>սօրփ (մինչդեռ՝ սրբել>սի՛ըբիլ), որբ>վօրփ և այլն։

142. Այդ բոլորից դուրս բ-ն կրել է հետևյալ մասնավոր փոփոխությունները.

բ>փ.—Բուսած>փի՛ած գդոշարի բորբոսնելըդ, ծնեբեկ>ծընէփուկ, բառերի մեջ եղած ս, ծ, կ խուլերի առնմանությամբ։

բ>պ.—Բռնել>պըռնէլ, բանկն>պընգըլ, բաղարճ>պաղաճ,

բամբասանք>պամբասանք, բարեկամ>պարէկամ, բարեաւ>պաբաւ, բարի>պարի։ Առաջին երկուսի՝ հաջորդող ձայնեղների տարնմանութեամբ. մյուսները բոլորն էլ փոխառված են այլ բարբառներից, որ հատատուում է նաև հնչյունափոխական մյուս օրենքներով (համմտ. §§ 19, գ և 123)։

Դ

143. Ամեն դեպքում էլ անփոփոխ է մնում. ինչպես՝

Բառասկզբում.—Դառն>դէռնը, դանակ>դէնակ, դգալ>դի՛գմէլ, դիրտ>դէրդ, դեղ>դէխկ ճթուչնց, դեղնուց>դըղնօց, դուռն>դուրք, դորակ>դօրակ, դեղին>դէղէն և այլն։

Բառամիջում.—Դադար>դէգդար, հանդարտ>հանդէրտ, լընդերք>լընդէրք՛, տենդել>տանդիլ, քանդել>քանդիլ, այդքան>այդքան, բարեկենդան>բի՛րբինգիան։

Բառավերջում.— Այդ>այդ, անդ>նանդ, գունդ>գունդ, թունդ>թունդ և այլն։ Բոլորն էլ, սակայն, բացի առաջինից, ե-ից հետո են։

Նույնպես և բ-ից հետո, ուր մի շարք բարբառներում դ-ն դարձել է թ, Մեղրու բարբառում ևս բառամիջում, և ևս վերջում մնացել է դ. ինչպես՝ երդում>ռէրդում, կարդալ>կարդիլ, արդար>արդար, զարդարք>զէրդարք, ուրդ>ուրդ, բուրդ>բուրդ, ուզդորդ>ազուրդ, դուրդ, երդ>հէրդ, մարդ>մարդ, վարդ>վարդ և այլն։

144. Ըղն հնչյունախմբում դ-ն ընկել է. ինչպես՝ որդնել>ռէռնիլ, որդն>ռէռնը, որդնոտել>ռէռնռէռիլ. ուրիշ այդ կարգի բառ չկա բարբառումս, բայց պետք է համեմատել § 171։

Սպարդիլ>սի՛փի՛րթնիլ «գունատվել» գավառական բառ է։

145. Բարբառիս խ-ից հետո դ-ն դարձել է տ խէդդ>խէխտ «պարանոց», խեղդել>խէխտիլ բառերում. ուրիշ այդ կարգի բառ չունենք։

146. Գրական փոխառություններում ունենք թ. ինչպես՝ ոդ>օթ, սադայել>սաթայէլ և այլն։

147. Առանձին է մնում ջրորդան>ջրուրկան>շուռուրկան բառը, որ նախ կ-ի հավելմամբ դարձել է ջրորդկան, ապա՝ բ-ի անկումով՝ ջրոդկան, ուր դ-ն կ խուլի ազդեցությամբ դար-

ձել է բ (ջրոթկան), որից՝ ջոռթկան, և, վերջապես, բնաձայնի վերածվելով՝ ջրռուրկան, ջուռուրկան (համմտ. բնաձայն՝ ջրռռալ «թափվել»)։

Ճիշտ նույն ձևով էլ ծննդկան>ծրնրբկան բառում կ խուլի ազդեցությամբ դ-ն դարձել է բ (համմտ. ծնունդ>ծրնօնբ, ուր առանձին լինելով՝ անփոխոխ է մնացել)։

գ

148. Բոլոր դեպքերում էլ մնում է գ կամ դառնում է գ։

Մնում է գ բառասկզբին, ինչպես և բառամիջում ու բառավերջում, եթե է, ի, ի՝ ձայնավորներից հետո չէ. ինչպես՝

Բառասկզբում.—Գալ>գալ, գար>գէփ, գաւաթ>գէվաթ, գողովիւն>գըղօթիւն, գերմակ>գէրմակ, գոմէշ>գոմէշ, գըլուխ>գըլօխ, գառն>գօռնը և այլն։

Բառամիջում և բառավերջում.—Էգուց, այգուց>ուգուց, յօյգ>ծգ, սուգ>սօգ. բառամիջում և բառավերջում գ-ն սովորաբար ընկնում է ե-ից կամ է, ի, ի՝-ից հետո, որոնց մասին տես ստորև։

149. Գ-ն դառնում է զ բառամիջում, եթե գտնվում է է, ի, ի՝ ձայնավորներից հետո, թեկուզ և դրանցից բաղաձայնով բաժանված էլ լինի. ինչպես՝

Բառամիջում.—Ագի>էզի, այգի>իզի, գագաթն>գէզաթ, տայգր>տէզիր, զգենուլ>սի՛զէնիլ, գոռգոռալ>գի՛ռզի՛ռալ և այլն։

Բառավերջում.—Ձագ>ձէզ, էգ>էզ, գոգ>գիզ, նիգ>լէնգ (մյուսները ե-ից հետո են, որի մասին տես ստորև)։

150. Անփոխոխ է մնում նույնպես և բ-ից հետո՝ վերոհիշյալ օրենքով. եղած բառերն են. Նարգիզ>Նէրգիզ, Սարգիս>Սէրգիս (երկուսն էլ հատուկ անուն). մյուս օրինակները գրական բառեր են, որոնց մեջ ունենք ք. ինչպես՝ կարգ>կարք, մարգարիտ>մարքարիտ, մարգարէ>մարքարէ (համմտ. § 141)։

151. Ինգայինն ե-ից հետո նույնպես մնում է գ, կամ դառնում է զ, եթե ե-ն է, ի, ի՝-ից հետո է. ինչպես՝

գ>գ. — Հնգեքին > հընգէքէն, մանգաղ > մանգաղ,

թանգ>թանգ, ծունգն>ծօնգուն, կնգուղ>կունգուղ, պռունգ>պըռօնգ և այլն։

գ>գ,.—ժանգ>ժէնգ,, հինգ>հինգ՛, զանգակ>զէնգ՛ակ, ժանգոտ>ժէնգ,ուտ, գանգատ>գէնգ՛ատ և այլն։

152. Գրական ու կրոնական փոխառությունների մեջ դարձել է ք կամ մնացել է գ. ինչպես՝ սգաւոր>սըքաւուր, սարկաւագ>սարկավաք, ազգական>ազգական, գաւազան>գավազան, գանձանակ>գանձանակ և այլն։

153. Վերոհիշյալներից դուրս գ-ն ենթարկվել է հետևյալ մասնավոր փոփոխությունների.

գ>կ.—Ագռաւ>ակռավ, աղազ>հաղակ «այգու մուտքի ճանապարհ», երկու դեպքում էլ բառում եղած ձայնեղների տարնմանությամբ։ Ճրագ>ճըրակ, պատրոյգ>պէտրուկ, նախորդող խուլերի առնմանությամբ։ Զգօն>սըկօն, զգեստ>ըզկէստ, զգեստաւորիլ>ըզկըստավուրվիլ (քահանայի մասին) գրական և կրոնական բառեր են։

Ագահ>ակահի փոխառված է մի ուրիշ, անծանոթ բարբառից (համմ. § 19, գ)։

Գոզնոտ>կըռըզնուտ «գանգուր, խիժաթևեր», ստացվել է կոխզնոտ>կըռըզնուտ «խիժաթևեր» բառի հետ շփոթվելով։

գ>ք.—Դիւղեր>քի՛ղեր, դիւղերով>քի՛ղերավ «առավոտ», հաջորդող շ-ի ազդեցությամբ. օգուտ>օքուտ, օքըտ «լավ» ա-ի ազդեցությամբ։

գ>ք.—Ծագ>ծէք՛ նախորդող ծ-ի ազդեցությամբ. ծագել>ծէքքիլ բառում ք-ի փոխարեն ունենք ք՛ կրկնված լինելու պատճառով, ձիգ (տալ)>ձէք՛ տալ «ձգել, քաշելը հաջորդ տ խուլի առնմանությամբ (ձիգ>ձէք՛ առանձին չի գործածվում)։

գ>ճ.— Գալ բառի անորոշ դերբայում, ըղձական եղանակում, ապառնի դերբայում և արգելականում գ-ն մնալով անփոփոխ, մյուս ձևերում դարձել է ճ (նուիս իմ «գալիս եմ», նուիլ իմ «կգամ» և այլն), անշուշտ գնալ>գի՛նէլ բառի նմանությամբ։

2

154. Ամեն դեպքում էլ անփոփոխ է մնում. ինչպես՝

Բառասկզբում.—Ձագ>ձէք՛, ձեռք>ձիք՛, ձախ>ձէխ, ձուկըն>ձօկուն, ձօկնը, ձայն>ձէն, ձի>ձի, ձոր>ձուր և այլն։

Բառամիջում և բառավերջում ունենք միայն ե-ից ու ը-ից հետո, ուր նույնպես անփոփոխ է մնում. ինչպես՝ խնձոր>խընձուր, խուճուռ, անձրև>ընձրիվ, հնձան>ընձան, հունձ>հօնձ, տանձ>տընձ, մաղձ>մաղձ, օձ>օղձ և այլն։

155. Ր-ից հետո մնում է անփոփոխ, կամ կորցնելով դ բազադրիչը՝ վերածվում է զ-ի, ինչպես՝ բարձ>բէրձ, խոնջանադարձ>խընջընդերձ գալվարի այն անցքը, որի միջով անց է կացվում խոնջանը կամ գոտին», օրձ>ուրձ, որձակ>ուրձակ, արձակել>իրձակիլ, բայց՝ արձակ>հարզակ, փորձել>փուրզիլ, անփորձ>անփուրզ, դերձան>դէրզան, տաւարավարձ>տըվըրավարզ։

156. Ինգայլին ն հնչյունից առաջ դառնում է գ. ինչպես՝ խուրձն>խօրգնը, դաղձն>դէգնը, սինձ>սիձն>սըէգնը, սինձ (են)ի>սըգնի։

157. Բարձր բառը գարձել է բէձրը, բէձուր, որից էլ՝ բարձրաձալ>բի՛ձաձիլ, բարձրութիւն>բի՛ձաթիւն. բնր խմբով ուրիշ ոչ մի բառ չունենք, սակայն ր-ից առաջ ձ կա նաև թանձր>թաձնիր, անձրև>ընձրիվ բառերում, որոնց մեջ անփոփոխ է մնացել։

158. Մասնավոր դեպքեր են.

ձ>ց.— Զգել>ցիքիլ զգցելը, ուր նախ զ-ն գարձել է ք (համմտ. ձիգ>ձէք՛), ապա՝ դրա ազդեցությամբ՝ ձ>ց։

ձ>ս.—Վարձք>վարսկ, ուր ձիշտ վերևինի նման ք-ի ազդեցությամբ գարձել է ց (վարցք), ապա՝ ցք խումբը՝ դառնալով սկ տվել է վարսկ ձևը (ցք>սկ-ի մասին տես § 199)։

ձ>ծ.—Ձէթ>ծըէթ վերջին թ-ի ազդեցությամբ. ձմեռուկ>ծըմեռուկ։

Զ

159. Սովորաբար մնում է չ. ինչպես՝

Բառասկզբում.—Զուր>չուր, չորի>չուրէ, չազաց>չէզաց, չոկել>չուկիլ, չերմն>չէրմ, չուխտ>չօխտ և այլն։

Բառամիջում.—Հաչել>հաչիլ, առաչնակ>ըռչընակ, ոչիլ>հաչիլ, ազաչուր>ըզաչուր, բանչար>բէնչար, աչողութիւն>հըչըղօթին, ննչել>լինչիլ, խոնչան>խուչնան և այլն։

Բառավերջում.—Մէչ>մաչ, գաչ>գաչ, առաչ>էռէչ, աչ>աչ, ունչ>օնչ, լանչ>լէնչ և այլն։

Այդպես և՝ ր-ից հետո, ինչպես՝ արջ>առյ, վերջ>վերջ, թրջել>թի՛րջիլ, մրջիմն, մրջիւն>մո՛ւրջո՛ւմ, վերջացնել>վի՛րջի՛ցնիլ, պատրյան>պըտըրջէն. վերջինս գավառական բառ է։

Բացառություն է կազմում արյառ>աչառնը, որտեղ սահմայն ր-ն ընկել է։

160. Եթե մի բառում կա երկու ջ, ապա երկուսն էլ դառնում են ճ. ինչպես՝ պղպջալ>պլպլալ>պըճպըճալ, ջախջախել>ճի՛ճախիլ, ջնջել>ճինջիլ, վերջինում երկրորդ ջ-ն մնացել է անփոփոխ՝ ն-ից հետո լինելու պատճառով (հմմտ. § 185)։

161. Բարբառիս կ խուլից առաջ չ-ն գարձել է շ. ինչպես՝ մէկ>մա՛շկ (թեև մէկ>մա՛կ բառում ունենք չ), յօրանջել, յօրանկոտել>յըռընչկուտիլ, քաղք>քաշկ, քաղքոտ>քաշկուտ, հայհոյախտ, վախկոտ, առաջք>առէշկ, առաջքին>ըռաշկէն, առաջքատի>ըռըշկատէ գրեռան առջևի իրերը։

*162. Ղ խումբը բարբառումս դարձել է խ. ինչպես՝ աղչիկ>ախչէկ, ողջոյն>օխչում, *ողջոյն եղբայր>ըխչըմախպէր։*

Ողջ>վօղջ, ողջութիւն>վօղջութի՛ւն գրական փոխառություններ են (հմմտ. § 75)։

Ղ>խ խմբով ուրիշ բառ չունենք։

163. Գրական փոխառություններում չ-ի դիմաց ունենք շ կամ չ. ինչպես՝ յաղողում>հաչօղում (թեև ունենք՝ աղողութիւն>ղրղղօթի՛ն), վերջ ի վերջոյ>վէրչիվէ՛րչօ, ողջ>վօղջ, շըրջան>շրջան և այլն։

164. Մասնավոր փոփոխություններ են.

չ>ճ.—Ջահ>ճաո, չիլ>ճիլ, ականջ>անգուճ, որ նախ՝ տեղափոխությամբ գարձել է անկաչ, ապա՝ ճ-ից հետո լինելով կ>գ (ըստ 176-ի) անգամ և գ—չ տարնմանությամբ՝ վերածվել է խուլի. ճիշտ այդպես էլ ականջատակ>ընգրճատակ, ականջմտի>ընգրճմրտէ ջինջ-որ փոքրիկ զեռունդ։

չ>շ.— Ծնչել>խընշէլ։

2. ԽՈՒԼ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

պ

165. Սովորաբար մնում է պ. ինչպես՝

Բառասկզբում.—Պահէզ>պըհազ, պանիր>պանէր, պատ>պա՛տ, պատրոյգ>պէտրուկ, պատառ>պատառ գքիչ, պիրկ>

պէրկ, պուկ>պօկ ամիգածորան՝ երեխայի օրորոցին ամրացված», պնդոց>պընդօց երնական ամրութիւնը և այլն։

Բառամիջում.—Ապրանք>ապրանք, ապրել>ապրիլ, կապայ>կապէ, սապոն>սո՛ւպուն, կապոյտ>կ՚ապոյտ, ճիպոտ>ճէպուտ, տապակ>տապակ, շաղապատուկ>շըպատուկ շպատուտակ բուլյը»։

Բառավերջում.—Սեպ>սըէպ, խեճեպ>խըճէպ, կոպ>կուպ, ծոպ>ծուպ, կապ>կապ, պարապ>պարապ, տուիպ>տըտէպ և այլն։

166. Ս-ից առաջ պ-ն դառնում է փ. ինչպես՝ պսակ>փըսակ, պսակել>փըսակիլ, անպսակ>անփըսակ, պստիկ>փի՛ստէկ, ապսպարել>փըսպարիլ, այդպես և՝ ապսպարք>փասպարք, ուր թեև ա ձայնավորով բաժանված է ս-ից, բայց փըսպարիլ ձևի գիտակցությամբ ու նրա ազդեցությամբ մնացել է փ։

167. Մասնավոր փոփոխություններ են.

պ>փ.—Սպարդնել>սի՛փի՛րթնիլ, վիշապ>հօշափ, առաջինում բ շնչեղի ազդեցությամբ, երկրորդում՝ չ շչականի. Սեպտեմբեր>սէփտէմբէր գրական է, ինչպես և բոլոր ամսանունները (տմմտ. §§ 42, 178)։ Կոտապ>կուտափ. նախորդող խուլերի ասրնմանութեամբ։

պ>բ.—Դէպ ի>դի՛բէ, դէպ ի յետ>դի՛բէտ, նախորդ դ ձայնեղի առնմանութեամբ։

Անապ>աննաբ գամպամ պտուղը», ստացվել է արաբերեն anab «ի բառից, որ միջին հայերենում տառադարձված է անապ։ Ապաշխարող>բըշխարուղ, ըրբշխարուղ։

պ>մ.—Պիտիլ>մէտիլ։

(պ>վ)՝—կճեպ բառի դիմաց բարբառս ունի քըշէվ։

8

168. Սովորաբար մնում է տ. ինչպես՝

Բառասկզբում.— Տախտակ>տախտակ, տայգր>տէգմիր, տանձ>տանձ, տաշտակ>տաշտակ «փոքր տաշտ, կրյաց, տանել>տանիլ, տուն>տօն, տարի>տարէ, տեսնել>տըէսնիլ և այլն։

Բառամիջում.—Կտաւ>կըտաւ, ատել>ատիլ, մտանել>մըտէլ, ուտել>օտիլ, մոտի>մուտա, աղտոտ>յէխտուխ, պատառ>պատառ «քիչ», պստիկ>փի՛ստէկ, խոստանալ>խըստանիլ և այլն։

Բառավերջում.—*Պատ>պատ, գետ>գէտ, արտ>արտ, հանդարտ>հանդէրտ, առնէտ>ըռնետ, գանգատ>գէնգ՛ատ, նարօտ>նարուտ ժգուշզգուշ թելշ, ժանգոտ> ժէնգ՛ուտ, ճակատ>ճէկատ և այլն։

169. Ն ունգայինից հետո տ-ն անխախիր դառնում է դ. ինչպես՝ անտէր> անդէր, ընտրել>ընդրէլ, սանր>սանտր>սանդըր, անտղել>ընդրդէլ, տնտես>տընդրէս, տանտիկին>տընդէկէն, Անտառ>Անդառ (տեղանուն)։

Բացառութիւն չկայ։

170. Բարբառիս կ և կ՛ բաղաձայններից առաջ դառնում է ք. ինչպես՝ անպէտք>անպէքկ՛, յետք>էքկ՛ (թեև ունենք յետ էտը), մխոք>մէքկ՛, պատկեր>պաքկէրք՛, պարտք>պարքկ, պէտք>պէքկ՛, յետքատի>ընքկատէ ըրեռան հետևի իրերը», սատակել>սաքկիլ և ըստակիլ։

171. Բան խմբում տ-ն ընկել է գորանուկ>գ՛ոնիկ բառում, որից էլ՝ *գորանուկամայր>գ՛ունի՛կամէր։

Բարբառում եղած բան խմբով բառերն են՝ քրտնել քըրտընքել>քըրքընքէլ, քրտինք, քըրտունք>քըրքէնք, քըրքօնք, որոնց մեջ, սակայն, ըտ-ը բաժանվում է ն-ից ը, է, օ ձայնաւորներով։ Այդ բառերում տ>ք փոփոխությունը կատարված է նախորդող ը չնչեղի առնմանությամբ։

172. Գրական փոխառությունների մի քանի բառերի մեջ տ-ի փոխարեն ունենք դ։ Դրանք են. գատ>գադ, գատաստան>գադաստան, գատաւոր>գադաւօր, հաստատ>հաստադ, հաստատել>հաստադիլ «ապացուցել», ազատ>ազադ, ազատել>ազադիլ (համմտ. §§ 11, 15, 19, դ)։

173. Մասնավոր փոփոխություններ են.

տ>բ.—Կախ>քըքէվ, ցայտ>ցէք «ջրի շիթ, մեզ», ցայտել>ցէքիլ «ցայտել, մղվել», փետուր>քէփուռ, փտել>փըքէլ. բոլոր դեպքերում էլ բառի կազմում եղած շնչեղների առնմանությամբ։

Վարտիք>վարքէկ՛ բառում, նախ՝ տ-ն հաջորդող ք-ին նմանվելով դարձել է վարքէք՛, ապա՝ նախորդ ր-ի տարնմանության՝ ք՛>կ՛։

տ>դ.—Դիտել>գ՛իդիլ, գտանել>գի՛դիլ, գի՛դէնիլ, դառել>դէդիլ «վաստակել», բոտոտ>բուդուդ, դիրտ>դէրդ, դիրտահա-

նել>դի՛րդի՛հանիլ, զատիկ>զէդէկ. բոլորումն էլ նախորդող ձայնեզնեբի առնմանութեամբ։

Շուտ, շոյտ>շո՛ւդ բառում նախ՝ տ-ն նմանվելով շ-ին պետք է դարձած լինի թ և տված շո՛ւթ, որից՝ տարնմանութեամբ՝ թ-ն դարձել է դ և տվել շո՛ւդ։

Ապատ>ավադ «շենք» փոխառված է նոր պարսկերենից՝ ադըբեջաներենի միջոցով։

Մարտ>մա՛րդ։

տժ>ջջ.—Պատժել>պաջջիլ, ուր նախ՝ տ-ն նմանվելով հաջորդին՝ դարձել է դ (պադժիլ), որից՝ դժ-ի միացմամբ՝ պաջիլ և կրկնութեամբ՝ պաջջիլ։

տ>ճ.—Տալ>տալ բայի անկատար դերբայում և ապառնի ժամանակում տ-ի փոխարեն ունենք ճ. ինչպես՝ նա՛ իմ «տալիս եմ», նա՛լ իմ «կտամ» և այլն։

ե

174. Սովորաբար մնում է կ. ինչպես՝

Բառասկզբում.—կէս>կըէս, կեմ>կըէմ, կարաս>կարաս, կապայ>կապէ, կամն>կամ՛ը, կայութ>կըէոէք՛, կացին>կացէն, կնգուդ>կունգուդ, կծիկ>կըծըէկ, կոփել>կուփիլ «խըփել» և այլն։

Բառամիջում.—Ակութ>ակութ «օջախ», ակն>ակնը, թակել>թակիլ, ծակել>ծակիլ, ճակատ>ճէկատ, ոսկի>ուսկէ, տակութ>տակուակ, աղեկութիւն>ղըզկօթի՛ն և այլն։

Բառավերջում.—Դատարկ>դէբտակ, աղեաղ>աղակ, դանակ>դէնակ, զատիկ>զէդէկ, աղջիկ>ախչէկ, կորեակ>կուրակ, տափակ>տափակ, պատակ>պատակ և այլն։

175. Սակավաթիվ բառերում դարձել է կ՛. դրանք են. բիբ (իկ)>բիբի՛կ «աչքի բիբ», գօտիկ>գօխտէկ, համուրջ>կա՛մրմունջ, կապտել>կա՛պի՛տի՛լ, կապոյտ>կա՛պուտ, *կապուտիկ>կա՛պի՛պի՛տէկ «մի տեսակ գետաձուկ», կին, կնիկ>կընէկ, ածիկ>ածէկ, «Թոնրին խփած խմորագնդից թափված կտորտանքը», պերկ>պէրկ, պատիկ>փի՛տէկ, օթեկ>օթէկ։

176. Ն ունկայինից հետո դարձել է գ. ինչպես՝ անկյալ>

ա՛նգա՛լ, ընկեր>ո՛ղբէր, ընկոյզ>անգուզ, ընկուզ(են)ի>ընգըզի, ունկն>օնգնը, օնգուն, խունկ>խօնգ, *ընկնաւոր>ընգնավուր «ունկն ունեցող», խնկաման>խընգաման, տնանկանալ, տնանկ ընկնել>տընանգ նանիլ «աղքատանալ, կոտր ընկնել», ցանկ>ցանգ «ցանկութիւն, կամք», կանկար>կանգառնը, տունկ>տօնգ, տունկ(ի)>տընգէ, տնկել>տընգէլ, ցնկնել>ցընգընգէլ, կին, կնիկ>կընէկ, սեռ. կընգայ Այդպես և՝ ականջ>անգուճ, և-ի տեղափոխութեամբ։

Գրական փոխառութիւններում ևս այդ փոփոխութիւնը կատարվում է. ինչպես՝ վանկ>վանգ, յանկարծ>հանգարծ։

Անկան>ո՛ւ՛նգէ՛ն, անկանակ>ո՛ւ՛նգէ՛նակ բառերում ունենք գ նախորդող ի՛-ի պատճառով (համմտ. § 149)։

Անկանել>նանիլ բառում կ-ն ընկել է։

177. Թ շնչեղից և շ շչականից առաջ դառնում է ք. ինչպես՝ կթել>քըթէլ, կթան>քըթան, կշէռք>քի՛շէրք, կշռել>քըշըռէլ, կշկուռ>քըշկօռ «հանգուցյց», կշտանալ>քի՛շտանիլ (թեև՝ կուշտ արմատն ունենք կօշտ ձևով՝ շ-ից հետու լինելու պատճառով), կշտին>քի՛շտին (առանձին՝ կուշտ>կօշտը)։

Այդպես և՝ կոխ>կթեվ>քըթէվ, կառուկ>քըթըվէլ։

178. Մասնավոր փոփոխութիւններ են.

կ>գ, գ՛.—Նկեղեցի>գըղէցէ, կոյր աղիք>գի՛րաղէնք, բակենդան>բի՛րգ՛ինգա՛ն, բեկոր>բէգ՛ո՛ր, գիրկ>գիրգ՛, գրկանոց>գի՛րգ՛ա՛նո՛ց «գոգնոց». բոլորումն էլ՝ բառի կազմում եղած բ, գ, դ ձայնեղների առնմանութեամբ դարձել է գ և ապա՝ վերջին չորսում՝ գ՛ ըստ § 149-ի։

Կիւրակէ>գի՛րակէ, կիւրակնմուտ> գի՛րկնմուտ, կրակ>գի՛րէկ բառերում դարձել է գ հաջորդ կ-ի տարնմանութեամբ։

Առանձին է մնում խորակ>խո՛ր«ո՛ւ, որ նոր փոխառութիւն է պարսկերենից, ինչպես գտնում ենք նաև այլ բարբառներում։

կ>ք.—Քակոր>քաքուր, գկեռ>ցըքէռնը, կաչաղակ>քըչէղակ. երեքումն էլ բառի կազմում եղած ք, ց, չ շնչեղների առնմանութեամբ (վերջինի համար համեմատել § 177)։ Եկ>էք՛, թեև՝ եկէք>էկէք։ Թեկուզեմբեր>թէքուզէմբէր, հոկտեմբեր>հօքտէմբէր ամսանունները գրականից են մուտք գործել։

կ>ք.— Բոկիկ>բիբէկ, ուր կ-ն նմանվելով նախորդ բ-ին

նախ պետք է դարձած լինի գ, ապա՝ լիակատար առնմանությամբ՝ բ:

կ>ճ.— Պարկուկ>պարկուճ ավաղահաս, հիմանդոտ դամբուլը, պարկուճ բառի հետ շփոթելով:

Ծ

179. Սովորաբար մնում է ծ. ինչպես՝

Բառասկզբում.—Ծագ>ձէքը, ծայել>ձայլիլ, ծակ>ծակ, ծծել>ծըծէլ, ծուխ>ձօխ, ծադք>ծախկ ծառի ծաղիկը, ծանր>ծանգըր, ծիրան>ծըրբան, ծնհրեկ>ծընէփուկ և այլն.

Բառամիջում.—Ածել>ածիլ, արծաթ>արծաթ, արծիւ>ագրծէվ, գործի>գ՚ըրծէն ջարդը, լծել>լըծէլ, պրծանել>պըրծանիլ, ծիծաղ>ծըէծաղ, կայծակ>կէծակ, կոծիկ>կուծէկ ջսոսինձ» և այլն:

Բառավերջում.—Անիծ>հանէծ, ծիծ>ծըէծ, այծ>էծ, մեծ>մօծ, քաղցած>քօխցած, տարած>տարած վերկարութեան չափ=22 վերշ.ա, կուրծ>կօրծ, տաւարած>տրվարած և այլն:

180. Սը խումբը մէասին դարձել է սկ. ինչպես՝ անէծք>անէսկ, անրիծք>անրէսկ ամեհելի վրա կատարվող աղոթքը, նեղուածք>նէղվասկ, կուտուածք>կուտվասկ ճավաքումն», անցուածք>անցվասկ ոգեպք, պատահարը, առածքով>ըռասկավ ոփոխաբերաբար, քխուածք>քըխվասկ, խօսուածք>խօսվասկ և այլն:

Բացառութիւն չկա:

*181. Սկ խմբով երկու բառ կա մէայն, ուր ծ-ն դարձել է վ. կոծկել>կուզկիլ, *ծածկան>ծըզկան. ծածկել>ծըկէլ բառում ծ-ն ընկել է (տմմտ. § 276, ծանոթ. 17, գ):*

182. Մասնավոր փոփոխութիւններ են. ողորմածիկ>ղօրմացիկ, փայծաղն>փացախնը, քած>քաց, որոնցից առաջինում ծ-ն դարձել է ց հաջորդ կ-ի տարնմանութեամբ, իսկ մյուս երկրաւում՝ նախորդ փ, բ շնչեղների առնմանութեամբ:

183. Լպրծել>լըպըռատել բառում ծ-ն զրկվելով իր ս բաղադրիչից, վեր է ածվել տ-ի:

Ձ

184. Սովորաբար մնում է ճ. ինչպես՝

Բառասկզբում.—Ճուտ>ճօտ, ճիւղ>ճօղնը, ճճի>ճուճու,

ճաշ>ճէշ, ճակատ>ճէկատ, ճանաչել>ճընանչիլ, ճրագ>ճըրագ, ճիպոտ> ճէպուտ, ճիւ, ճսիկ>ճըռէկ «խաղողի փոքրիկ ճութ», ճիպո>ճէպուռ և այլն։

Բառամիջում.— Արճիճ>ըրճոճ, կճուճ>կոճ ճոճ, պրճոկել> պըրճոկիլ, պուրճուկիլ, կոճակ>կուճակ, հաճար>հաճար, կճղակ> կըճէղակ, մաճար>մաճառ և այլն։

Բառավերջում.— կարճ>կարճ, որոճ>արուճ, կաւիճ>կավճ, խիղճ>խէղճ «գութ», կիճ>կըճէճ, կաճ>կաճ, կոճ>կուճ և այլն։

185. Ն ոնգայինից հետո դառնում է ջ. ինչպես՝

*ձանճ>ճէնջ, ճնճղուկ>ճընջըղուկ, եղինճ, եղինճ>հաղէնջ, ճօճ(ի)> ճօնճի>ճօնջի, *ճանճակութ>ճի՛նջակութ։*

կնճիթ>կընդիչ բառի մասին տես § 192։

186. Ղճ խումբը բաղաձայնից առաջ միասին դարձել է ժ խղճմտանք > խըժմըտանք բառում, թեև ունենք՝ խղճալ> խըղճել։

Այդ կարգի ուրիշ բառ չունենք։

Ձք խումբը դարձել է շկ մի բառում. Լիճք>Լիշկ (տեղանուն)։

Ճք խմբով ուրիշ բառ չունենք, բայց՝ համեմատել § 161։

187. Մանավանդ փոփոխություններ են. փուճուկ>փըչօկ «ծառի փչակ. շրթունքը», որտեղ ճ-ն դարձել է շ նախորդ փ-ի ազդեցությամբ։

Կճեպ բառի դիմաց բարբառս ունի քըչէվ, որ ից էլ՝ քըչէվի «կճպել»։

3. ՇՆՉԵՂ ԽՈՒԼ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Փ

188. Ամեն դեպքում էլ անփոփոխ է մնում. ինչպես՝

Բառասկզբում.— Փունջ>փօնջ, փայտ>փէտ, փեղկել>փէխկիլ, փող>փուղ, փոր>փուր, փեսայ>փըչէչ և այլն։

Բառամիջում.— կոփել>կուփիլ, շամփուր>չէմփուր, սափոր>սափուր, չափել>չէփիլ, տափակ>տափակ, ոսփի>հուփփէ և այլն։

Բառավերջում.—*Ծափ>ծափ, եփ>իփ, տափ>տափ, ափն>ափ «խմորի տաշտի եզրը», չափ>չէփ, ծեփ>ծէփ, կանեփ>կաննիփ և այլն։*

Մի քառում մխայն փ-ն դարձել է պ. փըրփըրեմ>պըրպէրան, ուր, նախ՝ տարնմանությամբ երկու փ-երից մեկը դարձել է պ (փրփրեմ>պըրփէրան) և ապա՝ ստացված պ-ի առնմանությամբ մյուսն էլ դարձել է պ (պըրփէրան>պըրպէրան)։

189. Ումորաբար մնում է բ. ինչպես՝

Բառասկզբում.—*Թաղ>թաղ «արվարձան», թակել>թակիլ, թաղել>թաղիլ, քել>քիլ, թաթախել>թըթախիլ, թխթեղն>թէխթախնը, թաց>թաց և այլն։*

Բառամիջում.—*Աքաո>աթուռ, մրքին>մըքէն, մորքի>մուրքէ, վեթակ>փէթակ, թաթու>թանթուռ «թաթիկ», աթաղաց>թաղուց և այլն։*

Բառավերջում.—*Շաբաթ>չէբաք, խորթ>խուրթ, նաւթ>նօթ, ուրբաթ>ուրբաք, կոթ>կուբ, բոյթ>բոնիթ «մատը», քիթ>քըէթ և այլն։*

190. Բարբառիս խ հնչյունից հետո դառնում է տ. ինչպես՝ թուղթ>թօխտ, թղթել>թըխտէլ «թուղթ փակցնել», յաղթել>էխտիլ, մաղթանք>մախտանք, մաղթել>մախտիլ, մխիթարել>մըխտարիլ, դաղթական>դախտական, թթխմոր>թըխթմոր>թըխտըմուր, եօթն>օխտը, եօթանասուն>ըխտընասուն։

Այդպես և՝ մախաթ>մախատ, թեև ա ձայնավորով բաժանված է։

Նույնպիսի դիրքում բ-ն դարձել է ց կաքն>կախց բառում, որն ստացվել է կաղբն ձևից[1]։

191. Թս խումբը երկուսի միացությամբ դարձել է ց՝ վաքսուն>վացուն բառում, որից և կրկնությամբ՝ վացցուն։ Դրան հակառակ՝ ութսուն բառն իննսուն>իննասուն-ի ազդեցությամբ դարձել է ըթասսուն։

192. Մասնավոր փոփոխություններ են.

---

1 *Տե՛ս Աճառյան, Քննութ. Ագուլիսի բարբառի, § 6 և 139։*

բ>ւ.—Ուշաթափվել>ըշտափիլ, փաթաթել>փըթաթիլ, գավառական՝ թորթող>տըրտօղ, որոնցից առաջինում շ-ի ազդեցությամբ, երկրորդում՝ երկու բ-երի տարնմանությամբ, իսկ երրորդում՝ նախ երկսից մեկի տարնմանությամբ, բ—բ>բ—ւ (թորթող>թորտօղ), ապա՝ ուացված ւ-ի առնմանությամբ՝ թորտող>տըրտօղ։

բ>դ.—կնճիթ>կընդիչ, ուր նախ տեղափոխությամբ դարձել է կնթիճ, ապա՝ բառում եղած խուլերի առնմանությամբ՝ կնտիճ, որից՝ նախորդների տարնմանությամբ՝ ճ>չ (կնտիճ>կնտիչ) և, վերջապես, ե-ից հետո գռնվելու պատճառով՝ տ>դ (կնտիչ>կընդիչ), ըստ § 169-ի։

Ը

193. Սովորաբար մնում է ք. ինչպես՝

Բառասկզբում.—Ֆաղցր>քօխցուր, քենի>քէնէ, քաղել>քաղիլ, քօշ>քօշ, քոյր>քաւր, քրտինք>քըրթէնք՛ և այլն։

Բառամիջում.—կաքաւ>կաքավ, ցաքուցան>ցաքատ, շեմքաուակ>շըմքատուակ, այնքան>ընքան, անքուն>անքօն, թքել>թըքէլ, աքսորկիկ>հըքըրթըքկ և այլն։

Բառավերջում.—ճօնք>օնք, մօրուք>մէրուք, թոք>թուք, չորք>չուրք, ծալք>ծալք, դուրք>դուրք, ցամաք>ցամաք, ցաք>ցաք և այլն։

194. Բառամիջում՝ ձայնավորից առաջ և բառավերջում գառնում է ք՝, եթե գռնվում է բարբառիս է, ի ձայնավորներից հետո, թեկուզ և նրանցից բազմաձայնով բաժանված լինի. ինչպես՝ երեք>իրիք՝, թուք>թէք՝ (և՝ թօք), մեք>մէք՝, ձեռք>ձիք՝, չուխայք>չօխէք՝, զօքանչ>զընքընճէ, աղիք>աղէնք՝, գլեռք>քի՝չ։րք՝, բաժինք>բէժինք՝ և այլն։

Նույն ձայնավորներից հետո մնում է ք, եթե գռնվում է որևէ բաղաձայնից անմիջապես առաջ. ինչպես՝ երեքշաբաթ>իրիքչէբաք (թեև՝ երեք>իրիք՝), շեքերի մէջ>շըքըռամաջ (բայց՝ շեք>շէք՝), ներքս(ւ)>նէքսէվ և այլն։ Այդպես է և այն ժամանակ, երբ ք-ն կրկնվում է. ինչպես՝ երեքին>իրիքքէն, ճաքել>ճէքքիլ, ծագել>ծէքքիլ և այլն։

Գրական բառերում ևս ք>ք՝ փոփոխությունը, ըստ հիշված

ձանոններբ, խստորեն պահպանվում է. ինչպես՝ խելք>խելքի, օ-
րէնք>օրէնքի և այլն։

195. Բարբառիս շ, խ, ս հնչյուններից հետո դառնում է ի. ինչպես՝ աչք>աշկ, մէջք>մաշկ, քաջք>քաշկ, քաջքոտ>քաշ-
կոտ «վախկոտ», հրաչք>հրըաշկ, դեղք>դէխկ «թուչն», դեղ-
քել>դէխկիլ, աղքատ>ախկատ, աղքատութիւն>ըխկըատօթին,
կողք>կուխկ, ճեղք>ճէխկ, ծաղք>ծախկ «ծաղի ծաղիկ», փողք>
փուխկ «կանացի վարտիքի փողը», մեղք>մէխկ «խիղճ»,
շողք>շուխկ, խոսք>խոսկ, փուքս>փուսք>փօսկ, զարմացք>
զէրմասկ, նեղուածք>նէղվասկ, ուռուցք>օռուսկ (Շահյանի
մոտ՝ օռուցկի), անէծք>անէսկ և այլն։

Բացառություն չկա։

196. Բարբառիս թ հնչյունից հետո դառնում է կ՝, եթե թ-ին նախորդում է է. հակառակ պարագայում դառնում է կ. ինչ-
պես՝ անպէտք>անպէկ՝, միտք>մէկ՝, պէտք>պէկ՝, պարտք>պարկ, աղօթք>աղուկ, սովորոյթք> սըվուրուկ, յետք>էկ՝։

Ուրիշ օրինակ կամ բացառություն չկա։

197. Մասնավոր փոփոխություններ են. բազում>բէզուկ, քանաք>քանակ, քանաքոտ>քընակուտ, քանաքոտել>քընը-
կուտիլ, վարտիք> վարքէկ՝. բացի առաջինից, ձեացած բոլո-
րում էլ դարձել է կ՝ նախորդող թ շնչեղի, տարնմանությամբ։
Վերջինում ունենք կ՝ թերևս է-ի պատճառով։ Տակուիք>տակուկ
բառում ունենք կ՝ նախորդող կ-ի առնմանությամբ։

Հետաքրքրական օրինակ է քան զ բառը, որից ունենք քանս,
քանց և կրնց (վերջինս՝ ըստ Շահյանի), որոնցից յուրաքանչյուրը
փոփոխման մի աստիճան է ներկայացնում. այսպես՝ նախ՝ շաղ-
կապի և նախդիրի միացմամբ ու զ-ի խլացմամբ դարձել է քանս,
ապա՝ ս-ի բարդացմամբ՝ քանց և, վերջապես, վերջին ց-ի ազդե-
ցությամբ ք-ն պարզ խուլի վերածվելով ու ա-ն ողվելով, դար-
ձել է կրնց։

Ց

198. Սովորաբար ձեում է ց. ինչպես՝

Բառասկզբում.—Ցաւ>ցավ, ցագան> ցէգան, ցուրտ>ցօրտ,
ցօրեան>ցուրան, ցնկնել>ցընգընել, ցերեկ>ցիրիկ. ուրիշ և
այլն։

Բառամիջում.— Աքացի>քացէ, հացի>հացէ, կացին>կա-ցէն, ամաչեցնել>հրմընչցանիլ, խեցի>խէցէ «ընդեղեններ բովելու կավե աման», խնոցի>խընձէցէ, կորցնել>կըրցանիլ և այլն։

Բառավերջում.— Մղոց>սուղուց, ծոց>ծուց, ջաղաց>ջէղաց, այգուց>ուգուց, առանց>ըռընց, առանց, բաց>բէց, լաց>լէց, դեղնուց>դըղնօց և այլն։

199. Բարբառիս կ հնչյունից առաջ դարձել է ս. զարմացք> զէրմասկ, լուացք>լըվասկ (նաև լի՛վնց, ուր ք>կ-ն ընկել է), ուռուցք>օռուսկ (Շահյանցի մոտ՝ օռուցկ), լացկան>լէսկան։

Ուրիշ օրինակ կամ բացառություն չկա։

200. Բայերի անցյալ դերբայի -ացած մասնիկում դարձել է ճ. ինչպես՝ գնացած>գընճած, կարդացած>կըրդաճած, խոստացած>խոսդաճած, մոռացած>մռընճած և այլն։

201. Մասնավոր դեպքեր են.

ց>ս.— Փրցլինք>փըսլէնք, որ ր-ի անկմամբ նախ՝ դարձել է փցլինք, ապա՝ փ—լ բաղաձայնների մեջ գոնվելով՝ զըրկվել իր ր բաղադրիչից ու դարձել է ս։

ց>ծ.— Ցախաւել>ծըխաւիլ, հաջորդ խ-ի ազդեցությամբ։

2

202. Սովորաբար ՝ում է շ. ինչպես՝

Բառասկզբում.— Ջափ>չէփ, չոր>չուր, չամիչ>չոմէնչ, չօրք>չուրք, չափել>չէփիլ, չափաբ>չափաբ, չեչ>չիչ և այլն։

Բառամիջում.— Փախչել>փախչիլ, փչել>փի՛չիլ, աղաչանք>ղաչանք, կանաչել>կընանչիլ, կաչաղակ>քըչէղակ, կանչել>կընչիլ, ոչխար>ուխչար և այլն։

Բառավերջում.— Կանաչ>կանէնչ, ինչ>հինչ, ոչ>ուչ, հունչ, վուչ, ամաչ>համէնչ, չեչ>չիչ, մինչ ի>մի՛նչէ և այլն։

203. Բազաձայնից առաջ շ-ն դարձել է շ. ինչպես՝

Աչք>աշկ, բոլինչ>բոլինչն>բըռէշնը, բանչելի>բըռըշնի՛, ինչաեղ>հի՛շաէղ, շի՛տէղ, ինչքան>հի՛շքան, շքամ, փոնչոտալ>փըռըշտալ, խմիչք>խըմէշկ։

Բացառություն են կազմում. ամաչկոտ>հրմանչկուտ,

ամաչեցնել>հըմրնչցանիլ, ամաչ>համէնչ բառի անկախորէն գիտակցման պատճառով։

204. Մասնավոր դեպք է չ>ճ փոփոխությունը զոքանչ>զէնճքոնճ բառում։

4. ՁԱՅՆԵՂ ՇՓԱԿԱՆՆԵՐ

վ

205. Բոլոր դեպքերում էլ անփոփոխ է մնում. ինչպես՝ վաքել>վարիլ, վեց>վըէց, վիզ>վըէզ, վեր>վիր, խոռվել>խըռռավիլ, խոստովանք>խըստաւանք, խորոված>խըրռաված, վարդավառ>վռէրդռվռէր, կով>կաւ, ծով>ծաւ և այլն։

Բառավերջում օրինակները քիչ են, բայց պետք է համեմատել գործիականի վերջավորությունը. ինչպես՝ քարով>քարաւ, թանով>թանաւ և այլն։

Միակ բացառությունն է կազմում վիշապ>ճօշափ բառը, որ Ագուլիսի բարբառումն էլ վ-ի փոխարեն ունի ճ. Թերևս դիտմամբ փոփոխել են բառը տաբուի պատճառով. այդպես պետք է կարծել նաև գայլ>գռնէլ բառի այ>ու փոփոխության մասին. դրա համար լավ օրինակ է «արջ» բառը, որ «առջ» սովորական ձևի կողքին ունի նաև օռջ ձևը, որ գործածվում է սովորաբար որսորդների մոտ, բայց և ոչ որսորդների մոտ՝ ենթադրվող վտանգի ժամանակ։

զ

206. Սովորաբար անփոփոխ է մնում. ինչպես՝ զանգակ>զէնգռնկ, զրույց>զռնէրռնց, զարդարել>զի՛րդէրիլ, զոքանչ>զէնքոնճ, ազնիւ>ազնէվ, գազար>գէզար, լեզու>լռնէզռնւ, լիզել>լռնէզիլ, եզն>իզնը, երազ>արազ, դէզ>դէգ, ընկույզ>անգուզ, թուզ>թօզ և այլն։

207. Բառասկզբին՝ գ-ից առաջ դարձել է ա զգօն>սըգօն>աբկօն, զգենուլ>սի՛գէնիլ, զգեցուցանել>սի՛գէց տալ բառերում. Նույն պարագայում գրականից փոխառած բառերի մեջ ունենք զ զգեստ>ըզկէստ, զգեստաւորիլ>ըզկստաւուրվիլ բառերում։ Այդ կարգի ուրիշ բառ չունենք։

Մասնավոր դեպքեր են.

Ձկեռ>ցըքէռնը, ուր նախ հաջորդ կ-ի՝ ազդեցությամբ գ-ն

*գարձել է ս (զկեռ>սկէռ), ապա՝ բարդացմամբ՝ սկէռ>ցրքէռ-նը. նույն բառից սակայն ունենք նաև զրկէռ ձևը (իբրև հայհոյանք), որից էլ, գարձյալ անփոփոխ՝ *զկեռաքթու>զրկրոքթօ:*

Քան զ>քանս, քանց. Շահյանցի մոտ նաև՝ կրնց. այս ձևերի մասին տես § 197:

Ժ

208. Ամեն դեպքում էլ հետևում է անփոփոխ. ինչպես՝ ժանգ>ժէնգ, ժահր>ժէհր, ժամ>ժէմ, ժայռ>ժէռ, ժլատ>ժըլատ, բաժինք>բէժինք, դժ(ու)ար>դի՛ժէր, արժել>ըժժիլ, բոժոժ>բոժոժուժ, խժ>խէժ(ը), ոյժ>օժ և այլն:

Մասնավոր դեպքեր են.

ժախ>ժէխ, բայց նաև՝ չէխ «թուփ», որը սակայն ստացվել է ցախ բառի խաչավորմամբ:

Հետաքրքրական են պատժել>պայչիլ և պատիժ>պատէճ բառերի ժ>չ, ժ>ճ փոփոխությունները, որոնցից առաջինում ժ-ն է ազդել տ-ի վրա և դարձնելով դ ու միանալով նրան՝ դառել չ և կրկնվել, իսկ երկրորդում, ընդհակառակն, տ-ն ազդել է ժ-ի վրա և, նմանեցնելով իրեն, դարձրել ճ: Տժ խումբն ունեցող ուրիշ բառ չունենք:

Չ

209. Սովորաբար հետևում է անփոփոխ. ինչպես՝

Բառամիջում.—Դեղին>դէղէն, ապալ>ապիլ, ապագ>հապակ «այգու մուտքի ճանապարհ», լեզի>լէզէ, ծագիկ>ծագէկ, խաղող>խաղու, ծագր>ծագրը, կաչագակ>քըչէղակ և այլն:

Բառավերջում.—Ագ>ագ, իւղ>յօղ, գիւղ>գիւղ, ծիծաղ>ծըէծաղ, աստղ>աստըղ, խաղ>խաղ, չաղ>չէղ, տեղ>տէղ և այլներ.

Գրաբարում բառասկզբին ղ չկա. բարբառումս համաձայն § 3-ում տրված կանոնի ձևավորվել են մի խումբ բառեր. ինչպես՝ ուղարկել>դուրկիլ, ապանձել>դյանձիլ, ողորմի>ղօրմի և այլն.

210. Բարբառիս պ, տ, կ խումբերից և ց, չ շնչեղ խումբերից առաջ դառնում է խ. ինչպես՝ ապր>ախպ, ապրիլ>ախպիր, եղբայր>ախպէր, ատտա>յէխաուս, թուղթ>թօխտ, յաղթել>էխտիլ, բողկ>բուխկ, փողք>փուխկ «կանացի վարտիքի փող», գեղք>դէխկ «թուն», փեղք>փէխկ, ապչիկ>ախչէկ, ողկոյզ>

տալ>օխչում տալ, քաղց>քօխց, քաղցր>քօխցուր, կաթն>կազց>կախց և այլն։

Տ, ց, չ հնչյուններից առաջ ի դառնալը ենթադրել է տալիս, որ այդ պետք է լիներ նաև ծ, ճ-ից առաջ, սակայն գրանցից անմիջապես առաջ ոչ չունենք ոչ մի բառում։

Բացառություն է կազմում ուղտ>օղտ։

Գավառական թուղթ բառն ունենք բօղր ձևով, որից էլ՝ թըղթել>թըղբէլ։

Ողջ>վօղջ գործածվում է «վօղջ լերուքդ դարձվածքում, որ պարզապես գրաբար է։ Ողջույնի>վօղջուբմէն նույնպես գրական փոխառություն է։

211. Մասնավոր փոփոխություններ են.

ղ>խ.—Բողի>բուխէ, ուր նախորդ ձայնեղի տարնմանություն ամբ վերածվել է խուլի։ Թիթեղ>թէթախնը, փայծաղն>փայախնը՝ նախորդ շնչեղ խուլերի առնմանությամբ։

ղ>ճ.—Պղպջալ>պըճպըճալ, ուր նախ ղ-ն նույնանալով հաջորդ ջ-ին ավել է պչպչալ, որից՝ ըստ § 161-ի երկու ջ-երի ճ պառնալով՝ ստացվել է պրճպրճալ։

ղ>լ.—Ջիղ>հիլ, ուր ոչ թե ղ-ն դարձել է լ, այլ պահպանված է գրաբարյան ղ-ի լ արտասանությունը, ինչպես՝ անալի>նալէ բառում (համմտ. գրական՝ լլուտ, լլապինդ և այլն)։

Փող>փօլ նոր փոխառություն է պարսկերենից։

ղ>ճ.—Աղեղն>աղէղնը և աճեղ, որ տեղափոխությամբ դարձել է աճէղ և բառի վերջում լինելով՝ կրկին ղ-երից մեկն ընկել է։

5. ՄՈՒԼ ՇՓԱԿԱՆՆԵՐ

ս

212. Առհասարակ միւում է անփոփոխ. ինչպես՝ սանդ>սանգ, սուբ>սօր, սուինկն>սօնգնը, սօնգուն, սիսեռն>սըէսառնը, սեաւ>սէվ, սասլ>սասիլ, աստատ>աստատ, հարսն>հարսնը, կասկած>կասկած, այս>ասս, թուխս>թօխս, ես>իս, մխ>մըէս, կէս>կըէս, ամիս>ամէս և այլն։

Թս խումբը դարձել է ցց վաբսուն>վացցուն բառում. այդ կարգի մյուս օրինակն է ութսուն, որ դարձել է ըբասսուն։

Բայերի անցյալ դերբայում երկու ա-երի միջև ս-ն ացած>

աճած ձևի համաբանությամբ դարձել է ն տեսած>տահած, ասած>ահած բառերում. դրանց հակառակ ունենք լսած>լի՛սած, ուր գոնվում է ի՛-ից հետո:

213. Մասնավոր դեպքեր են.

ս>շ.— Սալոր>շի՛լլի՛ր, շի՛լլըր, սալոր(են)ի>շի՛լի՛րի, սեամ>շէմք՝, որոնց մեջ, սակայն, ս>շ փոփոխությունները՝ ըստ պրոֆ. Աճառյանի՝ առերևույթ են. դրանք գներկայացնում են հին գավառական ձևեր» (Իննություն Ագուլիսի բարբառի, § 201):

ս>ց.—Ցիսուն>իցցուն՝ վաթսուն>վացցուն բառի ազդեցությամբ:

Սաղմոս>սոցմուց նախորդ ս-ի տարնմանությամբ: Առանձին է մնում ս>զ փոփոխությունը նապաստակ>լըպազտրակ բառում, որ նախ՝ ր-ի հավելմամբ դարձել է նապաստրակ, ապա՝ ավելացած ր-ի ազդեցությամբ ն>լ փոփոխությամբ՝ լապաստրակ, և, վերջապես, պ, տ, կ խուլերի տարնմանությամբ, ս>զ:

Սա>զա, ուր ս-ն ձայնեղ է դարձել դա-ի համաբանությամբ:

շ

214. Ամեն դիրքում էլ առանց բացառության մնում է շ. ինչպես՝ շաղ>շէղ, շոր>շո՛ւրթ, շողք>շուխկ, շիւ>շէվ, շնչել>շի՛նչիլ «սուլել», շարել>շէրիլ, երաշտ>արաշտ, աշունք>աշօնք, խարշել>խաշիլ, աշխարհք>ախշարք, բշտել>բի՛շտիլ, կշկուռ>քըշկօռ, ակիշ>ակէշ, թթուաշ>թըթվաշ, էշ>էշ և այլն:

խ

215. Ամեն դեպքում էլ մնում է անփոփոխ. ինչպես՝ խաղ>խաղ, խաղող>խաղու, խմոր>խըմուր, խումուր, խնձոր>խընձուր, խոլխ>խուլխ «օձի շապիկ», ախոռ>ախուռնը, նախանձ>նախանձ, ծախել>ծախիլ, ծուխ>ծօխ, մոլեխ, մարախ>մուրախ, երախ>բուռէխ և այլն:

Մասնավոր դեպքեր են. գոխն>դուղ «ջրաղացի ձագարը», շաղախ>շէղաղ, *խանձր(մ)ահոտ>դի՛նձի՛րմա՛հուտ, որոնց մեջ դարձել է ղ առաջին երկսում ղ, ղ ձայնեղների առնմանությամբ, իսկ վերջինում՝ աղանձահոտ բառի հետ խաչավորվելով:

Հարբուխ>խարփուղ բառում, նախ՝ վերջին խ-ի առնմանությամբ ն-ն դառնալով խ տվել է խարբուխ (ինչպես գրբ. հրախ>

խրախ, հրասախ>խրասախ), ապա՝ երկու խ-երի ազդեցությամբ բ-ն վերածվելով փ-ի ավել է խարփուխ, որից էլ՝ նախորդ խ, փ-ի տարմանությամբ վերջին խ-ն դառնալով ղ, առաջվել է խարփուղ:

Անսխալ>անսըղալ բառում խ-ն դարձել է ղ նախորդ ս-ի տարմանությամբ:

Հ

216. Սովորաբար միում է ն. ինչպես՝ համ>համ, հայր>հար, հեռի>հեռոա, հազար>հի՛զէր, հաճար>հաճար, հարսն>հարսընը, հունձ>հօնձ, անհամ>անհամ, պահել>պահիլ, պահէզ>պըհնազ, բահրել>բի՛հրիլ, ահ>ահ, բահ>բէհ, մահ>մահ և այլն:

217. Ր-ից հետո բառավերջում գտնված ն-ն ընկել է. ինչպես՝ խոնարհ>խօնար, ճանապարհ>ճանապար, շնորհք>շընուրք, շնորհաւոր>շընըրաւուր, շընավուր, բայց և՝ շընհավուր, աշխարհ>աշխարք. Ուրիշ օրինակ չկա:

Բնն խումբը դարձել է խն օրհնել>օխնիլ, օրհնէք>օխնէք, ջրօրհնէք>ջըրօխնէք, ուռօրհնէք>նրօխնէք բառերում. բնն խմբով ուրիշ բառ չունենք:

Մասնավոր դեպքեր են.

ճ>խ.—Հարբուխ>խարփուխ (տե՛ս վերը § 215):

ճ>ռ.—Ջահ>ճառ:

6. ՁԱՅՆՈՐԴՆԵՐ

Լ

218. Ամեն դիրքում էլ, առանց բացառության, միում է անփոփոխ. ինչպես՝ լալ>լէլ, լեզու>լիզու, լինդ>լէնդ, լայն>լէն, լուանալ>լի՛վանիլ, լեարդ>լէրդ, ալիւր>ալիւր, ալեւոր>նրլէվուր, անալի>նանլէ, բակլայ>բէկլէ, այլ>այլ, ծայլ>ծայլ «թուլ, մեղմ», ուլ>նօլ, ծիլ>ծիլ, թոյլ>թոյլ և այլն:

Մ

219. Ամեն դիրքում էլ, առանց բացառության, միում է անփոփոխ. ինչպես՝ մազ>մազ, մայր>մար, մորթի>մուրթէ,

մանր>մանդրը, մանգաղ>մանդաղ, մարդ>մարդ, ամանդ>ամանդ, ամօթ>համութ, արմունկ>արմունգ, երգուիմ>ուրդուիմ, ամիս>ամէս, բամբակ>բէմբակ, ժամ>ժէմ, ծոմ>ծում, հում>հօմ, ապրշում>պըրօշում և այլն։

Ե

220. Սովորաբար Ե առում է անփոփոխ. ինչպես՝

Բառասկզբում.—*Նաւթ>նօթ, նշան>նի՛շէն, ներկել>նէրկիլ, նուռն>նօռնը, նարօտ>նարուտ «գուլշզգույն թել», նայ>նէյ «խոնավ», ներկակ>նէրկրակ «հակառակ» և այլն։*

Բառամիջում.—*Անիծ>հանէծ, բանալ>բէնիլ, գանգատ>գէնգա՛տ, գնալ>գի՛նէլ, առնէտ>ըռնատ, անկան>հի՛նգէն և այլն։*

Բառավերջում.—*Բան>բէն, ամէն>ումմէն «բոլորը», արիւն>ա՛րիւն, բերան>բէրան, տուն>տօն, դեղին>դէղէն, շուն>շօռ և այլն։*

*221. Բաղաձայնից առաջ գտնված նշ, նջ խմբերում ն-ն ընկել է. ինչպես՝ բոինչ>բոինչն>բրոէչնը, բոնչ(ևն)ի>բրոըշնի՛, փոքունչատալ>փըռըշտալ, ինչտեղ>հի՛շտեղ, շտէղ, ինչքան>հի՛շքան, շքամ, *յօրանջկուտել>ըռըշկուտի՛լ։ Դրանց հակառակ ունենք՝ ամաչկոտ>հըմանչկուտ, ամաչեցնել>հըմըշցանի՛լ (տե՛ս § 203)։*

222. Մի խումբ բառերում ն-ն դարձել է լ։ գրանք են. նինջ>լէնջ, ննջել>լի՛նջիլ, բանկն>պըռնգըլ, նիգ>նինգ>լէնգ «ծակ», ելանել>իլլիլ, շնի՛ք>շիլլի՛, անվարտի՛>լըվարտէ, որոնցից առաջին չորսում՝ եղած ե-երի տարնմանութ յամբ, հետևյալ երկուսում՝ լ-երի առնմանութ յամբ, վերջինում՝ բ-ի՛ Այդպես էլ՝ նապաստակ>լըպազտրակ բառում՝ ավելացած բ-ի պատճառով (տե՛ս § 213)։

Դնել բառի դիմաց ունենք դի՛րիլ, որտեղ սակայն ոչ թե ե-ն դարձել է ր. այլ բայը կազմված է դիր արմատից։

Ա՛նուն>ա՛նում բառում ոչ թե կատարված է ն>մ փոփոխութ յուն, այլ պահպանված է հնագույն ան ումն ձևը՝ վերջահանգ ե-ի անկումով (տե՛ս ստորև). Համբանք>համբրաբք բառում ունենք ր նախորդ բ-ի առնմանութ յամբ և համաբք>համբարք բառի համարանութ յամբ։

223. Մեղրու բարբառը հարազատորեն պահում է բառավերջի հավելվածական ե-ն. բերում ենք բոլոր օրինակները.

ա) Պահպանված է ե-ն, նախորդող գաղտնավանկ ը-ն բառավերջը տեղափոխելով. ակն>ակնը, աղեղն>աղէղնը (նաև՝ անէղ), ամառն>ամառնը, բեռն>բէռնը, գառն>գէռնը, դաղձն>դէղնը, դառն>դէռնը, եզն>իզնը, թիկն, թիկունք>թէկունք, թիթեռն, թիթեղն>թէթեխանը, թոռն>թուռնը, ինն>ինը, լեառն>լէռնը, լիսեռն>լի՛սէռնը, խանձողն>խանձուղնը, խառն>խառնը, սառն>սառնը «սառուցյց», խուրձն>խօրզնը, ծունգն>ծօնգնը, ծօնգուն, կամն>կամ՚ը, կոտիճն>կուտէճը, կուռն>կօռնը, հարսն>հարսնը, ձմեռն>ձըմէռնը, ձուկն>ձօկնը, ձօկուն, մասըն>մասնը, ողն>ուղնը «բլրի վերին մասը», եղն>յէղնը, մատն>մատնը «խաղողի որթ», մատուռն>մատուռնը, մուկն>մօկնը, մօկուն, որդն>ուռնը, ունկն>օնգնը, օնգուն, սունկն>սօնգուն, փայծաղն>փացախնը, փուռն>փօռնը, սխսեռն>սըխսառնը: Այդպես և՝ սամի>սամ՚ը՝ կամն>կամ՚ը բառի համաբանութեամբ:

բ) Երկու բառում ե-ն պահպանվել է տեղափոխութեամբ. արեգակն>արեգնակ>ըրէնակ, հրբէնակ, արմունկ>արմունգ, այդպես և՝ աղեղն>աղէղնը կամ՝ անէղ:

գ) Կան մի խումբ բառեր, որոնք մեզ ավանդված գրաբարյան ձևերում զուրկ են վերջահանգ ե-ից, սակայն բարբառումս ունեն այդպիսին: Այդ բառերն են. կանկար>կանգառնը, մամուռ>մամուռնը, կռէզ>կըռէզնը, զկէռ>ցըքէռնը, ախոռ>ախուռնը, ճիւղ>ճօղնը, զմուռս>զըմբէռնը «կնքամոմ», խէժ>խէժը և գավառական՝ բոհնչ>բըռէշնը: Գոիզ, խէժ, բոհնչ բառերը Ագուլիսի բարբառում նույնպես ունեն վերջահանգ ե, որից կարելի է ենթադրել, թե այդ բառերը նախապես ունեցել են ե, բայց մեզ ավանդված գրաբարում արդեն կորցրած են եղել այն:

դ) Երկու բառ զուրկ են ե-ից, սակայն նրանք ներկայացնում են նախագրաբարյան, մեզ չավանդված ձևը, հարազատորեն. գրանք են. կաթն>կախց, դուռն>դուրք:

ե) Երեք բառում վերջահանգ ե-ն ընկել է և միացել է միայն ը կամ ի՛. եօթն>օխտը, տասն>տասըը, ինքն>ինքի՛. վերջինում ունենք ի՛, ը-ից հետո լինելու պատճառով:

զ) Մի քանի բառերում ե վերջահանգը բոլորովին կորել է,

ինչպես՝ ասեղն>ասուղ, գագաթն>գէգա՛թ, ազգն>ազգ «գործելիք կտավի սկզբի թելերը», եղունգն>յէդունգ, մրջիւն>մո՛ւրջում, երդումն>ո՛ւրդո՛ւմ, ջերմն>ջէրմ, սերմն>սբէրմ, որմն>հո՛ւրմ, ափն>ափ «խմորի տաշտի եզրը»:

Ռ

224. Սովորաբար ՝ռում է անփոփոխ. ինչպես՝ առաջ>էռէջ, առնուլ>առիլ, դառնալ>դէռնիլ, խռովել>խըռովիլ, առնէտ>ըռնատ, աթոռ>աթո՛ռ, աստառ>աստառ, պատառ>պատառ «գքիչ», վառ>վառ, ախոռ>ախոռնը և այլն:

Բառասկզբում ռ ունենք երկու բառում միայն. ոռճիկ>ռոճիկ (նաև՝ ըռոճիկ), ոչխան>ռէչխան. դրանցից առաջինը գրական է, երկրորդը՝ գավառական:

Առնել>սրիլ բառում ոչ թե ռ-ն դարձել է բ, այլ բայը կազմված է ար արմատից, որի բ-ն գրաբարում դարձել է ռ, և-ից առաջ լինելու պատճառով: Այդպես և՝ դուռն>դուբք.

Թիթեռն>թէթախնը բառն ստացվել է թիթեղն ձևից:

Կռճռնք>կըրճունք բառում ռ-ն դարձել է ր անշուշտ ճ-ի պատճառով:

Պառկել>պարկիլ բառում՝ կ-ից առաջ լինելու պատճառով (տմմտ. § 225):

225. Ռ չնչեղ խուլից առաջ ռ-ն դարձել է բ. ինչպես՝ կշեռք>քի՛շերք, առք>արք «գինն», ժանգառք>ժէնգա՛րք, փառք>փարք (Շահյանի մոտ՝ փառք), կաշառք>կաշարք, Ջեռք>ձէ՛ք: բառում ռ-ն ընկել է. սակայն արդի խոսակցական լեզվում վերականգնելով ու ենթարկելով այս օրենքին դարձրել են ձէրք:

Ց

226. Գրաբարում բառասկզբում ր չկա. բարբառումս, ըստ § 3-ում տրված կանոնի կազմվել են մի խումբ բառեր. ինչպես՝ արեգակն>ըչնակ, երախայ>րախէ, արածել>րածիլ և այլն (տե՛ս § 3):

227. Բառամիջում սովորաբար ՝ռում է բ. ինչպես՝ բերել>բէրիլ, գարի>գա՛ռէ, ջորի>ջո՛ռէ, բրինձ>բի՛ռինձ, բուրդ>բո՛ռդ, արտ>արտ, մարդ>մարդ, հօրեղբայր>հէբրար և այլն:

Մի քանի բառերում ջ, ձ, տ հնչյուններից առաջ դարձել է

ռ. ինչպես՝ աբջ>առջ, *արջակատու>ըռջկատու «վայրի կատու», լպրծել>լըպրտել, կրծել>կուռծիլ, կրծուտել>կըռծուտիլ, ործ>ուռծ։ Այդ նույն հնչյուններից առաջ, սակայն, առհասարակ, միևնույն է անփոփոխ. ինչպես, կուրծ>կօրծ, արծիւ>ըռծէվ, գօրծի>գըռծէն «արար», վերջ>վէրջ, սիրտ>սէրտ, ցուրտ>ցօրտ, արտասուել(նք)>ըրտասօնք, արծաթ>արծաթ և այլն։

228. Ն ինդգայինից առաջ դառնում է ռ. ինչպես՝ արիւնել>ըռնէլ, որդն>ռիւնը, որդնոտել>ռիւնռիւտիլ, գորտ(նուկ)>գ֊ռնուկ, որը>հուռնը (հարցական դերանուն), կանկար>կանգառնը, յօրանջ(կոտ)ել>ըռնջկուտիլ>ըռըշկուտիլ։ Հետաքրքրական են հայր>հար, վայր ընկնել>վէր նանիլ բառերը, որոնք առանձին ունենալով ր, որոշ դարձվածքներում ն֊ից առաջ լինելով ր֊ն դարձնում են ռ. ինչպես՝ հէռն անիծած, վէռներ «վայր ընկիր» (վերջինս արտասանվում է իբրև մեկ բառ)։

229. Բառավերջում, նույնպես, առհասարակ միևում է անփոփոխ. ինչպես՝ բիր>բիր, դուր>դուր, մայր>մար, քեր>քիր, ծաղր>ծաղրը, ալևոր>հըլէվուր, այսօր>ասայր, բանջար>բէնջար, գազար>գէզար, բոլոր>բուլուր, աղբիւր>ախպիւր, եղբայր>ախպէր և այլն։

Նույն պարագայում մի քանի բառերում ունենք ռ. դրանք են. խոր>խուռ (որից էլ՝ խորացնել>խըռըրցանիլ), մաճար>մաճառ, մսմար>մըսմառ, մաշար>մաշառ, ոսկր>ուսկուռ (որից էլ՝ ոսկրոտ>ուսկռուտ), փետուր>փէխուռ, սայր>սէռ «լեռան սուր կողմը»։

230. Կրկնությամբ կազմված բառերում ր֊ն դառնում է ռ. ինչպես՝ թրթուռ>թըռթօռ, թրթռալ>թըռթըռալ, սարսռալ>սըռսըռալ, փրփուր>փըռփօռ, փրփրել>փըռփըռալ, այդպես և՝ մար֊մար>մառմառ, որ գիտակցվել է իբրև կրկնավոր բառ. օրօրոց>բուրուց, ըրուրուց բառում անփոփոխ է միացել։

231. Մասնավոր փոփոխություններ են.

ր>ռ.—Երախ>ըռռէխ, կրկնվելու պատճառով։ Ջրորդան>շըռուվկան, շուռուվկան, գավառական՝ կրտել>կռտիլ, շեքերի մէջ>շըքռամաջ «երկու ոտքերի արանք»։

ժժ>ժժ.—Արժէլ>ըժժիլ, արժի>ըժժի, լիակատար առնմանություն է։

ր>լ.—կլորակ>կըլուլակ «կոլոր. քուֆթա» նախորդ լ֊ի

առնմանությամբ. Թրիք>թըլէնք՛, ավելացած ն-ի ազդեցությամբ։

բն>խն.—Օրհնել>օխնիլ, օրհնէք>օխնէք՛, որից էլ՝ ըլբրօրհնէք>ըլբրօխնէք՛, ուռօրհնէք>հըռօխնէք՛ «ծծառզարդարք» (հմմտ. § 217)։

Առանձին է մնում՝ կորիզ>կըղազ, ուր բ-ի դիմաց ունենք ղ։

Ց

232. Յա խումբը բառասկզբում դարձել է է. յաղթել>էխտիլ (Շահյանցի մոտ նաև՝ յախտիլ), յատակ>էտակ. դրանց հականակ ունենք յաջող>հաչօղ, յարմար>հարմար, որոնք գրական են. այստեղ պետք է հիշել նաև՝ առաջ>յառաջ>էռէջ, յաւել>էվել>իվիլ (հմմտ. §§ 40, 111)։ Մեր կարծիքով այդպես պետք է ստացված լինի նաև՝ արժան>յարժան>էժան>իժին։

233. Մնացյալ բոլոր դեպքերում բառասկզբի յ-ն ձայնավորից առաջ բոլորովին ընկել է, իսկ հաջորդող ձայնավորը կրել է իր օրինական փոփոխությունը. ինչպես՝ յետ>էտ, էտը, յետք>էթիվ, յետին>էտէն, յետին(ի)>էտնէ «հետոդ, յիսուն>իցցուն, յիշատակ>չէտակ, յօնք>օնք, յօրանջել, յօրանջկոտել>ըռըշկուտիլ, յաւելուլ, յավելացնել>ի՛վի՛լցնիլ։

Հրթկատէ «բեռան հետին կողմում դրված իրերը» ստացվել է «հետքատիս» ձևից և այստեղ գործ չունի։

Ցուշ>նուշ «հիշողություն» բառում ոչ թե յ-ն դարձել է ն, այլ ուղղակի ավելացել է ն, ինչպես ունենք շատ բառերում (աղագ>հաղակ, որմ>հուրմ և այլն)։

Ցոյս>հույս, յօժար>հօժար գրական փոխառություններ են։

234. Բառասկզբում, բաղաձայնից առաջ յ ունենք երկու բառում միայն, որոնցից մեկում մնացել է յ, մյուսում՝ ընկել է. յղի>յըղէ, յատակ>յէստակ>իստակ։

Բառամիջում և բառավերջում յ-ն եղել է երկբարբառի տարր, որի մասին տե՛ս երկբարբառների կրած փոփոխության մեջ։

7. ԱՆԿՈՒՄ

235. Ձայնավորների անկման մասին՝ շեշտափոխության հետևանքով՝ խոսված է «Ձայնավորների փոփոխությունները» բաժ-

նում։ Բաղաձայնների անկման մասին միայն մի քանի տեղ է խոսված. ամփոփելով դրանք և միացնելով բոլոր այն օրինակները, որոնց մասին չի ասված՝ իբրև բացառիկ դեպքերի, ստանում ենք հետևյալ պատկերը։

1. Ր ձայնորդն ընկել է.

ա) ժ, շ, ս բաղաձայններից առաջ. արժան>իժմն, խաբշել>խաշիլ, քաբշել>քաշիլ, դուբս>դուս (դրսի>դուսմանց), ներս>նէս, նէ, փրցլինք>փըսլէնք՛։

բ) ճ, չ բաղաձայններից առաջ, բաղարճ>պաղաճ, արջառ>աչառնը։

գ) ճղ խմբից հետո. խնդրել>խընդիլ «ուզել», մանրել>մանդրիլ>մանդիլ «կոտրել»։

դ) բ, փ բաղաձայններից առաջ. բորբոս>փի՛փուսնը, փուփուսնը, բորբոսնել>փի՛փուսնիլ, փուփուսնիլ, երբ>հիբ, երբոր>հիրօր։

ե) մր խմբից առաջ. կարմրուկ>կամբուկ։

զ) ն կոկորդայինից առաջ. շնորհաւոր>շընհավուր, շընավուր, բարկ>բէհ (իսկ՝ բարկել>բի՛հրիլ «փոթել» բառում ն-ից հետո ընկնելով՝ ձեացել է), օրհնել>օխնիլ, օրհնէք>օխնէք՛, ջրօրհնէք>ջըրօխնէք՛, ուռօրհնէք>հրռօխնէք՛։

է) ծ բաղաձայնից առաջ. բարձր>բէծըր, բէծուր, բարձրանալ>բի՛ծրանիլ։

ը) չ բաղաձայնից հետո՝ ջրադաց>ջէդաց։

թ) բ, ք շնչեղներից առաջ. քարաթոխոշ>քըթանթուշ>քըթանթուշ, ներքս(և)>նէքսէվ։

2. Դ-ն ընկել է ր և ն բաղաձայնների միջև, որդն>ուռնը, որդնել>ուռնիլ, որդնոտել>ուռնուռնիլ բառերում։

3. Ղ-ն ընկել է բաղաձայնների խճողման պատճառով. խըղճմտանք>խըժմտանք, շաղապատուկ>շըղըպատուկ>շըպատուկ. բառավերջում ընկել է խաղող>խաղօւ բառում։

4. Հ-ն ընկել է.

ա) Բառասկզբում. հնձան>ընձան։

բ) Ր-ից հետո. ճանապարհ>ճանապար, շնորհք>շընուրք, շնորհաւոր>շընավուր (նաև՝ շընհավուր), աշխարհ(ք)>աշխարք։

գ) ք շնչեղից առաջ. պահք>պաք։

5. Տ-ն ընկել է.

ա) բուն *խմբում.* գորանուկ>գօռնուկ,

ա) Բառավերջում. քաշա>քաշ «ագռավ»։

6. Գ, կ, ք ընկել են. արեգակն>արեգնակ>հըրէնակ, բէ-նակ, անկանել>նանիլ, ուշք>օշ *(և՝ օշկ)*։

Գալ>գուալ բառի ներկա և ապառնի դերբայներում նախ գնալ բառի ազդեցութեամբ ավելացել է ն *(գուալ իմ>գնուալ իմ)*, ապա՝ գ-ի անկմամբ նուալ իմ, նուալ իմ և այլն։

7. Ռ-ն ընկել է ք-ից առաջ՝ ձեռք>ձիք բառում։

8. Ջ-ն ընկել է. քեզ>քի բառում, թեև ձայնավորով սկըս-վող հետագրութիւններից առաջ լինում է քիզ. ինչպես՝ քի՝զէտ։

9. Ն-ն ընկել է.

ա) Երկու բաղաձայնից առաջ. բոինչ>բոյնչ>բըռէչնը, բոնչենի>բըռըշնի, յօրանչել, *յօրանչկոտել>ըռըշկուտիլ, սինձ>սինձն>սըէզնը, անձենի>սըզնի, ինչ տեղ>հի՝շուէղ, շի՝տէղ, ինչ-քան>հի՝շքան, շքամ.*

բ) Մ-ից առաջ. այն մի>ամին (նաև՝ ամնին)։

գ) Ք-ից առաջ. շատոնք>շատուք, մերոնք>մէրուք, իւր-եանք>ուրքք։ Այս նույն պատճառով է, որ բայերի հոգնակի առաջին դեմքում մ>ն փոփոխութեամբ և ստացված ն-ի անկու-մով առաջին և երկրորդ դեմքերը նույնացել են. ինչպես՝ խմեմք>խըմէնք>խըմէք, եմք>ենք>իք և այլն։

Բառավերջի հավելվածական ն-ի անկման մասին տես § 223։

8. ՀԱՎԵԼՈՒՄ

236. Ամենից շատ ավելացել է ն հնչյունը՝ բառասկզբում, ձայնավորից առաջ։ Իերում ենք բոլոր օրինակները. ագի>հէ-գին, Ագարակ>Հի՝գէրակ, ալևոր>հըլէվուր, ալևորութիւն>հի՝-լի՝վի՝ըթին, աղագ>հաղակ «այգու մուտքի ճանապարհ», ամայ>համէնչ, ամայել>հըմանչիլ, ամայկուտ>հըմանչկուտ (դրանցից էլ՝ անամայ>անհամէնչ), ամօթ>համուբ (անամօթ>անհամուբ) անդ>հանդ, անիծ>հանէծ, անկան>հի՝նգին, անկանակ>հի՝ն-գէնակ, արեգակն>հըրէնակ, արձակ>հաւրձակ, եղիճ>հաղէնչ, երդ>հուրդ «երդիկ», երինջ>հէրէնչ, ընկեր>հընգէր, ընտրել>հընդրէլ, ինչ>հինչ, որը>հուռնը, որմ>հուրմ, ոսի>հուփսի, ո, ով>հու, հուվ, ուռ>հօռ, ուռի>հօռի, հօռէ, ուր>հօր, այր>

հոնը «ուսի», ուրագ>հոբագ, յուշ>օշ, հուշ, ոլոր>հոնլլուր, ոլորել>հիլլուրիլ, ոչ>հուչ։

Բառամիջում ավելացել է մի բառում. մասուր>մըհասուր։

237. Ն հնչյունն ավելացել է.

ա) ջ, ճ, շ չհականների ու նախորդող ձայնավորի միջև. եղիճ>հաղինջ, ամաչ>համէնչ, ամաչել>հըմանչիլ, կանաչ>կանէնչ, ճանաչ>ճանէնչ, կանաչել>կընանչիլ, ճանաչել>ճընանչիլ, չամիչ>չօմինչ, կամուրջ>կիմրմինջ, կիմրմունջ, ճօճ(ի)>ճօնջիկ, մէջ>մանջ, մանջ։

բ) գ, ք բաղաձայններից առաջ. նիգ>նինգ>լէնգ, աղիք>աղէնք, թրիք>թրինք>թրլէնք, արտասուք>ըրտասունք։

գ) թ առաջին այնից առաջ. թաթու>թանթաղ, ծոթորին>ծընթուրան, քարաթոռոշ>քրթանթուշ։

դ) Բառամիջում ավելացել է. մուն>մնուն>մընուն, վերջին ն-ի ազդեցությամբ. աւելորդ>ավելնօրթ. այդպես և՝ հպարտ>հընպարտ, որ պ շրթնայինի ազդեցությամբ դարձել է մ (հըմպարտ)։

ե) Բառասկզբում ավելացել է մի բառում մխայն. հետ>նըհէտ (նաև՝ հէտ)։

զ) Բառավերջում ավելացած հավելվածական ն-ի մասին խոսվել է § 223-ում. այստեղ պետք է ավելացնել. որը>հուռնը, ագի>հնգիկին, գործի>գործնէն, մի>մին (որից՝ այն մի>ամնին, ամին), մի>մէ, մէն (արգելական)։

238. Մր խմբի մեջ ավելանում է բ շրթնայինը. ինչպես՝ համարք>համբարք, համրանք>համբրանք, համարել>համբել>համբրիլ, համրուկ>հէմբրուկ, թմրել>թըմբրել>դի՛մբի՛րիլ, արմատ>ամբրիլ>ամբրիվ, այդպես և՝ զմուռս(ս)>զմբէռնը «քնքաշանք», ամոլ>ամբուլ։

239. Նր խմբի մեջ ավելանում է դ առաջինը. ինչպես՝ սանր>սանդըր, սանրել>սանդրիլ, մանր>մանդրը, մանրել>մանդրել>մանդիլ «կոտրել» (ուր ր-ն ընկել է), ծունր>ծոնդրը, այնր>անդր>անդունր «ներա», ծանր>ծանդրը, ծանրել>ծանդրիլ «անասուններին ծնելու ժամանակը մոտենալը», ծանրանալ>ծընդրըմանիլ։

240. Սր խմբում ավելացել է տ, այսր>աստուր, ըստուր բառում։

241. Անկանոն կերպով ավելացել են.

Թ.—Շոր>շուրթ։

Ր.—Նապաստակ>լրպազարակ, որոտալ>ըրբրտալ, ըրբրտալ։

Խ.—Թօռիկ>գօխտէկ, օտար>օխտար «ուրիշի ապրանք. մանավորապես՝ ուրիշի հավ». վերջինս Շահյանցի բառարանում կա «օղտար» ձևով։

Մ.—Ծանձրահոտ>ղի՛նձի՛ըմ՛ոուտ։

Կ.—Հրապարակ>հըրկըպարակ, որ գործածվում է միայն՝ հըրկըպարակ նանիլ «հռչակվել» դարձվածքում. համեմատել՝ վրացերեն urakparaki.

242. Պետք է հիշել նաև ձայնավորների հավելումը, որ գտնում ենք սակավաթիվ բառերում։ Չհաշվելով ը և ի՝ ձայնավորների հավելումը, որ կատարվում է ամեն դեպքում, երբ երկու կամ ավելի բազաձայններ կուտակված են լինում մի վանկում (ինչպես՝ ցնկնել>ցըննգըննէլ, խրանել>խըրրընէլ, քաղցրանալ>քըխցըրանիլ, ծանձրանալ>ծի՛նձի՛րանիլ և այլն), գըտնում ենք ձայնավորների հետևյալ հավելումները.

Ի.—Ագահ>ակահի։

Օ.—Ապրշում>պըրօշում։

Է.—Կճղակ>կըճէղակ, փրփրեմ>պըրպէրան։

Ըէ.—Ջսակ>քըէսակ։

9. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

243. Մի խումբ բառերում որոշ բազաձայններ կրկնվել են, մեծ մասամբ առաջ բերելով իմաստի սաստկացում. Այդ կըրկնուԹյուններն են.

ա) Գոյականներ.—Դռուն>դըռռօն «դուռն ծուչունըր», երախ>ըռռէխ, հայհոյել>հիլլէ, ոսիլ>հուփփէ, վիլայ>վէլլէ, անապ>աննաբ «մամաճ պտուղը», առակ>առռակ «խայտառակություն», ոլոր>հոլլուր, քառասունք>քըռասսօնք, գավառական՝ առիծ>ձռռէ «խիստ, խակը, հենց», սալոր>շի՛լլուր, շի՛լլըր, սալոր(են)ի>շի՛ւլի՛րի։

բ) Թվականներ.—Իբրև կանոն բոլոր տասնավորների ս, ց բազաձայնները կրկնվում են. ինչպես՝ տասը. քըսսան, արասսուն, քըռասսուն, իցցուն, վացցուն, ըխաընասսուն, ըծասսուն,

ինչասսուն, Բացի դրանցից կրկնված են՝ ութեքին>ըթթէքէն, վեցեքին>վըցցէք էն, երեքին>իրիքքէն։

գ) Բայեր.— Զռալ>զըռռալ, կետել>կէտտիլ «հանկարծ փախչել», հասանել>հասսիլ (և՝ հասիլ), մխալ>մըխխալ, սողալ>սըզզալ, գոռալ>գի՛ռռալ, դղրդալ>դըղդրդալ, ուռիլ>օռռիլ, տրոփել>թըրթփալ, կաթել>կըթթալ, ոլորել>հի՛լլուբիլ, լնուլ>լի՛ցցիլ, խորացնել>խըռոըցանիլ, ծագել>ծէքքիլ, ճաքել>ճէքքիլ, շեռել>շըռռէլ «մխրճել», շեռալ>շըռռալ «թափվել», վզալ>վըզզալ։

Դրանք, ըստ մեծի մասին, բնաձայնական և չեզոք սեռի բայեր են։

դ) Ածականները.— Ամէն>ուռմէն, հեռի>հէռռաւ։

ե) Մակբայները.— կամաց>կամմաց։

10. ԴԻԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

244. Ամենից շատ տեղափոխվել է և բազաձայնը. ինչպես՝ ականջ>անգուճ, արմունկ>արմունգ, զոքանչ>զէնքուճ, արեգակն>արեգնակ>բէնակ, հըրէնակ, բալանի>բի՛լլանի, Քոնիբ>Թուբան, Քոնրատուն>Թըրնատօն։ Այգպես և՝ ադեղն>անէղ (և՝ աղէղնը)։

245. Ր բազաձայնը տեղափոխվել է հետևյալ բառերում. գատարկ>դէրատակ, կամուրջ>կիւրմանջ, կապերտ>կարպէտ, պղտոր>պըրտուղ, պղտորել>պըրտուղիլ, ներհակ>նէհրակ «հակառակ», բրհել>բի՛հրիլ։

246. Մյուս բազաձայնների տեղափոխության համար ուշնանք հետևյալ օրինակները.

բխ>խտ.— Քթխամոր>Քըխթըմուր>Քըխտըմուր.

ճք>ղչ.— կնճիթ>կընգիչ.

խս>սխ.— խստոր>սըխտուր.

շխ>խշ.— աշխարհ>ախշարք, աշխատել>ախշատիլ.

շխ>խշ.— ոչխար>ուխչար, ոխշարակն>ըխչրըակնը, Ոխշբևան>Հխչրբէվան (տեղանուն).

քս>սկ, սխ.— փուքս>փսակ, Ակրաքս>Ակրասխ.

փթ>բփ.— փեռուր>Քէփուռ, փեռբանանել>բի՛փի՛ռանիլ։

11. ՍՂՈՒՄ

247. Մի խումբ շատ գործածական բառեր ժամանակի ընթացքում ենթարկվել են սղման (կրճատման). դրանք մեծ մա-

սամբ բարդ բառեր են, որոնք այժմ, սղման հետևանքով, զբրկվել են բարդության բաղադրիչների անկախ գիտակցությից և դարձել են պարզ բառեր։ Այսպես՝ հօրեղբայր>հէրբար, հօրաքոյր>հաքուր, թագաւորաքոյր>թի՛գվաքուր, ծխահամել>ծըխամիլ, գերեզմանատուն>գի՛ըի՛զմանօն։

Սղման ենթարկված պարզ բառերը երկուսն են միայն. լինել>նիլ, ծածկել>ծըկիլ։

12. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

248. Ի մի ամփոփելով բաղաձայնների կրած փոփոխությունների մասին մինչև այստեղ ասվածները, գալիս ենք այն եզրակացության, որ հակառակ ձայնավորներին, որոնք երբեմն այնքան են փոփոխված, որ արդի ձևի և գրաբար հայերենի կապն առաջին հայացքից դժվար է զգալ (օրինակ՝ գայլ>գէլ, վարդավառ>վէրդէվէր, սէզ>սազ, ծով>ծավ և այլն), բաղաձայնները հարազատորեն պահպանված են։ Նույնիսկ ձայնեղները, որ ը-ից հետո հայերեն բարբառների մեծագույն մասում վեր են ածվում խուլերի կամ շնչեղ խուլերի, Մեղրու բարբառում հարազատորեն պահպանված են նաև այդ պարագայում։ Մեղրու բարբառում բաղաձայնների կրած փոփոխություններն ունեն մանակի բնույթ և ըստ մեծի մասին բացատրվում են առնմանություամբ և տարնմանությամբ։ Բաղաձայնների կրած փոփոխություններով, ինչպես շեշտված է արդեն, Մեղրու բարբառը զուգընթաց է Ագուլիսի բարբառին. համեմատելով այդ փոփոխությունները Մեղրու և Ագուլիսի բարբառներում, վերջինիս համար օգտվելով սրբոփ. Աճառյանի ուսումնասիրություններից, գտանք մի քանի աննշան տարբերություններ միայն. դրան հակառակ, նույնություններն այնքան շատ են, որ հիշյալ ուսումնասիրության «Բաղաձայնների փոփոխությունը» գլուխը կարդալիս մեզ թվում էր, թե Մեղրու բարբառի ուսումնասիրությունն ենք կարդում։ Մինչդեռ, ամբողջությամբ վերցված, այդ երկու բարբառներն այնքան տարբեր են միմյանցից, որքան, օրինակ, Ղարաբաղի բարբառը Կարնո բարբառից, որոնք երկուսն էլ գրաբարյան ձայնեղ պայթականները խուլերի են վերածում։

Դ. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

249. Ինչպես բաղաձայնները կարող են առնմանության օրենքով իրար նմանվել, այնպես էլ ձայնավորները կարող են նմանվել իրար կամ նույնանալ՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով։ Այդ օրենքի էությունն այն է, որ բառի կազմում եղած ձայնավորներից մեկն ազդում է մյուսների վրա և նմանեցնում իրեն։ Որոշ լեզուներում (օրինակ՝ ադրբեջաներեն) այդ երևույթը միանգամայն օրինաչափ բնույթ է կրում։ Այսպես օրինակ՝ ադրբեջաներենում (ինչպես և թյուրքերենում) ձայնավորները բաժանվում են երկու կարգի՝ ծանր և թեթև. ծանր են՝ а, ы, о, у, թեթև են. ə, е, и, ө, ү։ Եթե որևէ բառի արմատական ձայնավորը թեթև է, ապա այդ բառի մյուս բոլոր ձայնավորները, ինչպես և բառին ավելացող ածանցների և վերջավորությունների ձայնավորներն էլ պետք է թեթև լինեն, և՝ ընդհակառակն։ Օրինակ՝ сөз «խոսք» և бағ «այգի» բառերից կարելի է կազմել сөз-лəр-им-из-дəн «մեր խոսքերից», бағ-лар-ым-ыз-дан «մեր այգիներից» ձևերը, որոնք ունեն չորս նույն մասնիկները, բայց առաջինում բոլորը թեթև ձայնավորներով են, համապատասխան արմատական թեթև ձայնավորին, իսկ երկրորդում՝ բոլորը ծանր ձայնավորներով՝ արմատական ծանր ձայնավորին համապատասխան։

250. Թեև հայերենում առհասարակ ձայնավորների ներդաշնակության օրենքը չկա, սակայն մի քանի բարբառներում այդ երևույթը նկատվում է (Ագուլիս, Մարաղա, Կիլիկիա)։

Մեղրու բարբառում ևս առկա է ձայնավորների ներդաշնակության օրենքը. բազմաթիվ հնչյունական փոփոխություններ կան, որոնք բացատրել կարելի է միայն այդ օրենքով։

251. Ձայնավորների ներդաշնակությունը, բաղաձայնների առնմանության պես, կարող է լինել երկու տեսակ՝ մասնակի և լրիվ։ Ներդաշնակությունը մասնակի է, երբ թեթև ձայնավորի ազդեցությամբ մյուսներն էլ թեթև են դառնում, կամ՝ ընդհակառակը. այդպես է ադրբեջաներենում։ Ներդաշնակությունը լրիվ է, երբ բառի որևէ ձայնավորը՝ ազդելով մյուսների վրա, բոլորովին նույնացնում է իրեն. օրինակ՝ երգում > ирғиим, սապոն > աուպուն և այլն։ (Բոլոր օրինակները տես §§ 259, 260-ում)։

Ձայնավորների ներդաշնակությունը լինում է առաջընթաց և հետընթաց. ներդաշնակությունն առաջընթաց է, երբ բառի առաջին վանկի ձայնավորն է ազդում հաջորդների վրա, և հետընթաց, երբ վերջին վանկի ձայնավորն է ազդում նախորդների վրա։

Մեզրու բարբառում կա և՛ առաջընթաց, և՛ հետընթաց ներդաշնակություն, բայց եթե առաջընթաց ներդաշնակությունը տարածվում է բոլոր ձայնավորների վրա, ապա հետընթաց ներդաշնակության ենթակա է գրեթե միայն ը ձայնավորը, որ հաջորդ ծանր ձայնավորներից առաջ վկայում ը, եթե ձայնավորներից առաջ գառնում է ի՝. ինչպես՝ ալևոր>հըլէվուր, լուացք>լըվասկ. բայց՝ ալևորութիւն>հի՝լի՝վի՝րթին, լուացք>լի՝վից և այլն։

252. Մեզրու բարբառում ծանր են ա, է, ը, ըէ, օ ձայնավորները, եթե են ա՝, ի՝, ո՝, ու՝ ձայնավորները։ Ինչ վերաբերում է ի ձայնավորին, ապա նա ընդհանրապես թեթև լինելով, չեզոք դիրք է գրավում բայերի անորոշ դերբայում և -ութիւն>-օթին ‖ -ըթին մասնիկում. այսինքն՝ այդ դեպքերում նա կարող է լինել և՛ ծանր, և՛ թեթև ձայնավորներից հետո։

Սույն աշխատության հիմք կազմող բառացանկիս մեջ, չհաշված միավանկ բառերը և կրոնական ու գրական փոխառությունները, ընդամենը կա 762 բառ, որոնց բոլոր ձայնավորները ծանր են, և 207 բառ, որոնց բոլոր ձայնավորները թեթև են։ Այս հաշվի մեջ չեն մտել այն բառերը, որոնք անորոշ դերբայում կամ -ութիւն մասնիկում ունենալով ի պատկանում են չեզոք բառերի շարքին, ինչպես՝ բածիլ, մըռանիլ, հարբիլ, հի՝լըմբիլ, ըրխօթին, բի՝ծրծթին և այլն։

Ավելորդ համարելով թվել այդ 969 բառերը, հիշում ենք միայն մի քանի հետաքրքրական ձևեր. ամաչկոտ>հըմանչկուտ, չամիչ>չօմէնչ, ջերմ ու տենդ>ջըրմըտանդ, բոխի>բուխ, թոնրատուն>թըրնատօն, այսօր>ասմր, այլ այսօր>ի՝լասմր «հաջորդ շաբաթվա այս օրը», ալիւր>ալմր, ոլոր>հալմր, արձակ>հարջակ, այնը>անդմր կամ ընդուր «հրա», որձակ>մրձակ և այլն։

Ի ձայնավորի համար կարելի է հիշել. արժան>իժան՝ ինքը>ինքի՝, (առ) աւել>աւել>իվիլ, ծիրանի>ծի՝րի՝նի՝, որոնց

մեջ ի-ն իբրև թեթև ձայնավոր ազդել է մյուսների վրա և նրանց էլ դարձրել թեթև։ Ասել>ասիլ, աղքատութիւն>ըղկըաօթին, դիշութիւն>գի՛շօթին, կարդալ>կ՚ըրդիլ, ավելացնել>ի՛վի՛լցնիլ, որոնցից առաջին երեքում ծանր ձայնավորների հետ է, մյուսներում՝ թեթև։

253. Հետընթաց ներդաշնակության համար կարելի է հիշել լուացք>լըվասկ կամ լի՛վնց, բարեկենդան>բի՛րգի՛նգան, երեսլուայ>իրիսլի՛վն «անլվա», ընկեր>հընգէր, խնամի>խընամէ, ծակծակոտ>ծըկծըկուտ, որոնցից առաջին երեքում ը-ի փոխարեն ունենք ի՝ հաջորդող թեթև ձայնավորների ազդեցությամբ, իսկ վերջին երեքում՝ ը, հաջորդ ծանր ձայնավորների ազդեցությամբ։

254. Բարդ բառերը ձայնավորների ներդաշնակության տեսակետից բաժանվում են երեք կարգի։ Առաջին կարգին պատկանում են այն բառերը, որոնց երկու եզրերն էլ ծանր են, կամ երկուսն էլ՝ թեթև. դրանք բնականաբար բարդության մեջ պահպանում են իրենց ծանր կամ թեթև ձայնավորները, իսկ հոդակապն էլ նմանվում է դրանց. ինչպես՝ ըխպախուտ (ախպ, խուտ) «աղրախուտ», ըղաման «աղամանդ», մըտնաշօնչ (մատնը, շօնչ), «մատնաշուխնչ», ուրինլի՛վն (ուրին, լի՛վնց) «արյունլվա», չի՛լչի՛ըչիր (չի՛լլիր, չիր) «սալորաչիրք» և այլն։

Երկրորդ կարգին պատկանում են այնպիսի անհոդակապ բարդությունները, որոնց բաղադրիչներից մեկը ծանր ձայնավորով է, մյուսը՝ թեթև։ Այդպիսի բարդություններում բաղադրիչները դարձյալ պահպանում են իրենց անկախ որակը. ինչպես՝ գի՛ռնարած (գծոնը, արածիլ) «գառնարած», իըլխանդնգնկ (խուր, խանդակ) «խորդուբորդություն», ուրինքախախ (ուրին, քաքախ) և այլն։

Երրորդ կարգին պատկանում են այնպիսի հոդակապով բարդությունները, որոնց մի եզրի ձայնավորները թեթև են, մյուսինը՝ ծանր։ Այդ կարգի բարդություններում եզրերը պահպանում են իրենց անկախ որակը, իսկ հոդակապը նմանվում է առաջին եզրի աստիճանին, ինչպես՝ ըղաջիր «ադաջուր», ճըրկալիա «ճրագալույս», կրունգըգ «խոսքի քևերի կարկատանները», ճըղնըկուտուր «ճյուզակոտոր», լի՛սամուտ «լուսամուտ», գի՛նգի՛կըծըկ «դունչ ու կծիկ», գի՛գ՚լուխ «գագաթափոխ»,

բի՝ժժաքաղ «բոժոժաքաղ» և այլն։ Այդ բարդություններից առաջին չորսում հոդակապը ծանր է (ա կամ ը) համապատասխան առաջին եղերի ձայնավորներին (ապ, ճրրակ, կօռնը, ճօղնը), հաջորդ չորսում հոդակապը թեթև է (ա կամ ի)՝ համապատասխան առաջին եղերի թեթև ձայնավորներին (լիւս, գիւնգ, դի՝գիւլ, բուժուժ)։

255. Ածանցավոր բառերի մեջ սովորաբար մասնիկը հարմարվում է բառին և փոխում իր ձայնավորը՝ համապատասխանեցնելով բառի ձայնավորներին, որով և յուրաքանչյուր մասնիկ ունենում է երկու ձև. ինչպես՝ -ուտ ‖ -ութ, -ածուց ‖ -ածից, -ածիլ ‖ -ածիլ, -օքին ‖ -ըքին և այլն։ Օրինակ՝ ցեխոտ>ցէխուտ (ցէխ-ուտ), ջրոտ>ջի՝րիւտ (ջիւր-ութ), խրտանոց>խրտանուց (խուտ-անուց), ազգատութիւն>ըզկըտօքին (ակատ-օքին), թուլութիւն>քի՝լօքին (թիւլ-ըքին) և այլն։ Այդպես և հոլովման ու խոնարհման վերջավորություններն են, որոնց մասին ևս համապատասխան կլուսնեցնենք։

256. Հակառակ նախորդ կանոնին, անկախ դիրք են գրավում՝

-վուր, ակ- վերջածանցները, որոնք անփոփոխ են ՄՀում թե՛ ծանր, և թե՛ թեթև ձայնավորներից հետո. ինչպես՝ գունդուլակ>գի՝նդըլակ, լուսաւոր>լի՝սաւուր, գլխաւոր>գըլխաւուր և այլն։

-ուղ(<ող) դերբայական վերջավորությունը՝ գարձյալ անփոփոխ. ինչպես՝ բերող>բերուղ, ուտող>օտուղ և այլն։

-ան բացատրական նախամասնիկը, որ, ինչպես ձայնավորների անկման օրենքին չէր ենթարկվում (տես § 12), այնպես էլ այստեղ պահպանում է իր անկախ ու անփոփոխ ձևը, ինչպես՝ անհոտ>անհուտ, անդադար>անդըդար, աներես>անիրիս, անվեզուլ>անվիւզիւլ և այլն։

257. Վերոհիշյալներին հակառակ մի խումբ բառեր բացառություն են կազմում, այսինքն՝ խառն կերպով ունեն ծանր և թեթև ձայնավորներ, սակայն դրանք իրոք բացառություններ չեն, այլ արդյունք հետևյալ պատճառներից մեկի ու մեկի։

ա) Ջնջված գ, կ, ք բաղաձայններից հետո ա, ու, օ, ը լինել չեն կարող, այլ միշտ՝ դրանց համապատասխան ա, ի՝, ե, ու թեթևները, անկախ բառում եղած մյուս ձայնավորների աս-

տիճանից. ինչպես՝ գագաթն>գէգ՛ա՛թ, ժանգոտ>ժէնգ՛ո՛տ, կապուլտ> կ՛ապ՛ո՛ւտ, թքոտ>թէք՛ո՛տ, զոքանչ>զէնք՛ո՛ճ և այլն։

բ) § 18-ի համաձայն ա ձայնավորից առացված է-ն, չհշտից առաջ ընկնելով, դառնում է ի՝, անկախ բառում եղած մյուս ձայնավորների թեթև կամ ծանր լինելուց. ինչպես՝ զանգակ> զէնգ՛ա՛կ, սեռ. զի՛նգէկու, ճակատ>ճէկատ, սեռ. ճի՛կատու, ձաշ> ճէշ, *ճաշպարզի>ճի՛շպարզի և այլն։ Այս մասին պետք է նկատել հետևյալը. շհշտից առաջ եղած ձայնավորները վերածվում են ը կամ ի՛-ի. սովորաբար ը դառնում են ծանր ձայնավորները, իսկ ի՛ թեթև ձայնավորները. հակառակը կարող է լինել բառի մյուս ձայնավորների ներդաշնակությամբ միայն, այսինքն՝ ծանր ձայնավորները կարող են դառնալ ի՛ հաջորդող թեթև ձայնավորներից առաջ, և ընդհակառակն, Արդ, է-ն իբրև ծանր ձայնավոր սովորաբար տալիս է ը, կամ, եթե թեթև ձայնավորներից առաջ է, տալիս է ի՛։ Վերևում հիշված ա>է>ի՛ փոփոխությունը մե՛ծ ծանր, մի՛ մեծ թեթև ձայնավորներից առաջ, առերևույթ հակասում է այս օրենքին. սակայն, մեր կարծիքով, այդ ոչ թե ապօրինի, պատահական մի բան է, այլ երբեմնի անցողիկ վիճակի մնացորդ։ Այսպես՝ բնականաբար ա>է փոփոխությունը մի անգամից չի կատարվել, այլ նախ՝ ա-ն փափկանալով դարձել է ա, և ապա՝ վերջինս, ժամանակի ընթացքում՝ վերածվել է-ի։ Ահա հենց այն ժամանակ, երբ ա-ից առացված ա-ն թեթև լինելով՝ շհշտից առաջ կանոնավորապես տվել է ի՛, հետագայում՝ ա>է փոփոխությունից հետո էլ այդ ի՛-ն մնացել է անփոփոխ։ Այսպիսով, իբրև բացառություն թվացող է>ի՛ փոփոխությունն իրականում ոչ միայն պատահականություն չէ, այլև հրանալի կերպով ներկայացնում է ա>է հնչյունափոխության միջին աստիճանը։

գ) Եթե որևէ ձայնավոր հնչյունափոխական այս կամ այն օրենքի համաձայն պետք է վերածվի մի այլ հնչյունի (օր. ա>է, ե>ի, ի>է, այ>է և այլն), ապա՝ այդ օրենքը կատարվում է անկախ բառի մյուս ձայնավորների ձանր կամ թեթև լինելուց. ինչպես՝ անալի>նէլէ, ջուրի>ջիւրէ, հայելի>հիլէ և այլն, որոնց մեջ բառավերջի ի-ն համաձայն § 69-ի դարձել է է, թեև նախորդ ձայնավորները թեթև են։

Ի դեպ, սրանից հետևում է նաև, որ ձայնավորների մաս-

Նակի ներդաշնակությունը կատարելապես տարածվում է ա, ու, ո, ը և ա, ե, ի, ö, ի՝ ձայնավորների վրա, որոնք կարող են քե իրենց նմանեցնել մի ուրիշ ձայնավոր, և քե իրենք նմանվելով սպես՝ ա-ն կարող է նմանեցնել իրեն ե, ö, ի՝ ձայնավորները և գառնալ՝ ու, ո, ը և ընդհակառակն։ Մինչդեռ է, ի ձայնավորները գերազանցապես նմանեցնողի դերում են հանդես գալիս, քան նմանվողի, որովհետև, եթե ա, ո, ու, ը ձայնավորները ներդաշնակությամբ կարող են վերածվել իրենց տարբերակներին (ա, ö, ե, ի՝), ապա՝ է, ի ձայնավորները, չունենալով այդպիսի տարբերակներ՝ կամ չկիտի նմանվեն, և կամ, նմանվելով՝ հակառակ հնչյունափոխական այս կամ այն օրենքին, պետք է վերածվեին որակապես մի այլ հնչյունի. այդ կարգի օրինակները քիչ են և մեծ մասամբ պատկանում են լիակատար ներդաշնակության։

258. Ինչպես բոլոր հնչյունափոխական օրենքներին, այնպես էլ ձայնավորների ներդաշնակության օրենքին չեն ենթարկվում գրական ու կրոնական փոխառությունները. ինչպես՝ անխաւ>անիրավ, արքայութիւն>արքայություն, փիլոն>փիլօն և այլն։

259. Ձայնավորների լիակատար ներդաշնակության մասին խոսելիս, պետք է նախապես նկատել, որ միայն մի քանի ձայնավորներ են, որոնք իրենց են նմանեցնում մյուսներին. այսպես՝ իրենց են նմանեցնում ամենից ավելի ու և ա-ն, ապա՝ ի-ն և շատ սակավ՝ ա-ն, Մյուս կողմից՝ ը և ի՝ ձայնավորները միշտ հանդես են գալիս նույնացմանը ենթարկվողների դերում։

Իբրև օրենք պետք է արձանագրել, որ ու ձայնավորը լիովին իրեն է նմանեցնում իրենից անմիջապես առաջ կամ հետո եղած ը ձայնավորը. ինչպես կիկու>կուկու, ոսկր>ուսկուս, կաոր>կուսուր, կոծոտել>կըրծուտիլ, կուռծոտիլ, որոշել>ուռուշիլ, սղոց>սուղուց, կնգուղ>կունգուղ, կոծոխուր>կըրծուխուր, կուծուխուր, խաստր>սուխտուր, կուպր>կօպըր, կօպուր, ծունկն>ծօնգնը, ծօնգուն, մուկն>մօկնը, մօկուն, ձուկն>ձօկնը, ձօկուն, սունկն>սօնգուն, ունկն>օնգնը, օնգուն և այլն։ Այդ բառերից մի մասն ունի երկու ձև՝ որոնցից մեկում ը, մյուսում ու է արտասանվում, իսկ մյուս մասը՝ միայն մի ձև՝ որի մեջ ու-ն արդեն վերջնականապես հաղթել է (կունգուղ, սուղուց, սօնգուն,

ուսկուռ և այլն)։ Ի դեպ, բերված օրինակներից վերջին վեց բառերի ը>ու փոփոխությունից կարելի է եզրակացնել, որ ու>օ հնչյունափոփոխությունն ավելի ուշ է կատարվել, քան ձայնավորների ներդաշնակությամբ՝ ը>ու, այլապես՝ նույնացման արդյունքը ու չէր լինի, այլ՝ օ։

Ճիշտ այդպես էլ ա ձայնավորն իրեն է նմանեցնում հաջորդ կամ նախորդ վանկի ը, ի՝ ձայնավորները. ինչպես՝ բըրդոտ>բի՛րդուտ, բաւրդուտ, կճուճ>կուճուճ, մրջիւն>մուրջուն, փշուր>փուշուր, ճճի>ճուճուճ, բորբոսնել>փի՛փուսնիլ, փուփուսնիլ, զրոյց>զուրուց և այլն։

260. Այդ կանոններից դուրս, իբրև նույնացման մասնակի դեպքեր, ունենք՝

ի, ա, այ>ու.—Ոզնի>կուզնու, այգուց>ուդուց «վազը», սապոն>սուպուն, արկոյ>ուրքուց «շապիկ», ուղարկել>ուղուրկիլ>ղուրկիլ։

ա, ո, ե, եա, ու>ա.—Վաբդավառ>վարդավարի, բոլոր>բաւլաւր, ոլոր>հաւլաւր, ոչիլ>հաւչալ, երդում>ալրդում, իրեար>աւրեար>ալրար, ընդ իրեար գալ>ընդ իւրեար գալ>գաւրա(ը) գալ «շարժվել», լեզու>լաւզա։

այ, յա, ը>ի.— Այգի > էգի > իգի, յաւել > էվիլ > իվիլ «ավելի», բլիթ>բի՛լիթ, բիլիթ, բրինձ>բի՛րինձ, բիրինձ, գգիր>գի՛գիր, գիգիր, գղել>գի՛գիլ, գիգիլ։

ա>է.— Առաջ, յառաջ>էռաջ>էռէջ։

ե>ա.—Տառեխ>տառախ։

261. Այս բոլորից հետո մենք այժմ կարող ենք բացատրել ձայնավորների փոփոխությունների մեջ հիշված բազմաթիվ «բզդումները», որոնք ոչ այլ կերպ են առաջացել, քան ևթե ձայնավորների ներդաշնակությամբ։ Ձայնավորների ներդաշնակությամբ են բացատրվում §§ 22 և 28-ում հիշված ա>ա փոփոխությունը, § 78-ում մի քանի բառերի ո>ու, §§ 93 և 95-ում՝ ու>ու, § 106-ում՝ այ>ա փոփոխությունները։ Բոլոր այդ փոփոխությունները, որոնք համապատասխան տեղերում բերված են իբրև մասնավոր դեպքեր կամ իբրև կանոն՝ սահկայն օրինակների քչության պատճառով դժվար է եղել հաստատել, արդարացվում են այս օրենքով։ Վերջապես, ձայնավորների ներդաշնակության օրենքով հաստատվում է § 70-ով

սահմանված օրենքը, ըստ որի բառավերջի շեշտված ի-ն ը-ից հետո դառնում է է, իսկ ի՝-ց հետո մնում՝ ի. այդ կանոնը հաստատելու համար բերված օրինակները քիչ են, բայց այդ քիչ օրինակներն էլ, վերևում ասվածների հետ միացնելով, բավական են՝ սահմանումը համոզիչ դարձնելու համար.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՈԳՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

262. Մեզրու բարբառում հոգնակին կազմվում է *ք(ք՝)*, *ար*, *ա՛ր*, *էր*, *ե՛ր* մասնիկներով։

263. Քո մասնիկն ստանում են է և ի-ով վերջացող բազմավանկ բառերը. ինչպես՝ *ածելի>ծիլէ*, հգն. *ծիլէք՛*. *լեղի>լէղէ*. հգն. *լէղէք՛*. *խնամի>խընամէ*, հգն. *խընամէք՛*. *հացի>հացէ*, հգն. *հացէք՛*. *քենի>քէնէ*, հգն. *քէնէք՛*. *կոբի>կուրէ*, հգն. *կուրէք՛*, *հայելի>հիլլէ*, հգն. *հիլլէք՛*. *ջորի>ջո՛ւրէ*, հգն. *ջո՛ւրէք՛*. *երախայ>բախէ*. հգն. *բախէք՛*. *ոսկի>ուսկէ*, հգն. *ուսկէք՛*. *այգի>իգ՛ի*, հգն. *իգիք՛*. *խնձոր(են)ի>խընձըրի*, հգն. *խընձըրիք՛*. *քզ(են)ի>քըզի*, հգն. *քըզիք՛*. *գինի>գինի*, հգն. *գինիք՛*. *ճօճ(ի)>ճօնջի*, հգն. *ճօնջիք՛*. *օրդուբաց ի>ո՛ւրդվա՛ծ ի*, հգն. *ո՛ւրդվա՛ծիք՛* և այլն։

Ծանոթություն.—Ի-ով վերջացող բառերը հաճախ նաև ստանում են ե՛ մասնիկը. ինչպես՝ *իգ՛իք՛* կամ *իգ՛ինէ* «այգիներ», *բըռըշնիք՛* կամ *բըռըշնինէ* «բոնչենիներ», *քըզիք՛* կամ *քըզինէ* և այլն, բայց *որտեղացի* լինելը ցույց տվող *-ացի* մասնիկով բառերը ստանում են միայն *-ք՛* և ոչ երբեք *-ե՛ր*, ինչպես՝ *ո՛ւրդվա՛ծիք՛* «օրդուբաց իներ», *դէշտըցիք՛* «գաշտեցիներ», *քէյըցիք՛* «քեյացիներ» և ոչ՝ *ո՛ւրդվա՛ծիքէ*, *դէշտըցինէ*, *քէյըցինէ* և այլն։

264. *-ար* ‖ *-ա՛ր* մասնիկներն ստանում են բազաձայնով վեր-

ջացող միավանկ բառերը. -ար առանում են այն բառերը, որոնց վանկարարը ծանր է (ա, է, ե, օ, ու), ինչպես՝ արտ>արտ, հգն. արտաբ. բահ>բէհ, հգն. բէհար. գետ>գէտ, հգն. գէտաբ. քար>քար, հգն. քարաբ, բան>բէն, հգն. բէնար. դար>դէր, հգն. դէրար գլանջերը». հայր>հար, հգն. հարաբ. աք>հաք, հգն. հաքար «ոտաքեր» և այլն։

-ար առանում են այն բառերը, որոնց վանկարարը թեթև է (ա, ի, ի՝, ո, ու). ինչպես՝ բուրդ>բուրդ, հգն. բուրդաբ. գայլ>գայլ, հգն. գայլար. լուծ>լուծ, հգն. լուծաբ. ուլ>հուլ, հգն. հուլար. սիւն>սուն, հգն. սունաբ. վարդ>վարդ, հգն. վարդաբ. գինձ>գինձ, հգն. գինձաբ. թել>թիլ, հգն. թիլաբ և այլն։

Ծանոթություն 1.—Գ, կ, ք քամյնացածներով վերջացող միավանկ բառերը, ըստ §257, ա-ի անխտիր առանում են -ար մասնիկը, անկախ բառի ձայնավորի թեթև, կամ ծանր լինելու հանգամանքից, ինչպես՝ նիգ>լէնգ. հգն. լէնգաբ «լծակներ». գիրկ>գիրգ, հգն. գիրգաբ դինգ>դէնգ, հգն. դէնգաբ. քուք>քէք, հգն. քէքաբ. ձեռք>ձիք, հգն. ձիքաբ. պէտք>պէթկ, հգն. պէթկաբ, պլորկ>պէրկ, հգն. պէրկաբ և այլն։

Ծանոթություն 2.—Նը վերջացող մեկուկես վանկանի բառերը նույն կանոններով առանում են -ար կամ -աբ մասնիկները, կորցնելով իրենց վերջահանգ ը ձայնավորը. ինչպես՝ ակն>ակաբ, հգն. ակնար. բեռն>բէռնը, հգն. բէռնար. կամն>կամաբ, հգն. կամնար. հարսն>հարսնը, հգն. հարսնար. դաղձն>դէղնը, հգն. դէղնար. խէժ>խէժնը, հգն. խէժնար. որդն>ուռնը, հգն. ուռնաբ. գառն>գոռնը, հգն. գոռնաբ. եղն>իղնը, հգն. իղնաբ և այլն։

Ծանոթություն 3.—«Նը» հանգող այն մեկուկես վանկանի բառերը, որոնք ունեն ո ձայնավորը՝ ստացված գրաբարյան ու-ից, հոգնակին կազմում են էր մասնիկով, որի ժամանակ իրենց ո ձայնավորը դարձնում են ը. ինչպես՝ նուռն>նռռնը, հգն. նըռնէր. կուռն>կռռնը, հգն. կըռնէր. ծունկ>ծռնգնը, հգն. ծըռնգնէր. մուկն>մռկնը, հգն. մըկնէր. ձուկն>ձռկնը, հգն. ձըկնէր. ունկն>ռնգնը, ընգնէր և այլն։ Վերջին չորս բառերի

կրկնակ (ծօնգուն, մօկուն, ձօկուն, օնգուն) ձևերի մասին տես §§ 265 բ, 266, ծանոթ. 7 և § 284։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 4.— Ձայնավորով վերջացող միավանկ բառերը հոգնակին կազմում են -անք ‖ -ացնք մասնիկներով, որի ժամանակ հնչման և վերջավորության միջև ավելանում է յ ձայնակապը՝ է-ից և ի-ից հետո, իսկ եթե բառը վերջանում է ու կամ ոՒ-ով, ապա դրանք համապատասխանորեն վերածվում են ով կամ իվ-ի ինչպես՝ ձի>ձիք, հգն. ձիյանք. քի>քիք, հգն. քիյանք (նաև՝ քէյար). ձու>ձուք, հգն. ձըվանք, լու>լուք, հգն. լի՛վանք. լի>լիք բառը հոգնակին կազմում է լիքըը ձևից՝ -ըք մասնիկով՝ լիքըքնէ։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 5. -ար ‖ -ացր մասնիկների ա ձայնավորը բացի ուղղական ու հայցական հոլոմներից, մյուսներում դառնում է է. առերևույթ տարբեր քվացող այդ ձևերը միանգամայն օրինական են և փայլուն կերպով հաստատում են հնչյունական օրենքների ընդհանրությունը։ Այսպես. քե ուղղական-հայցականի-ար ‖ -ացր, և քե մյուս հոլոմներն էր մասնիկներն առացվել են գրաբարյան -եար մասնիկից։ Ուղղական ու հայցական հոլոմներում գրաբարյան եա երկբարբառը, լինելով շեշտակրող փակ վանկում, ըստ § 121-ի դարձել է ա ‖ ացր. ինչպես՝ քարեար>քարար, ուսեար>օսար, աքեար>տաքար, բոյթեար>բռնէցր, գայլեար>գնէլցր և այլն։ Մյուս հոլոմներում եա-ն, ընկնելով շեշտից առաջ, դարձել է ե, ըստ գրաբարյան հայտնի կանոնի, իսկ այդ ե-ն էլ բարբառումս ըստ § 39-ի, դարձել է է, ինչպես՝ քարեար -ու>քարերու>քըրէրու, ուսեար -ու>ուսերու>օսէրու, տաքեար -ու>տաքերու>տըքէրու, բոյթեար -ու>>բոյթերու>բռնէրու, գայլեար-ու>գայլերու>գնէլէրու և այլն։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 6.—Չնայած որ բացի ուղղական ու հայցական հոլոմներից, մյուս բոլոր հոլոմներում շեշտն ընկնում է հոգնակի -էր մասնիկի վրա, այնուամենայնիվ, հակառակ ընդհանուր կանոնի, բառի շեշտից առաջ ընկնող ձայնավորը որևէ փոփոխություն չի կրում.

ինչպես՝ ուղղ. էծար, սեռ. էծէրու ‹այծերի›, ուղղ. բէհար, սեռ. բէհէրու ‹բահերի›, ուղղ. բուխակար, սեռ. բուխակէրու ‹բոդկերի›, ուղղ. ձիքւար, սեռ. ձիքւէրու ‹ձեռքերի›, ուղղ. գէտար, սեռ. գէտէրու ‹գետերի›, ուղղ. սունար, սեռ. սունէրու և այլն։ Բացառությունն են կազմում միայն ակնը ‹աչք›, հաք ‹ոտք›, քար, քիլ, լուծ ‹լուծ›, հճլ, ուլը ‹ուլ› բառերը, որոնց ձայնավորները, շեշտից առաջ ընկնելով, դառնում են ը կամ ի՝. ը դառնում են ծանր իսկ ի՝ դառնում են թեթև ձայնավորները. ինչպես՝ ուղղ. ակնար, սեռ. ընկնէրու, ուղղ. հաքար, սեռ. հրքէրու, ուղղ. քարար, սեռ. քըրէրու, ուղղ. քիլար, սեռ. քի՛լէրու, ուղղ. լուծար, սեռ. լի՛ծէրու, ուղղ. հճլար, սեռ. հի՛լէրու, այդպես և՝ գործիական, բացառական և ներգոյական հոլովներում։

265. -էր մասնիկն առանում են այն միավանկ բառերը.

ա) որոնց ձայնավորն է o, ö, ու կամ ü, բոլորն էլ՝ առացված գրաբարյան ու-ից. ինչպես՝ թուշ>թօշ, հգն. թըշէր. թուր>թօր, հգն. թըրէր, կուժ>կօժ, հգն. կըժէր. թուզ>թօզ, հգն. թըզէր. դուրք>դուրք, հգն. դըրքէր (ավելի շատ՝ դըրքարէ). ջուր>ջիւր, հգն. ջի՛րէր և այլն.

բ) որոնց ձայնավորն է է կամ ըէ, առացված գրաբարյան ի-ից, ինչպես՝ ծիրա>ծըէրա, հգն. ծըրաէր, հինգ>հէնգ, հգն. հընէր, ծիա>ծըէա, հգն. ծըաէր, վիզ>վըէզ, հգն. վըզէր, սիրտ>սէրտ, հգն. սըրտէր և այլն։

Այդպես և՝ ը ն հանգող այն երկվանկ բառերը, որոնք գրաբարում ունեցել են ու ձայնավորը. ինչպես՝ ձուկն>ձօկնը, հգն. ձըկնէր, նուռն>նօռնը, հգն. նըռնէր և այլն (տես 264, ծանոթ. 3)։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1.— Այս կարգի բառերի հոգնակի բոլոր հոլովներում էլ շեշտն ընկնում է -էր մասնիկի վրա, իսկ բառի ձայնավորը դառնում է ը։ Իրականում այս մասնիկը տարբեր՝ չէ նախորդ -ար ‖ -ըր մասնիկից. առացված հնչյունական տարբերությունը միայն շեշտի հետևանքն է. եա երկրաբառը, շեշտի տակ լինելով, պետք է բարբառումս դառնար է, իսկ գրաբարյան ու կամ ի ունեցող բառերում գրաբարի օրենքներով առաջացած սղման հետևանքով բնականաբար բարբա-

ռումս ուղղական ու հայցական հոլովներում էլ շեշտը պետք է դրվեր մասնիկի վրա։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2.—Բառասկզբում ու, օ, ո՛ (<ու) ունեցող բառերը այս կանոններին չեն ենթարկվում, այլ սառնում են -ար ‖ -ա՛ր մասնիկը, առանց հնչյունափոխության. ինչպես՝ ուղտ>օղտ, հգն. օղտար. ուս>օս, հգն. օսար. ուրդ>ո՛ւրդ «Ջրի ճամբա», հգն. ո՛ւրդաքր. ունջ>օնջ, հգն. օնջար. ուխտ>ուխտ, հգն. ուխտար (կրոնական բառ է), այդպես և՝ ուռ>ո՛ւռ, հգն. հօռար. ուլ>հո՛ւլ, հգն. հո՛ւլքր։ Միայն ունկն>օնգնը բառն ունի ընգնէր, որի համար սակայն ավելի գործածական է օնգուն ձևից հգն. օնգուննէ։

266. Նէ մասնիկն սառնում են բազմավանկ բառերը, բացի է, ի ձայնավորներով վերջացողներից. ինչպես՝ աղքատ>աղքատ, հգն. ախկատէ, ագի>հէգ՛ին, հգն. հէգ՛իննէ. աման>ամամ, հգն. ամանննէ. կատու>կատու, հգն. կատուննէ. երդուիմ>ո՛ւրդո՛ւմ, հգն. ուրդուիմէ. ականջ>անգուճ, հգն. անգուճնէ (նաև՝ ընգրճնէ). լեզու>լո՛ւզո՛ւ, հգն. լո՛ւզո՛ւննէ. բոժոժ>բո՛ւժո՛ւժ, հգն. բո՛ւժո՛ւժնէ. կամուրջ>կ՛ամրմո՛ւնջ, հգն. կ՛ամրմո՛ւնջնէ. քոնիր>քուրան, հգն. քուրաննէ. գագաթ>գէգ՛ա՛թ, հգն. գէգ՛ա՛թնէ. խաղող>խագու, հգն. խագուննէ. կաչաղակ>քըչէղակ, հգն. քըչէղակնէ և այլն։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1.—Ա ձայնավորով վերջացող բառերից մի քանիսը, բացի սովորական նէ մասնիկից, հոգնակին կազմում են նաև քո՛ մասնիկով, որի ժամանակ վերջահանգ ա ձայնավորը դառնում է է. ինչպես՝ քեռի>քէռա, հգն. քէռանէ կամ քէռէք՛ (վերջինս ավելի սովորական), մօտի>մուտա, հգն. մուտանէ և մուտէք՛, հեռի>հէռա, հգն. հէռանէ և հէռէք՛, վկայ>վրկա բառն ունի միայն վրկանէ ձևը, տղայ>տըղա բառի հոգնակին ունի տըղարք կամ տըղէրք՛ բացառիկ ձևերը։ Ադրբեջաներենից փոխառյալ ա, ո՛ վերջացող բառերը հոգնակին կազմում են ավելի շատ քո՛ մասնիկով, ինչպես՝ բալա «որդի», հգն. բալէք՛, քուլա «շան ձագ», հգն. քուլէք՛, հնդրխա «մի տեսակ ճաշ», հգն. հնդրխէք՛ և այլն։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 2.—Ու, ու վերջացող բառերը նույնպես հաճախ ստանում են ք մասնիկը. *ինչպես՝ կատուն, նաև՝ կատուք, խաղունէ և խաղուք, լուգունէ և լուգուք և այլն։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 3.—Էնէ վերջացող բառերի է ձայնավորը, որ ստացվել է գրաբարյան ա-ից (տես § 26), հոգնակի ուղղականում և հայցականում, բնկնելով շեշտից առաջ, պահպանում են իրենց է ձայնավորը, փոխանակ վերականգնելու ա-ն, ինչպես՝ կանայ>կանէնչ, հդն. կանէնչէ. ամայ>համէնչ, հդն. համէնչնէ. ճանայ>ճանէնչ, հդն. ճանէնչէ. անամայ>անհամէնչ, հդն. անհամէնչնէ. չամիչ>չօմէնչ, հդն. չօմէնչնէ։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 4.—Հոգնակի ուղղականում, ինչպես և մյուս հոլովներում, շեշտն ընկնում է մասնիկի է ձայնավորի վրա, սակայն, դրա շնորհիվ ըստ § 99-ի ենթադրվող նախաշեշտ ձայնավորների տղումը այս դեպքում չի կատարվում. *ինչպես՝ ադաման>ըդաման, հդն. ըդամաննէ. կոտը>կուտուր, հդն. կուտուրնէ. կճուճ>կիճճուճ, հդն. կիճճուճնէ. ճախարակ>ճըխարակ, հդն. ճըխարակնէ. բամբակ>բըմբակ, հդն. բըմբակնէ. մախիր>մուխըր, հդն. մուխըրնէ. մրջիւն, մրջուն>մուրջում, հդն. մուրջումնէ և այլն։* Ծղման ենթարկվող սակավաթիվ բառերի մասին տես հոլովումների հետ տրված ծանոթություններում։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 5.—Բացի ուղղականից ու հայցականից, հոգնակի մյուս հոլովներում -ենէ մասնիկի և հոլովական վերջավորությունների միջև ավելանում է ը հնչյունը. *ինչպես՝ ոչխար>ուխչար, հդն. ուղղ.-հայց. ուխչարնէ, սեռ. ուխչարընէրու, բաց. ուխչարընէրէ. ջրազաց>ջէղաց, հդն. ուղղ. ջէղացնէ, սեռ. ջէղացընէրու. բաց. ջէղացընէրէ և այլն։* Իրականում այդ, իհարկե, հավելում չէ. ուղղականի ու հայցականի -ենէ մասնիկը ներկայացնում է գրաբարյան -ան-ն (աւազանն, նամականի), որի ի ձայնավորը օրինական հնչյունափոխությամբ բարբառում դարձել է է, իսկ մյուս հոլովների -ընէր մասնիկը ներկայացնում է գրաբարյան -եան-ը (բարձրիկ-

նեալ, նաւկնեալ), որի եա երկրաբրառը շեշտից առաջ դարձել է ե դեռևս գրաբարում և բարբառումս վերածվել է-ի (դրանց մասին ավելի մանրամասն տես § 297, բ)։

Ծանոթություն 6.—Երկսից ավելի վանկ ունեցող այն բառերը, որոնք վերջանում են ը հանգով, հոգնակի կազմելու ժամանակ կորցնում են ը ձայնավորը և նե մասնիկի փոխարեն ստանում են միայն է. ինչպես՝ թիթեղն>թիթեղները, հգն. թիթեռնե. փայծաղն>փայծաղները, հգն. փայծաղնե, կուժին>կուժերը, հգն. կուժիմե. ամառն>ամառները, հգն. ամառնե. աղեղն>աղեղները, հգն. աղեղնե և այլն։ Դրանց մասնիկն, իհարկե, տարբեր չէ մյուսներից։ Ստացված առերևույթ տարբերությունը արդյունք է կրկնակ -ն-երից մեկի անկման (թիթեռնե>թիթեռնե)։

Ծանոթություն 7.—Նը հանգող երկվանկ բառերի այն կրկնձևերը, որոնց մեջ ն-ից առաջ եղած գրաբարյան գաղտնավանկ ը-ն բարբառումս դարձել է ու, հոգնակին կազմում են -նե մասնիկով, անփոփոխ պահելով իրենց ձայնավորները. ինչպես՝ սուինկն>սօնգուն, հգն. սօնգուննե. ծունկն>ծօնգուն, հգն. ծօնգուննե, ձուկն>ձօկուն, հգն. ձօկուննե. ունկն>օնգուն, հգն. օնգուննե, մուկն>մօկուն, հգն. մօկուննե։

Ծանոթություն 8.—Մեկուկես վանկանի բառերը նույնպես ստանում են -նե մասնիկը. ինչպես՝ սանր>սանդըր, հգն. սանդըրնե. ծանր>ծանդըր, հգն. ծանդըրնե, աստղ>աստըղ, հգն. աստըղնե, մանր>մանդըր, հգն. մանդըրնե և այլն։ Այդպես և՝ քաղցր>քօխացուր, հգն. քօխացուրնե. բարձր>բէձըր կամ բէձուր, հգն. բէձըրնե կամ բէձուրնե։

267. Երկրորդ եզրում միավանկ բառ ունեցող բարդությունների մի մասը հոգնակիի համար ստանում է -ար || - եր, մի մասը՝ -նե մասնիկը. Դրա համար կա հետևյալ կանոնը. եթե բարդության առաջին եզրը երկրորդի նկատմամբ կատարում է հատկացուցչի կամ որոշչի դեր (հետևաբար՝ երկրորդ եզրն էլ հանդես է գալիս իբրև գոյական՝ հատկացյալի կամ որոշյալի դեքում), ապա՝ ամբողջ բարդությունը հոգնակիի համար ստա-

նում է -ար ‖ -ար մասնիկը (ըստ ձայնավորների ներդաշնակության). ինչպես՝ սևահող>սըվահուղ (սև հող), հգն. սըվհուղար. սևաքաշտ>սըվաքաշ (=սև քաշտ), հգն. սըվըքաշար. ծալքատեղ>ծըլքատեղ (=ծալքի տեղ), հգն. ծրլքըտէղար. սամփայտ>սըմփափէտ (=սամիի փայտ), հգն. սըմփըփէտար. ճրագալոյց>ճըրըգլալիս (=ճրագի լույս), հգն. ճրըրըգլալիսար[1] և այլն. Իսկ երբ բարդության առաջին եզրը երկրորդի նկատմամբ կատարում է խնդրի դեր (հետևաբար՝ երկրորդ եզրն էլ, արտահայտված բայարմատով, կատարում է որևէ դերբայի դեր), ապա՝ բարդ բառն ստանում է -ենէ մասնիկը. ինչպես՝ դռնապան>դըռնապանէն (=դուռը պահող, հսկող), հգն. դըռնապաննէնէ. որձատու>ըռձէտու (=որձ տվող) ջանսերմ, անպատուղ, հգն. ըռձէտունէնէ. ասեղնակար>ըսըղնակար (=ասեղով կարած), հգն. ըսըղնակարնէնէ. հացակեր>հըցակէր (=հաց ուտող). հգն. հրցակէրնէնէ. կռուաէր>կըռվաաէր (=կռիվ սիրող), հգն. կըռվաաէրնէնէ և այլն. Հետաքրքրական են դրոնաճամ և հրվագուղ բառերը, որոնք տարբեր իմաստ ունենալով, տարբեր էլ մասնիկներ են ստանում, այսպես՝ եթե դրոնաճամ բառը գործածվում է իր սովորական ջդառն համ ունեցող, դառն համ տվող» իմաստով, ապա ստանում է -ենէ մասնիկը. օրինակ՝ քօխցուրնէն պահած ա, դրոնահամնէն բիրնձ ջքաղցրները պահել է, դառնահամները (դառն համ ունեցողները) բերել», իսկ եթե նա գործածվում է «դառն համ» իմաստով, ապա ստանում է -ար մասնիկը. օրինակ՝ դրոնըհամարը մարդուս բէրանը դրոնըցցնէս ին «դառնահամները (=դառն համերը) մարդու բերանը դառնացնում հնդ. Այդպես էլ հրվագուղ բառը, որ կարող է գիտակցվել թե իրրև հատկացուցչի և հատկացյալի կապակցություն (=հավի գող), և թե իրրև խնդրի ու դերբայի կապակցություն, համապատասխանորեն ստանում է -ար կամ -ենէ մասնիկը, նայած թե խոսողն ինչպես է գիտակցում. սակայն ավելի գործածական է -ենէ մասնիկը (պետք է նկատել, որ «հավի գող» կապակցության մեջ էլ իրապես հատկացուցչի և հատկացյալի կապակցություն չէ, այլ խնդրի և դերբայի. հավի տվյալ դեպքում խնդրի սեռական է (genetivus obiectivus).

[1] ճրագալոյց բառը, որը գրաբարում նշանակել է «ճրագվառոց», այսինքն և այլ բարբառներում. ժողովրդական սուտգրքանությամբ գրձել է ճրագալույս և նշանակում է ճրագի լույս

*Ո ա ն ո թ ու թ յ ու ն 1. -ար ‖ -եր մասնիկն ստացող բարդությունների մեջ հոգնակի ուղղական ու հայցական հոլովներում շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա (մասնիկից առաջ), որի շնորհիվ էլ նախաշեշտ վանկի ձայնավորը (մեծ մասամբ հոդակապ) վերածվում է ը կամ ի-ի. ինչպես՝ որմնադրան>հրըմադրէն գործ, պատ շարելու գործ», հգն. հրըմըդրէնար. որմնատակ>հրըմատակ «պատի տակը», հգն. հրըմըտակեր. հարսանքաշոր>հրըսընքաշորք «հարսանիքի շոր», հգն. հրըսընքըշորքեր. ձուագաշ>ձըվագաշ «մեկ ձվի ծանրություն», հգն. ձըվըգաշեր. լուսամուտ>լի՛սամուտ, հգն. լի՛սի՛մուտար. ձեռքաբան>ձի՛ք՛աբէն «ձեռքի գործ», հգն. ձի՛ք՛ի՛բէնար և այլն։ Ինչպես երևում է բերված օրինակներից, ը կամ ի՝ դարձող ձայնավորը -ա ‖ -ա հոգնակապն է, որն իր ծանր կամ թևթև լինելով (ա ‖ ա>ը ‖ ի՝) համապատասխանում է ոչ թե երկրորդ, այլ առաջին եզրի ձայնավորների աստիճանին (տես § 254)։

Ո ա ն ո թ ու թ յ ու ն 2.—Նէ մասնիկն ստացող բարդություններում շեշտը հոգնակի բոլոր հոլովներում լինում է մասնիկի վրա, բայց, հակառակ գրան, նախաշեշտ վանկի ձայնավորները որևէ հնչյունափոխության չեն ենթարկվում. ինչպես՝ տնաչէն>տընաչէն, հգն. տընաչէննէ. բերատու>բըրատու «բերք ավող, պտղատու», հգն. բըրատունէ և այլն։ Ի դեպ է համեմատել սրդի գրականի նույն կարգի բառերի հետ, որոնց ձայնավորները սղման օրենքին ենթարկվում են -եր մասնիկն ստանալիս, և չեն ենթարկվում, երբ -ներ մասնիկն են ստանում. ինչպես՝ լրագիր (=լրի գիր), հգն. լրագրեր. վերնատուն (=վերին տուն). հգն. վերնատներ. բայց՝ վիպագիր (=վեպ գրող), հգն. վիպագիրներ. մեծատուն (=մեծ տուն ունեցող = հարուստ), հգն. մեծատուններ և այլն։

Ո ա ն ո թ ու թ յ ու ն 3.—Եթե -ար ‖ -եր մասնիկն ստացող բարդ բառը երկրորդ եզրում ունի այնպիսի միավանկ բառ, որն ըստ § 266-ի հոդնակին կազմում է -էր մասնիկով, ապա ամբողջ բարդությունն էլ նույն-

պես -ար ‖ -ար-ի փոխարեն առանում է -էր, որից առաջ եղած բոլոր ձայնավորները դառնում են ը կամ ի՝. ինչպես՝ ջրածիտ>ջրըածըէտ (ջրի ծիտ), հգն. ջրըըծըտէր. աղբիւրաջուր>բխըբրաջիր, հգն. բխըբրըջի՝ բէր. թռամուկն>թռըըմօկնը (=թռչող մուկ, չղջիկ), հգն. թռըըմըկնէր (թռըըմօկուն ձևն այստեղ գործ չունի) և այլն։ Ը կամ ի՝ դառնալը պայմանավորված է սղվող ձայնավորի ծանր կամ թեթև լինելուց, այսինքն՝ ծանր ձայնավորները դառնում են ը, իսկ թեթևները՝ ի՝։

Եթե բարդ բառն ըստ օրենքի պետք է առանա -նէ մասնիկը, ապա հիշյալ -էր մասնիկն առացող միավանկ բառերը որևէ շեղում չեն առաջացնում ընդհանուր կանոնից և կանոնավորապես առանում են -նէ մասնիկը։

268. Վերոհիշյալներից դուրս, հոգնակիի բայասիկ ձևերը են. աղջիկ>ախչիկ, հգն. բխչըկէրք՛, տղայ>տըղա՝ հգն. տըղէրք՛ կամ տըղարք, քոյր>քօր, հգն. քի՝վէրք՛. մարդ>մարդ, հգն. մարդէք՛. կնիկ>կընէկ, հգն. կընանէք՛։

269. Վերջապես մի խումբ բառեր հոգնակիի համար առանում են -ապանք, -արէ, -աք, -ուք մասնիկները, որոնք, սակայն, ավելի շուտ հավաքական իմաստ են պարունակում, քան հոգնակիի։ Այդ բառերն են.

աներ>հանէր, հընէրաք. գիր>գիր «գիրք», գի՝րանք. ընկեր>հընգէր, հընգէրուք. կուռն>կօռնը, կըռնատէ. ճիւղ>ճօղնը ճըղնարէ. սեամ>շէմ, շըմքարէ. գիւղ>գիւղ, գիւղարանք. սերմն>սըէրմ, սըէրմար կամ սըրմարանք, դեղ>դէղ, դէղարանք։

Հետաքրքրական է հիշել, որ սըրմարանք բառը նորից գիտակցվելով իբրև հավաքական եզակի, հաճախ առանում է հոգնակի -նէ մասնիկը և ունենում է չորս հոգնակերտ մասնիկ, որոնցից միայն մեկն է գիտակցվում՝ սըրմ-ար-ան-ք-նէ։

270. Իբրև հավաքական կազմող մասնիկներ Մեղրու բարբառում գործածվում են -անք, -նարէ, -էնէ, -էնէք՛, -անէք՛, ա՛նէք՛ -օնէք՛, -օտան, -օտիք՛, -արք մասնիկները. Թե որ մասնիկը որ դեպքում է գործածվում, հնարավոր չեղավ պարզել, օրինակների քչության պատճառով. հակառակ մեր ջանքերի, մենք կարողա-

ցանք հավաքել ընդամենը 17 հավաքական բառ միայն, որ և բերում ենք ստորև.

եզն>իզնը, իզնանք. կտուր>կրտօր, կրտրրնարէ. հնձան>ընձան, ընձնանէք. գերեզման>գի՝րիզման, գի՝րի՝մի՝նձանէք. այգի>իջի, իջինէնէք. խաղող>խաղու, խըղվէնէք. խաշու>խաշու, խըշվէնէք. լեզու>լիզու, լի՝զվէնէք. կատու>կատու, կըտվէնէք. մատակ>մատակ «առուտ», մըտըկտատան. յօնք>օնք, օնքարք. եկեղեցի>գըղէցէ, գըղըցօնէք. ոսկր>ուսկուռ, ըսկըռօտէք. գուրք>գուրք, գըրքարէ. տուն>տօն, տընարէ. փեսայ>փըէսէ, փըսօնէք. խիզան>խէզան, խըզնանէ:

Նայելով այդ բոլոր օրինակներին, կարելի է միայն ու վերջացող բառերի մասին եզրակացնել, թե նրանք առանում են -էնէք մասնիկը, որից առաջ վերջնահնդ ուն դառնում է վ. մյուսների համար օրինակներն այնքան քիչ են, որ որևէ եզրակացության մասին խոսելն անգամ անկարելի է:

Այդ բոլորից առանձին պետք է հիշել -ար, ար, -էք -ուք, -ոնք մասնիկները, որոնք կազմում են ընտանիք կամ ազգականներ ցույց տվող հավաքական բառեր. ինչպես՝

Ուրշանեանք>Ուրշանաք, Նազանեանք>Նազանաք, Վաչեանք>Վչնաք, Փարեանք>Փարնաք, անեղանք>հրնէրաք, *մեբոնք>մէրուք, *ձերոնք>ձէրուք, Մազոնք>Մազնաք, Տիգրյուենք>Տի՝րի՝ցվէք, Ազաեանք>Ղզէք և այլն:

2. ՀՈԼՈՎՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

271. Մեղրու բարբառը, ինչպես և աշխարհաբարն ու շատ ուրիշ բարբառներ, ունի յոթ հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական: Մեղրու բարբառում, հակառակ աշխարհաբարի, չկա սեռական ու տրական հոլովների տարբերությունը՝ որոշյալ հոդի գործածության մեջ. այստեղ էլ, ինչպես Ագուլիսի, կարնո և Ղարաբաղի բարբառներում, սեռական հոլովը նույնպես կարող է որոշիչ հոդ առանալ: Այսպիսով, բացի դերանուններից, ինչպես բոլոր դեպքերում տրականն ու սեռականը ձևով նույնն են: Հակառակ աշխարհաբարի, ուր գոյականների անձի և իրի առումները դեռևս շփոթ վիճակում են գտնվում, հաճախ էլ կամայական բնույթ են կրում,

Մեղրու բարբառում այդ առումները բավականին պարզ ու հասատաուն բնույթ ունեն. թե հատուկ, և թե հասարակ անձնանունները, ինչպես և ենթակայական դերբայը (nomen agentis) գործածվում են անձի առումով, և հայցական հոլովում նման են տրականին՝ անկախ որոշյալ կամ անորոշ լինելու հանգամանքից. Միացած գոյականները, թե անշունչ, թե շնչավոր և թե որոշյալ, թե անորոշ կիրառությամբ, գործածվում են իրի առումով և հայցական հոլովում նման են լինում ուղղականին. Ուղղական հոլովը գործածվում է նաև կոչականի փոխարեն։ Տեղի հատուկ անունների հայցականը գործածվում է ոչ միայն իրրև նախդրիվ հայցական՝ շարժման ուղղությունը ցույց տալու համար, այլև իրրև բուն ներգոյական. ինչպես՝ Իվան չէտ մարդ կա «Երևանում շատ մարդ կա». Մեղրա չէտ չէմիշ կա «Մեղրիում շատ միրգ կա» և այլն։

272. Ինչպես ասվեց, տրականը միշտ նման է սեռականին, իսկ վերջինիս հոլովական վերջավորությունները յուրաքանչյուր հոլովման համար տարբեր են, ուստի և յուրաքանչյուրի մասին կխոսվի առանձին.

Հայցական հոլովը նման է ուղղականին կամ տրականին ըստ նախորդ պարբերությունում ասվածի։

Բացառական հոլովը կազմվում է երկու ձևով. առաջինը բուն բացառական հոլովն է, որ կազմվում է է վերջավորությունն ուղղականին ավելացնելով. ինչպես՝ ծառ-է «ծառից», առվ-է «առվից», գըղըբուն-է «գոդությունից» և այլն. Եթե գոյականը գործածվում է որոշյալ առումով, ապա ստանում է ն հոդը՝ երկրորդը՝ բազադրյալ ձևն է, որը կազմվում է -էնից, -ընէնից հետադրությունը տրականին ավելացնելով. ինչպես՝ ծառու ընէնից «ծառից», գըղըբունու ընէնից «գոդությունից», քարու ընէնից «քարից» և այլն։ Եթե գոյականը որոշյալ է, ապա հետադրությունն է էնից, իսկ եթե անորոշ է, ապա՝ քանի որ երկու ձայնավորներ հանդիպում են իրար, ավելանում է ն ձայնակապը, որով և առացվում է ընէնից ձևը։ Ի դեպ, այս «էնից» հետադրությունը, որ համապատասխանում է այլ բարբառների անից, անի, ընանից, ընանի, անա ձևերին, մեր կարծիքով առացված պետք է լինի դերանունների բացառական հոլովից։ Հայտնի է, որ գրաբարում հայերենում -անից || -նից վերջավորությունը բացառական

հոլովի համար ստանում են մի քանի դերանուններ. դրանք են՝ ցուցական սա, դա, նա, անձնական ես, դու, նա, մենք, դուք, ինքը, և հարցական՝ ո՞վ դերանունները։ Հակառակ աշխարհաբարի ընդհանուր կանոնին, այդ դերանունների բացառական հոլովը կազմվում է ոչ թե -ից, այլ -ից կամ -ացից վերջավորությունների։ այսպես՝ իննից կամ ինձանից, քեզնից կամ քեզացից, մեզնից կամ մեզացից, ձեզնից կամ ձեզացից, իրենից, սրանից, դրանից, նրանից, ումնից նաև՝ ումից, ինչնից կամ ինչից, քեզնից, մեզնից, ձեզնից և այլն։ Արդ, աչքի առաջ ունենալով այդ օրինակները, առաջին հերթին հարց է ծագում, թե ինչո՞ւ և ինչպե՞ս են ստացվել դրանք։ Մեր կարծիքով, այդ ձևերի նախատիպերն է հանդիսացել սա, դա, նա ցուցականների բացառականը։ Այսպես, աշխարհաբարում, ինչպես և գրաբարում, բացառական հոլովը կազմվում է վերջավորությունը ավելացնելով տրական հոլովին, որ գոյականների մոտ նույնանալով սեռական հետ, մի քանի դերանունների մոտ առանձին ձև ունի։ Սա, դա, նա, ինքը, բնականից արդեն որոշյալ լինելով, տրական հոլովում միշտ ունենում են սրան, դրան, նրան, իրեն ձևերը, միայն նախադրությունների հետ գործածվելիս է, որ այդ բառերի տրականը կարող է գործածվել առանց ն-ի, ինչպես՝ սրա համար, նրա վրա և այլն (այստեղ մենք հաշվի չենք առնում այդ բառերի տրականի փոխանյմանական գործածությունները, որ հաճախ իրրև օրինակ սարքում են ոմանք)։ արդ՝ ավելացնելով այդ միանգամայն կանոնավոր ձևերին աշխարհաբարի բացառականի ընդհանրական -ից մասնիկը, բնականաբար ստացվում են սրանից, դրանից, նրանից, իրենից ձևերը, որոնց մեջ ն-ն տրականի վրա գրվող որոշիչ հոդն է, որ այժմ, սակայն, այդ դերանունների համար հանդիսանում է ավելի ճիշտ՝ հոլովակազմիչ։ Աշխարհաբարի ես, դու, մենք, դուք, ով դերանունները, ժամանակի ընթացքում կորցնելով իրենց գրաբարյան բացառականի ձևերը, կազմել են իրրև ցուցական-անձնական դերանվան համաբանությամբ (аналогия)՝ իրենց բացառականը՝ ստանալով -ից կամ -ացից վերջավորությունը, որի ն-ն այլևս չի գիտակցվել իրրև որոշիչ հոդ. վերջապես՝ սրանից, դրանից, նրանից ձևերի կազմությունն ավելի մթագնումով, խոսողների կողմից իրրև վերջավորություն է ընդունվել -ացից, որով և

ստացվել են այդ դերանուններէի բացառականի կրկնաձևերը (ինձանից, քեզանից և այլն)։ Աչքի անց կացնելով նաև գոյականները, բացառականի -նից վերջավորությունը գտնում ենք նաև -վա հոլովման բառերի մոտ. ինչպես՝ օրվանից, տարվանից, ձմեռվանից և այլն, որոնք, սակայն երևան են բերում մի այլ թերևս և ավելի ուռաջնակարգ հանգամանք. համեմատելով այդ ձևերը սրանից, երանից, դրանից, իրենից ձևերի հետ, գալիս ենք այն եզրակացության, որ տրականում -ա(ն), -ե(ն) վերջավորությունն ունեցող բառերը բացառականում ն հոդը պահում են երկու ձայնավորների իրար հանդիպելու շնորհիվ (համմ. երկու, քանի, բայց՝ երկուից, քանիսից)։ Այս -(ն)ից վերջավորությունն է, ահա, որ, նախ՝ տարածվելով անձնական դերանունների վրա -նից կամ -անից ձևով հետագայում տարածվել է ամբողջ դերանունների վրա, ապա՝ անկախ գիտակցվելով, դարձել հետադրություն և տարածվել բոլոր բառերի վրա։ Այսպես, Ագուլիսի բարբառում աի, ևանից, ևանի, ևանից նախադրություններով բացառական են կազմում բոլոր դերանունները և գրաբարյան -ազ, -ուց հոլովման ենթարկվող հավաքականները[1]։ Մեղրու բարբառում միայն էնից, նէնից ձևով բացառական են կազմում բոլոր դերանունները և անձերի հատուկ անունները, իսկ մյուս գոյականները սովորական -է վերջավորության զուգընթաց բացառականը հաճախ կազմում են էնից հետադրությամբ։ Այս բոլորը նկատի առնելով, հանգում ենք այն եզրակացության, որ ա, դա, ևա դերանունների -(ա)ից վերջավորությունը նախ համարանությամբ (аналогия) անցել է ես, դու, մենք, դուք, ով դերանունների բացառականին, որի համար ամենաուժեղ գործոնը եղել է երանից ձևը, որ լինելով երրորդ դեմքի անձնական դերանվան բացառականը, իրեն է նմանեցրել նաև առաջին ու երկրորդ դեմքերը։ Այնուհետև, դրանից, ընդհանրացմամբ (généralisation) տարածվել է նաև մյուս բոլոր դերանունների վրա։ Դրա լավագույն ապացույցներից մեկն այն է, որ բոլոր դերանունների մեջ էլ -էնից, -նէնից հանդես են գալիս ոչ թե իրբև հետադրություններ, այլ, պարզապես, իրբև վերջավորու-

[1] Պրոֆ. Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 214 (§ 273) և 231—236։

թյուններ՝ արտասանելով հոլովվող դերանվան հետ միասին մի շեշտով և առաջ բերելով ձայնավորների՝ շեշտափոխության հետ կապված փոփոխությունները, ինչպես՝ մէքս, մէը, մի՛զէնից, դուք, ձիզ, ձի՛զէնից, կամ՝ Ագուլիսի բարբառում՝ ինձանից, քիզանից[1] և այլն։

Այդ ձևերի մեջ, ասա, միշտ շեշտ տակ լինելով և, մանավանդ, հակագրվելով ինձ, քի, մէզ, ձիզ ձևերին, պիտակվել է իբրև անկախ մասնիկ և սարքվել է նախ անձևի հատուկ անուններ և սեռականում -աց, ուց, -էց վերջավորություն ունեցող հավաքականների, հետո մյուս գոյականների վրա։ Մեզ-ում բարբառի -էնից ձևը միանգամայն կանոնավոր հնչյունափոխությամբ ստացվել է -ասից ձևից. ինձանից, մեզանից, քեզանից, ձեզանից ձևերում ա-ն, լինելով, ձ կամ զ բաղաձայններից հետո, շեշտի տակ դարձել է է համաձայն § 18-ի. արձևից ձևը նույնպիսի կանոնավորությամբ ստացվել է արեան-ից ձևից, շեշտյալ եա երկրաբարբառի է դառնալով (տմմ. § 120), -ինէնից ձևն ստացվել է ե-ի ավելացմամբ, այն դեպքում, երբ որևէ պատճառով հոլովվող բառի տրականը, իբրև բացառականի հիմք, վերջացել է ձայնավորով, ինչպես՝ քի՛զենից կամ քիեէնից։ Բոլոր գոյականների համար նույն մասնիկը կարող է գործածվել ից՛ինց ձևով, եթե գոյականն անորոշ է, և էնից ձևով, երբ գոյականը որոշյալ է, ինչպես՝ ծառու ից՛ենից, ըրխէ ից՛ենից, բայց՝ ծառուն էնից, ըրխէն էնից և այլն։

Նույն ճանապարհով են ստացվել նաև դերանունների գործիական հոլովի -էնավ, -ից՛էնավ, և ներգոյականի -էնամ, -ից՛էնամ վերջավորությունները, որոնք սակավ դեպքերում գործածվում են նաև անձնանուններ նույն հոլովների համար դարձյալ իբրև հետադրություններ. դրանց գոյությունը մի ավելորդ անգամ գալիս է ապացուցելու վերևում ասածները։ Վերջապես, այդ բոլորը տեսնելուց հետո կարելի է հանգել նաև այն եզրակացության, թե ոչ միայն անկախ բառերը կարող են ժամանակի ընթացքում դառնալ նախադրություններ և, ապա՝ վերածվել մասնիկների, ինչպես հաստատված և ընդունված է լեզվաբա-

[1] Պրոֆ. Հ. Աճառյան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Երևան, 1935, էջ 231։

նության կողմից, այլև մասնիկները կարող են գիտակցվել իբրև անկախ ձևույթներ և վերածվել նախադրություններ, այսինքն՝ օժանդակ բառերի։

273. Գոբծիական հոլովը կազմվում է -ավ, -ամ մասնիկներով, որ ուրիշ բան չեն, եթե ոչ հայերենի գործիական հոլովի -ով վերջավորության՝ ո>ա հնչյունափոխությամբ (տես § 80)։ Սակավ դեպքերում գործիականը կազմվում է -էնավ, -ինէնավ նախադրություններով, որոնց մասին կխոսվի առանձին հոլովների նկարագրության մեջ։

274. Ներգոյական հոլովը կազմվում է -ամ, -ամ մասնիկներով, որ ներկայացնում են արդի հայերենի ներգոյական հոլովի -ում վերջավորության հնչյունափոխված ձևը։ Ինչպես վկայում է Մ. Շահխանյանն իր «Համառոտ քերականության» մեջ, իր մանկության ժամանակ Մեղրու բարբառում ներգոյականը կազմվելիս է եղել -օմ մասնիկով, որ -ում-ի ավելի հարազատ ձևն է. նրա ասածը հաստատվում է այն բազմաթիվ առածներով ու դարձվածքներով, որոնց մեջ դեռ այժմ էլ պահպանված է -օմ վերջավորությամբ ներգոյականը։ Աշխատության հիմք ծառայող նմուշներից նրանցում, որոնք վերցրել ենք Շահխանյի ժողովածուից, կան բազմաթիվ օրինակներ այդ ձևով գործիականի համար, որոնք մենք խնամքով պահպանել ենք, իբրև հնից եկող թանկարժեք մնացորդներ։ Ինչպես աշխարհաբարում և շատ բարբառներում, այնպես էլ Մեղրու բարբառում ներգոյական հոլովը կազմվում է նաև մանջին, մաջին (>միջին) հետադրության միջոցով։ Այս ձևը գործածվում է շնչավորների համար, գրեթե առանց բացառության. անշունչ առարկաների համար գործածվում է վերջահոլով ձևը, երբ նկատի է առնվում որևէ առարկայի (ինչպես և՝ տեղի, ժամանակի) մոտավոր սահմանների մեջև լինելը և համապատասխանում է գրաբարի նախդրիվ արտահայտվող հայերեն в, լատիներեն in (cum ablativo), ֆրանսերեն en նախադրություններին, ինչպես՝ քաղաքամ, գրբ. ի քաղաքի=ռուս. в городе, լատ. in urbe, ֆրանս. en ville, աշխարհաբար՝ քաղաքում (քաղաքի սահմաններում)։ «Մանջինը» գործ է ածվում մի բանի ներսում լինելը, գործողության կատարվելը ցույց տալու համար, և համապատասխանում է գրաբարի «ի մէջ» կամ «ի միջի», «ի ներքս», լատիներեն intra, ֆրանսերեն dans նախա-

դրութիւններին, ինչպես՝ քաղաքու մանչին, գրբ. ի մէջ քաղաքի, լատ. intra urbem, ֆրանս. dans une ville, աշխարհաբար՝ քաղաքի մէջ (քաղաքի ներսում)։ Այդպես է ներգոյականի երկու ձևերի (վերջահոդով և հետադրութեամբ) կիրառութիւնը նաև աշխարհաբարում։

Սակայն դեպքերում ներգոյականը կազմվում է -էնամ, -ենեամ հետադրութեամբ, որի մասին կխոսվի առանձին հոդվածների նկարագրության մեջ։

3. ՀՈԼՈՎՈՒՄ

275. Մեղրու բարբառն ունի վեց կանոնավոր հոլովում և ութ անկանոն հոլովում։

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

276. Այս հոլովման եզակի սեռականի և տրականի վերջավորութիւնն է -ու, ու, բացառականը՝ -է (կամ -էնից հետադրութիւնը), գործիականը՝ -ավ, ավ, ներգոյականը՝ -ամ, -ամ։ Դրանցից ու, ավ, ամ վերջավորութիւններն ստանում են ծանր ձայնավորով բառերը, ու, -ավ, -ամ վերջավորութիւնները՝ թեթև ձայնավորով բառերը. բացառականը երկու կարգի բառերի համար էլ ունի միևնույն վերջավորութիւնը։

ա) Ծանր ձայնավորներով

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	*սար*	*կաքավ*	*սարար,*	*կաքաւնէ՛*
Սեռ.	*սարու*	*կաքաւու*	*սարէ՛րու*	*կաքաւնէ՛րու*
Տր.	*սարու*	*կաքա՛ւու*	*սարէ՛րու*	*կաքաւնէ՛րու*
Հայց.	*սար*	*կաքավ*	*սարար*	*կաքավնէ՛*
Բաց.	*սարէ*	*կաքաւէ*	*սարէ՛րէ*	*կաքաւնէ՛րէ*
	սարու	*կաքաւու*	*սարէ՛րու*	*կաքաւնէ՛րու*
	(ն, հ)էնից	*(ն, հ)էնից*[1]	*(ն, հ)էնից*	*(ն, հ)էնից*
Գործ.	*սարավ*	*կաքաւավ*	*սարէ՛րամ*	*կաքաւնէ՛րավ*
Ներգ.	*սարամ*	*կաքաւամ*	*սարէ՛րամ*	*կաքաւնէ՛րամ*

[1] *Ինչպես այստեղ, այնպես էլ մյուս բոլոր օրինակներում բացառականի հետադրավոր ձևերի համար փակագծում դրված են (ն, հ), ցույց տալու համար, որ կարող է լինել ն-ից՝ անորոշ լինելու դեպքում, և էնից, որոշյալ լինելու դեպքում։*

բ) Թեթև ձայնավորներով

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	բուն	բուժուժ	բուներ	բուժուժներ
Սեռ.	բունի	բուժուժու	բունէրու	բուժուժներու
Տր.	բունի	բուժուժու	բունէրու	բուժուժներու
Հայց.	բուն	բուժուժ	բուներ	բուժուժներ
Բաց.	բունէ	բուժուժէ	բունէրէ	բուժուժներէ
	բունիէ	բուժուժու	բունէրու	բուժուժներու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	բունով	բուժուժով	բունէրով	բուժուժներով
Ներգ.	բունում	բուժուժում	բունէրում	բուժուժներում

Այս հոլովման ենթարկվում են. բաղաձայնով վերջացող գրեթե բոլոր թե միավանկ, թե բազմավանկ բառերը, հոլովվող դիրքայները, բացի ենթակայականից, այլև՝ բաղաձայնով վերջացող ածականները։

Ծանոթություն 1.—Որոհետից լինելը ցույց տվող -էցէ, -ցի (<ես, ցի) մասնիկներով կազմված բառերը եզակիում ենթարկվում են այս, իսկ հոգնակիում՝ գրաբարաձև հոլովման. այդ բառերի հոգնակի ուղղականի մասնիկն է ք՝, սեռ. և տր. -օց. թե եզակի, և թե հոգնակի բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են հետադրություններով. եզակի սեռականում ու տրականում ու վերջավորությունից առաջ վերջնանգ է, ի, ձայնավորներն ընկնում են, ինչպես՝ մեղբեցի>մըղրէցէ, սեռ. և տր. մըղրէցու, հայց. մըղրէցու, բաց. մըղրէցու (ն, հ)էնից, գործ. մըղրէցու (ն, հ)էնավ, ներգ. մըղրէցու (ն, հ)էնամ կամ մանջին, հգն. ուղղ. մըղրէցէք՝, սեռ. տր. և հայց. մըղրէցօց, բաց. մըղրէցօց էնից, գործ. մըղրեցօց էնավ, ներգ. մըղրէցօց էնամ կամ մանջին և այլն (տես § 296, բ)։

Ծանոթություն 2.—Որովհետև հոգնակիում հոլովական վերջավորություններից առաջ գոնվող -էր, -ենր հոգնակի մասնիկների ձայնավորը ծանր է, ուստի և այս հոլովման (ինչպես և բոլոր այն հոլովումների,

որոնք ստանում են -ար, ել) հոգնակի թվում թեթև վերջավորություններ (-ու, -ավ, -ամ) լինել չեն կարող։

Ծանոթություն 3.—Եզակիում թեթև վերջավորություններ ստանում են ոչ միայն այն բառերը, որոնց վերջնավանկի ձայնավորը թեթև է, այլև այն բառերը, որոնք վերջանում են գ, կ, ք՝ քմայնացածներով, անկախ նրանց ձայնավորի աստիճանից. ինչպես՝ ձագ> ձէգ, սեռ. և տր. ձէգ-ի, բաց. ձէգէ, գործ. ձէգ-ով, ներգ. ձէգ-ում, հոգն. ուղղ. ձէգ-եր. ձեռք>ձիք, սեռ. և տր. ձիք-ի, բաց. ձիքէ, գործ. ձիք-ով, ներգ. ձիք-ում, հգն. ուղղ. ձիք-եր. պէտք>պէտկ, սեռ. և տր. պէտկ-ի, բաց. պէտկէ, գործ. պէտկ-ով և այլն։

Ծանոթություն 4.—Միավանկ բառերի եզակի բոլոր հոլովներում և հոգնակի ուղղական-հայցականում շեշտն ընկնում է բառի սեփական ձայնավորի վրա, իսկ հոգնակի մյուս հոլովներում՝ -էր մասնիկի վրա. դրա հետևանքով, սակայն, բառի շեշտակորույս ձայնավորը որևէ փոփոխության չի ենթարկվում, բացի § 264-ի 6-րդ ծանոթությունում հիշված բառերից։

Ծանոթություն 5.—Բազմավանկ բառերի բոլոր հոլովներում, բացի հոգնակի ուղղական-հայցականից, շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա, իսկ հոգնակի ուղղական և հայցականում -եէ մասնիկի վրա (վերջին վանկ), որի ժամանակ, նույնպես, շեշտակորույս ձայնավորները ը կամ ի՝-ի չեն վերածվում։

Ծանոթություն 6.—Եթե բազմավանկ բառերի թեք հոլովներում շեշտի տակ է ընկնում բ, գ, դ, ջ, զ, ժ, շ, լ, ճ, չ հնչյուններից որևէ մեկից հետո գտնվող ա կամ ա ձայնավորը, ապա նա դառնում է է, իսկ նրանից առաջ գտնվող է, ի ձայնավորները՝ ի՝. ինչպես՝ բամբակ>բէմբակ, սեռ. և տր. բի՝մբէ՝կու, բաց. բի՝մբէկէ, շալակ>շէ՝լակ, սեռ. և տր. շի՝լէկու, բաց. շի՝լէկէ, դադար>դէդար, սեռ. դի՝դէրու, բաց. դի՝դէրէ, բանջար>բէնջար, սեռ. և տր. բի՝նջէրու, բաց. բի՝նջէրէ, գագաթն>գէգ՝ա՝թ, սեռ. և տր. գի՝գ՝էթու, բաց. գի՝գ՝էթէ և այլն։ Այսպես և՝ գործիական ու ներգոյական հոլովներում։

*Որձակ>ուրձակ բառում ու-ն, շեշտից առաջ ընկնելով, ի՝ չի դառնում, այլ մնում է ու, ինչպես՝ ուրձէկու, ուրձէկէ, ուրձէկում, ուրձէկամ. Նույն բառերը հոգնակի բոլոր հոլովներում շեշտը տալով -ներ, -ներէ մասնիկին (վերջին կամ վերջընթեր վանկ), իրենք անփոփոխ են մնում. ինչպես՝ բէմբակներ «բամբակներ», բէմբակներու, չէլակներ «շալակներ», չէլակներու, ուրձակներ «որձակներ», ուրձակներու և այլն։ Որովհետև եզակի թիվը հոլովներում հոլովական մասնիկին նախորդող վանկի ձայնավորը այդ կարգի բառերում ծանր է (է), ուստի և անխըտիր ծանր վերջավորություններ են ստանում նաև այն բառերը, որոնք ուղղական հոլովի վերջավանկում ունեն թեթև ձայնավոր (ա). ինչպես՝ գագաթն>գէգաթ, գի՛գէթու, գի՛գէթավ, զանգակ>զէնգաք, զի՛նգէկու, զի՛նգէկավ, *խորխանդակ>խըրխանդաք «խորդուբորդություն», խըրխի՛նգէկու, խըրխի՛նգէկավ և այլն։*

Ծանոթություն 7.—Ենչ վերջացող բառերը, որոնց է-ն ստացվել է ա-ից, եզակի սեռական, տրական, բացառական, գործական ու ներգոյական հոլովներում շեշտի տակ գցելով էնչ վանկը՝ վերականգնում են իրենց նախնական ա ձայնավորը. ինչպես, ճանապ>ճանէնչ, սեռ. և տր. ճանապնչու, բաց. ճանապնչէ, գործ. ճանապնչավ, ներգ. ճանապնչամ. կանապ>կանէնչ, սեռ. և տր. կանապնչու, բաց. կանապնչէ, գործ. կանապնչավ, ներգ. կանապնչամ և այլն։ Եզակի ուղղական-հայցականում և ամբողջ հոգնակիում էնչ վանկը, լինելով շեշտից հետո կամ առաջ, մնում է անփոփոխ. ինչպես՝ կանէնչ, հդն. ուղղ. կանէնչնէ՛, սեռ. կանէնչնէ՛րու և այլն։ Ջամիչ>չամէնչ բառն այս օրենքին չի ենթարկվում, այլ բոլոր դեպքերում էլ պահպանում է իր է ձայնավորը. ինչպես՝ չամէ՛նչու, չամէ՛նչավ, չամէ՛նչէ, չամէնչնէ՛, չամէնչնէ՛րու և այլն։ Ի դեպ, այս բացառությունը, ստացված լինելով եզակի ուղղական-հայցականի ու հոգնակիի ազդեցությամբ՝ համաբանության շնորհիվ, ցույց է տալիս միաժամանակ, որ այլևս չի գիտակցվում, թե այդ բառի ե-ն ստացվել է ա ձայնավորից. դրան առիթ է հանդիսացել

հատկապես բառի շատ փոփոխված լինելը՝ չամուչ>չուամայչ>չօմանչ>չօմէնչ (տես § 26), որի շնորհիվ էլ չոմէնչ ձևն իշխել է եզ. քեք հոլովներում, հակառակ գոյությունն ունեցող կանոնի։

Ծանոթություն 8.—Երկրորդ եզրում միավանկ բառ ունեցող այն բարդությունները, որոնց հոգնակին կազմում են -ար, -եր մասնիկներով (տես § 267), բայի եզ. ուղղական ու հայցական հոլովներից, մյուս բոլոր ձևերում շեշտը փոխադրելով վերջընթեր վանկը, նրանից առաջ եղած ձայնավորները դարձնում են ը կամ ի՝. ինչպես՝ աքատակ>հըքատակ, սեռ. հըքըտակու, բաց. հըքըտակէ, հգն. ուղղ. հըքըտակար, սեռ. հըքըտըկէրու. *որմնարան>հրըմարէն, սեռ. հրըմըրէնու, բաց. հրըմըրէնէ, հգն. ուղղ. հըրմըրէնար, սեռ. հրըմըրէնէրու, բաց. հրըմըրէնէրէ. ձեռքաշող>ձիքըշուրթ, սեռ. ձիքի՝շուրթու, բաց. ձիքի՝շուրթէ, հգն. ուղղ. ձիքի՝շուրթեր, սեռ. ձիքի՝շի՝րթէրու, բաց. ձիքի՝շի՝րթէրէ և այլն։ Հոդակապը դառնում է ը կամ ի՝ բարդության առաջին եզրի ձայնավորի ներդաշնակությամբ, իսկ երկրորդ եզրի ձայնավորը՝ եթե թեթև է, դառնում է ի՝, եթե ծանր է, դառնում է ը. ինչպես՝ ակնալոյս>ընկնալուս, սեռ. ընկնըլուսու, հգն. սեռ. ընկնըլի՝սէրու, սևաշող>սըվաշուղ, սեռ. սըվըշուղու, հգն. սեռ. սըվըշղէրու և այլն։ Պետք է ասել, սակայն, որ այս օրենքը այնքան էլ խստությամբ չի պահպանվում. հաճախ կարելի է լսել նաև ձիքըշուրթու, ձիքըշուրթէրու, ձիքըշքէն, ձիքըշքէնու, ձիքըշքէնէրու և այլն, առանց նախաշեշտ ձայնավորների փոփոխության։

Ծանոթություն 9.— Այն միավանկ բառերը, որոնք ունենալով ու, օ, ու, ը ձայնավորները՝ ստացված գրաբարյան ու-ից, հոգնակին կազմում են -էր մասնիկով (տես § 265, ա), բացի եզակի ուղղական ու հայցականից, մյուս բոլոր ձևերում շեշտը փոխադրում են մասնիկների վրա (եզակի քեք հոլովներում, վերջին վանկ, հոգնակիում՝ վերջին կամ վերջընթեր վանկ՝ -էր մասնիկի վրա), և, դրա հետևանքով էլ՝ բառի սեփական ու,

o, ու, ե ձայնավորները վերածում ը-ի. ինչպես՝ դուրք>դուրք, սեռ. դըրքու, բաց. դըրքէ, հգն. ուղղ. դըրքէր կամ դըրքարէ, սեռ. դըրքէրու, բաց. դըրքէրէ. Քուշ>քօշ, սեռ. քըշու, բաց. քըշէ, հգն. ուղղ. քըշէր, սեռ. քըշէրու, բաց. քըշէրէ. Ջուր>ջիր, սեռ. ջրու (նաև՝ ջիրի), բաց. ջրէ, հգն. ուղղ. ջրէր, սեռ. ջրէրու, բաց. ջրէրէ. Քուզ>քօզ, սեռ. քըզու, բաց. քըզէ, հգն. ուղղ. քըզէր, սեռ. քըզէրու, բաց. քըզէրէ և այլն։

Դրանց հակառակ, մի խումբ բառեր հաճախ եզակիում գործածվում են նաև առանց հնչյունափոխության. այդ բառերն են՝ քումբ>քօմբ, սեռ. քըմբու կամ քօմբու. հունձ>հօնձ, սեռ. հընձու կամ հօնձու. քուխս>քօխս, սեռ. քըխսու կամ քօխսու. քուղթ>քօխտ, սեռ. քըխտու կամ քօխտու. փուքս>փօսկ, սեռ. փօսկու (միայն)։ Հոգնակին կանոնավոր է, բացի փօսկ բառից, որ լինում է փօսկեր, փօսկերու, փօսկերէ և այլն։

Ծանոթություն 10.— Գլուխ>գլօխ, կուր>կըռոր, պուղ>պըռօղ, պուռկ>պըռօկ բառերում՝ սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներում o ձայնավորը, շեշտից առաջ ընկնելով, բոլորովին կորչում է. ինչպես՝ սեռ.-տր. գլխու, կըռու, պըռղու, պըռկու, բաց. գլխէ, պըռկէ, կըռէ, պըռղէ, գործ. գլխավ, կըռավ, պըռղավ, պըռկավ, ներգ. գլխամ, կըռամ, պըռղամ, պըռկամ։ Հոգնակի ուղղական ու հայցական հոլովներում, թեև դարձյալ շեշտից առաջ, մնում է անփոփոխ. գլօխներ, կըռօրներ (նաև՝ կըռըրներ), պըռօղներ, պըռօկներ, հոգնակի մյուս հոլովներում գառնում է ը. ինչպես՝ սեռ.-տր. գլըխներու, կըռըրներու, պըռըղներու, պըռըկներու, բաց. գլըխներէ, կըռըրներէ, պըռըղներէ, պըռըկներէ և այլն։

Մնացած բազմավանկ բառերը, որոնք ունեն ու-ից առացված o ձայնավորը, հոլովաձևերում էլ անփոփոխ են մնում. ինչպես՝ դեղնուց>դըղնօց, սեռ. դըղնօցու, հգն. դըղնօցներ, սեռ. դըղնօցներու. քրքուռ>քըռքօռ, սեռ. քըռքօռու, հգն. քըռքօռներ, սեռ. քըռքօռներու. կշկուռ>քըշկօռ «հանգույց», սեռ. քըշկօռու, հգն. քըշ-

կօնէ, սեռ. քըշկօնէրու և այլն։ Այս կանոնը և նախորդ ծանոթության մեջ հիշված բացառությունները ցույց են տալիս, որ այլևս չի գիտակցվում օ>ու փոփոխությունը և համաբանության շնորհիվ չնչվում է արդեն գրաբարյան ու-ի սղումը, պահպանելով նրանից առացված օ ձայնավորը։

Ծանոթություն 11.— Եթե գրաբարյան մեկնկես վանկանի բառերի վերջավանկի ը-ն բարբառում գարձել է ու, հոլովման ժամանակ եզակի թեք հոլովներում բոլորովին սղվում է. ինչպես՝ քաղցր>քօխցուր, սեռ. քօխցրու, բաց. քօխցրէ. մուկն>մօկուն, սեռ. մօկնու, բաց. մօկնէ. ծունգն>ծօնգուն, սեռ. ծօնգնու, բաց. ծօնգնէ. ձուկն>ձօկուն, սեռ. ձօկնու, բաց. ձօկնէ և այլն։ Վերջին երեք բառերն ունեն նաև մըկնու, ծընգնու, ձըկնու ձևերը (համմտ. նաև § 283)։ Հոգնակի բոլոր հոլովներում էլ այդ բառերն անփոփոխ կերպով պահպանում են իրենց ձայնավորները. ինչպես՝ քօխցուրնէ, քօխցուրնէրու, ձօկուննէ, ձօկուննէրու և այլն։

Ծանոթություն 12.—Եթե բազմավանկ բառերում կա ու ձայնավոր՝ առացված գրաբարյան ու կամ ը-ից, հոլովման ժամանակ անփոփոխ է մնում. ինչպես՝ կարկուտ>կարկուտ, սեռ. կարկուտու, հգն. ուղղ. կարկուտունէ, սեռ. կարկուտունէրու. կոծոխուր>կըծուխուր, սեռ. կըծուխուրու, հգն. ուղղ. կըծուխուրնէ, սեռ. կըծուխուրնէրու. մոծակ>մուծակ, սեռ. մուծակու, հգն. ուղղ. մուծակնէ, սեռ. մուծակնէրու. աթոռ>աթուռ, սեռ. աթուռու, հգն. ուղղ. աթուռնէ, սեռ. աթուռնէրու. սապոն>սուպուն, սեռ. սուպունու, հգն. ուղղ. սուպուննէ, սեռ. սուպուննէրու և այլն։

Ծանոթություն 13.—Եթե բառում շեշտից հետո կա ու ձայնավորը՝ առացված գրաբարյան օ-ից, ապա հոլովման ժամանակ, բացի եզակի ուղղականից ու հայցականից, մյուս բոլոր հոլովաձևերում նորից դառնում է օ. ինչպես՝ ծանօթ>ծանութ, սեռ. ծանօթու, հգն. ուղղ. ծանօթնէ, սեռ. ծանօթնէրու. աղօթք>աղուքկ, սեռ. աղօթկու, հգն. ուղղ. աղօթկնէ, սեռ. աղօթկնէրու

և այլն։ Եթե o-ից ստացված ու-ն եզակի ուղղականում շեշտի տակ է, ապա հոլովման ժամանակ բոլոր ձևերում էլ մնում է ու. ինչպես՝ գօտի>գուտէ, սեռ. գուտէ կամ գուտու, գործ. գուտով և այլն։

Ծանոթություն 14.— Միավանկ ու բազմավանկ բառերի շեշտված է, ըէ, ի ձայնավորները՝ ստացված գրաբարյան ի-ից, բացի եզակի ուղղական ու հայցականից, մյուս բոլոր ձևերում վերածվում են ը-ի, իսկ շեշտն անցնում է դրանց հաջորդող վանկին (բազմավանկների հոգնակիում՝ մինչև -ձէ(ը) մասնիկի վրա), ինչպես՝ սիրտ>սէրտ, սեռ. սըրտու, հգն. ուղղ. սըրտէր, սեռ. սըրտէրու. ծիտ>ծըէտ, սեռ. ծըտու, հգն. ուղղ. ծըտէր, ծըտէրու. ծիծ>ծըէծ, սեռ. ծըծու, հգն. ուղղ. ծըծէր, սեռ. ծըծէրու. սիսեռն>սըէսառնը, սեռ. սըսէռնու, հգն. ուղղ. սըսէռնէ, սեռ. սըսէռնէրու, բիր>բիր, բըրու, հգն. ուղղ. բըրէր, սեռ. բըրէրու և այլն։ Բացառություն է կազմում միայն նիգ>լէնգ՝ բառը, որ ամեն ձևում էլ պահպանվում է նույնությամբ, փոփոխված լինելու և նախաձևի չգիտակցվելու պատճառով։

Ծանոթություն 15.— Երկրորդ եզրում միավանկ բառ ունեցող այն բարդությունները, որոնք հոգնակին կազմում են -էր մասնիկով, բացի եզակի ուղղական ու հայցական հոլովձևերից, մյուս հոլովաձևերում շեշտը փոխադրում են մասնիկների վրա (եզակիում հոլովական վերջավորության, իսկ հոգնակիում -էր մասնիկի վրա), իսկ նրանից առաջ եղած ձայնավորները դարձնում ը կամ ի՝, ինչպես՝ ջրածիտ>ջըրածըէտ, սեռ. ջըրըծըտու, հգն. ուղղ. ջըրըծըտէրու. *սպիտակաստուտ>սըպտըկաստօտ (սպիտակ սուտ «բացահայտ սուտ»), սեռ. սըպտըկըսըտու, հգն. ուղղ. սըպտըկըսըտէր. սեռ. սըպտըկըսըտէրու. աղբիւրաջուր>ըխպըրաջիւր. սեռ. ըխպըրըջի՝րիւ, հգն. ուղղ. ըխպըրըջի՝րէր, սեռ. ըխպըրըջի՝րէրու և այլն։ Դառնում են ը, եթե անմիջապես հաջորդում են երկու բաղաձայն (շեշտը՝ վերջավորության վրա). ինչպես՝ նարինջ>նարէնջ, սեռ. նարընջու, բաց. նարընջէ, գործ. նարընջով, ներգ. նարընջում. քրիք>քըէնք՝,

սեռ. քըլընքու, բաց. քըլընքէ, գործ. քըլընքավ, ներգ. քըլընքամ. անսէրտ>անսէրտ, սեռ. անսըրտու, բաց. անսըրտէ, գործ. անսըրտավ, ներգ. անսըրտամ. անբիծք>անբիծք «մեռելի վրա կատարվող աղոթք», սեռ. անըրսկու, բաց. անըրսկէ, գործ. անըրսկավ, ներգ. անըրսկամ և այլն։ Բոլորովին կորչում է, երբ նրան հաջորդում է միայն մեկ բաղաձայն (շեշտը՝ իրենից առաջ). ինչպես՝ պանիր>պանէր, սեռ. պանրու, բաց. պանրէ, գործ. պանրավ, ներգ. պանրամ. կացին>կացէն, սեռ. կացնու, բաց. կացնէ, գործ. կացնավ, ներգ. կացնամ. մուխր>մուխէր, սեռ. մուխրու, բաց. մուխրէ, գործ. մուխրավ, ներգ. մուխրամ և այլն։ Հոգնակի բոլոր հոլովներում է-ն մնում է անփոփոխ, թեև շեշտը դարձյալ ընկնում է նրան հաջորդող վանկի՝ -ն է, -ներ մասնիկի վրա, ինչպես՝ նարէնջնէ, նարէնջնէրու, կացէննէ, կացէննէրու և այլն։

Ծանոթություն 17.— Ձայնավորների վերոհիշյալ սղումների հետևանքով (ծան. 8, 9, 10, 14, 15).

ա) եթե գ, կ, ք՝ քմայնացածներն ընկնում են ը ձայնավորից կամ որևէ բաղաձայնից առաջ, ապա՝ վերածվում են սովորական գ, կ, ք-ի, ինչպես՝ դինգ>դէնգ, սեռ. դընգու, բաց. դընգէ. փրցկինք>փըսլէնք, սեռ. փըսլընքու, բաց. փըսլընքէ. միտք>մէթկ, սեռ. մըթկու, բաց. մըթկէ և այլն.

բ) եթե ձայնավորով իրարից բաժանված տ և կ կամ դ և կ հնչյունները սղման հետևանքով մոտենում են իրար, ապա վեր են ածվում թկ խմբի. ինչպես՝ կոռտիկ>կուռտէկ, սեռ. կուռթկու, բաց. կուռթկէ. պտուկ>պըթօկ, սեռ. պըթկու, բաց. պըթկէ. զատիկ>զէդէկ, սեռ. զէթկու, բաց. զէթկէ (համմ. § 170).

գ) եթե ձայնավորով իրարից բաժանված ծ և կ հնչյունները մոտենում են իրար, ապա վերածվում են զկ խմբի. ինչպես՝ ածիկ>ածէկ «թռնդրին խփված խմորագընգից թափված կտորտանքը», սեռ. ազկու, բաց. ազկէ. կծիկ>կըձըէկ, սեռ. կըզկու (նաև՝ կըձըկու), բաց. կըզկէ կամ կըձըկէ. կոծիկ>կուձէկ, սեռ. կուզկու, բաց. կուզկէ. ուրիշ օրինակ չկա, բայց համեմատել § 181.

դ) Նույն պարագաներում ցկ դառնում են սկ, օր. թեցիկ>թեցկ (սեռ. թեսկու, բաց. թեսկէ) և՝ ղկ>խկ ծաղիկ>ծաղկ (սեռ. ծախկու, բաց. ծախկէ) բառերում։

Ծանոթություն 18.— Անորոշ դերբայում -իլ վերջավորությունն ունեցող այն բայերը, որոնք անկատար դերբայում ունենում են -էս վերջավորությունը (տես § 357), անորոշ դերբայի հոլովման ժամանակ իրենց ի-ն շեշտի տակ դարձնում են է, իսկ նրանցից առաջ եղած ձայնավորները ը. ինչպես՝ մանրել>մանդիլ, սեռ. մընդէլու, բաց. մընդէլէ, գործ. մընդէլավ, ներգ. մընդէլամ. խոսել>խոսիլ, սեռ. խըսէլու, բաց. խըսէլէ, գործ. խըսէլավ, ներգ. խըսէլամ և այլն։

Այն բայերը, որոնք անորոշում ունենալով -իլ, անկատար դերբայում ունենում են -իս, հոլովման ժամանակ ի-ն պահում են անփոփոխ, իսկ նրանից առաջ եղած ձայնավորները դարձնում ի՝, ինչպես՝ սիրել>սէրիլ, սեռ. սի՝րիլու, բաց. սի՝րիլէ, գործ. սի՝րիլավ, ներգ. սի՝րիլամ. բերել>բէրիլ, սեռ. բի՝րիլու, բաց. բի՝րիլէ, գործ. բի՝րիլավ, ներգ. բի՝րիլամ և այլն։ Եթե ի-ին նախորդող ձայնավորն է ու, ապա ևս մում է անփոփոխ, ինչպես՝ կոփել>կուփիլ «խփելը», սեռ. կուփիլու, բաց. կուփիլէ, գործ. կուփիլավ, ներգ. կուփիլամ և այլն (ավելի մանրամասն տես § 358)։ -ալ և -էլ վերջավորությամբ դերբայների մեջ հենց ուղղականում էլ շեշտը -ալ, -էլ վերջավորությունների վրա է, և հոլովման ժամանակ բնականաբար որևէ փոփոխության չեն ենթարկվում։

Որովհետև բայերի անորոշ դերբայից -էն վերջավորությամբ կազմվում է մի նոր դերբայ (տես § 343), ուստի և անորոշի բացառականը գրեթե միշտ կազմվում է նախդրավոր ձևով. ինչպես՝ մընդէլու (ն, հ)էնից, խըսէլու (ն, հ)էնից, բի՝րիլու (ն, հ)էնից և այլն։

277. Առոջին հոլովման են ենթարկվում նաև -օրիճ, -ոճիճ մանրիկով բայերը, հետևյալ ձևով.

Եզակի

Ուղղ.	գրողքին	բի՝ծրծքին
	«գողություն»	«բարձրություն»
Սեռ.	գրողքունու	բի՝ծրի՝քունու
Տր.	գրողքունու	բի՝ծրի՝քունու
Հայց.	գրողքին	բի՝ծրծքին
Բաց.	գրողքունէ	բի՝ծրի՝քունէ
	գրողքունու	բի՝ծրի՝քունու
	(ն, ն)էնից	(ն, ն)էնից
Գործ.	գրողքունավ	բի՝ծրի՝քունավ
Ներգ.	գրողքունամ	բի՝ծրի՝քունամ

Հոգնակի

Ուղղ.	գրողքիննէ	բի՝ծրծքիննէ
Սեռ.	գրողքիննէրու	բի՝ծրծքիննէրու
Տր.	գրողքիննէրու	բի՝ծրծքիննէրու
Հայց.	գրողքիննէ	բի՝ծրծքիննէ
Բաց.	գրողքիննէրէ	բի՝ծրծքիննէրէ
Գործ.	գրողքիննէրու	բի՝ծրծքիննէրու
	(ն, ն)էնից	(ն, ն)էնից
Ներգ.	գրողքիննէրավ	բի՝ծրծքիննէրավ
	գրողքիննէրամ	բի՝ծրծքիննէրամ

Ծանոթություն 1.— Իբրև կանոն, եզակի թվում –օքին վերջավորությունը սկսած սեռականից՝ դառնում է -ըքուն (ու) և այդպես հոլովվում ծանր ձայնավորներով, իսկ ոքին վերջավորությունը դառնում է ի՝քուն (ու) և հոլովվում թեթև ձայնավորներով. հոգնակի թվում երկուսն էլ հոլովվում են միատեսակ, իսկ շեշտի փոփոխությունը ձայնավորների սղում չի առաջացնում.

Ծանոթություն 2.— Այս կարգի բառերի հոգնակի սեռականը, տրականը և էնից հետադրությամբ բացառականը հաճախ կազմվում են -ունու(ն) վերջավորությամբ, առանց -էր մասնիկի. այդ դեպքում բառը ենթարկվում է նույն հնչյունափոխություններին, ինչ որ եզակիում. ինչպես՝ գողություն>գրողքին, հգն. ուղղ.

գըդօթիննէ, սեռ. տր. գըդըթուննու, բաց. գըդըթուննոռ (ն, հ)էնից. բարձրութիւն>բի՝ծրօթիկն, հգն. ուղղ. բի՝ծրօթիննէ, սեռ. տր. բի՝ծրի՝թիննու, բաց. բի՝ծրի՝թիննու (ն, հ)էնից և այլն։ Ի դեպ, այս ձևերը հիանալի կերպով ապացուցում են, որ ուղղականի -ն մասնիկն ստացվել է -նի-ից, իսկ թիք հոլովների -նէր-ը<նեար-ից, ինչպես ասել ենք առաջուց (տես § 266, ծանոթ. 5), դրան հակառակ, -ուրիւն>օրին ‖ ծրին մասնիկով բառերը թիք հոլովներում -նեար>-նէր մասնիկին զուգընթաց պահպանում են նաև -նի>նն մասնիկը, որ հոլովական վերջավորության ձայնավորից առաջ կորցնելով ի>է-ն (ինչպես բոլոր ի, է վերջացող բառերն են կորցնում իրենց վերջնական ձայնավորները), ինացել է մայն -ն։

ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

278. Այս հոլովման սեռ. տր. բաց. հոլովների վերջավորությունն է է, գործ. -ար ‖ -ան, բաց. -ամ ‖ -ամ։

Եզակի

Ուղղ.	*քէռա «քեռի»*	*կուրէ «կորի, ակոս»*	*հօռի «ուռենի»*
Սեռ.	*քէռէ(ն)*	*կուրէ(ն)*	*հօռէ(ն)*
Տր.	*քէռէ(ն)*	*կուրէ(ն)*	*հօռէ(ն)*
Հայց.	*քէռէ(ն)*	*կուրէ*	*հօռի*
Բաց.	*քէռէ (ն)*	*կուրէ (ն)*	*(հօռու ծառ է)*
	քէռէ (ն, հ)էնից	*կուրէ (ն, հ)էնից*	
Գործ.	*քէռաւ*	*կուրաւ*	*(հօռու ծառավ)*
Ներդ.	*(քէռամ)*	*կուրամ*	*(հօռու ծառամ)*
	քէռէ մանջին		

Հոգնակի

Ուղղ.	*քէռէք՛*	*կուրէք՛*	*հօռիք՛*
Սեռ.	*քէռէնէրու*	*կուրէնէրու*	*հօռինէրու*
Տր.	*քէռէնէրու*	*կուրէնէրու*	*հօռինէրու*
Հայց.	*քէռէնէրու*	*կուրէք՛*	*հօռիք՛*
Բաց.	*քէռէնէրէ*	*կուրէնէրէ*	*հօռինէրէ*
	քէռէնէրու	*կուրէնէրու*	*հօռինէրու*
	(ն, հ)էնից	*(ն, հ)էնից*	*(ն, հ)էնից*

Գործ.	քէռէնէրավ	կուրէնէրավ	հօրինէրավ
Ներգ.	(քէռէնէրամ)	կուրէնէրամ	հօրինէրամ

քէռէնէրու մանջին

Այս հոլովման ենթարկվում են ա, է, ի ձայնավորներով վերջացող բառերը, բացի ձի, թէ, վրկա, տղա բառերից։ Հասուկ անունները, թեկուզ ա, է, ի-ով վերջացող, այս հոլովման չեն ենթարկվում։

Ծանոթություն 1.— Եթե վերջահանգ ա, է, ի ձայնավորներին նախորդող վանկի ձայնավորը թեթև է, ապա եզ. գործական հոլովում ստանում են ավ, իկ ներգոյականում՝ ամ վերջավորությունը. ինչպես՝ ջոր|ի>ջուրէ, գործ. ջուրավ, ներգ. ջուրամ. այգի>իգի, գործ. իգիավ, ներգ. իգիամ. գիլլա «գնգակ», գործ. գիլլավ, ներգ. գիլլամ (նախորդող թեթև ձայնավորով ա հանգող հայերեն բառ չունենք) և այլն։

Ծանոթություն 2.— Եզակի սեռ. տր. բաց. հոլովները, նույնիսկ անորոշ լինելու դեպքում էլ, մեծ մասամբ գործածվում են և հոգով. ինչպես՝ մին ջուրէն գինի՝ հինչ ի, հօր «մի ջորու գինն ինչ է, որ» Այդ, անշուշտ, ուղղական-հայցականի և մյուսների միջև տարբերություն ստեղծելու ձգտումից է առաջանում, մանավանդ է վերջացող բառերի համար, որոնք հինգ հոլովում ունեն նույն ձևը։

Ծանոթություն 3.— Ի վերջացող ծառանուններից եզ. բացառական, գործիական ու ներգոյական հոլովները կազմվում են նկարագրական կերպով՝ պտղի անվան սեռականից ու ծառ բառի համապատասխան հոլովներից. ինչպես՝ թզ(են)-ի>թզզի, սեռ. թզզէ(ն), բաց. թզզու ծառէ (թզզի ծառից), գործ. թզզու ծառավ (թզի ծառով), ներգ. թզզու ծառամ (թզզի ծառում), ընկուզ(են)ի>ընգզզի, սեռ. ընգզզէ(ն), բաց. անգուզու ծառէ, գործ. անգուզու ծառավ, ներգ. անգուզու ծառամ և այլն։ Դրա պատճառն այն է, որ հաճախ ծառանունների եզ. բաց. գործ. ներգ. հոլովները ձևով նույնանում են պտղանվան նույն հոլովների հետ, ինչպես՝ թուզ>

քՅզ, բաց. քըզէ, գործ. քըզալ, ներգ. քըզամ և քզ(են)ի>քըզի, դարձյալ՝ բաց. (քըզէ), գործ. քըզալ, ներգ. քըզամ և այլն. այդ շփոթությունից խուսափելու համար լեզուն դիմել է նկարագրական միջոցին։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 4.— Ա և է վերջացող բառերի հոգնակին ունենում է նաև հետևյալ վերջավորությունները (ուղղ. հայց. -էք՛), սեռ. տր. բաց. -էց ‖ -ից[1], գործ. -էք՛ալ, ներգ. -էք՛ում, ինչպես՝ ուղի>հըղէ, հգն. ուղղ. հըղէք՛, սեռ. տր. հըղէց, բաց. հըղէց (էնից), գործ. հըղէք՛ալ, ներգ. հըղէք՛ում. քեռի>քէռա, հգն. ուղղ. քէռէք՛, սեռ. տր. քէռէց (նաև՝ քէռաց), բաց. քէռէց (էնից) գործ. քէռէք՛ալ, ներգ. քէռէք՛ում և այլն։ Այս պարագայում բացառականի համար գրեթե միակ գործածականն է հետադրությամբ (էնից) կազմվող ձևը։ Գործիականի ու ներգոյականի այս ձևերը սակավ գործածականներն են, ընդհակառակն՝ սեռական, տրական ու բացառական հոլովները, մի խումբ բառերի համար, ավելի գործածական են, քան -ենէրու վերջավորությունը. այդ բառերն են. խնամի>խընամէ, հգն. ուղղ. խընամէք՛, սեռ. խընամաց. քեռի>քէռա, հգն. ուղղ. քէռէք՛, սեռ. քէռաց. փեսայ>փըէսէ, հգն. ուղղ. փըէսէք՛, սեռ. փըէսէց կամ փըէսաց. կուրի>կուրէ, հգն. ուղղ. կուրէք՛, սեռ. կուրէց. մատանի>մըտանէ, հգն. ուղղ. մըտանէք՛, սեռ. մըտանէց. սատանայ>սըտանէ, հգն. ուղղ. սըտանէք՛, սեռ. սըտանէց. տունկ(ի)>տընգէ, հգն. ուղղ. տընգէք՛, սեռ. տընգէց, երախայ բառի մասին տես ստորև։ Ի դեպ, ուղի>հըղէ բառի հոգնակի ուղղականին (հըղէք՛), ավելացնելով տր. վերջավորությունը, բառի սեփական ձայնավորի անկմամբ և ղք>խկ փոփոխությամբ ստացվել է ճրխկէց ձևը, որ գործածվում է իբրև մակբայ «ճանապարհին» իմաստով։

---

1 *Մեռականում հաց ստանում են վերջաստան ցույց տվող բառերը, ինչ. քէռէք՛ (քեռինէր և քեռանք), սեռ. քէռաց, խընամէք՛, սեռ. խնամաց և այլն։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 5.— Ի վերջացող բառերը հոգնակի սեռ. տր. բաց. հոլովներում ունենում են -ուց ‖ -ից վերջավորությունները, ինչպես՝ գինի>գինի, հգն. ուղղ. գինիք, սեռ. տր. գինուց, բաց. գինուց. ծիրանի>ծիրանի, հգն. ուղղ. ծիրանիք, սեռ. տր. բաց. ծիրանուց. ընկույզ(ն)ի>ընկույզի, հգն. ուղղ. ընկույզք, սեռ. տր. բաց. ընկզզուց. քթ(ն)ի>քթի, հգն. ուղղ. քթիք, սեռ. տր. բաց. քթուց և այլն։ Այս վերջավորություններով հոլովվելիս բացառականը սովորաբար էնից նախադրությամբ չի կազմվում. այդ ձևերը, նույնիսկ, գործածվում են ավելի շատ բացառականի, քան սեռականի ու տրականի համար։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 6.— Ցեղացի ցույց տվող -էցի, -ցի (<եցի, ցի) մասնիկով կազմված բառերը հոգնակի սեռականում, տրականում և բացառականում ունեն -օց, վերջավորությունը. ինչպես՝ մեղրեցի>մըղրէցէ, հգն. ուղղ. մըղրէցէք, սեռ. տր. մըղրէցօց, բաց. մըղրէցօց (էնից). թէյացի>թէյըցի, հգն. ուղղ. թէյըցիք, սեռ. տր. թէյըցօց, բաց. թէյըցօց (էնից) և այլն։ Այդ կարգի բառերը եզակիում գերազանցապես հոլովվում են առաջին հոլովմամբ, ինչպես՝ մըղրէցէ, սեռ. մըղրէցու, բաց. մըղրէցու (ն, հ)էնից. թէյըցի, սեռ. թէյըցու, բաց. թէյըցու (ն, հ)էնից և այլն։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 7.— Եզակի թեք հոլովներում վերջավորությունից առաջ ա, է, ի ձայնավորները ընկնում են. ինչպես՝ կորի>կուրէ, գործ. կուրավ, ներգ. կուրամ. քեռի>քէռա, սեռ. քէռէ, գործ. քէռավ. այգի>իզմի, սեռ. իզմէ, գործ. իզմով և այլն։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 8.— Շեշտված ի-ով վերջացող բառերի շեշտը, բացի եզակի և հոգնակի ուղղական ու հայցականից, մյուս հոլովաձևերում ընկնում է վերջընթեր վանկի վրա, այնպես որ եզակիում միշտ լինելով բառահիմքում, հոգնակիում փոխադրվում է -եէր մասնիկի վրա. ինչպես՝ ուռի>հօռի, հգն. հօռիք, բայց՝ հօռէ, հօռինէրու և այլն։ Եթե բառի վերջընթեր վանկի ձայնավորն է ը կամ ի, ապա եզակի բոլոր հոլովներում

էլ շեշտը ետ է վերջավանկում, ինչպես թզ(են)ի>թըզի, սեռ. թըզէ՛. ծիրանի>ծի՛րի՛նէ, սեռ. ծի՛րի՛նէ՛ և այլն։

Ա և է ձայնավորով հանգող բառերի շեշտը սովորաբար վերջընթեր վանկում է լինում թե եզակի, թե հոգնակի թվերում։

Ծանոթություն 9.— Այս հոլովման մեջ էլ սովորաբար շեշտի տեղափոխությունը հնչյունական փոփոխություններ չի առաջացնում։ Պետք է հիշել միայն.

ա) -է վերջացող այն ծառանունները, որոնց է-ն ստացված է ի-ից, հոգնակի բոլոր հոլովներում վերականգնում են իրենց նախնական ի ձայնավորը. ինչպես՝ թեղի>թէղէ, հգն. ուղղ. թէղիք, սեռ. թէղինէրու, բաց. թէղինէրէ. ոսի>հուսիսէ, հգն. ուղղ. հուսիսիք, սեռ. հուսիսինէրու, բաց. հուսիսինէրէ և այլն։ Այդպես և -էցէ մասնիկն ունեցող բառերի վերջահանգ է-ն, եթե բառը հոգնակիում ստանում է -ենէ ‖ -ենէր մասնիկը, ինչպես՝ մեղրեցի>մըղրէցէ, հգն. ուղղ. մըղրէցինէ, սեռ. մըղրէցինէրու, բաց. մըղրէցինէրէ. կարճանցի>կըրճընէցէ, հգն. ուղղ. կըրճընէցինէ, սեռ. կըրճընէցինէրու, բաց. կըրճընէցինէրէ և այլն։ Վերջին ձևերը, սակայն, շատ սակավ են գործածվում, իբրև նորմուծությունները արդի խոսակցականի ազդեցությամբ.

բ) քեռի>քէռա բառը հոգնակի բոլոր հոլովներում ա-ն դարձնում է է, ինչպես՝ քէռէք, քէռէնէրու, քէռէնէրէ և այլն։ Այդ կարգի հայերեն բառ չունենք, ադրբեջաներենից փոխառված բառերում ա-ն է դառնում միայն հոգնակի ուղղականում ու հայցականում. ինչպես՝ բալա զավակ», հգն. ուղղ. բալէք, զաւէլլէ՛ զգնդակ», հնգ. ուղղ. գաւէլլէք, բայց՝ սեռ. բալանէրու, գաւէլլանէրու և այլն։

գ) երախայ>բախ բառը նեբկայացնում է սղման հետևյալ պատկերը. եզ. սեռ. ըրխէ, գործ. ըրխավ, ներգ. ըրխամ, հգն. ուղղ. բախէք կամ ըրխէք, սեռ. բախէց կամ ըրխէց, գործ. բախէց էնավ, ըրխէց էնավ կամ ըրախէ՛ւավ, ներգ. բախէց մանչին, ըրխէց մանչին կամ ըրխէք՛ւամ.

279. Երկրորդ հոլովման են ենթարկվում նաև -ուղ (<ողղ) վերջավորությամբ դերբայները։

Եզակի

Ուղղ.	արուղ «անող»	կուփուղ «խփող»
Սեռ.	(ը)րուղէ	կուփուղէ
Տր.	(ը)րուղէ	կուփուղէ
Հայց.	(ը)րուղէ	կուփուղէ
Բաց.	(ը)րուղէ	կուփուղէ
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	(ը)րուղով	կուփուղով
Ներգ.	(ը)րուղամ	կուփուղամ

Հոգնակի

Ուղղ.	արուղնէ	կուփուղնէ
Սեռ.	արուղնէրու	կուփուղնէրու
Տր.	արուղնէրու	կուփուղնէրու
Հայց.	արուղնէրու	կուփուղնէրու
Բաց.	արուղնէրէ	կուփուղնէրէ
	արուղնէրու	կուփուղնէրու
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	արուղնէրով	կուփուղնէրով
Ներգ.	արուղնէրամ	կուփուղնէրամ

Ծանոթություն 1.— Հայցական հոլովը թե եզակիում, թե հոգնակիում նման է սեռական-տրականին։ Ներգոյականի համար ավելի գործածականն է մանջին հետադրությամբ ձևը, ինչպես՝ (ը)րուղէ մանջին, կուփուղէ մանջին և այլն։

Որովհետև բոլոր բայերի համար էլ, անկախ նրանց ձայնավորների թեթև կամ ծանր լինելուց, դերբայական վերջավորությունն է -ուղ, ուստի և հոլովման համար ունեն միայն ծանր ձայնավորներով վերջավորություններ։

Ծանոթություն 2.— Եզակի թվում, բացի ուղղականից, մյուս բոլոր հոլովներում շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա, որի շնորհիվ էլ նախաշեշտ վանկի ձայնավորները դառնում են ը կամ ի՝ սովոր ձայնավորի աստիճանին համապատասխան. ինչպես՝ ծախող>ծախուղ, սեռ. ծըխուղէ, գործ. ծըխուղավ. ուտող>օտուղ, սեռ. ըտուղէ, գործ. ըտուղավ. բերող>բիրուղ, սեռ. բի՝րուղէ, գործ. բիրուղավ. քարշող>քաշուղ, սեռ. քի՝շուղէ, գործ. քի՝շուղավ և այլն։ Շեշտակորույս վանկի է ձայնավորը դառնում է ի՝, ինչպես՝ դիզող>դէզզուղ, սեռ. դի՝զզուղէ, գործ. դի՝զզուղավ. սիրել>սէրիլ, սեռ. սի՝րուղէ, գործ. սի՝րուղավ և այլն։

Հակառակ այդ օրենքին, շեշտակորույս վանկում անփոփոխ են մնում.

ա) ու և ա ձայնավորները. ինչպես՝ ոլորող>հնէլլնէ՝րուղ, սեռ. հնէլլնէ՝րուղէ, գործ. հնէլլա՝րուղավ. կոտրող>կուտրուղ, սեռ. կուտրուղէ, գործ. կուտրուղավ. որդնող>ուռնուղ, սեռ. ուռնուղէ, գործ. ուռնուղավ. լիզող>լու՝զուղ, սեռ. լու՝զուղէ, գործ. լու՝զուղավ և այլն։ Այս երեվույթը իբրև ինչ-որ բացառություն չպետք է դիտել, այլ արդյունք § 259-ով սահմանված կանոնի։

բ) -ացուղ ‖ -ացուղ, -էցուղ մասնիկները՝ անկախ գոհակցվելու պատճառով, ինչպես՝ մրոացող>մրոացուղ, սեռ. մրոացուղէ, գործ. մրոացուղավ. լուացող>լի՝վացուղ, սեռ. լի՝վացուղէ, գործ. լի՝վացուղավ, գնացող>գի՝նէցուղ, սեռ. գինէցուղէ, գործ. գի՝նէցուղավ և այլն։

Բայերի նախաշեշտ վանկի ձայնավորների սղման մասին, քե այս դերբայում, և քե մյուս ձևերում ավելի մանրամասն կխոսվի խոնարհման նվիրված բաժնում։

Հոգնակի թվում շեշտը միշտ ընկնում է -ենէ ‖ -ենէր մասնիկի վրա, որից, սակայն, ոչ մի հնչյունական փոփոխություն չի առաջանում։

ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

280. Այս հոլովման եզակի սեռականի և տրականի վերջավորությունն է ու, որից առաջ բառավերջի ձայնավորը (ու կամ ա) կամ բոլորովին կորչում է կամ դառնում վ, բացառականի

վերջավորությունն է -է: գործիականը՝ -ավ, -ամ, ներգոյականը՝ -ամ, -ամ:

Եզակի

Ուղղ.	խաղու «խաղող»	լուզի «լեզու»
Սեռ.	խաղու կամ խաղվու	լուզի կամ լուզվի
Տր.	խաղու կամ խաղվու	լուզի կամ լուզվի
Հայց.	խաղու	լուզի
Բաց.	խաղվէ, խաղվու (ն, հ)էնից	լուզվէ, լուզվի (ն, հ)էնից
Գործ.	խաղվավ	լուզվավ
Ներգ.	խաղվամ	լուզվամ

Հոգնակի

Ուղղ.	խաղունէ կամ	խաղուք	լուզունէ կամ լուզուք
Սեռ.	խաղունէրու »	խաղուց	լուզունէրու » լուզուց
Տր.	խաղունէրու »	խաղուց	լուզունէրու » լուզուց
Հայց.	խաղունէ »	խաղուք	լուզունէրու » լուզուք
Բաց.	խաղունէրէ »	խաղուց էնից	լուզունէրէ » լուզուց էնից
Գործ.	խաղունէրավ »	(խաղուքավ)	լուզունէրավ » (լուզուքավ)
Ներգ.	խաղունէրամ »	(խաղուքամ)	լուզունէրամ » (լուզուքամ)

Այս հոլովման ենթարկվում են ու կամ ի վերջացող հասարակ գոյականները, բացի ձու, լի բառերից, որոնց մասին ...ից §§ 287:

Ծանոթություն 1.— Եզակի թեք հոլովներում վերջավորությունից առաջ հաճախ ավելանում է վ ձայնավորը, առանց բառի վերջահնչյուն ու կամ ի ձայնավորների սպառման. ինչպես՝ խաղուվու, խաղուվէ, խաղուվավ, խաղուվամ, լուզուվնէ, լուզուվէ, լուզուվավ, լուզուվամ և այլն: Մ. Շահյանցն իր քերականության մեջ եզ. սեռականի համար բերում է երկու ձև՝ բարու կամ բարուվու «թմբիկիկ» (իր օրինակն է). բացառական ու գործիական հոլովների համար, բացի մեր հիշածներից բերում է նաև՝ բարուվուն էնից, բարուվավ ձևերը, իսկ

ներգոյական հոլովը առհասարակ չի հիշում։ Այժմ խոսողների մոտ, սակայն, գործածական է մեր բերած հոլովական կարգը, և սակավ դեպքերում միայն կարելի է լսել խաղուվու, խաղուվավ և այլ ձևերը։ Դեռ ավելին, այժմյան խոսողների մոտ այս հոլովման բառերն էլ սեռականտրականում հաճախ առանում են երկրորդ հոլովման է վերջավորությունը. խաղվէ, լուզվէ և այլն։

Ծանոթություն 2.— Հոգնակի ուղղականի, հայցականի, սեռականի, տրականի ու բացառականի -ուք, -ոյք, -ուց, -ոյց վերջավորություններով ձևերը կարելի է հաճախ լսել. ներգոյականի լուզուքմէ ձևը մի անգամ միայն խոսակցության միջոցին լսել ենք 1936 թվականին՝ այն ժամանակ 83-ամյա Ս. Դաբրիելյանից, իսկ գործիականը բերում ենք Շահյանցի քերականությունից. այդ իսկ պատճառով էլ, իբրև հազվադեպ գործածվող ձևեր, թե գործիականի, և թե ներգոյականի հոգնակի կրկնաձևերը փակագծերի մեջ ենք առնում։

Ծանոթություն 3.— Եզակի բոլոր հոլովներում էլ շեշտը անփոփոխ է մնում մեր բերած հոլովաձևերում, իսկ եթե վ-ից առաջ վերջհանգ -ու, -ոյ մնում է (ծանոթություն 1), ապա թեք հոլովներում շեշտը տեղափոխվում է հենց այդ -ու, -ոյ-ի վրա. ինչպես՝ խաղու, խաղո՛ւվու, խաղո՛ւմէ, խաղո՛ւվավ, խաղո՛ւմամ. լուզոյ, լուզո՛ւվոյ, լուզո՛ւմով, լուզո՛ւվոյմ և այլն։ Հոգնակիի առաջին ձևում շեշտը միշտ ընկնում է -նէ, -նէր մասնիկի վրա (վերջին կամ վերջընթեր վանկի), իսկ երկրորդ ձևում (ուք, ոյք) միշտ վերջընթեր վանկի վրա, ինչպես՝ խաղունէ՛, խաղունէ՛րու, խաղունէ՛րէ. լուզոնէ՛, լուզոնէ՛րու, լուզոնէ՛րէ, բայց՝ խա՛ղուք, խա՛ղուց. լու՛զոյք, լու՛զոյց և այլն։ Շեշտի տեղափոխությունն այստեղ էլ հնչյունական փոփոխություններ չի առաջացնում։

ՋՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

281. Այս հոլովման սեռականի ու տրականի վերջավորությունն է -վա, բացառականը՝ -վանէ, գործիականը՝ -ավ կամ -վանավ, ներգոյականը՝ -ամ կամ -վանամ։

	Եզակի	Հոգնակի
Ուզղ.	գէրունք	գէրունքնէ
Սեռ.	գէրունքվա	գէրունքնէրու
Տր.	գէրունքվա	գէրունքնէրու
Հայց.	գէրունք	գէրունքնէ
Բաց.	գէրունքվանէ	գէրունքնէրէ
Դործ.	գէրունքավ գէրունքվանավ	գէրունքնէրավ
Ներգ.	գէրունքամ գէրունքվանամ	գէրունքնէրամ

Այսպես են հոլովվում ժամանակ ցույց տվող բառերը. ինչպես՝ ամառնը, ամէս, քի՝շէր, ցիրակ կամ ցիրիկ, ծաուր, ուզուց, տարէ և այլն։

Ծանոթություն 1.— Սրանք բոլորն էլ հաճախ կանոնավորապես հոլովվում են առաջին հոլովմամբ, և այժմ այդ ավելի գործածական է։ Շաբաթ>շէբաթ հոլովվում է մխայն առաջին հոլովմամբ, այսպես՝ սեռ. տր. շէփտու, բաց. շէփթէ, գործ. շէփտավ, ներգ. շէփտամ, հգն. շէբաթնէ, շէբաթնէրու և այլն։ Տարի>տարէ բառը եզակիում վերջավորությունից առաջ կորցնում է իր է ձայնավորը. տարվա, տարվանէ և այլն, իսկ հոգնակիում վերականգնում նախնական ի-ն, ինչպես՝ տարինէ, տարինէրու և այլն։ Ամառն>ամառը, ձմեռն>ձըմէռը բառերը հոլովման ժամանակ կորցնում են իրենց -ը հանգը, ինչպես՝ ամառվա, ձըմէռվա, ամառվանէ, ձըմէռվանէ, հգն. ամառնէ, ձըմէռնէ և այլն։ Ամիս>ամէս բառը հոլովման ժամանակ կորցնում է է ձայնավորը, իսկ շեշտն ընկնում է նրան նախորդող կամ հաջորդող վանկի վրա, ինչպես՝ սեռ. ամսվա, գործ. ամսավ, ներգ. ամսամ, բայց բաց. ամսվա՛նէ. հոգնակիում է-ն անփոփոխ է մնում բոլոր հոլովներում, իսկ շեշտն ընկնում է -նէ ‖ -նէր մասնիկի վրա։

Հէրու>հէրվի բառը հոլովվում է այսպես. սեռ. տր. հէրվաց, բաց. հէրվաց (էնից), գործ. հէրվավ, ներգ. հէրվամ, հգն. հէր-

վինէ, սեռ. տր. հէրվինէրու և այլ ձևերը սակավ են գործածվում և այն էլ այն դեպքում, երբ խոսողը նկատի է առնում անցած մի քանի տարիները՝ առանց մասնավորացնելու. օրինակ՝ հէրվինէրուն մին հետ գնացած ըմ լա կըրճէվան ըսանցյալ տարիներին մեկ անգամ գնացել էի Կարճևան»։

Այս, ինչպես և նախորդ հոլովման բացառականի հետքրավոր ձևը գրեթե չի գործածվում։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

282. Այս հոլովման եզակի հոլովաձևերը կազմվում են ներքին թեքմամբ. սեռական և տրականն ունեն -ան ‖ -ան կամ -էն ձևը, բացառականը՝ -էն կամ -նէն, գործիականը՝ -նավ ‖ -նավ, ներգոյականը՝ -նամ ‖ -նամ.

Եզակի

Ուղղ.	*նօռնը «նուռն»*	*իզնը «եզն»*	*թուռնը «թոռ»*
Սեռ.	*նըռան*	*իզէն*	*թուռէն*
Տր.	*նըռան*	*իզէն*	*թուռէն*
Հայց.	*նօռնը*	*իզնը*	*թուռնը*
Բաց.	*նըռնէն*	*իզնէն*	*թուռէն*
	նըռան էնից	*իզէն էնից*	*թուռէն էնից*
Գործ.	*նըռնավ*	*իզնավ*	*թուռնավ*
Ներգ.	*նըռնամ*	*իզնամ*	*(թուռնամ) թուռէն մանջին*

Հոգնակի

Ուղղ.	*նըռնէր*	*իզնէր*	*թուռնար*
Սեռ.	*նըռնէրու*	*իզնէրու*	*թուռնէրու*
Տր.	*նըռնէրու*	*իզնէրու*	*թուռնէրու*
Հայց.	*նըռնէր*	*իզնէր*	*թուռնէրու*
Բաց.	*նըռնէրէ*	*իզնէրէ*	*(թուռնէրէ)*
	նըռնէրու	*իզնէրու*	*թուռնէրու*
	(ն, հ)էնից	*(ն, հ)էնից*	*(ն, հ)էնից*
Գործ.	*նըռնէրավ*	*իզնէրավ*	*թուռնէրավ*
Ներգ.	*նըռնէրամ*	*իզնէրամ*	*(թուռնէրամ) թուռնէրու մանջին*

Այսպես հոլովվում են -ը հանգող մեկևկես վանկանի բառերը։

283. Եզակի սեռականում -էն ունենում են այս հոլովման բառերից նրանք, որոնց առաջին վանկի ձայնավորն է ա, է, ի, ու, ու կամ ö. այդ ձայնավորները բոլոր հոլովիներում էլ մնում են անփոփոխ, թեև հոգնակի թեք հոլովիներում գտնվում են շեշտից առաջ. հոգնակիի համար այդ բառերն ստանում են -ար ‖ -ար մասնիկը՝ ըստ ձայնավորների ներդաշնակության. Այդ բառերն են.

ակն>ակնը	սեռ. ակէն	հգն. ակնար
բեռն>բէռնը	» բէռէն	» բէռնար
գառն>գ'ոռնը	» գ'ոռէն	» գ'ոռնար
դաղձն>դէղձնը	» դէղձէն	» դէղձնար
եղն>յէղնը	» յէղէն	» յէղնար
եզն>իզնը	» իզէն	» իզնար
թոռն>թուռնը	» թուռէն	» թուռնար
լեառն>լէռնը	» լէռէն	» լէռնար
խաոն>խաոնը	» խաոէն	» խաոնար
խէժ>խէժնը	» խէժէն	» խէժար
կամն>կամնը	» կամէն	» կամնար
հարսն>հարսնը	» հարսէն	» հարսնար
մասն>մասնը	» մասէն	» մասնար
մատն>մատնը	» մատէն	» մատնար
ոզն>ուզնը	» ուզէն	» ուզնար
որդն>ուռնը	» ուռէն	» ուռնար
սամխ>սամնը	» սամէն	» սամնար
սառն>սառնը	«սառուցյա» սեռ. սառէն, հգն. սառնար

Դրանցից բէռնը, իզնը, լէռնը բառերի սեռական ու տրականն ունեն նաև բէռան, իզան, լէռան ձևերը.

Ծանոթություն 1.— Այս բառերի հոլովման ժամանակ թե եզակի, և թե հոգնակի բոլոր հոլովիներում էլ շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա. ինչպես՝ թուռնը, թուռէն, թուռնէրու և այլն.

284. Եզակի սեռականում -ան ունենում են այն բառերը, որոնք առաջին վանկում ունեն o ձայնավորը՝ սառցված գրա-

բարյան ու-ից. դրանք հոգնակիի համար ստանում են -էր մասնիկը (տես § 264, ծանոթություն 3 և § 265)։

Այդ բառերն են.

կուռն>կօռնը	սեռ.	կըռան	հգն.	կըռնէր
նուռն>նօռնը	»	նըռան	»	նըռնէր
փուռն>փօռնը	»	փըռան	»	փըռնէր
խուրձն>խօրզնը	»	խըրզան	»	խըրզնէր
ծունգն>ծօնգնը	»	ծընգան	»	ծընգնէր
մուկն>մօկնը	»	մըկան	»	մըկնէր
ունկն>ունգնը	»	ընգան	»	ընգնէր
շուն>շօն	»	շան	»	շընէր
տուն>տօն	»	տան	»	տընէր

Այսպես և՝ ճիւղ>ճօղնը, սեռ. ճըղան, հգն. ճըղնէր։

Ծանոթություն 1.— Զուկն, ծունգն, մուկն, ունկն բառերը բարբառումս ունեն կրկնակի ձևեր, որոնցից մեկը՝ այս հոլովման համաձայն, մյուսը՝ առաջին, այսպես.

ձուկն>ձօկնը	սեռ.	ձըկան	հգն.	ձըկնէր
>ձօկուն	»	ձօկնու	»	ձօկուննէ
մուկն>մօկնը	»	մըկան	»	մըկնէր
>մօկուն	»	մօկնու	»	մօկուննէ
ծունգն>ծօնգնը	»	ծընգան	»	ծընգնէր
>ծօնգուն	»	ծօնգնու	»	ծօնգուննէ
ունկն>օնգնը	»	ընգան	»	ընգնէր
>օնգուն	»	օնգնու	»	օնգուննէ

Սունկն բառն ունենք միայն՝ սօնգուն, սօնգնու, սօնգուննէ, սօնգուննէրու ձևով։

Ծանոթություն 2.— Այս բառերի հոլովման ժամանակ եզակիում, բացի ուղղականից ու հայցականից, շեշտն ընկնում է վերջին վանկի վրա, իսկ հոգնակիում -էր մասնիկի վրա (ուղղ. հայց. վերջին վանկ, մյուսներում՝ վերջընթերը), դրա հետևանքով բառի օ ձայնավորը, որ ստացվել է ու-ից (ճօղնը բառում՝ ու-ից) դառ-

նում է ը. ինչպես՝ նուռն>նօռնը, սեռ. նըռան, հգն. ուղղ. նըռնէը, սեռ. նըռնէրու. խուրձն>խօրձնը, սեռ. խըրձան, հգն. ուղղ. խըրձնէը, սեռ. խըրձնէրու. կուռն>կօռնը, սեռ. կըռան, հգն. ուղղ. կըռնէը, սեռ. կըռնէրու և այլն։

Պետք է դիտել, սակայն, որ իրականում ոչ թե շեշտը վերջին վանկն ընկնելու հետևանքով է օ (<ու)-ն սղվել բարբառումս, այլ, ընդհակառակն, սղման պատճառով շեշտը ինացել է վերջին վանկում, ինչպես եղել է գրաբարում։ Այսպես, գրաբառում շեշտը միշտ վերջին վանկումն է լինում, որի հետևանքով էլ շեշտակորուստ ու-ն սղվում էր. բարբառումս, ավանդաբար պահպանելով գրաբարյան հոլովաձևերը՝ կատարված սղումներով (ձկան, մկան և այլն), բնականաբար շեշտը վերջավանկում էլ պետք է մնար, քանի որ ը-ն շեշտ չի կրում։ Այս դրույթը հաստատում են նախորդ ծանոթության մեջ բերված բառերի շեշտավոր կրկնաձևերը, որոնց մեջ օ(<ու)-ն, այլևս սղման չենթարկվելով, շեշտն իր վրա է կրում (ձօկնու, մօկնու և այլն)։

285. Այս հոլովումը շարունակությունն է գրաբարյան ներգրական հոլովման, որ պահպանվել է միայն եզակի սեռական-նում ու արականում, թե եզակի մյուս հոլոՅներում, և թե ամբողջ հոգնակիում ենթարկվել է ընդհանրացման, և ստացել այն վերջավորությունները, որ ընդհանուր են գրեթե բոլոր հոլովումներին։ Բացի այդ, գրաբառում այդ հոլովման ենթարկվում են ոչ միայն մեկուկես, այլև հավելվածական –և ունեցող բազմավանկ բառերը։ Մեկրու բարբառում բազմավանկ բառերն անխտիր փոխել են իրենց հոլովումը և ենթարկվում են նախորդ հոլովումներին՝ ըստ համապատասխանության։ Մեկուկես վանկանի բառերից մի քանիսն էլ, կորցնելով իրենց և հանգը, նույնպես ենթարկվում են այլ հոլովումների։

Այդ բառերն են՝

ջերմն>ջէրմ	սեռ.	ջէրմու	հգն.	ջէրմար
սերմն>սըէրմ	»	սըէրմու	»	սըէրմար
աղրն>աղր	»	ախտու	»	ախտար
եօթն>օխտը	»	օխտու	»	—
տասն>տասը	»	տասու	»	(տասընէ)

Ինն>իններ բառը թեև պահպանել է և հանգը, բայց գարձյալ ենթարկվում է առաջին հոլովման։ Մի խումբ բառեր, որոնք վերևում բերված են իբրև այս հոլովման ենթարկվողներ, հաճախ ենթարկվում են նաև առաջին հոլովման։ Այդ բառերն են.

բեռն>բէռնը	սեռ.	բէռէն,	բէռան	կամ	բէռնու
գառն>գ֊ոռնը	»	գ֊ոռէն	կամ	գ֊ոռնու	
կամն>կամ֊ը	»	կամէն	»	կամ֊ու	
մատն>մատնը	»	մատէն	»	մատնու	
մատն>մատնը	»	մատէն	»	մատնու	
դաշն>դէշնը	»	դէշէն	»	դէշնու	
		(վերջինն ավելի գործածական)			
որդն>ուռնը	սեռ.	ուռէն	կամ	ուռնու	

Վերջապես, դ֊ոնց հակառակ, մի քանի բառեր գրաբարում ենթարկվել են այլ հոլովումների, իսկ բարբառումս, ունենալով և հանգը, այս հոլովման տակ են ընկել, դրանք են.

սամի (ավելի՝ սամիք, սեռ. սամեաց)>սաւ֊ը, սեռ. սամէն, խէժ կամ խիժ (սեռ. խիժի կամ խժի)>խէժնը, սեռ. խէժէն, ճիւղ (սեռ. ճիւղոյ)>ճօղնը, սեռ. ճըղան։

Ի վերջո պետք է նկատել, որ սեռականի -ն վերջավորութիւնը այլ բան չէ, եթե ոչ գրաբարյան -ի վերջավորութեան օրինական հնչյունափոխութեամբ (տես § 66) ստացված մի ձև. դա հաստատվում է նրանով, որ բարբառումս -ն ունեցող բառերի մեծագույն մասը (18-ից՝ 13-ը) գրաբարում ևզ. սեռականում ունեն -ի (բեռն—բեռին, գառն—գառին, պղձն—պղձին, եզն—եզին, եղն—եղին, թոռն—թոռին, լեառն—լերին, կամն—կամին, հարսն—հարսին, մատն—մատին, մատն—մատին, ողն—ողին, սառն—սառին), մնացած հնգից երեքը գրաբարում ևս ըստ այդ հոլովման չեն ենթարկվել (խառն, խէժ, սամի), իսկ երկուսը ենթարկվել են -ան հոլովման (ակն—ական, որդն—որդան). այդ հինգ բառերն էլ համապատասխանությամբ բարբառումս ենթարկվում են էնձին, ըստ § 283-ում սահմանված կանոնի։

ՎԵՑԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

286. Այս հոլովման եզակի սեռականի վերջավորությունն է -ա ‖ -ա, գործ. -ավ ‖ -ավ, ներգոյականը՝ -ամ ‖ -ամ. բացառականը ունի միայն հետգրավոր ձևը.

Ուղղ.	*Սամսօն*	*Վարդի*
Սեռ.	*Սամսօնա*	*Վարդա*
Տր.	*Սամսօնա*	*Վարդա*
Հայց.	*Սամսօնա*	*Վարդա*
Բաց.	*Սամսօնա հէնից*	*Վարդա հէնից*
Գործ.	*Սամսօնավ*	*Վարդավ*
Ներգ.	*(Սամսօնամ)*	*(Վարդամ)*
	Սամսօնա մանջին	*Վարդա մանջին*

Այս հոլովման ենթարկվում են բոլոր անձնանունները անկախ իրենց վերջավորություններից, և ու վերջացող տեզանունները. ինչպես՝ Բաքու, Բաքվա, Բաքվավ և այլն։ Այս հոլովման են ենթարկվում հաճախ նաև այն տեղանունները, որոնք ու-ով չեն վերջանում. ինչպես՝ Լիչկ (<Լիճք), Լիչկի, Մէղրա, Մէղրու, Կըրճէվան, Կըրճէվանու, բայց և՝ Լիչկա, Մէղրա, Կըրճէվանա և այլն։

Ծանոթություն 1.— Անձնանունների բացառական հոլովը, ինչպես տեսանք, ունի միայն նախդրավոր ձևը, և որովհետև հատուկ անունները բարբառում հոդ չեն ստանում, ուստի և միշտ կազմվում է հէնից ձևով (և ոչ՝ հէնից). Ընդհակառակն՝ տեղանունների բացառականը կազմվում է -ից վերջավորությամբ. ինչպես՝ Սամսօնա հէնից, բայց՝ Բաքվէնց և այլն.

Ծանոթություն 2.— Անձնանունների ներգոյականի համար նույնպես ավելի գործածական է հետգրավոր ձևը, որ կազմվում է մանջին կամ հէնամ նախադրություններով. ինչպես՝ Սամսօնա հէնամ կամ Սամսօնա մանջին, Վարդա հէնամ կամ Վարդա մանջին և այլն։ Մանջին և հէնամ հետադրությունների իմաստի մեջ նույն տարբերությունը կա, ինչ որ ներգոյականի

-ամ ‖ -ամ վերջավորությամբ և մանջին հետադրությամբ ձևերի մեջ (տես § 274).

Ծանոթություն 3.— Գործիական հոլովը հաճախ կազմվում է ինչով հետադրությամբ, որ, ինչպես և (ի)էնից, (ի)էնում հետադրությունները, դերանունների մեջ հանդես է գալիս իբրև սոսկ վերջավորություն (ինձնով, քիչնով և այլն), ինչպես՝ Սամսօնա հէնով, Վարդա հէնով և այլն։ Այս ձևը առանձնապես շատ է գործածվում ա վերջացող անձնանունների համար։

Ծանոթություն 4.— Ա, ա, վերջացող անձնանունների սեռական, տրական, հայցական հոլովները նման են ուղղականին. ինչպես՝ Սառա (Սառա), սեռ. տր. հայց. Սառա. շփոթությունից խուսափելու համար հաճախ հոլովական վերջավորություններից առաջ ավելացնում են ն, որով և մասնիկը դառնում է -նա ‖ նա. ահա այդ կարգի անձնանունների կրկնաձև հոլովումը։

Ուղղ.	*Մաշա*			*Սառա*		
Սեռ.	*Մաշա*	*կամ*	*Մաշանա*	*Սառա*	*կամ*	*Սառանա*
Տր.	*Մաշա*	»	*Մաշանա*	*Սառա*	»	*Սառանա*
Հայց.	*Մաշա*	»	*Մաշանա*	*Սառա*	»	*Սառանա*
Բաց.	*Մաշա հէնից*	»	*Մաշանա հէնից*	*Սառա հէնից*	»	*Սառանա հէնից*
Գործ.	*(Մաշավ)*	»	*Մաշանավ*	*(Սառավ)*	»	*Սառանավ*
Ներգ.	*(Մաշամ)*	»	*Մաշանամ Մաշանա մանջին*	*(Սառամ)*	»	*Սառանամ Սառանա մանջին*

Հետաքրքրական է նշել, որ այդ ն-ն գիտակցվելով իբրև բառի սեփական հնչյուն, հաճախ անցնում է նաև ուղղականին, որով և այդ անուններն ունենում են կրկնաձևեր նաև ուղղականում. ինչպես՝ Սառա և Սառան, Մաշա և Մաշան, Մարթա և Մարթան, Պարաքսյա և Պարաքսյան և այլն։ Այդ ն-ն, սակայն, որոշիչ հոդի պաշտոն չի կատարում, թեև, հավանաբար, ծագումով հոդ է եղել, որ թեք հոլովներում միալով՝ դարձել է մասնիկի տարր։

Ծանոթություն 5.— Ի վերջացող անձնանունները քեք հոլովներում կորցնում են իրենց վերջնահնչյունը. ինչպես՝ Օվի, սեռ. Օվա, գործ. Օվավ. Թաքվի, սեռ. Թաքվա, գործ. Թաքվավ. Հուռի, սեռ. Հուռա, գործ. Հուռավ. Շաշի, սեռ. Շաշու, գործ. Շաշավ. Սաքի, սեռ. Սաքա, գործ. Սաքավ և այլն։

Ծանոթություն 6.— է, ո ձայնավորներով վերջացող անձնանունների քեք հոլովներում հիմքի և վերջավորության մեջ ավելանում է յ ձայնակապը, ինչպես՝ Վաչէ, սեռ. Վաչէյա, գործ. Վաչէյավ. Զաքէ, սեռ. Զաքէյա, գործ. Զաքէյավ. Համբո, սեռ. Համբոյա, գործ. Համբոյավ. Սաքո, սեռ. Սաքոյա, գործ. Սաքոյավ և այլն։

Ծանոթություն 7.— Ու ձայնավորով վերջացող անձնանուններն ու տեղանունները քեք հոլովներում իրենց վերջնահնչյունը դարձնում են վ. ինչպես՝ Սարու, սեռ. Սարվա, գործ. Սարվավ. Բաքու, սեռ. Բաքվա, գործ. Բաքվավ. այդ անուններըը կարող են ուղղակի վ ավելացնել ու-ն անփոփոխ թողնելով՝ ու վերջացող հասարակ գոյականների նման (տես § 280, ծանոթություն 1), ինչպես՝ Սարուվա, Սարուվավ. Բաքուվա, Բաքուվավ և այլն։ Հակառակ վերոհիշյալներին, հաճախ ու, ի ձայնավորով վերջացողներն էլ կարող են շեշտը տեղափոխել վերջնահնչյունի վրա և ստանալ յ ձայնակապը՝ է, ո-ով վերջացողների նման, ինչպես՝ Օվի, սեռ. Օվիյա, գործ. Օվիյավ. Հուռի, սեռ. Հուռիյա, գործ. Հուռիյավ. Սարու, սեռ. Սարույա, գործ. Սարույավ և այլն։ Այս անունների այսպիսի հոլովումը հատուկ է Կարճևանի բարբառին. Մեղրու բարբառում շատ սակավ կարելի է լսել այդ ձևերը։

Անկանոն հոլովումներ

287. Ձայնավորով վերջացող երեք միավանկ բառեր՝ թի>թէ, ձու>ձու, լու>լու, եզակիում ենթարկվում են ու, իսկ մեկը՝ ձի>ձի, ենթարկվում է ա հոլովման. հոգնակի ուղղականում բոլորն էլ ստանում են -անք ‖ ունք և հոլովվում գրաբար ձևով։

Եզակի

Ուղղ.	թէ	ձու	լուծ	ձի
Սեռ.	թէյու	ձըվու	լի՝վուծ	ձիյա
Տր.	թէյու	ձըվու	լի՝վուծ	ձիյա
Հայց.	թէ	ձու	լուծ	ձի
Բաց.	թէյու	ձվու	լի՝վուծ	ձիյա
	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից	(ն, հ)էնից
Գործ.	թէյավ	ձըվավ	լի՝վուծավ	ձիյավ
Ներգ.	թէյամ	ձըվամ	լի՝վուծամ	ձիյամ

Հոգնակի

Ուղղ.	թիյանք	ձըվանք	լի՝վուծանք	ձիյանք
Սեռ.	թիյանց	ձըվանց	լի՝վուծանց	ձիյանց
Տր.	թիյանց	ձըվանց	լի՝վուծանց	ձիյանց
Հայց.	թիյանք	ձըվանք	լի՝վուծանք	ձիյանք
Բաց.	թիյանց	ձըվանց	լի՝վուծանց	ձիյանց
	էնից	էնից	էնից	էնից
Գործ.	թիյանքավ	ձըվանքավ	լի՝վուծանցավ	ձիյանցավ
Ներգ.	թիյանքամ	ձըվանքամ	(լի՝վուծանցամ)	(ձիյանցամ)
	թիյանց	ձըվանց	լի՝վուծանց	ձիյանց
	մանջին	մանջին	մանջին	մանջին

Ծանոթություն 1.— Թէ և ձու բառերի հոգնակի գործիականն ու ներգոյականը կազմվում են -ավ, -ամ մասնիկները ուղղականին ավելացնելով, իսկ լուծ և ձի բառերինը՝ տրականին. թիյանքավ, ձըվանքավ, թիյանքամ, ձըվանքամ, բայց՝ լի՝վուծանցավ, ձիյանցավ, լի՝վուծանցամ, ձիյանցամ։ Շնչավորի և անշունչի տարբերություն չկա այդտեղ։

Ծանոթություն 2.— Թեև թէ բառի է ձայնավորը ևս հոլովման ժամանակ հոգնակիում վերածվում է ի-ի, բայց հոլովական վերջավորությունները ծանր են, ինչպես և ձի բառի հոլովաձևերում։

288. Հայր>հար.

Ուզդ.	հար	հարաբ
Մեռ.	հօր	հարէրու
Տր.	հօր	հարէրու
Հայց.	հօր	հարէրու
Բաց.	(հօրէ) հօր էնից	հարէրէ (հարէրու) (ն, հ)էնից
Գործ.	հօրով (հօր էնով)	հարէրով (հարէրու) (ն, հ)էնով
Ներգ.	(հօր մանջին)	հարէրամ (հարէրու մանջին)

Այսպես հոլովվում են մայր>մար, մօր, մօրէ, մօրով, (մօր մանջին), մարաբ, մարէրու և այլն. կնքահայր>կընքահար, կընքահօր, կընքահօրէ, կընքահօրով, (կընքահօր մանջին), կընքահարաբ, կընքահարէրու և այլն. սանամայր>սընամէր, սընամօր, սընամօրէ, սընամօրով (նաև՝ սընամէրով), սընամօր մանջին. հոգնակին ունի երկու ձև –ար և –եք մասնիկներով. սընամէրար և սընամէրնէք, սընամէրէրու և սընամէրնէրու և այլն. երկրորդ ձևը ավելի գործածական է:

Ծ ա ն ո թ ա ց ու թ յ ու ն. Հայր>հար բառի եզակի սեռականը քո>քու սառցականից հետո գործածվելիս դառնում է հուր. ինչպես՝ քու հուր ակը լաւս գո հոր աչքը լուչս» (գործածվում է ծպրական խոսվածով):

289. Եղբայր>ախպէր.

Ուզդ.	ախպէր	ախպէրնէ կամ	ախպէրք՛
Մեռ.	ախպուր	ախպէրնէրու	ախպօրց
Տր.	ախպուր	ախպէրնէրու »	ախպօրց
Հայց.	ախպուր	ախպէրնէրու »	ախպօրց
Բաց.	ախպօր էնից	ախպէրնէրու (ն, հ)էնից	ախպօրց էնից
Գործ.	ախպէրով (ախպօր էնով)	ախպէրնէրով	ախպէրք՛ով
Ներգ.	(ախպօր մանջին)	(ախպէրնէրու մանջին)	(ախպօրց մանջին)

Այսպես հոլովվում են՝ քօրեղբայր>հէրբար, հէրբուր կամ հէրբօր, հէրբօր էնից, հէրբօրով (հէրբօր էնով), (հէրբօր մանջին), հէրբարնէ, հէրբարնէրու և այլն: Ողջույն եղբայր > ըխչըմախպէր, ըխչըմախպուր, ըխչըմախպուր էնից, ըխչըմախպէրով (ըխչըմախպուր էնով), (ըխչըմախպուր մանջին), ըխչըմախպէրնէ,

ըխչըմախպէրնէրու և այլն։ Ախպէր բառի հոգնակիի երկրորդ ձևը (ախպէրք՛, ախպօրց) ավելի գործածական է, իսկ ձէրբար և ըխչըմախպէր բառերինը՝ ոչ։ Հէրբար բառը հոլովվում է նաև առաջին հոլովմամբ, կանոնավոր կերպով, հիրբէրու, հի՛րբէրէ, հի՛րբէրավ և այլն։ Այժմյան խոսողների մոտ այդ ավելի գործածական է։

290. Քոյր>քո՛ր.

Ուղղ.	*քո՛ր*	*քի՛վէրք՛*	*կամ* *քո՛րքար*
Սեռ.	*քի՛վէր*	*քի՛վէրց*	» *քո՛րէրու*
Տր.	*քի՛վէր*	*քի՛վէրց*	» *քո՛րէրու*
Հայց.	*քի՛վէր*	*քի՛վէրց*	» *քո՛րէրու*
Բաց.	*քի՛վէր էնից*	*քի՛վէրց էնից*	» *քո՛րէրու(ն, ս)էնից*
Գործ.	*քի՛վէրավ (քի՛վէր էնավ)*	*քի՛վէրքո՛վ*	» *քո՛րէրավ*
Ներգ.	*(քի՛վէր մանջին)*	*(քի՛վէրց մանջին)*	» *(քո՛րէրու մանջին)*

Այսպես հոլովվում են. բագատուրաքոյր>քի՛վաքո՛ր «ֆեսայի քույրը», *Քի՛գվի՛քի՛վէր, Քի՛գվի՛քի՛վէրավ, Քի՛գվի՛քի՛վէրք՛ և Քի՛գվաքո՛րքար, Քի՛գվի՛քի՛վէրց և Քի՛գվաքո՛րէրու և այլն։* Հորաքոյր>հաքուր, մորաքոյր>մաքուր *բառերը բաղադրիչները չդիտակցելու հետևանքով կանոնավորապես են թարկվում են առաջին հոլովման՝ հաքրու, մաքրու, հաքրավ, մաքրավ, հաքուրնէ, մաքուրնէ, հաքուրնէրու, մաքուրնէրու և այլն։*

291. Տէր>տա՛ր.

Ուղղ.	*տա՛ր*	*տա՛րար*
Սեռ.	*տէ՛ռնը*	*տէ՛րէրու*
Տր.	*տէ՛ռնը*	*տէ՛րէրու*
Հայց.	*տէ՛ռնը*	*տէ՛րէրու*
Բաց.	*տէ՛ռնը հէ՛նից*	*տէ՛րէրէ՛ (տէ՛րէրու (ն, ս)էնից)*
Գործ.	*տէ՛րավ*	*տէ՛րէրավ*
Ներգ.	*(տէ՛ռնը մանջին)*	*տէ՛րէրամ (տէ՛րէրու մանջին)*

Այսպես հոլովվում են. տրնատէր>տրնատա՛ր, տրնատէռնը, տրնատէռնը հէ՛նից, տրնատէռնավ, տրնատա՛րար, տրնատէ՛րէրու *և այլն.* երախատէր>ըրխատա՛ր, *ըրխատէռնը, ըրխատէռնավ և այլն։ Այս բառերը նույնպես կարող են հոլովվել նաև առաջին*

հոլովմամբ. աբնատարու, տբնատարէ, բրխատարու, բրխատարէ և այլն. հաճախ թէ տար-ը և թէ այս երկուսը հոլովվում են նաև -ուջ հոլովմամբ. տիրուջ, տբնատիրուջ, բրխատիրուջ, բաց. տիրուջ էնից, տբնատիրուջ էնից, բրխատիրուջ էնից (գործ. տիրուջով, տբնատիրուջով, բրխատիրուջով—անգործածական), ներգ. տիրուջ մանջին, տբնատիրուջ մանջին, բրխատիրուջ մանջին. հոգնակին կանոնավոր է։

292. Տիկին>տէկին «սկեսուր».

Ուղղ.	տէկին	տէկիններ
Սեռ.	տէկնուջ	տէկիններու
Տր.	տէկնուջ	տէկիններու
Հայց.	տէկնուջ	տէկիններու
Բաց.	տէկնուջ էնից	տէկիններէ, տէկիններու (ն, ս)էնից
Գործ.	(տէկինով) տէկնուջ էնով	տէկիններով
Ներգ.	(տէկինում) տէկնուջ մանջին	(տէկիններում), տէկիններու մանջին

Այսպես հոլովվում է. տաճտիկին>տրնդէկէն, տբնդէկնուջ, տբնդէկնով (տբնդէկնում), տբնդէկիններ, տբնդէկիններու և այլն։

293. Կին(իկ>կընէկ՛.

Ուղղ.	կընէկ՛	կընանէք՛
Սեռ.	կընգա	կընանաց, կանանց
Տր.	կընգա	կընանաց, կանանց
Հայց.	կընգա	կընանաց, կանանց
Բաց.	կընգա (ն, ս)էնից	կընանաց էնից
Գործ.	կընգով	(կընանաց էնով)
Ներգ.	(կընգում) կընգա մանջին	(կընանաց մանջին)

Այսպես հոլովվում են. աղչիկ>ախչէկ. ըխչրկա, ըխչրկանէ, ըխչրկա (ն, ս)էնից, ըխչրկով, ըխչրկանով, ըխչրկա մանջին, ըխչրկէրք, ըխչրկէրանց, ըխչրկէրք՛ով, ըխչրկէրք՛ում, ըխչրկէրանց մանջին. եղբայրակին>ըխպրրակէն, ըխպրրկընգա, ըխպրրկընգով, ըխպրրկընանէք՛, ըխպրրկընանց և այլն. տեգրակին>տի՛գրակէն, տի՛գրի՛կընգա, տի՛գրի՛կընգով, տի՛գրի՛կընանէք՛, տիգրիկընանց և այլն։

294. Տղայ>տրդա.

Ուղղ.	տրդա			տրդարք՝ կամ տրդէրք՝
Սեռ.	տրդէյի	կամ	տրդէյու	տրդէրաց
Տր.	տրդէյի	»	տրդէյու	տրդէրաց
Հայց.	տրդէյի	»	տրդէյու	տրդէրաց
Բաց.	տրդու (ն, հ)էնից	»	տրդէյու (ն, հ)էնից	(տրդէրաց էնից)
Գործ.	տրդէյավ, տրդավ			տրդարքմ՝ով կամ տրդէրքմ՝ով տրդէրաց էնավ
Ներգ.	(տրդէյամ, տրդամ) տրդու մանջին			(տրդարքմ՝ամ կամ տրդէրքմ՝ամ տրդէրաց մանջին)

Նույն կարգի՝ վկայ>վրկա բառը կանոնավորապես հոլովվում է առաջին հոլովմամբ. վրկայու, վրկայէ, վրկայավ. (վրկայամ), վրկանէ, վրկանէրու և այլն։

295. Ինչպես երևում է վերև բերված հոլովումներից, Մեղրու բարբառը չունի գրաբարի անկանոն հոլովվող՝ զուղ, այր, օր, տիւ, բառերը։ Դրանցից այր և տիւ բառերը բոլորովին չկան բարբառումս. գիւղ>զուղ կանոնավորապես հոլովվում է առաջին հոլովմամբ, իսկ օր>օր՝ չորրորդ հոլովմամբ։ Դրանց հակառակ, ձայնավորով վերջացող չորս միավանկ բառեր՝ ձի, թլ, ձու, լուս իրենց ուրույն հոլովումն են կազմել, իսկ տրդա բառը խառը կերպով հոլովվում է ի և ու հոլովիչներով. Համենայն դեպս, քե այս հինգ բառերը, և քե վերևում բերված գրաբարից եկող բոլոր անկանոն հոլովման բառերը, ձգտում են ցույց տալիս կանոնավոր հոլովումներին ենթարկվելու։ Այդ բոլոր բառերն էլ ունենալով իրենց հատուկ հոլովումը, երբեմն ենթարկվում են նաև առաջին հոլովմանն, այնպես որ հաճախ կարելի է լսել՝ ճարու «հօր», տարու «տիրոջ», ախպէրու «եղբօր», ին՝բրէրու «հնրեղբօր», ախչէկու «աղջկա» և այլն։

ԳՐԱԲԱՐ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

296. Որքան էլ լեզուն ձգտում է ընդհանրության և, հետևաբար, անկանոնությունների ու հնաբանությունների վերացմանն, այնուամենայնիվ սերունդների ավանդածը միանգամից չէ, որ ենթարկվելով ընդհանուրին, վերափոխվում, միօրինակության է վերածվում։ Շատ ձևեր, որոնք իրրև ամրողջություն, իրրև սիստեմ վաղուց արդեն վերացել են բարբառից, բայց և

այնպես դեռ սրոշ տեղեր դժալ են տալիս իրենց գոյությունը. դրանք գրաբարյան հետևյալ ձևացօրդներն են.

ա) Գրաբարյան սեռական և տրականի *-ից* ‖ *-ից, -ուց* ‖ *-ից, -էց* վերջավորությունները, որ սովորաբար սահմանում են.

*1) Գրաբարից ձևացած մի քանի անեզական բառեր. ինչպես՝ ապրանք>ապրանքե, սեռ. տր. ըպրանաց. երկինք>յերքինք, սեռ. տր. յերկնաց (և՝ յերքինից). *հարցանք>հարցանք, սեռ. տր. հրըցանաց. յանցանք>հանցանք, սեռ. տր. հանցանաց. յարքանիճ>հարքանք, սեռ. տր. հարքանաց և այլն։ Այդ բառերը կարող են գործածվել իրրև սովորական եզակի թվով բառեր (ինչպես՝ աչք>աշկ), և հոլովվել առաջին հոլովմամբ. ինչպես՝ ապրանքու, յերքինքմե, հարցանքու և այլն։ Հանցանք և հարքանք բառերը գրականից մուտք գործած բառեր են և իրրև այդպիսիք էլ պահում են գրաբարյան ձևերը.*

2) Հավաքական հոդնակիները, որոնք հոգնակի ուղղականում տարբեր վերջավորություններ ունենալով, համապատասխանորեն տարբեր վերջավորություններ էլ ունեն սեռականում ու տրականում. ուստի և ըներում ենք այդ բոլոր բառերը իրենց եզակի սեռականով, հավաքական-հոգնակի ուղղականով ու սեռականով.

գիր>գիր «գիրք», սեռ. գի՝րմե
հվք. գի՝րմենք, սեռ. գի՝րմենց
գուրք>գուրք, սեռ. գրբքու
հվք. գրբքարէ, սեռ. գրբքարաց
ընկեր>ընգէր, սեռ. ընգէրու
հվք. ընգէրուք, սեռ. ընգէրուց
կուռն>կօռնը, սեռ. կրռան
հվք. կրռնաւէ, սեռ. կրռնաւաց
ճիւղ>ճօղնը, սեռ. ճրղան
հվք. ճրղնարէ, սեռ. ճրղնարաց
սեամ>չէմք՛, սեռ. չէմք՛մե
հվք. չրմքարէ, սեռ. չրմքարաց
եզն>իզնը, սեռ. իզէն (և՝ իզմեն)
հվք. իզմենք, սեռ. իզմենց
կուռը>կրռօր, սեռ. կրռրու
հվք. կրռրնարէ, սեռ. կրռրնարաց

խիզան>խէզան, սեռ. խէզանու

հվք. խըզնանէ, սեռ. խըզնանաց

լեզու>լիզի, սեռ. լիզ(վ)ի

հվք. լի՛զվէնէք՛, սեռ. լի՛զվէնէց

խաշու>խաշու, սեռ, խաշ(վ)ու

հվք. խըշվէնէք՛, սեռ. խըշվէնէց

խաղող>խաղու, սեռ. խաղ(վ)ու

հվք. խըղվէնէք՛, սեռ. խըղվէնէց

մատակ>մատակ «առուց», սեռ. մըտակու

հվք. մըտըկօտան, սեռ. մըտըկօտանաց

եկեղեցի>գըղէցէ, սեռ. գըղէցէ

հվք. գըղըցօնէք՛, սեռ. գըղըցօնաց

փեսայ>փըէսէ, սեռ. փըէսէ

հվք. փըսօնէք՛, սեռ. փըսօնայ

գերեզման>գի՛րիզման, սեռ. գի՛րիզմանու

հվք. գի՛րի՛զմի՛նէնէք՛, սեռ. գի՛րի՛զմի՛նէնէց

հնձան>ընձան, սեռ. ընձանու

հվք. ընձընանէք՛, սեռ. ընձընանայ

այգի>իգի, սեռ. իգէ

հվք. իգինէնէք՛, սեռ. իգինէնէց

ոսկր>ուսկուռ, սեռ. ուսկուռու

հվք. ըսկըռօտէք՛, սեռ. ըսկըռօտաց

ջրորդան>շրուռկան, սեռ. շրուռկանու

հվք. շրըռկընանէք՛, սեռ. շրըռկընանայ

պատուհ>պըտօհ, սեռ. պըտհու

հվք. պրտըհնատէ, սեռ. պրտըհնատայ

շատ>շէտ, սեռ. շէտու

հվք. շէտուք, սեռ. շէտուց

Այս օրինակները ցույց են տալիս, որ -անք || -անք *մասնիկն ունեցողները սեռականում կանոնավոր կերպով ունենում են* -ացՑ || -աՑց. -արէ, -աեէ || -աՑէ, -օճէ, -ատէ, -օտէ, -օտաճ *մասնիկներն ունեցողները՝ համապատասխանաբար,* -արաց, -աճաց || աՑաց, -օՑաց, -ատաց, -օտաց, -օտաճաց. -էՑէք՝ *մասնիկն ունեցողները՝* -էՑէց, և, վերջապես, -ուք *մասնիկն ունեցողները՝* -ուց,

Սրբմարանք, դէղարանք, գէղարանք *բառերը գործածվում են իբր եզակի և կանոնավորապես հոլովվում են առաջին հոլովմամբ. սեռ. սրբմարանքու, դէղարանքու, գէղարանքու, հգն. սրբմարանքնէ, դէղարանքնէ, գուղարանքնէ և այլն։*

3) Ընտանիք կամ ազգականներ ցույց տվող -եանք>անք, -ոք, || -ոյք, -ոնք>-ուք || -ունք, -ենք>-էք՝ մասնիկներով կազմված հոլաքականները, ինչպես՝

Ծովեանք>Ծովաք	սեռ.	*Ծովաց*	բաց.	*Ծովաց*	էնից
Ռուշանեանք>Ուրշանաք	»	*Ուրշանաց*	»	*Ուրշանաց*	»
Գուգեանք>Գուգաք	»	*Գուգաց*	»	*Գուգաց*	»
Վաչեանք>Վաչյանք	»	*Վաչյանց*	»	*Վաչյանց*	»
Փարեանք>Փարյանք	»	*Փարյանց*	»	*Փարյանց*	»
աներանք>հրնէրաք	»	*հրնէրաց*	»	*հրնէրաց*	»
հայր(անք)>հէրանք	»	*հէրաց*	»	*հէրաց*	»
մերունք>մէրուք	»	*մէրուց*	»	*մէրուց*	»
ձերունք>ձէրուք	»	*ձէրուց*	»	*ձէրուց*	»
Մազունք>Մազուք	»	*Մազուց*	»	*Մազուց*	»
Բոյախչունք>Բի՛յախչուք	»	*Բի՛յախչուց*	»	*Բի՛յախչուց*	»
Տիրացուունք>Տի՛րի՛սվէք՛	»	*Տի՛րի՛սվէց*	»	*Տի՛րի՛սվէց*	»
Մկոյեանք>Մըկէք՛	»	*Մըկէց*	»	*Մըկէց*	»

Այս կարգի բառերի ինչպես բացառականը, այնպես էլ գործիականն ու ներգոյականը ունեն միայն հետադրավոր ձևեր։

Գործիականը կազմվում է -էնավ հետադրությամբ, ինչպես՝ Ծովաց էնավ, Ուրշանաց էնավ, հէրաց էնավ և այլն։

Ներգոյականը կազմվում է մանչին կամ էնամ հետադրություններով. ինչպես՝ Գուգաց մանչին կամ Գուգաց էնամ, Մազուց մանչին կամ Մազուց էնամ, մէրուց մանչին կամ մէրուց էնամ և այլն։

բ) Թրաբարյան սեռականի և տրականի -ոց>օց վերջավորություն, *որ կանոնավոր կերպով առանում են* -ացի, -եցի, -ցի>-էցէ, -ցի, -ցէ *մասնիկներով կազմված՝ որ տեղացի լինելը ցույց տվող բառերը, ինչպես՝*

մեղրեցի>մըղրէցէ	հգն.	*մըղրէցէք՛*	սեռ.	*մըղրէցօց*
կարմանցի>կըրճքլէցէ	»	*կըրճքլէցէք՛*	»	*կըրճքլէցօց*
Քեացի>Քէյըցի	»	*Քէյըցէք՛*	»	*Քէյըցօց*

օրդուբաղի>ուրդվաթցի հգն. ուրդվաթցէք՛ սեռ. ուրդվաթցօց
երևանցի<րէվանցէ » րէվանցէք՛ » րէվանցօց
գավանցի>գափանցէ » գափանցէք՛ » գավանցօց

Այս բառերի բացառական, գործիական ու ներգոյական հոլովները (թե եզակի, և թե՛ հոգնակի) նույնպես կազմվում են էնից, էնավ, էնամ, մանչին հետադրությունների:

գ) Վերջապես, գրաբարյան ձևացորդ պետք է համարել նաև մարդ բառի հոլովումը, որ եզակիում կանոնավոր կերպով հոլովվելով առաջին հոլովմամբ (մարդու, մարդէ և այլն), հոգնակիում ունի հետևյալ ձևերը. ուղղ. հայց. մարդէք՛, սեռ. տր. մարդկանց, բաց. մարդկանցէ. մարդկանց էնից, գործ. մարդկանցավ (մարդկանց էնավ), ներգ. մարդկանցամ (մարդկանց մանչին, մարդկանց էնամ):

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

297. Թեև այժմյան խոսողների լեզվում հոլովումը, ընդհանուր առմամբ, ներկայացնում է այն պատկերը, որ նկարագրեցինք նախընթաց էջերում, այնուամենայնիվ հաճախ կարելի է լսել նաև այնպիսի ձևեր, որոնք գալիս են հնից՝ Մեղրու բարբառի ավելի հնադարյան վիճակից: Մաթևոս Շահյանցն իր քերականության մեջ, խոսելով Մեղրու բարբառի կրած փոփոխությունների մասին, հիշում է մի քանի ձևեր, որոնք նա լսել է իր մանկության ժամանակ՝ իրրև միակ ձևեր, իսկ այժմ լեզվից արդեն դուրս են մղված. արդի խոսողների մոտ նրանք գործածվում են գլխավորապես առանձին դարձվածքներում: Այդ հնացած ձևերից համեմատաբար ավելի գործածականները հետևյալներն են.

ա) Եզակի սեռականի -է (<ի) վերջավորությունը: Այդ վերջավորությունն, ինչպես տեսանք, ունեն երկրորդ հոլովման բառերը՝ կանոնավոր կերպով. բայի նրանցից, մյուս հոլովներին պատկանող բառերից սեռականում իրենց իսկական ձևի հետ ունեն նաև -է վերջավորությունը հետևյալ բառերը.

այսօր>ասնէր սեռ. ասրէ (միայն)
ասեղն>ասուղ » ասուղու և ասղէ
բարեկենդան>բի՛րքինդանն » բի՛րքի՛նդէնու և բի՛րքի՛նդէնէ

քան>բէն	*սեռ. բէնու*	*և բէնէ*
կիւրակի>գի՛րաքէ	» *(գի՛րաքվա)*	» *գի՛րկէ*
գիրկ>գիրգ	» *գիրգու*	» *գի՛րգէ*
զատիկ>զէդէկ	» *զէթկու*	» *զէթկէ*
զանգակ>զէնգէակ	» *զի՛նգէկու*	» *զի՛նգէկէ*
եաք>էթկէ	» *էթկու*	» *էթկէ*
աշունք>աշօնք	» *ըշօնքվա*	» *ըշօնքէ*
թաղ>թաղ	» *թաղու*	» *թաղէ*
թաքաւոր>թաքաւօր	» *թաքաւօրու*	» *թաքաւօրէ*
խաղող>խաղու	» *խաղ(վ)ու*	» *խաղվէ*
խաշու>խաշու	» *խաշ(վ)ու*	» *խաշվէ*
կատար>կատար	» *կատարու*	» *կըտարէ*
կողք>կուխկ	» *կուխկու*	» *կուխկէ*
կատու>կատու	» *կատ(վ)ու*	» *կատվէ*
սար>սար	» *սարու*	» *սարէ*
որմն>հու րմ	» *հուրմու*	» *հուրմէ*
մէջ տեղ>մաշտէղ	» *մաշտէղու*	» *մաշտէղէ*
այգուց>ուդուց	» *ուդուցվա*	» *ուդցէ*
ուո>հօո	» *հօոու*	» *հօոէ*
պանիր>պանէր	» *պանրու*	» *պանրէ*
սուտ>սօտ	» *սըտու*	» *սըտէ*
վարպետ>վիւրդիւվիւր	» *վիւրդիւվիւրնէ*	» *վիւրդիւվիւրէ*
սրեգակն>իէնակ	» *իէնակու*	» *իէնակէ*
ցագան>ցէգմէն	» *ցի՛գմէնու*	» *ցի՛գմէնէ*
լեզու>լիւզի	» *լիւզ(վ)ի*	» *լիւզվէ*
ամխս>ամէս	» *ամսվա*	» *ամսէ*
լոյս>լիւս	» *լիւսնի*	» *լիւսէ*
գետ>գէտ	» *գէտու*	» *գէտէ*
քար>քար	» *քարու*	» *քարէ*
ծառ>ծառ	» *ծառու*	» *ծառէ*
գիրք>գիրք	» *գիրքվա*	» *գիրքէ*
երես>իրիս	» *իրիսվա*	» *իրիսէ (ի՛րիսէ)*

Շահյանցն իր քերականության վերջում կցել է սեռակա-նում է ունեցող բառերի ցանկը, որի մեջ բերված են վերո-հիշյալ բառերի մեծ մասը. նրա ցուցակում կան նաև բազմա-

Թիվ ոչ հայերեն բառեր, որոնք մենք անխտիր դուրս ձգեցինք-բացի դրանից, նա իրրև սեռական րերել է այդ ցուցակում -ի(ն) վերջավորու թյամբ տրական ունեցող բառերը, որ մենք առաձնացրինք (տես § 301)։ Ընդհակառակն, նրա մոտ չկան մի քանի բառեր, որ մենք վերը հիշեցինք, ինչպես՝ ամէս, լուս, գետ ծառ, ճօր և այլն։

*բ) Բազմավանկ բառերի սեռականի -ու ‖ -ւս վերջավորությունը ճոգնակի թվում այժմ ընդհանրապես ավելանում է -էր ճոգնակի մասնիկին, բայց նաճախ ավելացվում է ուղղականի -ել մասնիկին, որի -է-ն, այս դեպքում, ընկնում է. *ինչպես՝ մատաղ>մատաղակ, հգն. մատաղնէ, սեռ. մատաղնէրու և մըտըկնու. հնձան>ընձան, հգն. ընձաննէ, սեռ. ընձաննէրու և ընձաննու. բժժոժ>բժժուժ, հգն. բժժուժնէ, սեռ. բժժուժնէրու և բժժուժնու և այլն։ Այդ հոգնակի սեռականը դորձածական է ավելի շատ -օրիճ ‖ -ըճին մասնիկով բառերի համար (տես § 217, ծանոթ. 2)։ Հոգնակի սեռականի այդ երկու վերջավորություններից (-ու և -ենրու) կարելի է եզրակացնել, որ մի ժամանակ հոգնակի ուղղականն էլ ունեցել է երկու տարբեր վերջավորություններ, հավանաբար տարբեր բառերի համար՝ որոշ կանոնով. -ենէ, որ ստացված է գրաբարյան -եի-ից, և -ենէր, որ ստացված է -եեաբ -ից. ժամանակի ընթացքում ուղղական ու հայցական հոլովներում տարածվել է -ենէ-ն և վերացրել -ենէր-ը, իսկ մյուս հոլովներում, ընդհակառակն, ընդհանրացել է -ենէր-ը։ Դրա պատճառն, անշուշտ այն է եղել, որ թեք հոլովներում -ենէ մասնիկի է ձայնավորի անկմամբ հոգնակիի մասնիկը շատ է մթագնվել, իսկ երբեմն էլ -ն-ի անկման շնորհիվ հոգնակի և եզակի սեռականը նույնացել են. այսպես օրինակ, -ենը հանգն ունեցող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է մյայն է ձայնավորի հավելումով (տես § 266, ծանոթ. 6), որ, իհարկե, երկու -ե-երից մեկի անկման արդյունքն է (օր. թէթեղն>թէթեխնը, թէթեխննէ>թէթեխնէ։ Արդ, եթե դրանց սեռականը կազմենք ուղղականից (առանց -էր-ի), ապա կստանանք այն, ինչ որ ունեն այդ բառերը եզակի սեռականում. *ինչպես՝ կոտիճ>կուտէճը, սեռ. կուտէճու, հգն. ուղղ. կուտէճնէ, սեռ. կուտէճնէրու կամ կուտէճնու. թէթեղն>թէթեխնը, սեռ. թէթեխնու, հգն. ուղղ. թէթեխնէ. սեռ. թէթեխնէրու կամ թէթեխնու և այլն. ինչպես երևում է, միակ տարբերությունն այն է, որ

եզակիում շեշտն ընկնում է վերջընկեր, իսկ հոգնակիի այդ ձևում՝ վերջին վանկի վրա, բայց, ինչպես մինչև այժմ բազմիցս նշված է, շեշտը հոլովման մեջ այնքան էլ հաստատուն չէ. հաճախ միևնույն բառի նույն հոլովում շեշտը երբեմն այս, երբեմն այն վանկում կարող է լինել. ինչպես՝ սուբ>սօբ, սեռ. սբրու և սօբու. ծունկն>ծօնգնը, ծօնգնու և ծընգնու և այլն. Այս բոլորի հետևանքով առաջացող անխուսափելի շփոթությունն է եղել պատճառը, որ հակառակ ուղղականին ու հայցականին, մյուս հոլովներում հաղթել և ընդհանրացել է՝ ենաբ>ենք ձևը մասնիկը: Այս սեռականից, ահա, սեռականի այս ձևը, թեև այժմ սակավ գործածական, բայց չատ արժեքավոր մնացորդ է լեզվական ձևերի զարգացման ընթացքն ուսումնասիրելու համար:

գ) Եզակի ներգոյականի -օմ (-ըմ) վերջավորությունը, որ շատ հաճախ կարելի է լսել դարձվածքների և առակների մեջ, բայց երբեմն նաև սովորական խոսակցության մեջ ոգում. ինչպես՝ պատ>պատ, ներգ. պատում և պատօմ. գլուխ>գլօխ, ներգ. գլխում և գլխօմ և այլն: Ներում ենք մի քանի ասացվածքներ, որոնց մեջ գործածված է այդ կարգի ներգոյականը. Ջոկնը ջի՝բօմ ի մի՝ծանիլ, օդձը՝ ավազօմ «ձուկը ջրում կմնծանա, օձը ավազում». Ջի՝բօմի՝ միջ չի նի, սրտումը սէր չի նիլ «գրպանում փող չկինի, սրտումը սերչի լինի»: Գլխօմը խելք չի կա, սրտումը՝ յավ «գլխումը խելք չկա, սրտումը՝ յավ». Շրվաքօմը ման գիւղում «սովիրում ման եկող» (=ծուլ): Տրնօմը՝ ու բանկ, ղրրքօմը՝ ճօտ «տանը աքլոր, ղրսում ճուտ» (=նէրսը սատանա, դուրսը քահանա) և այլն.

Մ. Շահյանցն իր «Համառոտ քերականության» մեջ առաջին հոլովման համար բերում է երկու օրինակ, մեկն այն է, ինչ որ մենք բերել ենք § 276-ում, երկրորդ օրինակն ամփոփում է այն հնաբանություններն, որ մենք վերը հիշեցինք, և, որոնք ըստ իր դրածի, լսել է յուր մանկության տարիներին. սորան բերում ենք այդ օրինակն առանց որևէ փոփոխության:

Եզակի	*Հոգնակի*
Ուղղ. մախատ	*մխբանէ*
Սեռ. մխատէ	*մխբանուն*
Հայց. մախատը	*մխբանէն*

Գոթ. մխատավ	մխըտներաւվ
Բաց. մխատէն	մխըտներէն
մխատաւն էնից	մխըտներաւն էնից

Ծանոթություն.—Տրական ու ներգոյական հոլովները, մեզ անհայտ պատճառներով, առհասարակ չեն բերվում, թեև ներգոյական հոլովի -օմ և -ամ վերջավորությունների մասին խոսում է հենց առաջին իսկ էջում։

ՍՂՈՒՄ

298. Ինչպես հնչյունական փոփոխությունները քննելիս բազմիցս ասված է, Մեղրու բարբառում շեշտափոխության շնորհիվ գրաբարում եղած՝ մի քանի ձայնավորների սղումին և ամփոփումին (ի, ու, է և այլն) փոխարինել է բոլոր նախաշեշտ ձայնավորների սղումը։ Հոլովման մեջ, սակայն, այդ երևույթը չափազանց անհաստատ է։ Նույնիսկ գրաբարյան ի, ու ձայնավորների սղումը, որ ավանդաբար դեռ կատարվում է, դարձյալ խստորեն չի պահպանվում։ Այսպես՝ ի, ու ձայնավորները, որոնք ստացվել են գրաբարյան նույն հնչյուններից, սովորաբար սըղվում են. ինչպես՝ բիր>բիր, սեռ. բըրու. գինձ>գինձ, սեռ. գի՛նձի. դուրք>դուրք, սեռ. դրրքու. լուր>լուր, սեռ. լրրու և այլն, բայց դրանց հետ միասին ասվում են նաև բրու, գինձի, դուրքու, լուրու և այլն։

Եթե բարբառիս ի, ու ձայնավորներն ստացվել են գրաբարյան որևէ այլ հնչյունից, ապա սղման ենթակա չեն. ինչպես՝ ցել>ցիլ, սեռ. ցիլի. հդն. ուղղ. ցիլը, սեռ. ցիլէրու. կող>կուղ, սեռ. կուղու, հդն. ուղղ. կուղար, սեռ. կուղէրու. ծոպ>ծուպ, սեռ. ծուպու, հդն. ուղղ. ծուպար, սեռ. ծուպերու և այլն։

Եթե գրաբարյան ի, ու ձայնավորները բարբառումս վերածվել են որևէ այլ հնչյունի, ապա՝ սովորաբար սղվում են. ինչպես՝ սուր>սօր, սեռ. սըրու, հդն. սըրէր. ճուա>ճօա, սեռ. ճըրու, հդն. ճըրէր. թուզ>թօզ, սեռ. թըզու, հդն. թըզէր. ջուր>ջո՛ր, սեռ. ջի՛րի, հդն. ջըրէր. լինդ>լէնդ, սեռ. լընդու, հդն. լընդէր. տիկ>տէկ, սեռ. տըկու, հդն. տըկէր. քիթ>քըէթ,

սեռ. քրքու, հգն. քրքէր և այլն։ Այս օրենքը ևս հաճախ չի պահպանվում և կարելի է լսել նաև՝ սօրու, ճօտու, քծգու, ջուրու, լէնգու, տէկու, քրէքու և այլն։ Մանավանդ այն դեպքում, երբ միևնոյն բառերում եղած ու>օ ձայնավորին անմիջապես հաջորդում են երկու բաղաձայններ, գրեթե միակ գործածականն են առանց սղման ձևերը. ինչպես՝ Քուսբ>Քօսբ, սեռ. Քօսբու, հգն. ուղղ. Քօսբար, սեռ. Քօսբերու. Քուխս>Քօխս, սեռ. Քօխսու, հգն. ուղղ. Քօխսար, սեռ. Քօխսէրու. հուռձ>հօռձ, սեռ. հօռձու, հգն. ուղղ. հօռձար, սեռ. հօռձէրու. կուրծ>կօրծ, սեռ. կօրծու, հգն. ուղղ. կօրծար, սեռ. կօրծէրու և այլն. անսովոր են գրանց՝ Քրմբու, Քրխու, հընձու, կըրծու ձևերը։ Բառասկզբում, ինչպես ասված է, երբեք չեն սղվում, բայի մի բառից՝ ունկն>օնգնը, ընգան և այլն։

299. Ընդհանուր կարգով պետք է նշել, որ հոլովման հետ կապված հնչյունական փոփոխությունները, որոնք հիշված են տարբեր հոլովումների մեջ, այն կանոնավորությունը և ուժը չունեն, ինչ որ հնչյունական փոփոխությունների ժամանակ հիշվածները. մինչդեռ հնչյունական փոփոխությունների մեջ հիշված նախաշեշտ ձայնավորների սղումը մի կուռ, ընդհանրական օրենք է ներկայացնում, հոլովման մեջ հիշված սղումները շատ անհաստատ են. սղման ենթակա գրեթե ամեն բառ էլ կարելի է լսել նաև առանց սղման, մանավանդ հոգնակիում, ուր բացի մի խումբ բառերից, ինացածների վրա սղումը չի տարածվում. Հաճախ, սղման ենթակա բառերի առանց սղումի գործածելը կապված է միայն շեշտի տեղափոխության հետ. ինչպես՝ գուրք, սեռ. գըրքու. գինձ, սեռ. գի՛նձու. շօնչ, սեռ. շընչու, բայց՝ գուրքու, գինձու, շօնչու և այլն, իսկ հաճախ էլ՝ հոլովումը փոխելու հետ. ինչպես՝ կուռն>կօռնը, սեռ. կըռան. խուրձն>խօրձնը, սեռ. խրրձան. նուռն>նօռնը, սեռ. նրռան, բայց՝ կօռնու, խօրձնու, նօռնու և այլն։

300. Այդ գոլորին հակառակ, մի խումբ բառերում ունենք բոլորովին տարապայման սղումներ, գրանք են. շաբաթ>շէբաթ, սեռ. շէփտու, հգն. շէբաթնէ. բռնիր>բռւրան, սեռ. բուրնու, հգն. բուրանէ. տախտակ>տախտակ, սեռ. տախտակու կամ տրխտակու, հգն. տրխտրկնէ կամ տախտակնէ. դանակ>դէնակ, սեռ. դէնակու, հգն. դրնկրնէ. նրազ>նըրակ, սեռ. նըրակու, հգն. նըրրկ-

ՆԷ. մատակ>մատակ «առուս», սեռ. մատակու կամ մրտակու, հգն. մրտրկնէ. պառաւ>պառավ, սեռ. պառավու կամ պրռավու, հգն. պառավնէ կամ պրռվլնէ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

301. Տրական հոլովը, բայի յուր սովորական վերջավորությունից, ժամանակի կամ տեղի համար գործածվելիս սովորաբար ստանում է -էն(>-ին) վերջավորությունը. ինչպես՝ դուրք>դուրք, տր. դրրքուն «դռանն» և դրրքէն «դռանն». ամիս>ամէս, տր. ամսվա «ամսվա» և ամսէն «ամսին». փող(ոց)>փուղ, տր. փուղու «փողոցի» և փուղէն «փողոցում». սար>սար, տր. սարու «սարի» և սարէն «սարում». կուր>կրաօր, տր. կրտրու «կարի» և կրտրէն «կարին», այդպես և՝ շէփտէն «շաբթին», կրաօրէն «կիսօրին», ըշօնքէն «աշնանը» և այլն։ Ահա դրանց գործածության մի քանի օրինակներ. Դրրքէն հաւտաց կաց «դրսում (=դրսում) կանգնիր». Ըս ամսէն գնհած չիմ կըրճէվան «այս ամսին չեմ գնացել Կարճևան». Կրարէն մին մարգ կա «կարին մի մարգ կա». Սարէն մին վէրէ էձ կա «սարին (=սարում) մի վայրի այծ կա». Կրաօրէն իվ՛ալ ըմ ուն «կիսօրին եկա տուն» և այլն։

302. Տարածության ու տեղի գործիականի և ներգոյականի համար գործածվում է նաև -էն հետադրությունը, որ պահանջում է որոշյալ հայցականով խնդիր. ինչպես՝ Գնարնէ կախ աօր «պատով (=պատից) կախ տուր». Թօմբրնէ գ՛ինէս իմ «մրտրվը գնում եմ». Գնէճախրնէ դիր «անկյունում դիր». Հըդկննէ մին մարդը գ՛ինէս «ճանապարհով (ճանապարհի միջով) մի մարդ է գնում». Ար տարբրնէ չօր նուս «արտերում ման է դալիս». Գնրէննէ գ՛ինէ մէ «կոճոի միջով մի գնա» և այլն։ Իրականում այս մի առանձին հոլովի դեր է կատարում, որ աշխարհաբարում չունենք. կարելի էր համարել տեղական (местный, locativus) հոլովին համապատասխան, իբրև շարժում ցույց տվող բայերի պարագայ տարածությունը (ոչ ուղղությունը), տեղը ցույց տալու համար։ Սկզբից մենք ասացինք կազմում է գործիական ու ներգոյական, որովհետև աշխարհաբարում նրան փոխարինում են այդ հոլովները։ Հոլովումների մեջ իբրև առանձին հոլով չհիշեցինք, որովհետև ունի միայն հետդրավոր կազմություն, իսկ

իրրև այդպիսին նա հոլովածև չէ։ Այս մասնիկը, մեր կարծիքով, ստացվել է գրաբարյան ներքս բառից, որ սկզմամբ դարձել է նէ. այդ նույնն իրրև նախադրություն գտնում ենք նաև բայերի մեջ՝ նոր բառեր կազմելու և գործողության դեպի ներս ուղղված լինելը ցույց տալու համար, համապատասխան ռուսերեն в-, լատիներեն in-, հայերեն՝ ներ- նախածանցներին, ինչպես՝ նէ մրթել «ներս մտնել»=входить, invenire, նէ ածիլ «ներածել»= вносить, importare և այլն։

303. Եթե մի հայտարարի բերելու լինենք հոլովման մասին մինչև այժմ մեր ասածները, ապա առաջին իսկ եզրակացությունը, որին կարելի է հանգել, այն կլինի, որ Մեղրու բարբառի հոլովման սիստեմը ներկայացնում է մի խառն, անհաստատ դրություն։ Սկսած շնչատրություններից, որ երբեմն վերջընթեր վանկանում է լինում (օր. բի՛նջ՛ըրու), երբեմն՝ վերջին (օր. բի՛նջի՛րա՛) և վերջացրած հոլովումների փոփոխություններով ու սղումով, մի հեղհեղուկ վիճակ է պատկերվում մեր առաջ։ Ամեն։ հաճախ մի բառն այնքան ձևեր է ունենում, որ չի կարելի իմանալ, թե դրանցից որն է ճիշտը. օրինակ՝ լեզու>լեզո բառը սեռականում կարող է ունենալ լեզո, լեզվի՛, լեզո՛վի՛, լեզվվե, լեզո՛վվե ձևերը, կամ՝ բաճչար>բէճչար բառը՝ բի՛ճչէրու, բի՛ճչի՛րա՛, բէճչարու, բի՛ճչէրէ, բի՛ճչի՛րէ ձևերը. այդպես էլ՝ կատու>կատու, խաղող>խաղու, բամբակ>բէմբակ և շատ ուրիշ բառեր։ Այսպիսի դեպքերում, և առհասարակ ամբողջ հոլովման մեջ, հայերենի խմացումն ու բարբառին լիովին գիտակ լինելն է, որ քիչ թե շատ կարող է դյուրացնել գործը։

Այս խառնակությունը, սակայն, տարօրինակ մի բան չի թվա, եթե լեզվական իրողությունների էությանը ծանոթ լինենք. դա մի անցողիկ շրջան է, որում համագոյակից տարրեր ձևերի մրցումն ուրիշ բան չի արտահայտում, քան ձգտում՝ դեպի մի ընդհանուր վիճակ։ Ամենաուժեղ հոլովումը (այստեղ՝ ու հոլովումը) ձգտում է իրեն ենթարկել բոլոր բառերը, որ իրականացել է արդեն հոգնակիում. նույնպես և ու>օ, ի>է այնավորների սղումը, որ ավանդված է հնուց և դեռ շարունակվում է, ձգտում է ցույց տալիս դադարելու այն բազմաթիվ բառերի ազդեցությամբ, որոնք սղման ենթակա չեն ոչ գրաբարում, և ոչ էլ այս բարբառում։ Այսպիսի վիճակ է ապրում նաև ժամանակակից

հայերենը շեշտի հետ կապված հնչյունափոխության մեջ (համմտ. ասկիք, ասկու և ասկիի. շարժում, շարժման, շարժմամբ և շարժումի, շարժումով. պարտեզ—պարտիզպան, բայց՝ պարտեզի, գլուխ, գլխի, բայց՝ գլուխներ, Ղամարլու—Ղամարլվի և Ղամարլուի և այլն)։

4. ՀՈԴ

304. Իբրև որոշիչ հոդ գործածվում են ն, ը, ի՝։ ն-ն գործածվում է ձայնավորով վերջացող բառերի համար. ինչպես՝ կառուն, բախչն «երեխան», գինին և այլն։

305. Բաղաձայնով վերջացող բառերն ստանում են ը կամ ի՝։

1. ի՝ ստանում են.

ա) այն բառերը, որոնց վերջավանկի ձայնավորը թեթև է. ինչպես՝ գինձի՝ «գինձը», հնձի՝ «ուլը», բռնժնժի՝ «բռժժը», կմանխփի՝ «կանեփը», մանգաղի՝ և այլն։

բ) այն բառերը, որոնք վերջանում են գ, կ, ք՝ ժայնացածներով կամ ծ, շ, ջ, ճ, չ շչականներով, անկախ նրանց նախորդող ձայնավորի թեթև կամ ծանր լինելուց. ինչպես՝ լէնգի՝ «ոնիգը», մէլեկի՝ «մլուկը», կլէսքի՝ «աստամը», օժի՝ «ուժը», շէրժի՝ «երկրաշարժը», ճէշի՝ «ճաշը», լէնջի՝ «լանջը», անդուճի՝ «ականջը» և այլն.

գ) այն բառերը, որոնք վերջանում են յ կիսաձանով, ինչպես՝ հէյի՝ «հայը», չայի՝ «չայը», նէյի՝ «նայը, խոնավություն» և այլն.

դ) հետևյալ երեք բառերը. նաբի՝ «հայրը», մաբի՝ «մայրը», տաբի՝ «տերը» և նրանցով բարդվածները. ինչպես՝ ոընատաբի՝ «տոնատերը» և այլն։

2. Բաղաձայնով վերջացող ինացած բոլոր բառերն ստանում են ը, ինչպես՝ հաքը «ոտքը», թուբանը «թոնիրը», աթուռը «աթոռը», տատէշկը «տատասկը» և այլն։

Ծանոթություն 1. Այժմյան խոսողներից միայն ձևերն են, որ հատակ կերպով պահպանում են ի՝ հոդը. երիտասարդները, որոնց մոտ ի՝ ձայնավորն իբրև հընչյուն արդեն անհետանում է, ի՝ հոդի փոխարեն գործածում են ի կամ ը. ի գործածվում է վերջավանկում ի՝

ունեցող կամ պ՛, կ՛, ք՛, քմայնացածներով վերջացող բառերի համար (ինչպես՝ գինձի «գինձը», ճենգիլ «ճանկը» մէքիմի «մխիթքը», հըրսանէքի՛ «հարսանիքը» և այլն) և հարի «հայրը», մարի «մայրը», տարի «տերը» բառերի ունդանցով բարդածներին համար։ Մյուս դեպքերում ի-ն վերածվում է ը-ի. ինչպես՝ մանդաղը «մանգաղը», բուժուժը «բուժուժը», օժը «ույժը», լէնջը «լանջը», փոխանակ՝ մանդաղի՛, բուժուժի՛, օժի՛, լէնջի՛ և այլն։

Ինչպես Ագուլիսի և «Կը» ճյուղի շատ բարբառներում, Մեղրու բարբառումն էլ սեռական հոլովը որոշիչ հոդ է ստանում. ինչպես՝ մատակուն չի՛բուն խըշխըչէքի՛ «ասպի չրի քըշքըչողը» և այլն։

306. Ա՛յ չադկապից և էական բայից առաջ ը, ի՝ հոդերին ավելանում է ն, որով և իրրև հոդ ստացվում է ըն կամ ի՛ն, ինչպես՝ կըէսէքի՛ն ի ցըվէս «առաուն է ցավում». Իս ձգեր տարի՛ն իմ «ես դրա տերն եմ». Հաքըն ա մանդած «ոտքն է կոտրվել». Մատակըն ա քէնդվածի «առուն է քանդվել». Մարըն ա՛լ ի պարան նէս «ասրն էլ է փլուզում» և այլն։

Բայց եթե ա՛լ գործածվում է իրրև մակբայ «այլևս» իմաստով, ն չի գրվում. ինչպես՝ հարի՛ ա՛լ նէս չի «հայրը էլ (=այլևս) չի գալիս». Մանդած ամանը ա՛լ սըղանի չի «կոտրված ամանը էլ (=այլևս) չի սարքվի» և այլն։

Ճիշտ այդպես է նաև այժմյան գրական հայերենում. եթե էլ-ը գործածվում է «նույնպես, ևս, նաև» իմաստով, ապա նրանից առաջ ը հոդն անպայմանորեն դառնում է ն, իսկ եթե գործածվում է «այլևս» իմաստով, ընդհակառակն, ը հոդը մնում է անփոփոխ. ինչպես՝ ընկերն էլ է գնում (=ընկերը նույնպես գնում է), բայց՝ ընկերը էլ չի գնում (=ընկերն այլևս չի գնում). վերջին դեպքում էլ-ը համախ առաջ է ընկնում (էլ ընկերը չի գնում), մինչդեռ «նույնպես, ևս, նաև» իմաստով՝ երբեք։ Այդ տարբերությունն անշուշտ իմաստի շփոթ, երկիմաստություն չբաւեղծելու ձգտման արդյունք է, և եթե երբեմն այս օրենքը չեն կիրառում, ապա այդ միայն չիմանալու հետևանք է։

307. Իրրև անորոշ հոդ գործածվում է մին «մի» թվականը, ինչպես՝ Մին կըրճըվնէցէ իվ՛ալ ա Մէղրա «մի կարճանցի ճամ

Մեղրիա. Մին կընկէր փի՛նէս ի ջի՛րն ամի կին գնում է ջրի և այլն։

308. Հատուկ անուններէն վրա հոդ չի դրվում. ինչպես՝ Սամսոն գի՛նէս ի իգին «Սամսոնը գնում է այգին». Աչիկա ախպէրը տէղըս ա «Աչիկի եղբայրը այստեղ է». Դէնակը տըվալ ըմ Հայկա «Դանակը տվեցի Հայկին» և այլն։

309. Տեղանունները նույնպես հոդ չեն ստանում. ինչպես՝ Բէվան մօծ քաղաք ա «Երևանը մեծ քաղաք է», Մեղրա օքուտ տէղ ա «Մեղրին լավ տեղ է» և այլն։ Բայց եթե տեղանունը գործածվում է փոխանավանաբար, այսինքն՝ իբրեև արտահայտում է այդտեղի բնակչությունը, ապա հոդ կարող է ստանալ. ինչպես՝ Հի՛գէրակը քօչած ա Մեղրա «Ագարակը (=ագարակի բնակչությունը) փոխադրվել է Մեղրիա։ Այդ դեպքում էլ, սակայն, հոդը պարտադիր չէ։

310. Հոդի գործածության հետաքրքիր պատկեր են ներկայացնում ը՛ն հանգն ունեցող բառերը. անկախ գործածության ժամանակ այդ բառերի անորոշն ու որոշյալը միշտ նույն ձևն ունեն. ինչպես՝ մին գ՛ոնը ամի գառ, մին ակը ամի աչքը, ա՛ս գ՛ոնը ասյա գառը, ա՛ս ակը ասյա աչքը և այլն։ Սակայն ամբողջական նախադասության մեջ գործածվելիս տարբեր պարագաներում տարբեր ձևերով են հանդես գալիս։

ա) Եթե ը՛ն հանգն ունեցող բառին նախադասության մեջ հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ կամ ա՛լ «այլևս» նշանակությամբ, ապա անորոշն ու որոշյալը նույն ձևն ունեն, ինչպես՝ Մին գ՛ոնը մուրթած ա «ամի գառ է մորթել». Ա՛ս գ՛ոնը տրնէս իմ «այս գառը տանում եմ». Ծառուն պըրիկէն մին նօռնը կա «ծառի ծայրին մի նուռ կա». Ա՛ն նօռնը կըտրալ ըմ «այն նուռը կոտրեցի» և այլն։

բ) Եթե ը՛ն հանգն ունեցող բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, կամ էական բայ և կամ ա՛լ «նույնպես, ևս» նշանակությամբ, ապա անորոշ լինելու դեպքում վերջհանգ ը-ն կորչում է. ինչպես՝ Ասալ ըմ հօր մին գ՛ոնն առի «ասացի, որ մի գառ առնի». Իլլի՛ ծառը, մին ճօղն ա՛լ մանդալ «բարձրացավ ծառը, մի ճյուղ էլ կոտրեց». Մին հասած նօռն ըմ բիրած «մի հասուն նուռ եմ բերել» և այլն։

գ) Եթե ը՛ն հանգն ունեցող բառին հաջորդում է ձայնա-

վորով սկսվող բառ կամ էական բայ և կամ ալ ցնուչպես, ևսև նշանակութեամբ, ապա որոշյալ լինելու դեպքում, իբրև ձայնավորով (ը) վերջացող բառ, ստանում է և հոդը. ինչպես՝ Ձնդամբ ակնքն ալ ի ցըվէս ցնրա աչքն էլ է յավաւմ. Ձն գծունքն ա օքձւտ, քէ ան ցայն գառն է լավ, քէ այսս. Ձն ճօղնքն ասձր չի մանդված ցայն ճյուղն այսօր չի կատրվել և այլն. Այս օրենքը խստորեն պահպանվում է, եթե հաջորդում է էական բայ, ձայնավորով սկսվող բայ կամ ալ ցնուչպես, ևսև. իսկ եթե հաջորդում է ձայնավորով սկսվող որևէ այլ խոսքի մասի պատկանող բառ, ապա ե-ի հավելումը պարտադիր չէ՝

*Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1.—*Տասն>տասը, իննն>իննը *բառերը գոյականաբար գործածվելիս ստանում են ը՛ր հոդը, անկախ հաջորդող բառի ձայնավորով կամ բաղաձայնով սկսվելու հանգամանքից. ինչպես՝ Մատիտնէրբուն տասսընը իմ առէս ի, տասսընը քու ամատիաններբից տասն ինձ մոտ է, տասը քոջ. Հընդէրնէբուս տասսընը գնացէ՛ն Ձէրդվածք, իննընքն՝ Ղափան գընկերներբիս տասը գնացել են Օրդուբատ, իննը՝ Ղափանդ. Բայց եթե պրանց հաջորդում է ալ ցևս, նուչպես և կամ էական բայ, ըստ § 306-ի ավելանում է ևս մի ն, ինչպես՝ տասսընն ալ քու առէս ի տասն էլ քեզ մոտ էջ. Իննընքն ըմ բիրած ցիննն եմ բերել և այլն. ևօրն>օխտը բառը փոխանվանաբար գործածվելիս հոդ է ստանում այն կանոններով, ինչ որ ը՛ր հանդն ունեցող բառերը՝*

5. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

311. Համեմատական աստիճանը կազմելու համար գործածվում է ածականի դրական աստիճանը բայառական խնդրով, ինչպես՝ Ձս մարդս ամինէն օքուտ ա ցայս մարդը մյուսից լավ էջ. Գործածվում են նաև քանս, քան, քէ չաղկապները՝ ուղղական հոլովով. ինչպես՝ Ձս ծառս մօծ ա, քանս ամինի՝ ցայս ծառը մեծ է, քան մյուսը. Ձս հրդէս օքուտ ա, քան քէ ամինի՝ ցայս ճանապարհը լավ է, քան քէ մյուսը և այլն. Շահյանցի մոտ նույն չաղկապը գտնում ենք նաև կրճց ձևով.

Վերջապես, երկու դեպքերում էլ ածականի վրա կարելի է

ավելացնել ի՛վի՛լի ածելիս բառը. ինչպես՝ Ա՛ս տօնը ի՛վի՛լի մօծ ա՛, քանս ա՛մին՝ ձայս տունն ավելի մեծ է, քան մյուսը» կամ «ա՛ս տօնը ա՛մինէն ի՛վի՛լի մօծ ա ձայս տունը մյուսից ավելի մեծ է» և այլն։

312. Դույն ցույց տվող բառերի համար գործածվում է նաև -ավուն մասնիկը, որ ցույց է տալիս ածականի մի քիչ ավելի կամ մի քիչ պակաս աստիճանը. ինչպես՝ կըրմըրավուն «կարմրավուն», քիչ ավելի կարմիր», սըվավուն «սևավուն», քիչ ավելի սև», դըղնավուն «դեղնավուն», քիչ ավելի դեղին», սըպտըկավուն «սպիտակավուն», քիչ ավելի սպիտակ», քըխավուն «քխավուն», քիչ ավելի քուխ», կընընչավուն «քիչ ավելի կանաչ» և այլն։

Բացի դույն ցույց տվող բառերից -ավուն մասնիկն աստանում են նաև մի քանի այլ ածականներ, որոնցից ավելի գործածականներն են. հըստավուն «հաստավուն, մի քիչ հաստ», բի՛րի՛կավուն «բարակավուն, մի քիչ բարակ», բի՛ծ բնավուն «բարձրավուն, քիչ բարձր», քի՛շավուն «քաշավուն, քիչ ցածր», նրդավուն «նեղավուն», կըրճավուն «կարճավուն, քիչ կարճ», ըրկընավուն «երկարավուն, քիչ երկար», մըծավուն «մեծավուն, քիչ մեծ», քըղցըրավուն «քաղցրավուն, քիչ քաղցր», դըռնավուն «դառնավուն, քիչ դառն» և այլն։

313. Եթե գերադրական աստիճանը ցույց է տալիս ածականի աստիճանն առանց մի ուրիշի համեմատության (բացարձակ գերադրական), ապա՝ ածականի վրա դրվում է շէտ «շատ», ևէր «խիստ, հույժ», լաւ «բոլորովին» մակբայներից որևէ մեկը. ինչպես՝ շէտ զէշ «շատ վատ», շէտ վի՛սակի՛ «շատ փոքր», ևէր օքուտ «խիստ լավ», ևէր մօծ «խիստ մեծ», լաւ սէրուն «բոլորովին սիրուն», լաւ կարճ «բոլորովին կարճ» և այլն։

Իսկ եթե գերադրական աստիճանը ցույց է տալիս ածականի առավել աստիճանը ուրիշների համեմատությամբ, գործածվում է ումմէն «ամենն» բառի սեռական հոլովը՝ ումմուցու. ինչպես՝ ումմուցու մօծ «ամենից մեծ», ա՛ս հըղէն ումմուցու կարճն ա «այս ճանապարհը բոլորից կարճն է» և այլն։ Ամենամասնիկը թեև գործածական է, բայց շատ սակավ բառերում. ինչպես՝ ամէնամօծ «ամենամեծ», ամէնահէռու «ամենահեռու» և այլն։

6. ԹՎԱԿԱՆՆԵՐ

314. Հանդիսական թվականներն են.

մին, էրկու, իրիք՛, չուրք, հինգ՛, վըեց, օխտը, օթ, իննը, տասը, քըսան, արասուն, քըռասուն, իգյուն, վացյուն, ըխտընասուն, ըթասուն, իննասուն, հէրուբ, հի՛զէր, տասը հի՛զէր (Շահյանցի մոտ՝ պյուր<քիւր)։

315. Տասնավորից և միավորից կազմված բարդ թվերում տասնավորը լինում է նախադաս և, որովհետև շեշտը միշտ ընկնում է միավորի վրա, ապա տասնավորներից մի քանիսը ենթարկվում են ձայնավորների կանոնավոր սղման։ Տասն>տասը բառի «ն» հանգը բարդությունների մեջ վերականգնվում է. եթե միավորը (բարդության երկրորդ եզր) սկսվում է ձայնավորով, տասնավորի վերջում ը չի լինում, իսկ եթե միավորն սկսվում է բաղաձայնով, ապա տասնավորից հետո (բարդության երկու բաղադրիչների միջև) անպայմանորեն լինում է ը, իբրև հոդակապ, ինչպես՝

տասնմէկ>տըսընմին	*տասնեօթ>տըսնօխտը, տըսնըյօխտը*
տասներկու>տըսնէրկու	*տասնուօթ>տըսնօթ, տըսնը օթ*
տասներեք>տըսնիրիք՛	*տասնիննն>տըսն(ը)իննը*
տասնչորս>տըսնըչուրք	*քսանմէկ>քըսանըմին*
տասնհինգ տըսնըհինգ՛	*քսաներկու>քըսանէրկու*
տասնվեց>տըսնըվըեց	*երեսունմէկ>ըրըսնըմին, տրասնըմին և այլն։*

Բացի տասն>տասը բաղադրիչով կազմվածներից, մյուսներում տասնավորի -սան, -ասուն, -ացուն խմբերը սովորաբար բարդության մեջ մտնում են -ասն(ը), -ասն(ը) -ցն(ը) ձևերով. ինչպես՝ քըսանըմին (21), քըսանէրկու (22), արասնըմին, ըրըսնըմին (31), ըրըսնիրիք՛, արասնիրիք՛ (33), քըռասնըչուրք (44), քըռասնըննն (49), իգնըմին (51), իգնէրկու (52), վացնըմին (61), վացնէրկու (62), ըխտընասնէրկու (72), ըթասնըմին (81), ըթասնէրկու (82), իննասնըմին, ընասնըմին (91), իննասնէրկու, ընասնէրկու (92) և այլն։

Հարյուրավորները կազմվում են միավորների և հարիւր>

հէրուր բառի կցական բարդությամբ, որի ժամանակ թեև շեշտն ընկնում է հէրուր-ի վրա, բայց միավորները սովորաբար ձայնավորների սղման չեն ենթարկվում. ինչպես՝ էրկու հէրուր (200), իրիքհէրուր (300), չուրքհէրուր (400), հինգհէրուր (500), վըէցհէրուր (600), ըլուրհէրուր (700), օխհէրուր և ըխհէրուր (800), իննըհէրուր։ Երեք>իրիք, հինգ>հինգ միավորները հ-ից առաջ իրենց քմայնացածները գործնում են սովորական գ, ք, համապատասխան § 194-ի։

Հարիւր>հէրուր և հազար>հի՛զէր-ը միավորի, ինչպես և տասնավորի հետ միանում են առանց հոդակապի. ինչպես՝ հէրուր մին (101), հէրուր էրկու (102), հէրուր տըսնըչուրք (114), հիզէրէրկու (1002), հիզէրտըսնըմին (1011) և այլն։ Հէրուր-ից կազմված բարդ թվերում շեշտը միշտ վերջին եզրումն է լինում, իսկ ինքը հէրուր-ը առանց շեշտի է լինում, բայց հնչյունափոխության չի ենթարկվում։

316. Դասական թվականները կազմվում են ադրբեջաներեն -մշի, -ըմշի ‖ -ի՛մշի մասնիկներով, որոնցից առաջինը ստանում են ձայնավորանոց բառերը, երկրորդը՝ բաղաձայնով վերջացող ծանր ձայնավորով բառերը, երրորդը՝ պ, ք քմայնացածներով վերջացող բառերը։ Թեև շեշտն ընկնում է ի ձայնավորի վրա, բայց հնչյունափոխություն ընդհանրապես չի կատարվում, ինչպես՝ էրկումշի, էրկըմշի «երկրորդ», իրիքի՛մշի «երրորդ», չուրքըմշի, չըրքըմշի «չորրորդ», հինգի՛մշի «հինգերորդ», վըցըմշի «վեցերորդ», օխտըմշի «յոթերորդ», օխըմշի «ութերորդ», իննըմշի «իններորդ», տասըմշի «տասներորդ» և այլն։ Միայն առաջին բառն է, որ պահպանել է իր հայերեն ըոջի ձևը, բայց դրա փոխարեն էլ հաճախ գործածվում է ադրբեջաներեն ալմալիմշի բառը։ Վերջին բառը փոխարինված է եւխն>էխէն բառով։

Ծանոթություն 1.—Էրկումշի և չուրքըմշի գասականներից ունենք նաև էրկումշի և չըրքըմշի, առաջնի սղված ձևը ավելի գործածական է, բայց երկրորդինը՝ ոչ։ Նույն -մշի ‖ -ըմշի ‖ -ի՛մշի մասնիկը գտնում ենք նաև -մընշի ‖ -մի՛նշի ձևով. ինչպես՝ էրկումընշի, իրիքմի՛նշի, չուրքմընշի և այլն։

317. Բաշխական թվականները կազմվում են քանակականների կրկնությամբ. ինչպես՝ մին-մին «մեկական, մեկ-մեկ»,

էրկու-էրկու «երկուական», իրիք-իրիք «երեքական», տասը-տասը «տասական», հէրուր-հէրուր «հարյուրական» և այլն։

Եթե կրկնվող թվականը միավանկ է, շեշտը լինում է առաջին եզրում, իսկ եթե բազմավանկ է՝ վերջին եզրում, բայց նույն վանկի վրա, որում ունենում է կրկնվող թվականը առանձին գործածվելիս. ինչպես՝ մին-մին, չուրք-չուրք, հինգ-հինգ, վըեց-վըեց, օթ-օթ, բայց՝ էրկու-է՛րկու, իրիք-իր՛իք, քըռասունն-քըռա՛սուն, իցցուն-իցցո՛ւն, հի՛զէր-հի՛զէ՛ր և այլն։

Գրաբարյան -ական մասնիկը բաշխականի համար գործածությունից դուրս է եկել։

318. Չափական (չափ ցույց տվող) թվականները կազմում են -անուց || -անիւց մասնիկները քանակականներին ավելացնելով՝ ըստ ձայնավորների ներդաշնակության. ինչպես՝ մինանուց «մեկանոց», էրկուսանուց «երկուսանոց», չուրքանուց կամ չըրքանուց «չորսանոց», ըթթանուց «ութանոց», իննանուց «իննանոց», տըսանուց «տասանոց» և այլն։

319. Բազմապատկական (մակբայական) թվականները կազմվում են տակ, պատիկ բառ-մասնիկներով. ինչպես՝ ըրկըտակ կամ ըրկըպատիկ «երկապատիկ», իրիքտակ կամ իրիքպատիկ «եռապատիկ», չըրքըտակ կամ չըրքըպատիկ «քառապատիկ», հինգտակ կամ հինգպատիկ «հնգապատիկ», վըեցտակ կամ վըեցպատիկ «վեցապատիկ», տըսնըպատիկ «տասնապատիկ» և այլն։

> *Ծանոթություն 1.—Պատիկ ձևին զուգընթաց ունենք նաև պատ. ինչպես՝ իրիքպատ, չըրքպատ և այլն։ Երեք և հինգ թվականների գ, ք քմայնացածները, բաղաձայններից անմիջապես առաջ ընկնելով, դառնում են գ, ք։*

320. Անձնեռական թվականները հարազատ կերպով պահպանված են Մեղրու բարբառում, բայց գրաբարյան կրկնակի -եքեան || -եքիճ ձևերից Մեղրու բարբառը պահել է միայն մեկը՝ -եքիճ >էքյէն, -քէն, ի>է հնչյունափոխության համար. ինչպես՝ երկուքին>երկոքէն «երկուսն էլ», երեքեան, երեքին>իրիքքէն «երեքն էլ», չորեքին>չըրքէքէն «չորսն էլ», հնգեքին>հինգէքէն և հընգէքէն «հինգն էլ», վեցեքին>վըցցէքէն «վեցն էլ», եօթանեքին, եօթեքին>ըլոտէքէն «յոթն էլ», ութեքին>ըթթէքէն «ութն էլ», իննե-

քին>իննէքէն «ինն էլ», տասանեքին, տասեքին>տըսսէքէն, «տասն էլ» և այլն։

Շահյանցի մոտ իրիքքէն ձևի դիմաց գտնում ենք իրիքկէն, իսկ չըրքէքէն-ի համար՝ չրէքկէն և չըրքէքէն։

321. Գոնակական և չափական թվականները հոլովվում են առաջին հոլովմամբ. ինչպես՝ մին, մինու, մինէ(ն), մինավ, մինամ. իրիք, իրիքնէ, իրիքէն, իրիքնավ, իրիքնամ. չուրք, չուրքու, չուրքէ, չուրքավ, չուրքամ. տըսսանուց, տըսսանուցու, տըսսանուցէ, տըսսանուցավ, տըսսանուցամ. չըրքանուց, չըրքանուցու, չըրքանուցէ, չըրքանուցավ, չըրքանուցամ և այլն։

Երկու>էրկու թվականը հոլովման, ինչպես և հոդ ստանալու ժամանակ, վերջից ստանում է ս հնչյունը, կամ, ավելի ճիշտ, վերականգնում է գրաբարյան հայցականի ս-ն, ինչպես՝ էրկու, էրկուսու, կամ էրկըսու, էրկուսէ կամ էրկըսէ, էրկուսավ կամ էրկըսավ, էրկուսամ կամ էրկըսամ։

Տասն>տասը հոլովվում է թե առաջին, և թե հինգերորդ հոլովմամբ. ինչպես՝ տասսու կամ տասէ, տասսու (ն, հ)էնից կամ տասսէ (ն, հ)էնից, տասսավ (տասսընավ), տասսամ (տասսընամ)։

322. Դասական թվականները հոլովվում են երկրորդ հոլովմամբ. ինչպես՝ էրկըմջի, էրկըմջէ, էրկըմջէ (ն, հ)էնից, էրկըմջավ, էրկըմջամ. իրիքի՛մջի, իրիքի՛մջէ, իրիքի՛մջէ (ն, հ)էնից, իրիքի՛մջավ, իրիքի՛մջամ և այլն։

Հաճախ սրանք էլ կարող են ենթարկվել առաջին հոլովման, որի ժամանակ հիմքի և վերջավորության միջև ավելանում է ն հոլը. ինչպես՝ էրկըմջի(ն), էրկըմջինէ, էրկըմջինէ, էրկըմջինավ, էրկըմջինամ և այլն։

321. Անձնևրական թվականները չարունակում են իրենց գրաբարյան հոլովումը, բայց հաճախ ենթարկվում են նաև առաջին հոլովման, այնպես որ, սրանց համար ևս սահմանվում են կրկին հոլովաձևեր. ինչպես՝ ըրկօքէն, ըրկօքսուն կամ ըրկօքէնու, ըրկօքսուն էնից կամ ըրկօքէնէ, ըրկօքսուն էնավ կամ ըրկօքէնավ, ըրկօքսուն էնամ կամ ըրկօքէնամ. իրիքքէն, իրիքէքսուն (!) կամ իրիքքէնու. չըրքէքէն, չըրքէքսուն կամ չըրքէքէնու և այլն։

Բաշխական ու բազմապատկական թվականները, որոնք գոյանում են իրրև մակբայներ, բնականաբար չեն հոլովվում։

7. ԴԵՐԱՆՈՒՆ

324. Անձնական դերանուններն են՝ իս «ես», դու, ան «նա», ինքի՝ «ինքն», մէք, դուք, անդունք, ընդուք, անդուք «ընրանք», ունրանք «իրենք», որոնք հոլովվում են այսպես.

Ուղղ.	*իս*	*մէք*
Սեռ.	*իմ*	*մէր*
Տր.	*ինձ*	*մէզ*
Հայց.	*ինձ*	*մէզ*
Բաց.	*ինձէնից, ինձէնէ*	*միզէնից, միզէնէ*
Գործ.	*ինձէնով, ինձնանով (ինձաննով)*	*միզէնով, միզնանով*
Ներգ.	*ինձէնամ, ինձնանամ (իմ մանջին)*	*միզէնամ (մէր մանջին)*

Ուղղ.	*դու*	*դուք*
Սեռ.	*քու*	*ձէր*
Տր.	*քի, քիզ*	*ձիզ*
Հայց.	*քի, քիզ*	*ձիզ*
Բաց.	*քիզէնից, քիզէնէ*	*ձիզէնից, ձիզէնէ*
Գործ.	*քիզէնով, քիզնանով*	*ձիզէնով, ձիզնանով*
Ներգ.	*քիզէնամ, քիզնանամ (քու մանջին)*	*ձիզէնամ (ձէր մանջին)*

Ուղղ.	*ան*	*անդունք, ընդուք (անդուք)*
Սեռ.	*անդունր, ընդուր, անդուր*	*անդունց, ընդուց, անդուց*
Տր.	*անդունր, ընդուր, անդուր*	*անդունց, ընդուց, անդուց*
Հայց.	*անդունր, ընդուր, անդուր*	*անդունց, ընդուց, անդուց կամ = ուղղ.*
Բաց.	*անդունէն, անդուրէնէ, ընդուրէնէ, անդունրէնից, ընդուրէնից, անդուրէնից, ընդուրէնէ*	*անդունցէնից, ընդուցէնից, անդունցէնէ, անդունցէնից, անդունցէնէ, ընդուցէնէ*
Գործ.	*անդունր էնով, ընդուրէնով, անդուրէնով, ընդուրնով*	*անդունցով, ընդուցով, անդունցով, անդունցէնով, ընդուցնով*[1]

[1] Ընդուրնով, ընդուցնով ձևերը գոնում ենք միայն Շահյանցի մոտ։

Ներգ.	անդուրէնամ, ընդուրէնամ, անդուրէնամ	(անդուցամ), ընդուցամ, անդուցավ, անդուցէնամ, ընդուցէնամ, անդուցէնամ
Ուղղ.	ինքի՝	ուրնք
Սեռ.	ուրնն, ուրէն	ուրնց
Տր.	ուրնն ուրէն	ուրնց
Հայց.	ուրնն, ուրէն	ուրնց
Բաց.	ուրէնից, ուրնն էնից ուրէն էնից	ուրնց ուրնց էնից
Գոթծ.	ուրէնավ, ուրէն էնավ	ուրնցավ, ուրնց էնավ
Ներգ.	ուրէնամ, ուրէն էնամ	(ուրնցամ), ուրնց էնամ

Ծանոթություն 1.—Դուանձնականի տրականի քի ձևը գործածվում է այն դեպքում, երբ հաջորդող բառն սկսվում է բաղաձայնով, հակառակ պարագայում գործածվում է քիզ ձևը։

Ծանոթություն 2.—Ին դերանվան սեռականի և մյուս հոլովների եռակի ձևերից ավելի գործածական են ինդուր և ընդուր ձևերը. անդուր ձևը քիչ է գործածվում։

Ծանոթություն 3.—Ինքի՝ դերանվան սեռականի ավելի հին և միշտ ձևն է ուրնն, որ գործածում են հաճախ ծերերը, նրանցից մեկը (Ս. Գաբրիելյան) նույնիսկ բարկանում էր, երբ իր հետ խոսելիս ասում էի ուրէն. նրա և ուրիշների վկայությամբ իրենց մանկության տարիներին միակ գործածականն է եղել ուրնն ձևը, որ և միանգամայն համապատասխանում է հնչյունափոխական օրենքներին (տես § 121)։ Գործիականի ուրէնավ և ներգոյականի ուրէնամ ձևերում նախկին եա-ի դիմաց ունենք է շեշտի տակ լինելու պատճառով (իւրեան-ավ, իւրեան-ամ > ուրէնավ, ուրէնամ), զրանց համաբանությամբ էլ, ահա, սեռականի երբեմնի ուրնն ձևը դարձել է ուրէն, որ և այժմ գրեթե միակ գործածականն է։

325. Ցուցական դերանուններն են.

ա) Ձա ⁂այս, դա, ևա ⁂այն, որոնք գործածվում են միայն որպես ածական՝ միշտ գոյականի հետ, և իրրև այդպիսին էլ, չեն հոլովվում։

բ) Ա՛յս ⁂այս, այդ ⁂այդ, այն ⁂այն, որոնք գործածվում են իրրև դերանուն և հոլովվում են այսպես.

Ուղղ.	*այս*	*այստի՛ք, աստուք, ըստուք*
Սեռ.	*այստի՛ր, ըստուր*	*այստի՛ց, աստուց, ըստուց*
Տր.	*այստի՛ր, ըստուր*	*այստի՛ց, աստուց, ըստուց*
Հայց.	*այս, այստուր, ըստուր*	*այստի՛ց, աստուց, ըստուց կամ = ուղղ.*
Բաց.	*այստի՛րէնից, ըստուրէնից, այստի՛րէնէ, ըստուրէնէ*	*այստի՛ցէնից, աստուցէնից, ըստուցէնից, այստի՛ցէնէ, աստուցէնէ, ըստուցէնէ*
Գործ.	*այսո՛վ, այստի՛րով, ըստուրով, այստի՛րէնով, ըստուրէնով*	*այստի՛ցո՛վ, աստուցով, ըստուցով, այստի՛ցէնով, աստուցէնով, ըստուցէնով*
Ներգ.	*այստա՛մ, այստի՛րէնում, ըստուրէնում*	*այստի՛ցո՛մ, աստուցում, ըստուցում, այստի՛ցէնում, աստուցէնում, ըստուցէնում*
Ուղղ.	*ա՛դ*	*ադի՛ք, ադուք, ըդուք*
Սեռ.	*ադի՛ր, ըդուր*	*ադի՛ց, ադուց, ըդուց*
Տր.	*ադի՛ր, ըդուր*	*ադի՛ց, ադուց, ըդուց*
Հայց.	*ա՛դ, ադուր, ըդուր*	*ադի՛ց, ադուց, ըդուց կամ = ուղղ.*
Բաց.	*ա՛դէն, ադի՛րէնից, ըդուրէնից, ադի՛րէնէ, ըդուրէնէ*	*ադի՛ցէնից, ադուցէնից, ըդուցէնից, ադի՛ցէնէ և այլն*
Գործ.	*ադո՛վ, ադի՛րով, ըդուրով, ադի՛րէնով, ըդուրէնով*	*ադի՛ցո՛վ, ադուցով, ըդուցով, ադի՛ցէնով և այլն*
Ներգ.	*ադա՛մ, ադի՛րում, ընդուրում, ադի՛րէնում, ըդուրէնում*	*ադի՛ցո՛մ, ադուցում, ըդուցում, ադի՛ցէնում և այլն*

Ա՛ն հոլովվում է անձնականի նման։

դ) Ածի կամ իսի «այսպիսի, այսպես», ոդի կամ իդի «այդպիսի, այդպես», ոնդի կամ ինդի «այդպիսի, այնպես», ոսքաց «այսքան», ոդրաց «այդքան», ոնքաց «այնքան», տէղրս «այստեղ», տէղրտ «այդտեղ», տէղր «այնտեղ». ոսոի, իսոի, ոդի, իդի, ոնդի, ինդի չեն հոլովվում. Ասացյալները հոլովվում են առաջին հոլովման գոյականների նման։

Տէղրս, տէղրտ, տէղր նույնպես առաջին հոլովմամբ են հոլովվում, բայց բոլոր հոլոՁներում էլ պահպանում են ս, դ, ր (ճ) հոդերը. ինչպես՝ տէղուս, տէղուտ, տէղուն, տէղէս, տէղէտ, տէղէն, տէղավրս, տէղավրտ, տէղավր, տէղարքրս, տէղարքրտ, տէղարքր և այլն։

326. Իբրև ստացականներ գործածվում են անձնական դերանունների սեռականները. իմ, քու, ինդոր (անդուր, ընդուր), ոերան, ոէրէն, մէր, ձեր, ոնդոց (անդուց, ընդուց). ոերաց։

Բոլորն էլ գործածվում են գոյականի հետ՝ իբրև հատկացուցիչ, ըստ որում գոյականն ստանում է հետևյալ ստացական հոդերը. առաջին դեմքի համար՝ ս, ըս, ի՛ս, երկրորդ դեմքի համար՝ տ, ըտ, ի՛տ, երրորդ դեմքի համար՝ ն, ը, ի՛, ինչպես՝ իմ ոօնըս «իմ տունը», իմ ձիս «իմ ձին», իմ հարի՛ս «իմ հայրը», քու իփի՛տ «քո այգին», քու ախպէրըտ «քու եղբայրը», քու մարի՛տ «քո մայրը», ոնդոր քէնէն «նրա քեռին», ոնդոր շոնը «նրա շունը», ոնդոր մէթի՛ր «նրա միտքը» և այլն։ Ս ‖ ըս ‖ ի՛ս, տ ‖ ըտ ‖ իտ, ն ‖ ը ‖ ի՛՝ ստացականներն էլ նույն կանոններով են գործածվում, ինչ որ որոշիչ հոդը (տես § 304, 305)։

Նույն ստացական հոդերը գործածվում են նաև որպես ցուցական հոդեր և դրվում են գոյականի վրա, երբ նա ունի որևէ ցուցական դերանուն. այդ դեպքում, սակայն, նույն հոդը կարող է ունենալ և՛ ստացական, և՛ ցուցական իմաստ, և նախադասությունից պետք է իմանալ, թե իբրև ինչ է գործածված, ինչպես՝ ոս հընգէրըս «իմ այս ընկերս» կամ «այս ընկերը», ոդ բախէտ «քո այդ երեխան» և «այդ երեխադ». Իմ բառը եռադաս գործածությամբ ունենք ախպէրամ «եղբայր իմ» բառի մեջ, որ գործածվում է իբրև կոչական, խոսակցության ժամանակ մեկին դիմելու համար. Այդտեղ իմ-ը նախ դարձել է րմ (եղբայր իմ>ախպէր րմ), ինչպես կա Ագուլիսի բարբառում, և ապա՝ ամ (ախպէր րմ>ախպէր ամ)՝ ադրբեջանական балам «ղավակս, ղա-

վակ իմ», бабам «հայրս, հայր իմ» և այլ ձևերի ազդեցությամբ, որոնց մեջ, սակայն, -ա-ն բառին է պատկանում:

327. Ստացականները փոխանվանաբար, իբրև գոյական գործածվելիս ստանում են դիմորոշ հոդեր (ը, ի՝, ըս, ի՝ս և այլն) և հոլովվում են այսպես.

Եզակի

Ուղղ.	*իմի՝, իմի՝ս (իմի՝ն)*
Սեռ.	*իմու, իմուս, իմուն, իմինու, իմինուս, իմինուն*
Տր.	» » » » » »
Հայց.	*իմի՝, իմի՝ս (իմի՝ն) կամ =տրականին*
Բաց.	*իմէն, իմուն էնից, իմուս էնից, իմինուս էնից, իմինուն էնից*
Գործ.	*իմով, իմինով, իմուս էնով, իմուն էնով*
Ներգ.	*իմամ(ի՝), իմինամ, իմուս էնամ, իմուն էնամ*

Հոգնակի

Ուղղ.	*իմների՝, իմարի՝ս, իմարին, իմուքը, իմուքըս, իմուքըն*
Սեռ.	*իմէրու, իմէրուս, իմէրուն, իմուցը, իմուցըս, իմուցըն*
Տր.	» » » » » »
Հայց.	*=ուղղ. կամ տր.*
Բաց.	*իմէրէն, իմէրուս էնից, իմէրուն էնից, իմուց էնից*
Գործ.	*իմէրով, իմէրուս էնով, իմէրուն էնով, իմուց էնով, իմուցով*
Ներգ.	*իմէրամ, իմէրուս էնամ, իմէրուն էնամ, իմուցամ, իմուց էնամ*

Եզակի

Ուղղ.	*քունը, քունըս, քունըն*
Սեռ.	*քունու, քունուս, քունուն, քունինու, քունինուս, քունինուն*
Տր.	*քունու, քունուս, քունուն, քունինու, քունինուս, քունինուն*
Հայց.	*=ուղղ. կամ տր.*

Բաց.	*քունէն, քունէիս, քունինէն, քունուն էնից, քունուս էնից, քունինուն էնից և այլն*
Գործ.	*քունավ, քունինավ, քունուն էնավ, քունուս էնավ, քունինուն էնավ և այլն*
Ներգ.	*քունամ, քունինամ, քունուն էնամ, քունուս էնամ, քունինուն էնամ և այլն*

Հոգնակի

Ուղղ.	*քունաքը, քունաքըս, քունաքըն, քունուքը, քունուքըս, քունուքըն*
Սեռ.	*քունէրու, քունէրուս, քունէրուն, քունուցը, քունուցըս, քունուցըն*
Տր.	*քունէրու, քունէրուս, քունէրուն, քունուցը, քունուցըս, քունուցն*
Հայց.	*=ուղղ. կամ սեռ.*
Բաց.	*քունէրէն, քունէրէս, քունէրուն էնից, քունէրուս էնից, քունուց էնից*
Գործ.	*քունէրավ, քունէրուն էնավ, քունէրուս էնավ, քունուց էնավ, քունուցավ*
Ներգ.	*քունէրամ, քունէրուն էնամ, քունէրուս էնամ, քունուցամ, քունուց էնամ*

Այսպես հոլովվում են նաև մէրը, մէրաբը, մէրուքը, ծիրի՝ ձիրանի՝, ձէրուքը, ուրանի՝, ուրաննէն, ուրուցի՝, (ուրացնէն), անդուցի՝ (անդուցը, ընդուցը), աստուցի՝ (աստուցը, ըստուցը), ադուցի՝ (ադուցը, ըդուցը):

Վերջիններիի հոգնակին գործածական չէ, թէև կարելի է ասել ուրացնէն, անդուցնէն և այլն:

Ծանոթություն 1.—Ս, ա հոդերով ձևերի թեք հոլովները սակավ գործածական են, ը, ի՝ հոդով ձևերը էական բայից և ալ-ից առաջ ստանում են ն և հոլովվում ըն, ին՝ ձևերով (իմի՝ն, իմուն, քունըն, քունուն և այլն):

Ծանոթություն 2.—Հիշյալ ձևերի սեռականները նորից կարող են հոդ ստանալ և անկախորեն գործածվել. ինչպես՝ իմ դէնակուս կութուն նախշը դաշէնք ի,

քունունը՝ չէ «իմ դանակի կոթի նախշը գեղեցիկ է, քո-նինը (քո դանակի կոթի նախշը) ոչ»։ Դրանք, սակայն, շատ քիչ են գործածվում։

*328. Ինչպես աշխարհաբարում, նույնպես և այստեղ, գոյականը կարող է գործածվել միայն ստացական հոդով, առանց ստացական դերանուններ*ի, *և հոլովվել այսպես.*

Եզակի

Ուղղ.	*հաքըս «տաքս»*	*բաՅի՝ս «մատս»*	*մէՔկի՝ս «միտքս»*
Սեռ.	*հաքուս*	*բաՅուս*	*մըՔկուս*
Տր.	»	»	»
Հայց.	*=ուղղ. կամ տր.*		
Բաց.	*հաքէս,*	*բաՅէս,*	*մըՔկէս*
	հաքուս էնից,	*բաՅուս էնից*	*մըՔկուս էնից*
Գործ.	*հաքավըս*	*բաՅավի՝ս*	*մըՔկավըս*
Ներգ.	*հաքամըս*	*բաՅամի՝ս*	*մըՔկամըս*

Հոգնակի

Ուղղ.	*հաքարըս*	*բաՅաՅրի՝ս*	*մըՔկէրըս*
Սեռ.	*հըքէրուս*	*բաՅէրուս*	*մըՔկէրուս*
Տր.	»	»	»
Հայց.	*=ուղղ. կամ տր.*		
Բաց.	*հըքէրէս,*	*բաՅէրէս,*	*մըՔկէրէս,*
	հըքէրուս էնից	*բաՅէրուս էնից*	*մըՔկէրուս էնից*
Գործ.	*հըքէրավըս*	*բաՅէրավս*	*մըՔկէրավս*
Ներգ.	*հըքէրամըս*	*բաՅէրամըս*	*մըՔկէրամս*

Այսպես և հաքըտ «քո տաքը», բաՅի՝տ «քո մատը», մէՔկի՝տ «քո միտքը» և այլն։

Ծանոթություն 1. – Մեր, ձեր *ստացականների փոխարեն գործածվում են -նէրըս, նէրըտ, որոնցից առաջ բառամայնով վերջացող բառերի վրա ավելանում է ը, ինչպես՝ իգ՝ինէրըս «մեր այգին» կամ «մեր այգիները», խաղունէրըտ «ձեր խաղողը» կամ «ձեր խաղողները», բէհրնէրըտ «ձեր բահերը», տօնրնէրս «մեր տները» և այլն։ Եթե բազմավանկ բառը հոդ է ստանում եզակի ստացականների փոխարեն, ապա՝ գոյականի ուղղականին ավե-*

լանում է սոսկ ս, տ, ն, որով և նրանք տարբերվում են հիշյալ ձևերից. ինչպես՝ իմ՝ինչ «իմ այգինները», խաղունէտ «քո խաղողները» և այլն։ Եթե միավանկ բառը եզակի է, իսկ հոդը պետք է համապատասխանի մեր, ձեր, նրանց սեռացականներին, ապա ավելանում են (ը)ն-էս, (ը)ն-էտ, (ը)ն -էն, ինչպես՝ բէներնէս «մեր լանը», տօներնէտ «ձեր տունը», փէտրնէն «նրանց փայտը (վառելափայտը)» և այլն։

329. Հարաբերական դերանուններն են հօր «որ, որը», հուոնը «որը», հուոնը հօր «որն որ», հու հօր «ով որ»։ Առաջինը չի հոլովվում, ենթացածներում հոլովվում են միայն հուոնը, հու, իսկ հօր-ը անփոփոխ կերպով գործածվում է բոլոր հոլովների հետ։

Ուղղ.	հուոնը	հուոնուք	հուոնարը
Սեռ.	հուոնու(ն)	հուոնուց	հուոնէրու
Տր.	հուոնու(ն)	հուոնուց	հուոնէրու
Հայց.	=ուղղ. կամ տր.		
Բաց.	հուոնէն, հուոնուն էնից	հուոնուց էնից	հուոնէրուն էնից
Գործ.	հուոնավ	հուոնուց էնավ	հուոնէրավ
Ներգ.	հուոնամ	հուոնուց էնամ	հուոնէրամ

Հու դերանվան հոլովումը տե՛ս ստորև։

330. Հարցական դերանուններն են հո՞ւ, հո՞ւվ «ով», հո՞ւոնը «որը», հի՞նչ «ինչ», խա՜ւ, խա՜ «ինչու», հա՞րդի «ինչպես», հի՞նչ կուր «ինչպես», քա՞նէ «քանի», հի՛չտէ՞ղ չի՛տէ՞ղ «ոտաեղ», հօ՞ր «սուր», հի՛չքա՞ն, չիքամ «որքան»։

Եզակի

Ուղղ.	հու, հուվ	հինչ
Սեռ.	հա՜ր	հինչու
Տր.	հա՜ր	հինչու
Հայց.	հա՜ր	հինչ
Բաց.	հա՜րէնից, հա՜րէնէ, հա՜ր հէնից,	հինչէ՞, հինչուն էնից, հինչուն էնէ

Գործ.	հաքէնավ, հաքրնավ, հաքրնամ, հաքնամ,	հինչավ, հինչուն էնավ
Ներգ.	հաքէնամ, հաքրնամ, հաքնամ	հինչամ, հինչուն էնամ

Հոգնակի

Ուղղ.	հաքվքար	հինչար, հինչէր
Սեռ.	հաքրանց	հինչէրու
Տր.	հաքրանց	հինչէրու
Հայց.	հաքրանց	հինչէրու
Բաց.	հաքրանց էնից, հաքրանց էնէ	հինչէրէ, հինչէրուն էնից, հինչէրուն էնէ
Գործ.	հաքրանցավ, հաքրանց էնավ	հինչէրավ, հինչէրուն էնավ
Ներգ.	հաքրանցամ, հաքրանց էնամ	հինչէրամ, հինչէրուն էնամ

Եզակի

Ուղղ.	քանէ	հի՛շէդ	շի՛տէդ	հի՛շքան, շքամ
Սեռ.	քանիսու	հի՛շէդու	շի՛տէդու	հի՛շքամու
Տր.	քանիսու	հի՛շէդու	շի՛տէդու	հի՛շքամու
Հայց.	քանէ	հի՛շէդ	շի՛տէդ	հի՛շքան, շքամ
Բաց.	քանիսէն, քանիսու, քանիսուն էնից	հի՛շէդէն	շի՛տէդէն	հի՛շքամէն
Գործ.	քանիսավ	հի՛շէդավ	շի՛տէդավ	հի՛շքամավ
Ներգ.	քանիսամ	հի՛շէդամ	շի՛տէդամ	(հի՛շքամամ)

Հոգնակի

Ուղղ.	քանէք, քանինէ	շի՛տէդէք
Սեռ.	քանինէրու	շի՛տէդէքո՛ւ, շի՛տէդէրանց
Տր.	քանինէրու	շի՛տէդէքո՛ւ, շի՛տէդէրանց
Հայց.	քանէք, քանինէ, քանինէրու	շի՛տէդէք
Բաց.	քանինէրէն	շի՛տէդէքո՛ւէն
Գործ.	քանինէրավ	շի՛տէդէքո՛ւավ
Ներգ.	քանինէրամ	շի՛տէդէքո՛ւամ

Հո՞ւռնը «որը» հարցականի հոլովումը տես § 329։ Նա՞ս, խա՞ն «ինչու», հա՞րդի «ինչպես», ևիչկուր «ինչպես», հո՞ր «ուր» հարցականները չեն հոլովվում։

Ծանոթություն 1.— Հու, հուվ «ով» ձևերից առաջինը գործածվում է բաղաձայնով սկսվող բառերից առաջ, եկրորդը՝ ձայնավորով սկսվողներից։ Դրանց հոդնակիի հուրքանց, հուրքանցավ, հուրքանցամ ձևերը չպիտի շփոթել հուրաց ստացականի հետ. դրանք կազմվել են եզակի սեռականի հուր (>ոյր) ձևին ավելացնելով -անց, -անցավ, -անցամ մասնիկները, ինչպես ունենք նաև այլ բարբառներում՝ եզ. սեռական, տրականի -ում ձևից՝ ումանց, ումանցից, ումանցով և այլն։

Ծանոթություն 2.— Հի՝չտեղ, չի՝տեղ «որտեղ» ձևերից առաջինը գործածվում է միայն եզակիում, ընդհակառակն՝ հի՝չքան, չքամ ձևերից գործածականն է առաջինը, իսկ երկրորդը գործածվում է միայն եզակի ուղղականում և հայցականում։

331. Որոշյալ դերանուններն են՝ ումմէն «ամեն», բուլուր «բոլոր, ամբողջ», ումմոդջ, ումմէն միհի՝ «ամեն մեկը, յուրաքանչյուրը», ամի՝նի՝ «մյուսը»։

Ուղղ.	ումմէն	բուլուր	ումմէն միհի՝
Սեռ.	ումմուցու	բուլուրու	ումմէն մինուն
Տր.	ումմուցու	բուլուրու	ումմէն մինուն
Հայց.	ումմէն, ումմուցու	բուլուր բուլուրու	ումմէն մինուն
Բաց.	(ումմուցէն)	բուլուրուն էնից	ումմէն մինէն, մինուն էնից
Գործ.	ումմուցավ	բուլուրավ	ումմէն մինավ
Ներգ.	ումմուցամ	բուլուրամ	ումմէն մինամ

Ամինի՝ «մյուսը» հոլովվում է ինչպես ումմէն միհի՝։

332. Անորոշ դերանուններն են՝ ունքան, ունքէն «ոք, ոմն», միհի՝ «մեկը, իմն», օրիշ «ուրիշ, այլ»։

Եզակի

Ուղղ.	ունքան, ունքէն	օրիշ
Սեռ.	ունքանու	օրշու
Տր.	ունքանու	օրշու

Հայց.	ունքանու	օրշու
Բաց.	ունքանէ,	օրշուց, օրշէ,
	ունքանուհ էնից	օրշու (ն, հ) հէնից,
Գործ.	ունքանավ,	օրշավ,
	ունքանու հէնավ	օրշու (ն, հ)էնավ
Ներգ.	ունքանամ,	օրշամ,
	ունքանու հէնամ	օրշու (ն, հ)էնամ

Հոգնակի

Ուղղ.	ունքաննէ	ունքընատէք	օրիշնէ
Սեռ.	ունքաննէրու	ունքընատաց	օրիշնէրու
Տր.	ունքաննէրու	ունքընատաց	օրիշնէրու
Հայց.	ունքաննէրու	ունքընատաց	=ուղղ. կամ տր.
Բաց.	ունքաննէրէ,	ունքընատաց	օրիշնէրէ,
	ունքաննէրու	էնից	օրիշնէրու
	(ն, հ)էնից		(ն, հ)էնից
Գործ.	ունքաննէրավ	ունքընատէրավ	օրիշնէրավ
Ներգ.	ունքաննէրամ	ունքընատէրամ	օրիշնէրամ

Միևի՝ հոլովվում է ինչպես (ումմէն) միևի՝ (տես § 331)։

333. Փոխադարձ դերանուններն են, միև-միևու *մեկ-մեկուս, միմիր փրարդ*։

Սեռ.	մին-մինու	միմիր
Տր.	մին-մինու	միմիր
Հայց.	մին-մինու	միմիր
Բաց.	մին-մինէ	միմիր էնից
Գործ.	մին-մինավ	միմիրնավ, միմիր էնավ
Ներգ.	մին-մինամ	միմիրնամ, միմիր էնամ

334. Ժխտական դերանուններն են, ճիչ ուք *ոչ ոքս*, ճիչ միև *ոչ մի*ս, ճիչ միևի՝ *ոչ մեկը*։

Ուղղ.	հիչ ուք
Սեռ.	հիչ ուքու
Տր.	հիչ ուքու
Հայց.	հիչ ուքու
Բաց.	հիչ ուքէ, հիչ ուքու հէնից
Գործ.	հիչ ուքավ
Ներգ.	հիչ ուքամ

Հիչ միև *ոչ մի*ս հոլովվում է միև *մեկ* թվականի նման, ճիչ միևի՝ *ոչ մեկը*ս հոլովվում է ինչպես (ումմէն) միևի՝։

8. ԲԱՑ

335. Մեղրու բարբառում կա չորս խոնարհում. դրանց անորոշ դերբայի վերջավորություններն են.

1. *Խոնարհում* -ալ ‖ -ալ, *օր. մընալ, իրվալ «երևալ»*
2. *Խոնարհում* -էլ — *օր. ծըկէլ «ծածկել»*
3. *Խոնարհում* -իլ — *օր. առիլ «առնել», սէրիլ «սիրել»*
4. *Խոնարհում* -աճիլ ‖ աճիլ, *օր.մըռանիլ «մոռանալ», լի՝վանիլ «լվանալ»*

-էնիլ, *օր. գի՝դէնիլ «գիտենալ»*

Մի բայ միայն կա ունի վերջավորությամբ, որ է՝ զալ>գալ և որ անկանոն խոնարհում ունի։

Եղանակները չորսն են. սահմանական, ըղձական, հարկադրական և հրամայական։ Ենթադրական եղանակը, որ կա ուրիշ բարբառներում և ժամանակից հայերենում, Մեղրու բարբառում նույնացել է սահմանականի ապառնիին, որպես նրա երկրորդական, բաղադրյալ ժամանակային ձև։ Բուն ապառնիի և բաղադրյալ ապառնիի իմաստային տարբերությունն այն է, որ մինչդեռ առաջինն արտահայտում է ուղղակի ապառնի գործողություն, երկրորդն արտահայտում է ապառնի գործողության մտադրությունը։

ԴԵՐԲԱՅՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

336. Մեղրու բարբառն ունի հետևյալ դերբայները՝ անորոշ, անկատար, կատարյալ, դերակատար, ապառնի, ենթակայական և մակբայական։

337. Անորոշ դերբայը գործածվում է իբրև ապառնի ժամանակի բաղադրիչ. ինչպես՝ գինէլ իմ, j'irai, օտիլ իմ—je mangerai, մընալ իմ—je resterai, սէրիլ իմ—j'aimerai և այլն։

338. Անկատար դերբայը կազմվում է անորոշ դերբայից, նրա լ վերջավորությունը փոխելով ս-ի, ինչպես՝ մընաս «մնում», իրվաս «երևում», ծըկէս «ծածկում», սի՝բիս «սի՝բում», մըռընէս, «մոռանում» և այլն։ Իլ վերջավորությամբ բայերից մի խումբն անկատար դերբայում ի ձայնավորը փոխում է է-ի, ինչպես՝ խօսիլ—խըսէս «խոսում», օտիլ—ըտէս «ուտում» և այլն (տես 3-րդ խոնարհում)։ Մի քանի ձևերը հաճախ ս-ից առաջ արտասանում

են յ. ինչպես՝ մրճայս «մնում», ի՝բվայս «երևում», ծրկէյս «ծածկում» և այլն։ Շահյանցն իր «Քերականության» մեջ վկայում է, որ իր մանկության ժամանակ ավելի գործածական էին նայս «գալիս», նայս «տալիս», գի՝նէյս «գնում» և այլ այսպիսի ձևերը։ Համեմատելով Մեղրու, Կաբճևանի և Կաքավաբերդի բարբառների անկատար դերբայները, մեր առջև ներկայանում է հետևյալ պատկերը. ինչպես հայտնի է, այս դերբայի նախաձևն է եղել խօսելիս, մնալիս ձևը, որ անփոփոխ կերպով մնում է արդի գրական հայերենում։

Կաքավաբերդի բարբառը հենց այժմ էլ այդ ձևն ունի, որով և ներկայացնում է նախաձևն անաղարտությամբ. ինչպես՝ մրնալիս, նէլիս «գնալիս» և այլն։ Մեղրու բարբառը լ-ի կորուստով և դրա հետևանքով ի-ն է-ից հետո յ դարձնելով, ստիպել է մրճայս «մնալիս», գի՝նէյս «գնալիս» և հետո՝ կորցնելով նաև յ-ն, ստիպել՝ մրճաս, գի՝նէս։

Կաբճևանի բարբառը ներկայացնում է զարգացման նույն ընթացքը, բայց նրանում ընկել է ոչ թե յ-ն, այլ ա-ն. այսպես՝ մրնալիս > մրճայիս > մրճայս > մրճայ, գնալիս > նէլիս > նէյս > նէյ և այլն։ Ուստի, Մեղրու մի քանի ծերերի արտասանածը մի արժեքավոր հնարանություն է, որ փաստական կերպով հաստատում է այս դերբայի զարգացման միջին աստիճանը։

Անկատար դերբայը, եղանակային ձևերի բաղադրիչը լինելուց բացի, գործածվում է նաև իբրև դերբայական լրացում։

Իբրև եղանակային ձևերի բաղադրիչ համապատասխանում է արդի գրականի -ում անկատար դերբային, ինչպես՝ գի՝նէս իմ «գնում եմ», գի՝նէս իմ լա՞«գնում էի» և այլն։ Իբրև դերբայական լրացում համապատասխանում է արդի գրականի -ալիս, -ելիս անկատար դերբային կամ, -ող, -ած դերբայներին. ինչպես՝ Քու խընդիս մարգըս տէղըս չի «քո ուզած մարդը այստեղ չէ». Ան խըսէս մարգը ռադ չի նայս «այն խոսող մարդը չի հեռանում». Անգուր գի՝նէս վախտը իս տէղը չիմ լա «ներս գնալիս ես այնտեղ չէի» և այլն։

339. Կատարյալ դերբայի վերջավորությունն է՝ 2-րդ և 3-րդ խոնարհումների համար՝ -ալ ‖ -ել (<եալ), 1-ին և 4-րդ խոնարհումների համար՝ -ացալ, -ացել (<ացեալ), որոնք բոլորն էլ ավելանում են բայահիմքերին. -ալ, -ացալ սուռնում են ծանր

ձայնավորներով բայերը, իսկ -ալ, -ցալ՝ բոլոր ձայնավորներով բայերը. ինչպես՝ սէրալ «սիրել», խըմալ «խմել», ծալալ «ծալել», ի՛րվացալ «երևալ», մըննացալ «մնալ», մըռացալ «մոռանալ», թի՛լացալ «թուլանալ» և այլն։ Այս դերբայի -ացալ ‖ -ցացալ մասնիկը, որ գրաբարում բաղկացած է կատարյալի հիմքի -ա՛ց մասնիկից և անցյալ դերբայի -եալ վերջավորությունից, Մեղրու բարբառում հանդիպանում է մի մասնիկ կատարյալ դերբայով կազմվում է անցյալ կատարյալը։

340. Գերակատար դերբայի վերջավորությունն է՝ 2-րդ և 3-րդ խոնարհումների համար՝ -ած ‖ -ած, 1-ին և 4-րդ խոնարհումների համար՝ -ահած ‖ -ահած, որոնք ավելանում են բայահիմքերին. ինչպես՝ սէրած «սիրած», խըմած, ծալած, ի՛րվահած «երևացած», մըննահած «մնացած», մըռահած «մոռացած», թի՛լահած «թուլացած» և այլն։ Այս -ահած ‖ -ահած մասնիկն ստացվել է հարակատար դերբայի -ացած-ից, որում ց-ն դարձել է հ (տես § 200)։ Սրա հետ պետք է համեմատել Ագուլիսի բարբառի անցյալ կատարյալն ու անցյալ դերբայը, որոնց մեջ նույնպես ց-ն դարձել է հ, ինչպես՝ մըռահաք «մոռացաք», մըռահած «մոռացած», մըռահալ «մոռացեալ», ըսկի՛նահք «զգեցաք» ըսկի՛նահծ «զգեցած», ըսկի՛նահլ «զգեցեալ» և այլն[1]։

Այդ դերբայը գործածվում է միաժամանակ թե իբրև հարակատար, և թե իբրև վաղակատար, այդ պատճառով էլ մենք կոչեցինք ոչ վաղակատար կամ հարակատար, այլ գերակատար (plusquamperfectum), որ ընդգրկում է երկուսն էլ, առանց տարբերակման։

341. Ապառնի դերբայի վերջավորությունն է -ացուկ ‖ -ացուկ, կամ -ասկան ‖ -ասկան, որ ավելանում է անորոշ դերբային. շեշտն ընկնում է մասնիկի առաջին վանկի վրա, որի հետևանքով էլ անորոշ դերբայում եղած ձայնավորները դառնում են ը կամ ի՝. ը դառնում են այն բայերի ձայնավորները, որոնք անկատար դերբայում ունեին -էս կամ -ա՛ս վերջավորությունը և ստանում են -ացուկ, -ասկան մասնիկները. ինչպես՝ մընալ—մընաս, մընըլացուկ կամ մընըլասկան «մնալուս», ծըկել—ծըկէս, ծըկըլացուկ կամ ծըկըլասկան «ծածկելուս», խօսիլ—խըսէս,

[1] Աճառյան, Քննութ. Ագուլիսի բարբառի, էջ 245—246։

խըոըլացուկ կամ խըսըլասկան «խոսելուց և այլն։ Ի՝ պահում են այն բայերի ձայնավորները, որոնք անկատար դերբայում ունեն -ում կամ -իս վերջավորությունը. ինչպես՝ ի՝րվալ—ի՝րվում, ի՝րի՝վի՝լացուկ կամ ի՝րի՝վի՝լոսկան «երևալուց, սէրիլ—սի՝րիս—սի՝րի՝լացուկ կամ սի՝րի՝լոսկան «սիրելուց և այլն։

Այդ վերջավորությունը, ինչպես պարզորեն երևում է, բաղկացած է երկու մասնիկներից -ացՙ ՙ-ացՙ և -ուկՙ ՙ-կան. -ասկան ձևում ց-ն դարձել է ս, կ-ից առաջ լինելու պատճառով (տես § 199)։ Առաջին մասնիկը (ացՙ մեր կարծիքով հոգնակի սեռական-տրականի[1] -ացՙ վերջավորությունն է։ Այսպես. ապառնի դերբայի նախաձևը մենք համարում ենք -ալի ՙ-ելի դերբայի հոգնակի սեռական-տրականը, ինչպես՝ գնալի—գնալեացՙ իմանալի—իմանալեացՙ սիրելի—սիրելեաց և այլն, որոնց մեջ հնչյունափոխական օրենքների համաձայն շեշտահոդորդ փակ վանկում եա երկբարբառը կանոնավորապես պետք է տար ա, ուստի և գնալեացՙ սիրելեաց ձևերն էլ պետք է տային գնալացՙ սիրելացՙ և այլն։ Որ հայերենում առհասարակ ապառնի դերբայը կապվում է անորոշ դերբայի սեռական-տրականից, ապացուցում են և՛ գրաբարը, և՛ աշխարհաբարը. գրաբարում անորոշ դերբայը ենթարկվում է -ոյ հոլովման, նրա հոգնակի սեռական-տրականի վերջավորությունը պետք է լիներ -ոցՙ որ և ապառնի դերբայի վերջավորությունն է, ինչպես՝ գրելոց, ազալոց և այլն։ Աշխարհաբարում նույնպես ապառնի դերբայը ներկայացնում է անորոշի սեռական-տրականը, բայց, ի տարբերություն գրաբարի, այստեղ տրդեն եզակի թիվը է. ինչպես՝ գրելու աղալու և այլն։ Վերջապես, որ Մեծրու բարբառում ապառնի դերբայը -ալի ՙ-ելի դերբայի հոգնակիից է ստացվել, այդ ապացուցում է նաև անկատար դերբայը, որ ստացվել է նույն ձևի հոգնակի հայցականից (գնալի—գնալիք—գնալեաց, գնալիս և այլն)։

Արդ, ժամանակի ընթացքում այդ պարզ ձևն այլևս չգիտակցվելով, կարիք է զգացվել մի նոր մասնիկի և, ահա, մեկի

[1] *Ասում ենք սեռական-տրականի, որովհետև նրանց ձևական նույնացման հետևանքով դժվար է սուզել, թե այդ որ հոլովից է ստացվել. թեև շատ ավելի հավանական է, որ նա սեռականը լինի (համմտ. ուտելու հաց, կարգալու գիրք և այլն)։*

փոխարեն երկուսն են վերցրել -ուկ և -ական. առաջինը նույն մասնիկն է, որ գոնում ենք գրականում էլ գործածվող տալացուկ, առնելացուկ ձևերում և մի քանի բարբառների կայնուկ, նըստուկ և այլ ձևերում. գրականում գործածվող հիշյալ ձևերում նա ունի ապառնի դերբայի, իսկ վերջիններում հարակատար դերբայի իմաստ (կայնուկ «կանգնած»). երկրորդը սովորական -ական ածանցն է, որ իբրև ապառնիի վերջավորություն գործածվում է նաև Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ քիճիական ըմ «գնալու եմ», ըթալական ըմ «ուտելու եմ» և այլն: Այս ածանցով ապառնի կազմելը, ըստ պրոֆ. Աճառյանի, պարսկական ազդեցություն է[1]:

Ապառնի դերբայի այդ զուգաձևերը Մեղրու բարբառում գործածվում են հավասարապես, առանց իմաստի որևէ տարբերության, որը ցույց է տալիս, թե դրանց գոյացումը շատ հին է, և դրանց գոյությունը շատ հնուց է անցյալները չի թափանցում:

342. Ենթակայական դերբայի վերջավորությունն է -ուղ (<ող), -ացուղ ‖ -ացուղ, որ ավելանում է բայահիմքերին, ինչպես՝ մընացուղ «մնացող», լի՝վացուղ «լվացող», սէրուղ «սիրող», ծրկուղ «ծածկող», բիրուղ «բերող» և այլն: Այս -ուղ մասնիկը գրեթե չունի յուր կեթև ձևը (ուղ), եթե չհաշվենք մի քանի առանձին բայերինը, որոնց մեջ, ըստ մեծի մասին, դանվում է ու-ից հետո, ինչպես՝ ունենուղ «որ կնոջ», լուզուղ «լվազող» և այլն: Իր կազմությամբ -ացուղ ‖ -ացուղ մասնիկին էլ բաղադրված է անցյալի հիմքի -ած վերջավորությունից և ենթակայական դերբայի -ող մասնիկից:

343. Մակբայական դերբայը կազմվում է անորոշ դերբային ավելացնելով -էն վերջավորությունը. շեշտը տեղափոխվում է վերջընթեր վանկը, որի շնորհիվ նախաշեշտ վանկերի ձայնավորները դառնում են ը կամ ի՝ (ըստ § 341). ինչպես՝ մընալ—մընալէն, օտիլ—ըտէլէն, սէրիլ—սի՝րիլէն և այլն: Բավանդակությամբ այս դերբայը համապատասխանում է ռուսերենի деепричастие-ին, ֆրանսերենի gérondif-ին և աշխարհաբարի անորոշ դերբայի գործիական հոլովին՝ իբրև ձևի պարագա. ինչպես՝ ըտէլէն=кушая, en mangeant «ուտելով»,

[1] Տես Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմ., Երևան, 1941, մաս 1, էջ 315:

ըսէլէն=говоря, en disant «ասելով», խըսէլէն=говоря, en parlunt «խոսելով» և այլն։ Երբեմն կարող է գործածվել նաև նպատակը ցույց տալու համար, ինչպես՝ Ծընէլէն չիք խազ ըրէս «ատնելու համար չենք խաղում». Նըսաէլէն չիմ իվմած «նստելու (համար) չեմ եկել» և այլն։

Որպես մակբայ, բնականաբար, գործածվում է միշտ իբրև ստորոգյալի լրացում։

Կազմությամբ այս դերբայը նույնն է անորոշ դերբայի բացառական հոլովի հետ, որն այսպիսի գործածություն ունի նաև Պոլսի բարբառում։

ՀՈՆԱՐՀՈՒՄ

344. Եղանակային ձևերից ըղձական ներկան ու հրամայականն են, որոնք ունեն պարզ ձև, մյուս բոլոր ձևերը կազմվում են դերբայներից և օժանդակ բայից։

345. Սահմանական ներկան ու անցյալ անկատարը կազմվում են անկատար դերբայով և օժանդակ բայի համապատասխան ժամանակներով. ինչպես՝ խըսէս իմ «խոսում եմ», խըսէս իմ լա՛ «խոսում էի» և այլն։

Ներկայի և անցյալի անկատարի այս կազմությունը ծագում է նախդրիվ հայցականից (ներգոյական), որ գործածվելով օժանդակ բայի հետ, նշանակել է մի գործողության (գրության) մեջ լինելը. ինչպես՝ ի գնալիս եմ նշանակել է «գնալու (գործողության) մեջ եմ», ի խօսելիս եմ «խոսելու մեջ եմ» և այլն։ Հետագայում՝ ի նախդրի անկմամբ և -ալիս, -ելիս ձևերի կրճատմամբ է, որ ստացվել են ըսէս իմ, գի՛նէս իմ և այլն։ Դրանց մեջ, բնականաբար, ներգոյականի իմաստը մթագնվել է, և դրանք այժմ նշանակում են միայն շարունակվող գործողություն։ Այս կարգի ներկայի ու անցյալ անկատարի կազմությունը գտնում ենք արդի գրականում գալ, լալ, տալ միավանկ բայերի խոնարհման մեջ (գնալիս եմ, լալիս եմ, տալիս եմ<լի գալիս եմ, ի լալիս եմ, ի տալիս եմ)։ Վերջապես, որ գրանք նախդրիվ հայցական են եղել, հաստատում է հենց արդի գրականի -ալիս, -ելիս ձևի դերբայը, որը ցույց է տալիս մի գործողության մեջ լինելը. ինչպես՝ քո գրելիս ես եկա, ես եկա, երբ դու գրելու (գործողության) մեջ էիր (=գրում

էիր)». Քո խոսելիս ես լռում եմ «երբ դու խոսելու (գործողության) մեջ ես լինում (խոսում ես), ես լռում եմ» և այլն։

346. Ապառնին և ապառնի անցյալը կազմվում են անորոշ դերբայից և օժանդակ բայի ներկայից ու անցյալ անկատարից. ինչպես՝ խօսիլ իմ «կխոսեմ», խօսիլ իմ լա՛ «կխոսեի» և այլն։ Երկու բայ միայն անորոշ դերբայում և ապառնիում ունեն տարբեր ձևեր, գալ>գա՛լ, ապ. ե՛ալ իմ, տալ>տալ, ապ. ե՛ալ իմ (տես § 380)։ Ապառնիի այս կազմությունը հիշեցնում է ֆրանսերենի ապառնիի կազմությունը, այն տարբերությամբ միայն, որ ֆրանսերենում avoir «ունենալ» օժանդակ բայով է կազմվում, և օժանդակ բայը վեր է ածվել իսկական վերջավորությունների, իսկ այստեղ էական բայն է կատարում այդ վերջավորության դերը, ինչպես՝ ֆրանս. je parlerai, Մղր. խօսիլ իմ «կխոսեմ», ֆրանս. j'irai, Մղր. գ'նէլ իմ «կգնամ» և այլն։

347. Անցյալ կատարյալը և գերակատար ներկան ու անցյալը կազմվում են. առաջինը՝ կատարյալ դերբայով ու էական բայի ներկայով, իսկ երկրորդը՝ գերակատար դերբայով ու էական բայի ներկայով ու անցյալ անկատարով. ինչպես՝ խըսացալ իմ «խոսեցի», խըսաւած իմ «խոսել եմ», խըսաւած իմ լա՛ «խոսել էի» և այլն։ Գրաբարյան հարակատարն այստեղ գործել է ուղղակի անցյալ կատարյալ, իսկ -ած դերբայով կազմված գերակատարն իր վրա է վերցրել և՛ վաղակատարի, և՛ հարակատարի պաշտոնը։

348. Հարկադրական եղանակը կազմվում է ըզձականից՝ մէտիլ (<պիտիլ) եղանակիչով, ինչպես՝ մէտիլ ասիմ «պիտի ասեմ», մէտիլ խըմէմ «պիտի խմեմ», մէտիլ ասիմ լա՛ «պիտի ասեի», մէտիլ խըմէմ լա՛ «պիտի խմեի» և այլն։

349. Հրամայականն ունի երկու ժամանակ. ներկա և անցյալ։ Ներկայի կազմությունը տարբեր է յուրաքանչյուր խոնարհման համար. անցյալը կազմվում է հրամայական ներկայից ու լա՛ (<լեալ)) բառամանիկով, որն այս բարբառում գործածվում է միայն իբրև ժամանակ ցույց տվող երկրորդական ձևույթ. ինչպես՝ ազալ>ազիլ, հրմ. ներկ. եզ. ազա, ազէց, հգն. ըզէցէք, անց. եզ. ազէր լա՛ «ազայիր, ազացած լինէիր», հգն. ըզէցէք լա՛ «ազայիք, ազացած լինէիք» և այլն։

350. Արգելականը կազմվում է. եզակին՝ մէ, մէն, մա՛, մա՛ն,

իսկ հոգնակին՝ մէք՝ , մա՛ք ժխտականներով։ Այդ բոլորի նախաձևն էլ հայերեն մի արգելականն է, որ ի>է փոփոխությամբ դարձել է մէ, ապա ե-ի հավելումով՝ մէն, իսկ հոգնակիում երկրորդ դեմքի հոգնակիի ը վերջավորությունն ստանալով՝ մէք՝ ինչ վերաբերում է մա՛, մա՛ն, մա՛ք ձևերին, ապա դրանց մեջ է-ն դարձել է ա ապրելբնդներնի մա՛ (օր. ուդմա «ժի գնար») արգելականի ազդեցությամբ. այդ կրկնաձևերից այժմ ավելի գործածականն են մէն, մէք՝ ներկայի համար, և մէ, մէք՝ անցյալի համար։

ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

351. Այս խոնարհման անորոշ դերբայի վերջավորությունն է -ալ ‖ -ալ, որ համապատասխանում է գրաբարյան պարզ ա խոնարհման (ագամ)։ Սակայն գրաբարյան ա խոնարհման բայերի մեծ մասն այստեղ անցել է ի խոնարհման, ինչպես՝ ագալ> ագիլ, վարդալ>վարդիլ, բառնալ>բդնիլ, խաղալ>խաղիլ «մղկանունքի խաղալը» և այլն։

Բարբառումս այս հոլովման ենթարկվող բայերի մեծագույն մասը բնաձայնական, իսկ մնացածը՝ մարմնական կամ բնական երևույթներ արտահայտող բառեր են. ինչպես՝ բըղդալ, ըղժժալ, սբռսբռալ «մբռնելուց դողալ», դբղդբղդալ «գողդողալ», գի՛ռռալ «գռռալ, որոտալ», գիռ՝գի՛ռռալ «գորգռռալ», ըբբռալ «որոտալ», փի՛լփի՛լալ «փայլփլել» և այլն։ Ջորս բայ կա միայն, որոնք դրանց կարգին չեն պատկանում, դրանք են՝ ի՛բվալ «երևալ», մբնալ, կալ «մնալ», տալ, որոնցից վերջին երկուսը, թեև -ալ վերջավորությունն ունեն, բայց անկանոն են խոնարհվում և այս խոնարհման հետ գործ չունեն։ Անորոշ դերբայում ա ունենում են այն բառերը, որոնք վերջավորությունից առաջ եղած վանկերում ունեն ը ձայնավորը, ինչպես՝ վըզգալ, սբղդալ «սողալ», վըռվըռալ «վառվելը» և այլն։ Ձ ունենում են այն բառերը, որոնք վերջավորությունից առաջ եղած վանկերում ունեն ի՛, ինչպես՝ գի՛ռռալ, ի՛բվալ, փի՛լփի՛լալ և այլն։ Անորոշ դերբայում շեշտը միշտ վերջավորության -ա, -ա-ի վրա է. խոնարհման ժամանակ շեշտափոխության հետևանքով առաջացող սղման շնորհիվ ա-ն դառնում է ը, իսկ ա՛-ն՝ ի՛. -ալ վերջավոր-

Թյունն ունեցողները խոնարհվում են ծանր վերջավորութ-յուն-ներով, իսկ -ալ վերջավորութ-յուն ունեցողները՝ թեթև. Ահա այս խոնարհման պատկերը.

Դերբայներ

Անորոշ	*մրնալ*	*ի՝րվա՛լ «երևալ»*
Անկատար	*մրնաս*	*ի՝րվա՛ս*
Կատարյալ	*մրնացալ*	*ի՝րվացալ*
Դերակատար	*մրնա՛ծած*	*ի՝րվա՛ծած*
Ապառնի	*մրնելա՛ցուկ*	*ի՝րի՝վի՝լա՛ցուկ*
	մրնելա՛սկան	*ի՝րի՝վի՝լասկան*
Ենթակայական	*մրնա՛ցուղ*	*ի՝րի՝վա՛ցուղ*
Մակբայական	*մրնալէն*	*ի՝րվա՛լէն*

Սահմանական եղանակ

Ներկա

մրնաս	*իմ*	*ի՝րվաս*	*իմ*
»	*իս*	»	*իս*
»	*ի*	»	*ի*
»	*իք՛*	»	*իք՛*
»	*իք՛*	»	*իք՛*
»	*ին*	»	*ին*

Անցյալ անկատար

մրնաս	*իմ*	*լա՛ս*	*ի՝րվաս*	*իմ*	*լա՛ս*
»	*իս*	»	»	*իս*	»
»	*ի*	»	»	*ի*	»
»	*իք՛*	»	»	*իք՛*	»
»	*իք՛*	»	»	*իք՛*	»
»	*ին*	»	»	*ին*	»

Ապառնի

մընալ	*իմ*[1]	*ի՝րվիլ*	*իմ*
»	*իս*	»	*իս*
»	*ի*	»	*ի*
»	*իք*	»	*իք*
»	*իք*	»	*իք*
»	*ին*	»	*ին*

Անցյալ ապառնի

մընալ	*իմ*	*լա*	*իրվիլ*	*իմ*	*լա*
»	*իս*	»	»	*իս*	»
»	*ի*	»	»	*ի*	»
»	*իք*	»	»	*իք*	»
»	*իք*	»	»	*իք*	»
»	*ին*	»	»	*ին*	»

Անցյալ կատարյալ

մընացալ	*եմ*	*ի՝րվիցալ*	*եմ*
»	*ես*	»	*ես*
»	*ա*	»	*ա*
»	*ենք*	»	*ենք*
»	*եք*	»	*եք*
»	*են*	»	*են*

Գերակատար

մընահած	*եմ*	*ի՝րվիհած*	*եմ*
»	*ես*	»	*ես*
»	*ա*	»	*ա*
»	*ենք*	»	*ենք*
»	*եք*	»	*եք*
»	*են*	»	*են*

---

[1] *Այս ձևը, ինչպես և գրության կմնամ, կնեռամ ձևերը ամենք հատարում են ենթադրական, մենք ընդունում ենք իրքև ապառնի։*

Անցյալ գերադասական

մընացած	ըմ	լա	ի՝րվնցած	ըմ	լա
»	ըս	»	»	ըս	»
»	(ը)	»	»	(ը)	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըք	»	»	ըք	»
»	ըն	»	»	ըն	»

Ըղձական եղանակ

Ապառնի

մընամ	ի՝րվիմ
մընաս	ի՝րվիս
մընա	ի՝րվի
մընաք	ի՝րվիք
մընաք	ի՝րվիք
մընան	ի՝րվին

Անցյալ ապառնի

մընամ	լա	ի՝րվիմ	լա
մընաս	»	ի՝րվիս	»
մընա	»	ի՝րվի	»
մընաք	»	ի՝րվիք	»
մընաք	»	ի՝րվիք	»
մընան	»	ի՝րվին	»

Հարկադրական եղանակ

Ապառնի

մէտիլ	մընամ	մէտիլ	ի՝րվիմ
»	մընաս	»	ի՝րվիս
»	մընա	»	ի՝րվի
»	մընաք	»	ի՝րվիք
»	մընաք	»	ի՝րվիք
»	մընան	»	ի՝րվին

Անցյալ ապառնի

մէտիլ մընամ լա	*մէտիլ ի՝բվամ լա*
» *մընաս* »	» *ի՝բվաս* »
» *մընա* »	» *ի՝բվա* »
» *մընաք* »	» *ի՝բվաք* »
» *մընաք* »	» *ի՝բվաք* »
» *մընան* »	» *ի՝բվան* »

Հրամայական եղանակ

Ներկա

մընաց, մընացէք	*ի՝բվաց, ի՝բվացէք*
մընա մէ, մէն, մընա մէք	*ի՝բվա մէ, մէն, ի՝բվա մէք*
